

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԻՐԱՎԱԲԱՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՎ

ԻՐԱՎՈՒՆՔ

Թիվ 4 (46)
2009 թ.

Գլխավոր խմբագիր՝
Լևոն Օհանյան

Խմբագրական խորհուրդ

Սամվել Դիլբանդյան -

գլխավոր խմբագրի տեղակալ

Դավիթ Մելքոնյան -

պատասխանատու քարտուղար

Գևորգ Դանիելյան

Գագիկ Համբարձումյան

Արթուր Վաղարշյան

Սերգեյ Առաքելյան

Վիգեն Քոչարյան

Հիմնադիր և հրատարակիչ՝
ՀՀ իրավաբանների միություն

Խմբագրության հասցեն՝

ՀՀ, 0025 Երևան,

Ալեք Մանուկյան 1, ԵՊՀ

իրավաբանական ֆակուլտետ:

Հեռ. 55-77-92

*Խմբագրությունը կարող է
հրապարակել նյութեր՝ համամիտ
չլինելով հեղինակների
տեսակետներին:*

*10 համակարգչային էջից ավելի
չպատվիրված նյութերը չեն
ընդունվում:*

Դասիչ՝ 77771

Տպագրական 6 մանուլ

Գրանցման թիվը՝ 798

Տպաքանակը՝ 500

Գինը՝ պայմանագրային

Հանձնված է շարվածքի

15.12.2009

Հանձնված է տպագրության

02.02.2010

СОЮЗ ЮРИСТОВ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

**ГОСУДАРСТВО
И
ПРАВО**

Номер 4 (46)
2009 г.

Главный редактор:
Левон Оганян

Учредитель и издатель:
Союз Юристов РА

Редакционный совет

Самвел Дилбандян -
зам. главного редактора
Давид Мелконян -
ответственный секретарь

Геворг Даниелян
Гагик Амбарцумян
Артур Вагаршян
Сергей Аракелян
Виген Кочарян

Адрес редакции:
РА, 0025 Ереван,
ул. Алека Манукяна 1,
юридический факультет ЕГУ.
Тел.: 55-77-92

6 усл. печ. л.
Тираж: 500
Сдано в набор 15.12.2009
Подписано к печати 2.02.2010

ԲՈՎ ԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ

Լևոն Օհանյան

ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀՆԱՐԱԿՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՆԿՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ 4

Սամվել Դիլբանդյան

ԱՆՁԻ ԻՐԱՎՈՒՆԹՆԵՐԻ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՓՈԽՈՒՄ..... 12

Արմեն Հայկյանց

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԱՆՁՆԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ28

ՀԱՆՑԱԿՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐ

Միսակ Մարկոսյան

ՔՐԵԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՊԱՔՐԵԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐՈՒՄ ԿՐԻՄԻՆԱԼՈԳԻԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ38

Լյուդվիկ Դավթյան

ԴԱՏԱԿԱՆ ՀԵԴԻՆԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՍԵԹՈՂԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԸ47

ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Նորա Կարապետյան

ՌԵԿՎԻԶԻՑԻԱՆ՝ ՈՐՊԵՍ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՍԱՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՏԱՐՄԱՆ ՀԻՄՔ53

Գայանե Մարուքյան

ՄԻԱՆԱԼՈՒ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱԿՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՈՐԾԱՐԱՐԱԿԱՆ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ.....62

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆԹՆԵՐ

Рита Арустамян
ЗАЩИТА КОНСТИТУЦИОННЫХ ПРАВ И СВОБОД ГРАЖДАН НКР.....69

Արև Դազարյան

ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ75

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄՔԻՈՆ

Գևորգ Իսրայելյան

ԲՈՆԱԲԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ83

Լևոն Թադևոսյան

ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՁԱԳԵՏԻ ԴԱՏԱԿԱՐԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ.....90

Վաչե Մնացականյան

ՋՐԱՅԻՆ ՊԱՇՏՊՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱԿՈՐՄԱՆ ԲԱՇԽՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՄԵՐՁԱԿՈՐԱՐԱՆԵԼՅԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ.....94

Սոֆի Ոսկանյան

ԳՈՐԾԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԼԻՑԵՆԶԱԿՈՐՄԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ.....100

ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱԼՔ

**ԿՐԻՄԻՆԱԼԻՍՏԻԿԱՅԻ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ
ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ**

Լևոն ՕՂԱՆՅԱՆ

*ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի պրոֆեսոր
Արմեն ՔԻՆԱԿՅԱՆ*

*ՀՀ ԱԱԾ գիտատեսական կենտրոնի պետ,
իրավ. գիյ. թեկնածու*

Հասարակական հարաբերությունների զարգացման արդի շրջանում տարբեր գիտությունների համագործակցության և ինտեգրման գործընթացներն անմախաղեպ ծավալներ են ստացել: Արդյունաբերականից դեպի հետարդյունաբերական կամ, այլ կերպ ասած, տեղեկատվական հասարակության անցումը հեղափոխական քայլերով, որը շուրջ երեք տասնամյակ է՝ տարածվում է ամբողջ աշխարհում: Ընդ որում, դա տեղի է ունենում առանց հաշվի առնելու, թե այս կամ այն երկիրը ինդուստրիալացման ու արդիականացման ինչ ճանապարհ է անցել¹:

Դեպի տեղեկատվական հասարակություն անցման ներկա փուլում բազմաթիվ ներքին ու արտաքին մարտահրավերներին ու ճգնաժամային երևույթներին դիմակայելու, հախուռն, հաճախ ոչ կառուցողական տեղեկատվական հոսքերի բացասական ազդեցությունը չեզոքացնելու կամ գոնե թուլացնելու, հանցավորության, այդ թվում՝ կիրեռահանցավորության աճը կանխելու առումով մեծ են սպասելիքները հատկապես գիտությունից:

Առանձին հեղինակներ համակարգչային տեխնիկայի առաջացումը և օգտագործումը մարդկային գործունեության գրեթե բոլոր ոլորտներում իր նշանակությամբ համեմատում են երկու մեծագույն տեխնիկական հայտնագործությունների՝ կրակի ստացման և գոլորշու ուժի օգտագործման

հետ²: Սակայն, ինչպես հայտնի է, ցանկացած երևույթ ունի առնվազն երկու կողմ՝ դրական և բացասական. ինչպես կրակն ու գոլորշին կարող են չարագործների համար իրենց ապօրինի նպատակներին հասնելու միջոց հանդիսանալ, այնպես էլ համակարգչային տեխնիկան, դրա կիրառման անգնահատելի օգուտների հետ մեկտեղ, հանցագործների ձեռքում կարող է վերածվել իսկական չարիքի:

Հարկ է նշել, սակայն, որ հատկապես զարգացող երկրներում, որոնց թվին է պատկանում նաև Հայաստանի Հանրապետությունը, այս հիմնախնդրի լուծմանն ուղղված ջանքերը հեռու են բավարար լինելուց: Պատճառն այն է, որ տեղեկատվական-հեռահաղորդակցական տեխնոլոգիաների տարածման ու զարգացման արդի պայմաններում կատարելագործվում են նաև հանցագործությունների կատարման եղանակները: Իսկ տեղեկատվության շրջանառության դեմ ուղղված ոտնձգություններն այնքան շատ դրսևորումներ են ստացել և այնքան բազմաթիվ են, որ օրախնդիր է դարձել տեղեկատվական անվտանգության գծով լայն պրոֆիլի մասնագետների պատրաստման հարցը:

Արդի պայմաններում անձի, հասարակության և պետության անվտանգությունն էականորեն կախված է տեղեկատվական անվտանգության ապահովումից, և այդ կախվածությունը մեծանում է գիտատեխնիկական առաջընթացին զուգահեռ: Ժամանակակից ընկալմամբ տեղեկատվական անվտանգությունը՝ որպես ազգային անվտանգության կարևորագույն բաղադրիչ, ընդունված է պատկերացնել որպես հետևյալ չորս ուղղությունների միասնություն՝

- հոգևոր-մշակութային անվտանգություն.

- տեղեկատվական-հոգեբանական անվտանգություն.

- պետական, ծառայողական, առևտրային և այլ գաղտնիքների պաշտպանություն.

- տեղեկատվական-տեխնիկական անվտանգություն (համակարգչային կամ կիբեռնանվտանգություն):

Սույն հոդվածում մենք կփորձենք կենտրոնանալ հատկապես վերջին ուղղության վրա, քանի որ կրիմինալիստիկայի տեխնիկական, տակտիկական միջոցներն ու հնարքները, ինչպես նաև մեթոդական հանձնարարականներն առավելապես կիրառելի են հենց այդ բնագավառում:

Համաձայն ՀՀ տեղեկատվական անվտանգության հայեցակարգի 2-րդ բաժնի 1-ին կետի՝ Հայաստանի Հանրապետության տեղեկատվական անվտանգությունը հանրապետության ազգային շահերի պաշտպանվածությունն է տեղեկատվական ոլորտում՝ փոխկապակցված անձի, հասարակության և պետության հավասարակշռված շահերի ընդհանրության հետ:

Հայեցակարգը ՀՀ տեղեկատվական անվտանգության ապահովման ուղղությամբ պետական քաղաքականության հիմնական դրույթներից է համարում տեղեկատվական նպատակաուղղված վնասակար գործունեության սպառնալիքներին համալիր հակազդեցության համակարգի զարգացումն ու կատարելագործումը, համակարգչային հանցավորության կանխման ձևերի մշակումը: Իսկ տեղեկատվական անվտանգության ապահովման համակարգի գործառույթների թվում առանձնացված է հիմնարար և կիրառական գիտական հետազոտությունների իրականացումը³:

Համաձայն Եվրոպայի խորհրդի «Կիբեռհանցագործությունների մասին» 2001 թ. Կոնվենցիայի՝ այդպիսի հանցագործություններ են ճանաչվում՝ 1. համակարգչային համակարգերի և տվյալների գաղտնիության, միասնության և մատչելիության դեմ ուղղված հանցագործությունները (ա-

նօրինական մուտքը, անօրինական կերպով հաղորդակցություն գաղտնիք որսալը, միջամտությունը տվյալների մեջ, համակարգի աղավաղումը, սարքերի չարաշահումը), 2. համակարգչին առնչվող հանցագործությունները. համակարգչին առնչվող խարդախությունները (տվյալներ մտցնելը, փոփոխելը, ոչնչացնելը կամ արգելելը), համակարգչին առնչվող խարդախությունը (սեփականության կորուստ պատճառով), 3. բովանդակության առնչվող հանցագործությունները (մանկական պոռնոգրաֆիային վերաբերող հանցագործությունները, ռասիստական և քսենոֆոբիական նյութեր տարածելը, ցեղասպանությունը և մարդկության դեմ հանցագործությունը հերքելը, մեղմացնելը, դրանց հավանություն տալը կամ արդարացնելը)⁴:

ՀՀ քրեական օրենսգրքով պատասխանատվություն է սահմանված համակարգչային տեղեկատվության անվտանգության դեմ ուղղված հետևյալ հանցագործությունների համար՝ համակարգչային տեղեկատվության համակարգ առանց թուլտվության մուտք գործելու (ՀՀ քր. օր.-ի 251 հոդված), համակարգչային տեղեկատվությունը փոփոխելու (ՀՀ քր. օր.-ի 252 հոդված), համակարգչային սաբոտաժի (ՀՀ քր. օր.-ի 253 հոդված), համակարգչային տեղեկատվությանն ապօրինի տիրանալու (ՀՀ քր. օր.-ի 254 հոդված), համակարգչային տեղեկատվություն ապօրինի մուտք գործելու, ներթափանցելու, հատուկ միջոցներ պատրաստելու կամ իրացնելու (ՀՀ քր. օր.-ի 255 հոդված), վնասաբեր ծրագրեր մշակելու, օգտագործելու և տարածելու (ՀՀ քր. օր.-ի 256 հոդված), համակարգչային համակարգը կամ ցանցը շահագործելու կանոնները խախտելու (ՀՀ քր. օր.-ի 257 հոդված): Բացի այդ, ՀՀ քրեական օրենսգրքի 181 հոդվածով պատասխանատվություն է սահմանված համակարգչային տեխնիկայի օգտագործմամբ հափշտակության համար, իսկ 263 հոդվածով (որը վերնագրված է «Պոռնկագրական նյութեր կամ առարկաներ ապօրինի տարածելը»)՝ համակարգչային համակարգի միջոցով մանկական պոռնոգրաֆիա ներկայացնելու կամ հա-

ԳԻՏԱԿԱՆ ԿՅՈՒՄ

մակարդչային համակարգում կամ համակարգչային տվյալների պահպանման համակարգում մանկական պոռնոգրաֆիա պահպանելու համար:

Կիբեռհանցագործությունների գլխավոր առանձնահատկությունն այն է, որ դրանք կատարվում են ոչ թե իրական կյանքում, այլ վիրտուալ միջավայրում: Այդ իսկ պատճառով դրանց կատարման հետքերը չեն մնում նյութական օբյեկտների վրա և արտահայտվում են ոչ թե հետք առաջացնող օբյեկտների արտապատկերների տեսքով, այլ մնում են համակարգիչների, այլ (հարակից, պերիֆերիկ) սարքերի և համակարգչային տեղեկույթի մեքենայական կրիչների վրա:

Իրավիճակը բարդանում է այն առումով, որ համաշխարհային մեծածավալ կիբեռտիրույթում (ինտերնետ և այլ ցանցեր) կատարվող հանցավոր ոսնձգության փաստն ինքնին շատ դժվար է գրանցել (ֆիքսել). սահմանված չեն դրա համար ահնրաժեշտ այնպիսի տեխնիկական չափորոշիչներ, որոնք ունեն համընդհանուր կիրառություն: Այդ իսկ պատճառով կիբեռհանցագործությունների քանակի վերաբերյալ առանձին աղբյուրների տվյալները երբեմն տարբերվում են միմյանցից ավելի քան 150 անգամ: Օրինակ, աղբյուրներից մեկի գնահատմամբ այսօր աշխարհում օրական գրանցվում է համակարգչային տեղեկատվության համակարգեր և տվյալների բազաներ (շտեմարաներ) ապօրինի ներթափանցման, դրանց վնասման կամ ոչնչացման ավելի քան 50 հազար փորձ⁶: Այլ աղբյուրի փոխանցմամբ՝ աշխարհում շաբաթական գրանցվում է համակարգչային չարագործների ավելի քան 55 միլիոն արարք (միջին հաաշվով օրական ավելի քան 7,8 միլիոն)⁷:

Այս ամենը վկայում է կիբեռհանցավորության չափազանց մեծ լատենտայնության մասին: Հետևաբար, այդ տվյալներին պետք է մոտենալ բոլոր վերապահումներով: Թերևս պետք է համաձայնել այն կար-

ծիքին, որ ներկայումս ոչ ոք ի վիճակի չէ հաշվարկել աշխարհում կիբեռհանցավորության ստույգ մակարդակը: Համադրելով վերը նշվածը և այլ տվյալներ՝ կարելի է շատ մոտավոր պատկերացում կազմել այդ ամենի մասին:

Համակարգչային տեղեկատվության համակարգեր և տվյալների բազաներ (շտեմարաներ) ապօրինի ներթափանցման փորձերն ընդունված է անվանել հաքերական հարձակումներ կամ հաքերական ակցիաներ⁸: Տարբեր գնահատականներով դրանց գերակշիռ մասը (ավելի քան 70 %) կատարվում է շահադիտական շարժառիթներով, մասնավորապես՝ խարդախության կամ կեղծ գովազդի նպատակով, ինչպես նաև վիրուսաբեր (քայքայիչ-կազմալուծող) կամ հակամրցակցային բնույթ է կրում, այսինքն՝ ուղղված է նշված համակարգերի գործունեության խաթարմանը: Այլ՝ ավելի փոքր մասը (շուրջ 10 %) լրտեսական բնույթ ունի, այսինքն՝ համակարգչային տեղեկատվական փակ համակարգեր ներթափանցելու և սահմանափակ շրջանառության կամ գաղտնի տեղեկույթի հափշտակելու նպատ է հետապնդում: Մնացածը այն համակարգչային հանցագործություններն են, որոնք կատարվում են ահաբեկչական, խուլիգանական, վրեժի և այլ շարժառիթներով⁹:

Արժե նշել, որ անցյալ դարի 90-ական թվականների կեսերին, առանձին մասնագետների գնահատմամբ, ընդհանուր վնասը, որն առաջացել է աշխարհում կիբեռհանցագործությունների պատճառով, կազմել է շուրջ 5 միլիարդ ԱՄՆ դոլար¹⁰: Ներկայումս, իհարկե շատ մոտավոր հաշվարկներով, այդ թիվը տարեկան կարող է հասնել մինչև 1 տրիլիոն դոլարի¹²: Այսպես, ԱՄՆ-ում 2007 թվականին միայն համակարգչային խարդախության գծով գրանցվել է մոտ 207 հազար դեպք, որի հասցրած վնասը կազմել է շուրջ 240 միլիոն դոլար (ընդհանուր էլեկտրոնային առևտրաշրջանառությունը կազմել է 33 միլիարդ դոլար): Ընդ որում, 2000 թվականի համեմատ աճը կազմել է շուրջ 1150 % (մոտ 12,5 անգամ)¹³:

Մեծ Բրիտանիայի կորուստները համա-

կարգչային խարդախությունից 2007 թվականին կազմել են շուրջ 264 միլիոն դոլար, ինչը 2006 թվականի համեմատ ավելի է 140 %-ով¹⁴:

ԱՊՀ երկրներից տեղեկատվական տեխնոլոգիաների առավել զարգացած շուկա ունեցող Ռուսաստանի Դաշնությունում տարեկան գրանցվում է համակարգչային տեղեկույթի շրջանառության դեմ ուղղված, շահադիտական դրդումներով կատարվող հանցագործությունների շուրջ 15 հազար դեպք: Ընդ որում, ամեն տարի նախորդի համեմատ արձանագրվում է դրանց կայուն աճ: Օրինակ՝ 2008 թվականին 2007-ի համեմատ այդ հանցատեսակների ընդհանուր քանակն աճել է շուրջ 20 %-ով: Նույն միտումը պահպանվում է 2009 թվականին¹⁵: Սակայն կիբեռհանցագործությունների ընդհանուր թիվը, ներառյալ հաքերական հարձակումները, անհամեմատ ավելի մեծ է. միայն 2007 թվականին Ռուսաստանում կանխվել է իշխանության դաշնային մարմինների տեղեկատվական համակարգերի նկատմամբ հաքերական հարձակումների մոտ 1,5 միլիոն փորձ¹⁶:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Հայաստանի Հանրապետության համար առավել արդիական է պայքարը թշնամաբար տրամադրված պետություններից եկող հաքերական հարձակումների, վիրուսաբեր ծրագրերի տարածման ու նմանատիպ այլ քայքայիչ գործողությունների դեմ¹⁷: Այդ հանցագործությունները հիմնականում դրսևորվում են համակարգչային սաբոտաժի (ՀՀ քր. օր.-ի 253 հոդված), համակարգչային տեղեկատվությունը փոփոխելու (ՀՀ քր. օր.-ի 252 հոդված), վնասաբեր ծրագրեր մշակելու, օգտագործելու և տարածելու (ՀՀ քր. օր.-ի 256 հոդված) ձևով: Ըստ որոշ տվյալների՝ 2008 թվականի ընթացքում արդբեջանական հաքերների գրոհներին են ենթարկվել հայկական մի քանի տասնյակ ինտերնետ-կայքեր, այդ թվում՝ ՀՀ գլխավոր դատախազության, ՀՀ արդարադատության, կրթության և գիտության, երիտասարդության և սպորտի նախարարությունների, Երևանի պետական համալսարանի, ՀՀ ազգային օ-

լիմպիական կոմիտեի, Հանրային հեռուստատեսության, այլ լրատվամիջոցների կայքերը: 2009 թվականին, նույն աղբյուրների փոխանցմամբ, հայկական կայքերի նկատմամբ հաքերական հարձակումների թիվն արդեն անցնում է 100-ից¹⁸:

Նման իրավիճակում հասարակությունն ակնկալում է իրեն սպառնացող երևույթների ու գործընթացների կանխման ու խափանման գործուն, գիտականորեն հիմնավորված, արդյունավետ լուծումներ:

Ելնելով հանցավորության դեմ պայքարի պահանջներից՝ այդ պայքարի տարբեր կողմերը և ուղղություններն ուսումնասիրող գիտությունները՝ քրեական իրավունքի գիտությունը, կրիմինալոգիան (քրեագիտությունը), քրեական դատավարության գիտությունը, կրիմինալիստիկան, օպերատիվ-հետախուզական գործունեության տեսությունը, հարակից այլ գիտություններն ու տեսությունները գտնվում են մշտական զարգացման ու որոնումների վիճակում: Դրա նպատակն է գտնել հանցավորության դեմ պայքարի տեսական և գործնական հիմնախնդիրների առավել արդյունավետ լուծումներ, որոնք թույլ կտան դյուրացնել և կատարելագործել իրավապահպան մարմինների աշխատանքը, ստեղծել հանցավոր ոտնձգություններից մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների, հասարակության և պետության շահերի պաշտպանության հուսալի երաշխիքներ:

Ի տարբերություն այլ գիտությունների՝ կրիմինալիստիկան անմիջականորեն կապված է հանցագործությունների քննության գործուն գիտական և գործնական հանձնարարականների, միջոցների ու մեթոդների կիրառման հետ: Կրիմինալիստիկան իր ստեղծման ժամանակից ի վեր օգտագործել է գիտատեխնիկական առաջընթացի նվաճումները՝ հարմարեցնելով դրանք հանցագործությունների քննության, բացահայտման և կանխարգելման նպատակներին: Սակայն դա չի նշանակում, որ կրիմինալիստիկայի առաքելությունն այդքանով սահմանափակվել է: Ինչպես գրում է Ռ. Ս. Բելկինը, «Կրիմինալիս-

ԳԻՏԱԿԱՆ ԿՅՈՒՄ

տիկայի հետ համագործակցության ոլորտ են ընդգրկվում գիտության նոր բնագավառներ, բայց միաժամանակ նրա մշակած մեթոդներն ու միջոցներն օգտագործում են այլ գիտությունները և պրակտիկ գործունեության այլ ոլորտներում (հնագիտության, արվեստագիտության, բանկային գործի և այլն)»¹⁹:

Կրիմինալիստիկայի շրջանակներում ձևավորվել են ամբողջական տեսություններ, ուսմունքներ, մասնավոր մեթոդիկաներ, որոնք արդյունավետ կիրառվել և այժմ էլ օգտագործվում են ոչ միայն կրիմինալիստիկական գործունեության, այլև շատ այլ բնագավառներում: Այդպիսիք են, մասնավորապես, կրիմինալիստիկական նույնացման (հղենտիֆիկացիայի) տեսությունը, հետքաբանությունը, կրիմինալիստիկական հաբիտուսկոպիան, համակարգչային տեղեկատվության շրջանառության ապօրինի խախտումների բացահայտման մեթոդիկան և այլն: Հայտնի է, որ, օրինակ, ռուս կրիմինալիստ-դատական փորձագետ և գիտնական Ե. Ֆ. Բուրինսկին դեռևս 20-րդ դարի սկզբին օգտագործել է փաստաթղթերի կրիմինալիստիկական հետազոտման և դատական լուսանկարչության բնագավառներում ունեցած իր գիտելիքները քաղաքացիական դատավարության ընթացքում, ինչպես նաև հին ձեռագրերի վերականգնման բնագավառում²⁰:

Գնալով ավելի ցայտուն դրսևորումներ է ստանում կրիմինալիստիկական գիտելիքների համագործակցությունը մաթեմատիկական-կիբեռնետիկական գիտությունների հետ: Ավելին, կրիմինալիստիկական գործունեության կիբեռնետիկացիան գործնական, կիրառական բնույթի գործընթաց լինելուց բացի՝ պարարտ հիմք է նոր մասնավոր կրիմինալիստիկական տեսությունների, մասնավորապես կրիմինալիստիկական կիբեռնետիկայի և դատական փորձաքննությունների մեքենայացման (ավտոմատիզացիայի) տեսության առաջացման և զարգացման համար, ինչն իր

հերթին անկասկած լրացնում և զարգացնում է կրիմինալիստիկայի ընդհանուր տեսությունը²¹:

Այդպիսով, կրիմինալիստիկայի առաջընթացը չափազանց ամուր կապերով առնչվում է շատ գիտությունների հետ, որոնց տվյալներն անմիջականորեն կամ միջնորդավորված այն օգտագործում է: Միևնույն ժամանակ, կրիմինալիստիկական տեխնիկայի, տակտիկայի և մեթոդիկայի շրջանակներում իրականացվող տեսական և մեթոդական մշակումները նպաստում են գիտության ընդհանուր տեսական մտքի ակտիվացմանը, հարստացնում այն հեռանկարային մտահղացումներով, հիմքեր ստեղծում նոր, արդյունավետ հայացքների, գաղափարների, հայեցակարգերի, չափանիշների առաջացման ու եղածների կատարելագործման համար:

Հաշվի առնելով արդի պայմաններում տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների սրընթաց զարգացման, պաշտպանության ենթակա տեղեկույթի (ինֆորմացիայի) ծավալների թռիչքային աճի իրողությունը՝ հատկապես մեծ են սպասելիքները հասարակական կյանքի տարբեր բնագավառներին վերաբերող տեղեկությունների ու դրանց ամբողջական շտեմարանների (բազաների) անվտանգության ապահովման ուղղությամբ տարվող աշխատանքներից: Սակայն հարկ է նշել, որ կրիմինալիստիկական զբաղվել է համակարգչային տեղեկատվության դեմ ուղղված ոտնձգությունների կանխման ու խափանման խնդիրներով դեռևս դրանց ի հայտ գալու ժամանակներից:

Համակարգչային տեխնոլոգիաների կատարելագործմանը զուգահեռ առաջացան համակարգչային տեղեկույթին ապօրինաբար տիրանալու հետ կապված նոր հանցատեսակներ: Իրենց մեխանիզմով, կատարման եղանակներով, քողարկման և հետքերը թաքցնելու հնարքներով այս հանցագործությունները նկատելիորեն տարբերվում են այլ հանցատեսակներից, ունեն լատենտայնության բարձր մակարդակ, իսկ բացահայտման ցուցանիշները, որպես կանոն, չափազանց ցածր են²²:

Համակարգչային անվտանգության (այլ կերպ ասած՝ տեղեկատվական-տեխնիկական անվտանգության կամ կիբեռանվտանգության) ապահովման խնդրի լուծումն անհնար է առանց համակարգչային տեղեկությոնն ապօրինաբար տիրանալու դեմ ուղղված կրիմինալոգիական, քրեաիրավական, քրեադատավարական, կրիմինալիստիկական և օպերատիվ-հետախուզական համարժեք միջոցների կիրառման:

Դրա հետ մեկտեղ ժամանակակից պայմաններում տեղեկատվական-տեխնիկական անվտանգության ապահովման խնդիրները լուծելու գործում զգալիորեն մեծացել է կրիմինալիստիկական կանխարգելիչ տեխնիկական միջոցների ու մեթոդների կիրառման դերն ու նշանակությունը: Հատկապես Հայաստանի Հանրապետության պայմաններում կիբեռհանցավորության, մասնավորապես արտաքին հաքերական հարձակումների կանխարգելումը դարձել է կենսական անհրաժեշտություն:

Տեղեկատվական-տեխնիկական անվտանգությանն ուղղված ոտնձգությունների դեմ պայքարում էական դեր կարող է խաղալ կրիմինալիստիկական գրանցումը: Դա տեղեկության կրիչ որոշակի օբյեկտների կրիմինալիստիկական հաշվառման համակարգ է, որն օգտագործվում է հանագործությունների քննության, բացահայտման և կանխարգելման նպատակով²⁹: Արդի ժամանակներում հատկապես հայկական ինտերնետ-կայքերի վրա հաճախակի կատարվող հաքերական հարձակումների դեմ արդյունավետ պայքար կազմակերպելու և իրականացնելու նպատակով օրախնդիր է այդպիսի ոտնձգություններ կատարած և ի հայտ բերված անձանց, ինչպես նաև նրանց հանցավոր գործունեության եղանակների ու միջոցների կրիմինալիստիկական հաշվառման համակարգի ձևավորումը: Այն հնարավորություն կտա կարճ ժամանակում ստուգելու հաքերական հարձակում գործած սուբյեկտի (սուբյեկտների) վերաբերյալ տվյալների առկայությունը, պարզել նրան (նրանց) նույնացնելու համար նշանակություն ունեցող հատկա-

նիշների շրջանակը, առավել արդյունավետ կազմակերպելու հանցագործների որոնումը:

Ոչ պակաս կարևոր նշանակություն ունի համակարգչային տեղեկատվության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության մեթոդիկան, որն իրենից ներկայացնում է գիտական դրույթների և դրանց հիման վրա մշակվող մեթոդական հանձնարարականների մի համակարգ, որը նախատեսված է այդ հանցանքների քննության, բացահայտման և կանխարգելման ուղղությամբ քննիչի և հետաքննության մարմնի աշխատակցի գործունեության համար:

Ընդ որում, պետք է հաշվի առնել, որ զարգացող երկրներում համակարգչային հանցագործությունների քննության ամբողջական, լիարժեք մեթոդիկայի ձևավորումը, այնուամենայնիվ, ապագայի գործ է: Պատճառն այն է, որ այդ երկրների (այդ թվում՝ Հայաստանի) իրավապահայան մարմինների փորձը նշված հանցատեսակների քննության և բացահայտման ուղղությամբ դեռևս բավարար չէ դրանց բոլոր բնութագրիչ առանձնահատկություններն ի հայտ բերելու և գիտական մակարդակով հետազոտելու համար: Կիբեռհանցագործությունների կատարման եղանակներն ու միջոցները բազմազան են, և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը զուգահեռ դրանք օրինաչափորեն կկատարելագործվեն, իսկ առաջատար երկրների օրինակով տեխնիկական և ծրագրային համապատասխան հագեցվածության բացակայությունը թույլ չի տա համարժեք զարգացնել նաև այդ հանցագործությունների բազմակողմանի, արագ, լրիվ և օբյեկտիվ քննության ու բացահայտման հնարավորությունները:

Հաշվի առնելով նշված հանգամանքը, մեր կարծիքով, արդի փուլում առավել նպատակահարմար է կիբեռհանցագործությունների քննության և բացահայտման ուղղությամբ գիտական հետազոտություններում շեշտը դնել դրանց քննության մեթոդիկայի առանցքային տարրերից մեկի՝ համակարգչային տեղեկության ապօրինա-

ԳԻՏԱԿԱՆ ԿՅՈՒՄ

բար տիրանալու կրիմինալիստիկական բնութագրի զարգացման վրա: Այդ բնութագրի բովանդակությունը կազմում են հանցավոր ոտնձգության առարկայի, հանցագործության կատարման եղանակի և մեխանիզմի, միջոցների ու կիրառվող գործիքների, քողարկման հնարքների, դեպքի վայրի և իրադրության, հետքերի և կատարողների մասին տվյալները²⁴: Այդ բնութագիրը պետք է վերածվի ամփոփ տվյալների այնպիսի համակարգի, որն էապես կնպաստի քննության դյուրացմանը և այդ ընթացքում կրիմինալիստիկական միջոցների, մեթոդների, հնարքների ու հանձնարարականների կիրառմանը²⁵:

Ելնելով կիբեռհանցավորության առանձնահատկություններից՝ դրանց դեմ պայքարի կատարելագործման հաջորդ կարևոր ուղղությունը պետք է լինի կրիմինալիստիկական փորձագիտական հնարավորությունների զարգացումը, համապատասխանեցումը ժամանակակից պահանջներին: Համակարգչային տեղեկույթի շրջանառության դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ գործերով, որպես կանոն, նշանակվում են փորձաքն-

նությունների հետևյալ հիմնական տեսակները՝ համակարգիչների տեխնիկական փորձաքննություն, տեղեկույթի պաշտպանիչ սարքերի տեխնիկական փորձաքննություն, տվյալների և ծրագրային ապահովման փորձաքննություն: Ներկայումս լայն թափ է ստանում նաև տեղեկատվական-տեխնիկական փորձաքննությունների այլ տեսակների զարգացումը²⁶:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարելի է առանձնացնել ժամանակակից պայմաններում տեղեկատվական-տեխնիկական անվտանգության ապահովման ուղղությամբ կրիմինալիստիկայի հնարավորությունների օգտագործման հետևյալ առանցքային ուղղությունները՝

- կրիմինալիստիկական կանխարգելիչ տեխնիկական միջոցների ու մեթոդների մշակում և կիրառում,

- կրիմինալիստիկական գրանցման համակարգերի ստեղծում և շահագործում,

- կրիմինալիստիկական փորձագիտական գիտելիքների օգտագործում և հետագա կատարելագործում,

- համակարգչային տեղեկատվության անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության ամբողջական, լիարժեք մեթոդիկայի ձևավորում:

¹ Հաշվարկված է, որ նոր հազարամյակի առաջին տարիներին աշխարհում շահագործվում էր շուրջ 250 մլն համակարգիչ, իսկ 2010 թվականին ինտերնետ ցանցից օգտվողների թիվը կհասնի 3 միլիարդի: Այդ մասին տես **Գրիգորյանց Գ.** Գլոբալ տեղեկատվական հեղափոխությունը որպես երկու քաղաքակրթությունների միջև անցումային փուլ / Պիտելիքն ու իշխանությունը տեղեկատվական հասարակության մեջ. Երևան, 2006, էջ 12:

² Տես *Шурухнов Н. Г.* Расследование неправомерного доступа к компьютерной информации. Научно-практическое пособие. М., 1999, с. 11:

³ Տես ՀՀ տեղեկատվական անվտանգության հայեցակարգ: Հաստատված է ՀՀ Նախագահի 26. 06. 2009 թ. Ն 4-97-Ն կարգադրությամբ: ՀՀ Պաշտոնական տեղեկագիր. N 35 (701) առ 15.

07. 2009:

⁴ Տես Կոնվենցիա «Կիբեռհանցագործությունների մասին», Լրացուցիչ արձանագրություն «Կիբեռհանցագործությունների մասին կոնվենցիայի» համակարգչային համակարգերի միջոցով կատարվող ռասիստական և քսենոֆոբիական բնույթի արարքների քրեականացման մասին» (Կոնվենցիան և լրացուցիչ արձանագրությունը ՀՀ համար ուժի մեջ են մտել 2007 թ. փետրվարի 1-ին): ՀՀ Պաշտոնական տեղեկագիր. Հատուկ թողարկում. Պաշտոնական վերահրատարակություն. Բազմակողմ միջազգային պայմանագրեր. Երևան, 2008 թ.: Ի դեպ, հարկ է նշել, որ Կոնվենցիայի և Լրացուցիչ արձանագրության հայերեն տեքստերը զերծ չեն լեզվաոճական և խմբագրական թերություններից, որոնք, ըստ երևույթին, վատ թարգմանության արդյունք են:

⁵ Տե՛ս *Старостина Е. В., Фролов Д. Б.* Защита от компьютерных преступлений и кибертерроризма. Москва, 2005, с. 5:

⁶ Տե՛ս <http://www.itsec.ru/keywords.php?keywords=38949>

⁷ Տե՛ս Hacker-watch.org; *Багдеева В. А.* Проблемы международной киберпреступности / Актуальные проблемы российского права. N 3 (12), М., 2009, с. 565; *Щетилов А.* Некоторые проблемы борьбы с киберпреступностью и кибертерроризмом. М., 2007.

⁸ Անգլերեն *hack բառից՝ հատել, կտրել: Hacker - համակարգչային ցանցերը, ծրագրերը վնասող անձ: Տե՛ս Լազարյան Ա., Հանրաժողովյան Ա., Հայրապետյան Ա.* Անգլերեն-հայերեն բառարան. Երևան, 2008, էջեր 283-284:

⁹ Տե՛ս *Конявский В. А., Лопаткин С. В.* Компьютерная преступность. В 2-х томах. Москва, 2006; *Конявский В. А.* О классификации средств антивирусной защиты / Information Security. N 3, 2008, с. 42, 43:

¹⁰ Տե՛ս <http://www.itsec.ru/keywords.php?keywords=38949>; Տե՛ս նաև *Вехов Б. В.* Компьютерные преступления: Способы совершения и раскрытия. Под ред. *Смагоринского Б. П.* Москва, 1996, с. 41:

¹¹ Տե՛ս *Ляпунов Ю., Максимов В.* Ответственность за компьютерные преступления / Законность, N 1, 1997:

¹² Տե՛ս <http://www.itsec.ru/keywords.php?keywords=38949>

¹³ Տե՛ս Из отчета Центра приема жалоб по интернет-преступлениям (The National White Collar Crime Center). www.cnews.ru; Информационная безопасность / Тематический бюллетень Информационного агентства связи. ¹ 16, 2008, с. 49, 50:

¹⁴ Տեղեկատվությունը *руս ADACT-ի (UK Payment Assotiation)*. Տե՛ս Информационная безопасность / Тематический бюллетень Информационного агентства связи. N 16, 2008, с. 49:

¹⁵ Տե՛ս Российская газета, Федеральный выпуск N 5021(197) от 16 октября 2009:

¹⁶ Տե՛ս Информационная безопасность / Тематический бюллетень Информационного агентства связи. N 16, 2008, с. 50:

¹⁷ Տե՛ս *Мартirosян С.* Вопросы кибербезопасности Армении // Տեղեկատվական անվտանգություն. «Գլոբուս» վերլուծական տեղեկագիր. N 2, 2008 թ. էջեր 6-8

¹⁸ Այդ մասին առավել մանրամասն տե՛ս *Մարտիրոսյան Ա.* Տեղեկատվական պատերազմ Հայաստանի դեմ // Ազգային անվտանգություն. «Գլոբուս» վերլուծական տեղեկագիր. N 1 (5), 2009, էջեր 22-23:

¹⁹ *Белкин Р. С., Аверьянова Т. В., Корухов Ю. Г., Россинская Е. Р.* Криминалистика. Учебник для вузов. М., 1999, с. 74:

²⁰ Տե՛ս, մասնավորապես, *Яблоков Н. П.* Криминалистика. Учебник. 3-е издание, переработанное и дополненное. М., 2006, с. 21:

²¹ Առավել մանրամասն տե՛ս *Полевой Н. С.* Криминалистическая кибернетика. Теория и практика математизации и автоматизации информационных процессов и систем в криминалистике. М., 1989:

²² Ըստ որոշ գնահատականների՝ 10 գրանցված հանցագործություններից բացահայտվում է մեկը: Առավել մանրամասն տե՛ս *Шурухнов Н. Г.* Расследование неправомерного доступа к компьютерной информации. Научно-практическое пособие. М., 1999, с. 5:

²³ Տե՛ս, մասնավորապես, *Белкин Р. С.* Курс криминалистики. М., 1997, с. 182; *Яблоков Н. П.* Криминалистика. М., 1999, с. 336; *Корниенко Н. А.* Российские и международные криминалистические учеты. СПб., 2004, с. 31-34:

²⁴ Տե՛ս *Махтаев М. Ш., Соловьев Л. Н.* Расследование преступлений в сфере компьютерной информации. Лекция. М., 2001, с. 5-23:

²⁵ Տե՛ս О содержании криминалистической характеристики / Криминалистика: актуальные проблемы. Под ред. *Зуева Е. И.* М., 1998, с. 120:

²⁶ Դրանցից է, մասնավորապես, համակարգչի օպերատորի նույնացումը համակարգչային տեքստերի հավաքման հատկանիշներով (ստեղծաշարային ձեռագրով): Այդ մասին առավել մանրամասն տե՛ս *Материалы 1 международной конференции Интерпола по компьютерной преступности // Информационный бюллетень Национального бюро Интерпола в РФ, N 14.* М., 1995:

ԳԻՏԱԿԱՆ ԿՅՈՒՆ

**ԱՆՁԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՕՐԻՆԱԿԱՆ ՇԱՀԵՐԻ
ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՔՆՆՈՒՅԱԿԱՆ ՓՈՒԼՈՒՄ**

Սամվել ԳԻԼԲԱՆԳՅԱՆ

ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի վարիչ, իրավ. գիտ. թեկ., դոցենտ

Նախնական քննությունն անվանումը այս հասկացության ճշգրիտ բնորոշումն է: Այն համարվում է նախնական, այսինքն՝ ոչ վերջնական, քանի որ կոնկրետ քրեական գործի դատական քննության նախապատրաստությունն է: Ռուսաստանի կայսրության քրեադատավարական օրենսդրությունում «նախնական քննության» փոխարեն գործածվում էր «նախնական հետազոտություն» տերմինը: Ի. Յա. Ֆոյնիցկին այդ մասին գրել է. «Նախնական հետազոտությունը բաղկացած է մասնավոր ու պաշտոնատար անձանց մի շարք գործողություններից, որոնք ուղղված են դատական քննության համար նյութեր հավաքելուն»: Մ. Ս. Ստրոգովիչը գրել է. «Լինելով գործի դատական քննության նախնական կամ, այլ կերպ ասած, նախապատրաստական մաս՝ նախնական քննությունը դրանից ոչ միայն չի կորցնում իր նշանակությունը քրեական դատավարությունում, այլև, հակառակը, հենց այն է ստեղծում դատարանի համար անհրաժեշտ պայմաններ պատշաճ արդարադատություն իրականացնելու»²:

Նախնական քննության ընթացքում կայացվող որոշումներն ու հետևությունները միայն նախապատրաստում են քրեական գործի հետագա քննությունը դատարանում: Տվյալ փուլում նախապատրաստական աշխատանք է իրականացվում հետագայում դատարանում կոնկրետ անձանց մեղավորության կամ անմեղության հարցերը որոշելու, հանցագործության հատկանիշների առկայությունը պարզելու և մի

շարք այլ հարցերի համար: Սակայն դա չի բացառում, որ այս հարցերը կարող են լուծվել հենց նախնական քննության փուլում: Դա հնարավոր է այն դեպքերում, երբ որոշում է կայացվում քրեական գործը կարճելու մասին: Սակայն ընդհանուր առմամբ դա չի փոխում այս փուլի բնութագիրը:

Ի. Յա. Ֆոյնիցկին այսպես է մեկնաբանում այս փուլը. «Քրեական գործերում, պարզվում է, անհրաժեշտ է հասարակական իշխանության մասնակցությունը, որովհետև մասնավոր անձանց ուժերը կարող են բավարար չլինել գործը պատշաճ նախապատրաստելու համար, ինչպես նաև այն պատճառով, որ քրեական գործերի հիմքում ընկած է հանրային շահը, որի հետ մասնավոր շահերը ոչ միշտ են համահունչ»³: Այսինքն՝ այս փուլում առաջնայինը հանրային շահի դրսևորումն է: Իրոք, նախնական քննության ընթացքում հավաքվում են ապացույցներ, դրանցից ձևավորվում է համակարգ, որի օգնությամբ պետական մեղադրողը հիմնավորում է իր պահանջները հետագա դատական քննության ընթացքում: Յետևաբար, նախնական քննությունը ապացուցողական հիմք է ձևավորում դատական քննության ընթացքում պետական մեղադրանքի իրականացման համար: Ընդ որում, անհրաժեշտ է հաշվի առնել, որ պետական մեղադրանքի գործառնություն հանրային հիմքը առավելագույնս է դրսևորվում:

Մ. Ա. Չելցովը գրում է. «Քրեական դատավարության կառուցման ընդհանուր խնդիրներին համահունչ՝ խորհրդային օրենսդիրը պետք է գտներ նախնական քննության այնպիսի ձևեր, որոնք մի կողմից ապահովեին բոլոր հանցագործությունների արագ ու լրիվ բացահայտումը,

իսկ մյուս կողմից առավելագույնս երաշխավորեին դատավարության բոլոր մասնակիցների, այդ թվում և մեղադրյալների ու հանցագործությունից տուժողների իրավունքներն ու օրինական շահերը»⁴: Օրենսդիրը, անշուշտ, նախատեսել է նախնական քննության ընթացքում ինչպես մեղադրյալների, կասկածյալների, այնպես էլ հանցագործությունից տուժողների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության մեխանիզմներ: Սակայն այնուամենայնիվ պետք է նկատել, որ դա չէ նախնական քննության հիմքը: Իսկ Մ. Ա. Չելցովի՝ իրավունքների ու օրինական շահերի մասին հիշատակումն ավելի շուտ խորհրդային քրեական դատավարությունը ևս մեկ անգամ գունազարդելու ցանկություն է: Եթե հիշենք դրա ռեպրեսիվ բնույթի մասին, ապա պարզ է դառնում, որ նախնական քննության ընթացքում իրավունքների ու օրինական շահերի մասին հիշատակումը դատարկ խոսք է, որը խեղաթյուրում է իրավապահական մարմինների գործունեության իրական պատկերը:

Հետխորհրդային տարածքի պետություններում նախնական քննությունը, անշուշտ, տարբերվում է Խորհրդային Միությունում իրականացվող նախնական քննությունից: Անկասկած, ներկայումս «միջնդատարական վարույթը կառուցված է այնպես, որ հուսալիորեն ապահովի հանցագործություններից տուժած անձանց (ինչպես ֆիզիկական, այնպես էլ իրավաբանական) իրավունքներն ու օրինական շահերը, ինչպես նաև պաշտպանի անձին անօրինական ու անհիմն մեղադրանքից, դատապարտումից, նրա իրավունքներն ու ազատությունները սահմանափակելուց»⁵: Այսինքն՝ այո՛, ներկայումս Հայաստանի Հանրապետությունում ստեղծված են մեխանիզմներ, որոնք ունակ են երաշխավորելու անձի իրավունքներն ու օրինական շահերը նախնական քննության ընթացքում: Սակայն, այնուամենայնիվ, չի կարելի մոռանալ նախնական քննության բնույթի մասին, որը փոքր-ինչ այլ նպա-

տակներ է հետապնդում, քան անձի իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելը:

Ամենահամոզիչ փաստարկներից մեկն այն է, որ տվյալ փուլում որոշում կայացնելու իրավագործությամբ օժտված պաշտոնատար անձինք են քննիչը, հետաքննության մարմինը: Թվարկված պաշտոնատար անձինք, ՀՀ քր. դատ. օր.-ի 7-րդ գլխի համաձայն, մեղադրանքի կողմի մեջ մտնող սուբյեկտներ են: Այստեղից օրինաչափորեն բխում է, որ նախնական քննության ժամանակ ամեն ինչ կառուցվում է մեղադրանքի շուրջը, իսկ մեղադրանքի ու քրեական հետապնդման գործառույթներն իրականացվում են առավելագույնս:

Սակայն և՛ նախնական քննության, և՛ դրա կենտրոնական գործող անձի՝ քննիչի հանդեպ նման մոտեցումը արտացոլվել է միայն ԱՊՀ պետություններից շատերի հետխորհրդային նոր օրենսդրությունում: Դատավարական երեք հիմնական գործառույթների (մեղադրանքի, պաշտպանության և քրեական գործի լուծման) հայեցակարգը երկար ժամանակ անվիճարկելի չէր համարվում: Այդ առումով փորձ արվեց պաշտպանելու այն դիրքորոշումը, ըստ որի քննչական գործունեությունը հատուկ տեսակ է՝ պայմանավորված քննության նախնական բնույթով, որը միտված է քրեական գործի դատական լուծման համար պայմանների ստեղծմանը: Պաշտպանելով այս տեսակետը՝ Ա. Պ. Գուլյանը գրում է. «Մեղադրանքի, պաշտպանության և քրեական գործի լուծման գործառույթների իրականացումը կանխորոշվում է գործի հանգամանքների հետազոտման արդյունքներով, ընդ որում՝ հանրահայտ է, որ քննիչի ամբողջ գործունեության մեջ ամենամեծ տեսակարար կշիռը բաժին է ընկնում հենց գործի հանգամանքների հետազոտմանը, ճշմարտության բացահայտմանը»⁶: Դրանից նա եզրակացնում է. «Նկատի ունենալով ասվածը՝ պետք է ընդունել, որ գործի հանգամանքների հետազոտումը քննիչի դատավարական գործառույթներից

ԳԻՏԱԿԱՆ ԿՅՈՒՄ

մեկն է»⁷:

Ա. Պ. Գուլյանի ասածի տրամաբանությունն այն է, որ, իրոք, նախքան կոնկրետ քրեական գործի վերաբերյալ եզրակացություն կատարելը և այն համապատասխան դատավարական որոշմամբ իրացնելը քննիչը հետազոտում է գործի հանգամանքները, այսինքն՝ իրականացնում է լիարժեք հետազոտական աշխատանք: Այս հարցում նա նման է գիտական հետազոտողի, որը բարեխղճորեն հավաքում է տվյալներ՝ նախապես չհիմնալով, թե ինչ եզրահանգումների համար կարող են հիմք դառնալ դրանք հետազայում: Միայն բավարար չափով տվյալներ հավաքելուց հետո է հնարավոր եզրահանգումներ անել: Նույնը և քննիչն է, որը պարտավոր է լինել անաչառ ապացույցներ հավաքելիս, որոնց հիման վրա, երբ դրանք արդեն հավաքվել են բավարար չափով, նա կարող է համապատասխան եզրակացություն անել հանցագործության առկայության կամ բացակայության, կոնկրետ անձի մեղավորության կամ անմեղության մասին: Ըստ այդմ, կասկած չկա, որ քննիչը, իրոք, հետազոտական աշխատանք է կատարում, որի նպատակը քրեական գործով ապացուցման ենթակա հանգամանքները պարզելն է: Սակայն այս փաստարկը բնավ չի ժխտում վերը նշված դատավարական երեք հիմնական գործառույթների հայեցակարգը: Չէ՞ որ և՛ մեղադրանքը, և՛ պաշտպանությունը, և՛ քրեական գործի լուծումը մտածական գործունեություն են: Մեղադրանքը կառուցելու համար այն կազմող անձը պիտի հանդգնած լինի իր ճշմարտացիության մեջ, իսկ դրա համար անհրաժեշտ է, որ նա բազմակողմանիորեն հետազոտի քրեական գործի հանգամանքները: Նույնը անհրաժեշտ է և՛ պաշտպանություն իրականացնելու, և՛ քրեական գործը լուծելու համար: Ուստի գործի հանգամանքների հետազոտումը, որը պետք է իրականացնի

քննիչը, մեղադրական գործառույթի մի մասն է: Առավել ևս, որ Ա. Պ. Գուլյանն ինքը գրում է. «Լինելով իշխանության ներկայացուցիչ՝ քննիչը ոչ միայն հետազոտում է գործի հանգամանքները և պարզում ճշմարտությունը, այլև միջոցներ է ձեռնարկում մեղավորներին քրեական պատասխանատվության ենթարկելու, ապօրինաբար մեղադրվող անձանց արդարացնելու, հանցագործությունների նախազգուշացման ու կանխման, հանցագործության հետևանքով պատճառված նյութական վնասի փոխհատուցման համար, այսինքն՝ այնպիսի միջոցներ է ձեռնարկում, որոնք ոչ մի կերպ չեն տեղավորվում «հետազոտում» և «ճշմարտության պարզում» հասկացությունների մեջ»⁸: Ինչպես երևում է այս մեջբերումից, Ա. Պ. Գուլյանն ինքը հակված չէ քննիչի գործունեությունը հանգեցնելու ճշմարտության հետազոտմանը, այլև խոստովանում է, որ նա նաև իրականացնում է գործունեության այնպիսի ձևեր, ինչպիսիք են մեղավորներին քրեական պատասխանատվության ենթարկելը, հանցագործությունների կանխումը և այլն, այսինքն՝ գործունեություն, որում ակներևաբար իրացվում է մեղադրանքի գործառույթը: Ուստի այն, որ օրենսդիրը քրեական դատավարության ժամանակ քննիչին դասել է մեղադրանքի կողմի մեջ մտնող մասնակիցների շարքը, միանգամայն հիմնավորված է:

Հայրենական դատավարական գրականության մեջ քրեադատավարական գործառույթների հիմնախնդիրն առավել մանրամասն ուսումնասիրվել է պրոֆեսոր Գ. Ղազինյանի կողմից: Նոր գաղափարների որդեգրումը հիմք դրեց քրեական դատավարության իրավունքի տեսության մեջ գործառույթների վերաբերյալ նոր մոտեցումների արտահայտման: Ելնելով քրեական դատավարությունում մրցակցության գործառույթի հետևողական կիրառումից՝ Գ. Ղազինյանն առաջարկեց քրեադատավարական գործառույթների համակարգը ներկայացնել հետևյալ կերպ՝ հիմնարար,

հիմնական և լրացուցիչ գործառնություններ: Հեղինակը մեղադրանքը, պաշտպանությունը և գործի լուծումը ներկայացնում է որպես հիմնարար գործառնություններ: Մինչդեռ տական վարություն որպես հիմնական գործառնություն է ներկայացվում քննության գործառնությամբ, որն իրականացում են նախաքննության մարմինները հետաքննության մարմինների մասնակցությամբ⁹:

Քննիչի կողմից իրականացվող գործառնությունների հիմնախնդիրն առավել մանրամասն ուսումնասիրել է Ա. Թաթոյանը իր՝ «Գործի քննությունը քրեադատավարական գործառնությունների համակարգում (համեմատադասական վերլուծություն)» թեկնածուական ատենախոսությունում: Նա նույնպես պաշտպանում է վերը նշված այն գաղափարը, որը քննիչի հիմնական գործառնությամբ քրեական գործի քննությունն է¹⁰: Ինչպես տեսնում ենք, մինչդեռ տական վարություն քրեական դատավարության գործառնությունների դասակարգման հարցը մնում է վիճելի:

Այն հանգամանքը, որ քննիչը նախնական քննության առանցքային դեմքն է, որը միաժամանակ քրեական դատավարության ժամանակ մեղադրանքի կողմի ներկայացուցիչն է, հնարավորություն է ընձեռում եզրակացնելու, որ մեղադրանքի գործառնություն ընկած է նախնական քննության հիմքում: Նման հետևության ենք հանգում նաև Հայաստանի Հանրապետության և հետխորհրդային տարածքում ձևավորված մի շարք այլ երկրների քրեական դատավարության ընդհանուր բնութագրից: Այն ունի խառը բնույթ, որտեղ «դատական քննությունը լիովին համապատասխանում է մրցակցային քրեական դատավարության պահանջներին, իսկ մինչդեռ տական փուլերում առկա են ինկվիզիցիոն դատավարության գծեր՝ ոչ լրիվ հրապարակայնություն, կողմերի լիակատար հավասարության բացակայություն, հետևաբար և՛ իրական մրցակցության բացակայություն, գրավոր ձևի առկայություն և այլն»¹¹: Քրեական դատավարության այսօրինակ բնորո-

շումը հաստատում է այն պնդումը, որ նախնական քննությունը օժտված է ինկվիզիցիոն դատավարության գծերով և, հետևաբար, հիմնված է մեղադրանքի գործառնության իրականացման վրա:

Քրեական դատավարության նշված բնութագիրը ևս մեկ փաստարկ է հօգուտ այն բանի, որ նախնական քննության ընթացքում առավել լիարժեքորեն է իրացվում մեղադրանքի գործառնությունը, իսկ հիշյալ փուլի կենտրոնական դեմքը քննիչն է: Ընդ որում, իհարկե, անհրաժեշտ է վերապահում անել առ այն, որ ժամանակակից նախնական քննության ինկվիզիցիոն բնույթը միջնադարյան ինկվիզիցիայի կրկնությունը չէ, որը ինկվիզիցիոն դատավարության յուրատեսակ չափանմուշ է: Միանգամայն արդարացի է Կ. Բ. Կալինովսկու¹² դիտարկումը, որն ուշադրություն է դարձնում այն փաստին, որ ցանկացած դասակարգում պայմանական է, հետևաբար և չի կարելի ժամանակակից նախնական քննությունը բնութագրել որպես քրեական դատավարության ինկվիզիցիոն հատկանիշներ պարունակող՝ դրանով իսկ պիտակավորելով ու «սևացնելով» քրեական դատավարության նշյալ փուլը: Իհարկե, ժողովրդավարական պետությանը բնորոշ գծերից է այն, որ այն անձի իրավունքների ու օրինական շահերի առավելագույն պաշտպանության համար ձեռնարկում է հնարավոր բոլոր միջոցները նաև քրեական դատավարության այս փուլում:

Նշելով, որ նախնական քննության ընթացքում առավելագույնս է իրականացվում մեղադրանքի գործառնությունը, չի կարելի ժխտել, որ դա չի հակասում քրեական վարույթի հիմնական պահանջներից մեկին՝ անձի իրավունքների ու ազատությունների երաշխավորմանը: Ընդ որում, հարկավոր է հաշվի առնել, որ քրեական դատավարության ընթացքում անհրաժեշտ է պաշտպանել դատավարության բոլոր մասնակիցների իրավունքներն ու ազատությունները, ոչ թե միայն մեղադրյալին ու կասկածյալին: Նախնական քննություն-

ԳԻՏԱԿԱՆ ԿՅՈՒՆ

նը, թերևս, նպաստում է անձի իրավունքների ու ազատությունների պաշտպանության գործում առկա շեղումների չեզոքացմանը հոգևոր մեղադրյալի, կասկածյալի: Նշյալ շեղումներն առաջանում են միանգամայն հասկանալի բնական պատճառներով, որոնց էությունն այն է, որ հանրային իշխանությունը մինչև նախնական քննություն կատարելը չի տիրապետում կատարված հանցագործության մասին բավարար չափով տեղեկության: Այդ պատճառով նա չի կարող կայացնել որևէ որոշում՝ գործն ըստ էության լուծելու համար: Հաշվի առնելով, որ նախնական քննության ընթացքում հանրային իշխանությունը քննիչն է, իսկ իրականացվում է այն մեղադրանքի գործառույթի մեջ, ակնհայտ է դառնում, որ մեղադրանքն առանց նախնական քննության զրկված է իրեն անհրաժեշտ հիմնավորումներից իր դիրքորոշումը պաշտպանելու համար, քանի որ զրկված է անհրաժեշտ ապացույցները վաղօրոք հավաքելու հնարավորությունից: Դրա հետևանքով կարող են վնասվել հանցագործությունից տուժած անձի իրավունքներն ու ազատությունները, քանի որ նա արդյունավետորեն չի պաշտպանվի պետական մարմինների, այսինքն՝ հանրային իշխանության կողմից: Նախնական քննությունը վերացնում է այդ շեղումը, քանի որ դրա ընթացքում հավաքվում են ապացույցներ, որոնք հետագայում դառնում են մեղադրանքի կողմի փաստարկներ դատարանում ծավալվող մրցակցության ժամանակ:

Ընդ որում, չի կարելի նախնական քննությունը դիտարկել որպես մի փուլ, որի ընթացքում փաստարկներով զինվում է քրեական դատավարության կողմերից միայն մեկը՝ մեղադրանքի կողմը: Մյուս կողմն իրավունքներից զրկված չէ և նույնպես կարող է մասնակցել, միայն թե իր ապացուցողական բազայի ձևավորմանը նա հնարավորություն ունի ծանոթանալու հա-

վաքված ապացույցներին և քննադատելու դրանք ինչպես նախնական քննության ընթացքում, այնպես էլ հետագայում՝ դատական քննության ընթացքում: Բացի այդ՝ նա օժտված է իրավունքներով, որոնց օգնությամբ հնարավորություն է ստանում պաշտպանելու իր շահերը քրեական դատավարության տվյալ փուլում: Ընդ որում, նախնական քննության անցկացման ձևն ինքնին ենթադրում է ոչ միայն տուժողների, այլև պաշտպանության կողմի իրավունքներն ու օրինական շահերը: Ժողովրդավարական երկրում անհնար է և անթույլատրելի, երբ մեղադրյալը, կասկածյալը ձայնագրուկ օբյեկտ են, որից ստանում են լոկ արդարադատության համար անհրաժեշտ տեղեկություններ, ինչին ևս վերաբերվում են չափազանց կասկածանորեն: Մեղադրյալը, կասկածյալը դեռ հիշյալ փուլում քրեական դատավարության պակաս կարևոր մասնակիցներ չեն, քան դատական քննության փուլում: Նրանք կարող են ակտիվորեն մասնակցել ապացույցների հավաքմանն ու զննատմանը: Թեև ՀՀ քր. դատ. օր.-ի 16-րդ գլխում այն չի համարվում ապացույցման սուբյեկտ, սակայն օժտված է դրա համար անհրաժեշտ բոլոր իրավունքներով: Այսպես, համաձայն ՀՀ քր. դատ. օր.-ի հոդված 65-ի՝ մեղադրյալն իրավունք ունի ցուցմունքներ տալ կամ հրաժարվել ցուցմունքներ տալուց, բացատրություններ տալ կամ հրաժարվել բացատրություններ տալուց, իր միջնորդությամբ՝ հետաքննության մարմնի, քննիչի կամ դատախազի թույլտվությամբ, անձամբ կամ պաշտպանի միջոցով մասնակցել քննչական կամ այլ դատավարական գործողությունների, ներկայացնել նյութեր քրեական գործին կցելու և հետագոտելու համար և այլն:

Այդուհանդերձ, չնայած մեղադրյալի, կասկածյալի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության բազմաթիվ երաշխիքներին, նախնական քննության ընդհանուր ուղղվածությունը որոշվում է մեղադրանքի գործառույթով: Ժամանակա-

կից ժողովրդավարական պետության խնդիրն այն է, որ նշյալ գործառույթը նախնական քննության ընթացքում ունենա քաղաքակիրթ ձևեր, ինչը ենթադրում է անձի նկատմամբ հարգանք՝ անկախ քրեական դատավարության ընթացքում նրա դատավարական վիճակից: Այսինքն՝ նախնական քննությունը պետք է ընդունի այնպիսի ծեղեր, որոնք անհնար կդարձնեն պաշտոնատար անձանց ու պետական մարմինների կամայականությունները: Նախնական քննության կազմակերպման ու նորմատիվ կարգավորման հանդեպ այսպիսի մոտեցումը ինկվիզիցիոն դատավարության տարրեր չդրսևորելու երաշխիքներ է ստեղծում: Նախնական քննությունը պետք է ընթանա օրինականության ու անձի իրավունքների և օրինական շահերի պաշտպանության պայմաններում: Այս փուլում հետաքննության մարմինն ու քննիչը պարտավոր են պահպանել դատավարության մասնակիցների, ինչպես նաև քրեական գործով վարույթին մասնակցող այլ անձանց՝ Սահմանադրությամբ և օրենքներով երաշխավորված իրավունքներն ու ազատությունները (անձի անձեռնմխելիության, բնակարանի անձեռնմխելիության, անձնական և ընտանեկան կյանքի գաղտնիության, պաշտպանության իրավունքը և այլն)¹⁹:

Նշված երաշխիքները հատկապես կարևոր են, եթե նկատի առնենք այն, որ մեղադրյալը, կասկածյալը քրեական դատավարության այն մասնակիցներն են, որոնց իրավունքներն ու ազատությունները մյուսների համեմատ ամենաշատը կարող են սահմանափակվել, որն անխուսափելիորեն խոչընդոտներ կհարուցի իրենց օրինական շահերն իրացնելու հարցում: Այսպիսի կարգավիճակը դժվարացնում է նրանց կողմից իրենց իրավունքներն ու օրինական շահերը, ինչպես նաև դիրքորոշումը պաշտպանելը, որի էությունը կարող է լինել մեղադրանքը հերքելը կամ մեղմելը: Ուստի մեղադրյալի, կասկածյալի ոչ շահավետ վիճակը գոմե որևէ կերպ փոխհատու-

ցելու համար անհրաժեշտ է, քրեադատավարական օրենսդրությունում նախատեսվեն այդ անձանց իրավունքներն ու ազատությունները երաշխավորող մեխանիզմներ: Ժողովրդավարական պետությունների օրենսդրությունները նախատեսում են նման մեխանիզմներ: Ընդ որում, պետք է նշել, որ երբեմն դրանց օրենսդրական ամրագրումն ու իրավապահպան մարմինների կողմից գործնականում կիրառելը որոշ տարակուսանք են հարուցում: Դա պայմանավորված է այն բանով, որ դատավարության կողմերից մեկը, իբր, չհիմնավորված կերպով ուժեղացվում է, ընդ որում՝ ի հաշիվ մյուս կողմի: Հենց դրանով են բացատրվում այն դժգոհությունները, թե քրեադատավարական օրենսդրությունը պաշտպանում է մեղադրյալին, կասկածյալին, և բոլորովին մոռացել է այն մասին, որ տուժածի իրավունքները ևս պաշտպանության կարիք ունեն: Իրականում դա բնավ էլ այդպես չէ: Քրեադատավարական օրենսդրությունը ձգտում է հավասարապես պաշտպանել քրեական դատավարության բոլոր մասնակիցների իրավունքներն ու ազատությունները: Ընդ որում, նրա ելակետն այն է, որ մեղադրյալի սահմանադրական իրավունքներն ու ազատությունները կարող են լրջորեն սահմանափակվել, ուստի նրանց տրվում են դատավարական մի շարք իրավունքներ, որոնց իրացումը կոչված է պաշտպանելու նրանց իրավապահպան մարմինների պաշտոնատար անձանց կամայականություններից:

Ընդհանուր առմամբ նախնական քննությունը, ինչպես և քրեական դատավարության ցանկացած այլ փուլ, օժտված է որոշակի առանձնահատկություններով, որոնք դրսևորվում են նաև քրեական դատավարության սկզբունքների իրականացման մեջ: Այսպես, որոշ չափով սահմանափակված է հրապարակայնության սկզբունքը: Համաձայն ՀՀ քր. դատ. օր.-ի հոդված 201-ի մաս 1-ի՝ «Նախնական քննության տվյալները ենթակա են հրապարակման

ԳԻՏԱԿԱՆ ԿՅՈՒՄ

միայն գործի վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ»: Նշված սկզբունքի այս սահմանափակումը պայմանավորված է կոնկրետ քրեական գործերի արդյունավետ քննության և ճշմարտության բացահայտման անհրաժեշտությամբ: Ընդ որում, ինչպես իրավացիորեն նկատում է Յու. Վ. Ֆրանցիֆերովը. «Նախաքննության տվյալների հրապարակման անթույլատրելիությունը չի նշանակում, թե նախաքննությունը գաղտնի է, ինչպես, օրինակ, օպերատիվ-հետախուզական գործունեությունը, քանի որ գործի քննության մասին տեղեկությունները կարող են գրավել հասարակայնության, զանգվածային լրատվամիջոցների ուշադրությունը: Եթե այդ տվյալների հրապարակումը չխանգարի քննությանը և չհանգեցնի դատավարության մասնակիցների իրավունքների խախտմանը, իրավասու պաշտոնատար անձինք կարող են թույլատրել դրանց հրապարակումը որոշակի սահմաններում»¹⁴:

Բացի այդ, կարելի է նշել, որ նախնական քննությանը բնորոշ է քննության ակտիվության ու արագության սկզբունքը: Այսպես, նախնական քննության արագությունը պայմանավորված է դրա համար սահմանված բավականին կարճ ժամկետներով: ԶՅ քր. դատ. օր.-ի հոդված 197-ի մաս 1-ում ասվում է. «Յետաքննությունն ավարտվում է քրեական գործ հարուցելու պահից 10 օրվա ընթացքում»: ԶՅ քր. դատ. օր.-ի հոդված 197-ի մաս 2-ում սահմանված են նաև նախնական քննության ժամկետները: Այս կապակցությամբ նշված նորմում ասվում է. «Քրեական գործով նախաքննությունը պետք է ավարտվի ոչ ուշ, քան երկամսյա ժամկետում: Այդ ժամկետը հաշվվում է քրեական գործ հարուցելու մասին որոշում կայացնելու օրվանից և ավարտվում է գործը դատարան ուղարկելու մասին կամ գործով վարույթի կարճման մասին որոշման կայացման օրը»: Քննու-

յան ընթացքում ակտիվությունը սահմանվում է ԶՅ քր. դատ. օր.-ի 26-րդ գլխի նորմերով, ինչպես նաև ԶՅ քր. դատ. օր.-ի այն գլուխներով, որոնցում կանոնակարգվում է քննչական և այլ դատավարական գործողությունների կատարումը, որոնք կարող են իրականացվել քրեական դատավարության տվյալ փուլում:

Քննության ակտիվության ու արագության սկզբունքը հարկ է դիտարկել որպես «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային համաձայնագրի» հոդված 14-ի 3-րդ կետում ամրագրված սկզբունքի իրականացում, որի համաձայն «Յուրաքանչյուր ոք իր նկատմամբ առաջադրված ցանկացած քրեական մեղադրանքի քննության ժամանակ, լիակատար հավասարության հիման վրա, նվազագույնը հետևյալ երաշխիքների իրավունք ունի... 3) առանց չարդարացված հապաղման դատվելու» (հոդված 2)»: Նշյալ սկզբունքի իրացումը ենթադրում է նաև կոնկրետ քրեական գործի բոլոր հանգամանքների լրիվ, բազմակողմանի և օբյեկտիվ քննություն:

Նախնական քննությանը հատուկ մյուս սկզբունքը քննիչի դատավարական ինքնուրույնության խնդիրն է: Խորհրդային նախնական քննության առնչությամբ բնութագրելով նշյալ սկզբունքը՝ Ա. Պ. Գուլյակը գրում է. «Քննիչը քննության ուղղվածության, քննչական գործողությունների կատարման մասին բոլոր որոշումները կայացնում է ինքնուրույն, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով նախատեսված է դատախազի թույլտվությունը ստանալը, և ամբողջովին պատասխանատու է դրանք օրինական կարգով ու ժամանակին իրականացնելու համար»¹⁵: Այս սկզբունքի գործողությունը այսօր էլ նախնական քննության խնդիրների արդյունավետ լուծման գրավական է: Այդ պատճառով էլ օրենսդիրը դրան առանձնահատուկ ուշադրություն է դարձնում: Այսպես, ԶՅ քր. դատ. օր.-ի հոդված 55-ի մաս 3-ում ասված է. «Քրեական գործն իր վարույթն ընդունե-

լուց հետո քննիչը գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննության համար լիազորված է ինքնուրույն ուղղություն տալ քննությանը, ընդունել անհրաժեշտ որոշումներ, սույն օրենսգրքի դրույթներին համապատասխան իրականացնել քննչական և այլ դատավարական գործողություններ, բացառությամբ այն դեպքերի, երբ քրեական դատավարական օրենքով նախատեսվում է դատարանից ստանալ թույլտվություն»: Մ. Ս. Ստրոգովիչը գրում է. «Քննիչը օժտված է որոշակի դատավարական անկախությամբ, նա գործի վերաբերյալ կայացնում է այն որոշումները, որոնց իրավացիության մեջ ինքը համոզված է, և չի կարող հարկադրաբար կատարել գործողություններ և կայացնել որոշումներ, որոնք նա համարում է սխալ, որոնց անհրաժեշտությունը, նրա համոզմամբ, չի բխում գործի հանգամանքներից»¹⁶:

Դատաիրավական բարեփոխումները ենթադրում են լիազորությունների վերաբաշխում և իրավապահպան մարմինների համակարգի վերակառուցում: Գ. Ղազինյանը արդարացիորեն նշում է, որ նախաքննության կազմակերպական հիմնախնդիրները քննարկելիս անհրաժեշտ է ուշադրություն դարձնել երեք փոխկապված խնդիրների վրա՝ նախ՝ արդյունավետ կազմակերպական կառույցի ստղծում, երկրորդ՝ քննիչի դատավարական անկախության ապահովում, երրորդ՝ դատախազի և քննչական բաժնի պետի քննության դատավարական ղեկավարման լիազորությունների ճիշտ հարաբերակցության որոշում¹⁷:

Սակայն քննիչի դատավարական ինքնուրույնությունը չի կարող լինել անսահմանափակ, քանի որ այդ դեպքում այն կվերածվի կամայականություն հրահրող գործոնի: Հենց այդ պատճառով օրենսդրությամբ մի շարք միջոցներ են նախատեսված հնարավոր շեղումները կանխելու համար, որոնք կարող են դրսևորվել քննիչի մեղադրական ուղղվածության և կամայականության այլ բացասական դրսևորումներում:

Այս կապակցությամբ ՀՀ քր. դատ. օր.-ի հոդված 55-ի մաս 3-ում ասված է. «Քննիչը պատասխանատվություն է կրում քննչական և այլ դատավարական գործողություններն օրինական ու ժամանակին կատարելու համար»: Բացի այդ, ՀՀ քր. դատ. օր.-ի հոդված 55-ի մաս 5-ում ամրագրված է. «Քննիչը պարտավոր է կատարել դատախազի օրինական ցուցումները»: Սրանից երևում է, որ քննիչի դատավարական ինքնուրույնությունը և սահմանափակվում է դատախազի կողմից, որը կարող է քննիչին պարտադիր կատարման ենթակա ցուցումներ տալ: Քննիչի համար պարտադիր են նաև քննչական բաժնի պետի ցուցումները: ՀՀ քր. դատ. օր.-ի հոդված 193-ի մաս 3-ում ասվում է. «Քննչական բաժնի պետի ցուցումները քննիչին տրվում են գրավոր և պարտադիր են կատարման համար»: Թեև այս դեպքում քննիչն իրավունք ունի դատախազին բողոքարկելու քննչական բաժնի պետի ցուցումները:

Քրեական դատավարության՝ նախնական քննությանն առնչվող կենտրոնական հիմնախնդիրներից մեկը քննիչի դատավարական ինքնուրույնության շրջանակը սահմանելու խնդիրն է: Պե՞տք է սահմանափակել այն՝ դրանով իսկ անվստահություն դրսևորելով քննիչի նկատմամբ, և սահմանափակելու դեպքում՝ ի՞նչ չափով: Ինչպես երևում է ՀՀ քր. դատ. օր.-ի մեջբերված նորմերից, Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը գերադասել է նշյալ հիմնախնդրի լուծման առաջին տարբերակը, այսինքն՝ անհրաժեշտ է համարել սահմանափակել քննիչի դատավարական ինքնուրույնությունը: Դա, թերևս, ողջամիտ ու հիմնավորված քայլ է: Չե՞ որ եթե ցանկացած իշխանական լիազորություն չսահմանափակվի, ապա կարող է վերածվել կամայականության, որը սպառնալիքի տակ կդնի անձի իրավունքներն ու ազատությունները, որոնք երաշխավորված են ՀՀ Սահմանադրությամբ և այլ օրենքներով: Դա լիովին վերաբերում է նաև քննիչին, որը նախնական քննության փուլում տիրա-

ԳԻՏԱԿԱՆ ԿՅՈՒՆ

պետում է դատավարական զգալի իշխանության քրեական դատավարության մի շարք մասնակիցների, հատկապես կասկածյալի և մեղադրյալի նկատմամբ:

Սակայն, ընդունելով քննիչի դատավարական ինքնուրույնության շրջանակի սահմանման խնդրի լուծման նշյալ տարբերակը, հարց է ծագում, թե ինչ չափով կարելի է և պետք է սահմանափակել քննիչի դատավարական ինքնուրույնությունը: Նրա ինքնուրույնությունը պե՞տք է արդյոք համապատասխանի դատավորի դատավարական ինքնուրույնությանը, թե՞ այն պիտի ավելին կամ պակաս լինի: Չե՞ որ նա, ինչպես վերն ասվեց, նախաքննության կենտրոնական դեմքն է, իսկ «նախաքննությունը կրում է մինչդատական և «դատականին նպաստելու» բնույթ»¹⁸: Եթե այդպես է, ապա քննիչին կարելի է համարել դատավորի անձին հավասարազոր անձ, այսինքն՝ համարել յուրատեսակ «փոքր» դատավոր: «Փոքր» այն պատճառով, որ նրա կայացրած որոշումները վերջնական չեն, այլ միայն նախնական են: Ըստ Մ. Ս. Ստրոգովիչի՝ «... քննիչի անկախությունը տարբերվում է դատավորների անկախությունից: Դատավորներին ոչ ոք, պետության ոչ մի մարմին, նույնիսկ վերադաս դատարանն իրավունք չունի ցուցումներ տալու, թե նրանք ինչպես պետք է լուծեն դատարանի քննությանը ենթակա գործը: Իսկ քննիչին ցուցումներ կարող է տալ դատախազը գործի քննությանն առնչվող բոլոր հարցերի վերաբերյալ, և դրանք քննիչի համար պարտադիր են»¹⁹: Հայաստանի Հանրապետության արդի քրեադատավարական օրենսդրությունը լիովին համապատասխանում է այդ սկզբունքին: Իրոք, համաձայն ՀՀ քր. դատ. օր.-ի հոդված 40-ի մաս 1-ի՝ «Արդարադատություն իրականացնելիս դատավորներն անկախ են և ենթարկվում են միայն օրենքին»: Իսկ նույն հոդվածի մաս 3-ում ասվում է. «Արդարադատու-

յունն իրականացվում է դատավորների նկատմամբ կողմնակի ներգործությունը բացառող պայմաններում»: Այսինքն՝ դատավորի լիազորություններն ավելի շատ են, քան քննիչի լիազորությունները և ավելի քիչ սահմանափակումներ ունեն:

Սակայն արդյոք հիմնավորվա՞ծ են դատավորի և քննիչի լիազորությունների այսպիսի տարբերությունները: Եվ հարկավոր է արդյոք պահպանել դրանք Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրությունում: Այս հարցի պատասխանը պիտի լինի հաստատական: Այո՛, այդպիսի տարբերակում պետք է լինի, և դա պայմանավորված է այն բանով, որ, ի տարբերություն դատավորի, քննիչը քրեական դատավարության մասնակից է մեղադրանքի կողմի, ուստի նրան դատավորի ունեցած լիազորություններով օժտելը կհանգեցնի մեղադրանքի կողմի չհիմնավորված ուժեղացմանը: Դա իր հերթին սպառնալիքի տակ է դնում մեղադրյալի ու կասկածյալի, ինչպես նաև քրեական դատավարության պաշտպանության կողմի բոլոր մասնակիցների իրավունքներն ու օրինական շահերի հնարավոր ոտնահարման սպառնալիք է պարունակում:

Դատավորի և քննիչի լիազորությունների տարբերության պահպանման օգտին խոսող մյուս հիմնավորումն այն է, որ նախնական քննության և դատական քննության փուլերում գործում են տարբեր մեխանիզմներ, որոնք երաշխավորում են մարդու իրավունքներն ու ազատությունները: Շնորհիվ այդ մեխանիզմների՝ տարբեր ձևերով իրացվում են նաև քրեական դատավարության առանձին սկզբունքներ: Այսպես, մրցակցության սկզբունքը նախնական քննության փուլում փոքր-ինչ այլ կերպ է դրսևորվում, քան դատական քննության փուլում: Ավելին՝ նախնական քննության փուլում այն որոշ չափով սահմանափակվում է: Պատահական չէ, որ որոշ հետազոտողներ ենթադրում էին և ենթադրում են, որ նշյալ սկզբունքը նախնական քննության փուլում առհասարակ չի գործում:

Մասնավորապես, Գ. Ն. Կոլբայան գրում է. «Մրցակցության սկզբունքը չի գործում ոչ միայն մեղադրանք առաջադրելու պահին, այլև նախաքննության ողջ ընթացքում, որովհետև քննիչը այդ ժամանակ իրականացնում է ինչպես մեղադրանքի գործառույթը, այնպես էլ գործի լուծման գործառույթը»²⁰: Այս դատողությունը ճամբարացի համարել, անշուշտ, չի կարելի, քանի որ նախաքննությանը խորթ չէ մրցակցությունը, որովհետև ոչ միայն մեղադրանքի կողմն է օժտված իր շահերը պաշտպանելու լիազորություններով, այլև պաշտպանության կողմն ունի իր օրինական շահերը պաշտպանելու դատավարական իրավունքներ: Ընդ որում, թե՛ մեկ, թե՛ մյուս կողմը հնարավորություն ունի ամբողջ ծավալով օգտվելու այդ իրավունքներից: Գ. Ն. Կոլբայայի տեսակետում արժեքավոր է այն միտքը, որն արտահայտվել է դատական քննության և նախաքննության ընթացքում մրցակցության սկզբունքի իրացումը համարելիս: Մրցակցության սկզբունքի սահմանափակվածությունը նախնական քննության փուլում էականորեն նվազեցնում է անձի իրավունքների ու ազատությունների երաշխիքները: Այն ծնում է իրավունքների ու ազատությունների պաշտպանության կախվածություն քննիչից: Ուստի քննիչի կամայականությունը գոնե փոքր-ինչ զսպելու համար նրա լիազորությունները սահմանափակվում են այլ անձանց լիազորություններով, որոնք քրեական դատավարության մասնակիցներ են:

Ժամանակակից քրեադատավարական օրենսդրությանը բնորոշ է այն բանի ձգտումը, որ մրցակցության սկզբունքը ավելի ամբողջական իրացվի դեռ նախնական քննության փուլում: Ըստ այդմ, համաձայն ՀՀ գործող քր. դատ. օր.-ում, պաշտպանին տրված են ավելի մեծ թվով իրավունքներ, քան տրված էր նախկին ՀԽՍՀ քր. դատ. օր.-ում: Այսպես, ըստ ՀՀ քր. դատ. օր.-ի հոդված 73-ի մաս 1-ի, պաշտպանն իրավունք ունի «քրեական գործով ձեռք բերել նյութեր, դրանք ներկայացնել

քրեական գործին կցելու և հետազոտելու համար», ինչպես նաև «հարցման ենթարկել մասնավոր անձանց, ինչպես նաև տարբեր կազմակերպություններից պահանջել տեղեկանքներ, բնութագրեր և այլ փաստաթղթեր, եթե դրանք չեն պարունակում պետական կամ ծառայողական գաղտնիք»: Բացի այդ, համաձայն նույն նորմի, պաշտպանն իրավունք ունի «պաշտպանյալի համաձայնությամբ հարցնել մասնագետների կարծիքը՝ պարզաբանելու համար իրավաբանական օգնություն ցույց տալու հետ կապված այն հարցերը, որոնք պահանջում են հատուկ գիտելիքներ»: Նշյալ իրավունքները հնարավորություն են ընձեռում փաստաբանին ակտիվ դիրքորոշում որդեգրելու դեռ նախնական քննության փուլում: Այս առումով անվիճելի է, որ քրեադատավարական օրենսդրությունը, փաստաբան-պաշտպանին օժտելով նշված իրավունքներով, լուրջ առաջընթաց քայլ է կատարել քրեական դատավարությունում մարդասիրական գաղափարների ամրապնդման ուղղությամբ:

Խորհրդային քրեադատավարական օրենսդրությանը բնորոշ էին այն նորմերը, որոնք ամրագրում էին այն փաստաբան-պաշտպանի պահիվ դերակատարումը: Ինչպես իրավափոքրեն նկատում է Ա. Ն. Սկլիզկովը. «Պաշտպանի դերը հանգեցվում էր կամ քննչական գործողություններ կատարելու, կամ գործին փաստաթղթեր և առարկաներ կցելու վերաբերյալ միջնորդություն հարուցելուն»²¹: Ա. Դավլետովը, բնութագրելով պաշտպանի իրական վիճակը խորհրդային քրեական դատավարությունում, գրում է. «Պաշտպանը խնդրում էր, իսկ քննիչը որոշում, ապացույցը լինի, թե ոչ: Ավելի պարզ ասած՝ քննիչը գործի «տերն էր», իսկ պաշտպանը՝ միջնորդը, խնդրատուն... քրեական դատավարության մարմինները ապացույցներ էին հավաքում, իսկ մյուս մասնակիցները, մասնավորապես՝ պաշտպանը, նրան աջակցում էին»²²: Ուստի զարմանալի չէ, որ որոշ իրավաբանների կարծիքով մրցակցության սկզբունքը բացա-

ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱԼՔ

կայում էր խորհրդային շրջանի քրեական դատավարությունում: Խորհրդային քրեական դատավարության նախնական քննության փուլում այդ սկզբունքի գործողության մասին կարող էին խոսել միայն այն հեղինակները, որոնք ձգտում էին հարմարեցնել իրենց տեսակետները այդ ժամանակաշրջանում տիրապետող գաղափարախոսությանը: Այսպես, Մ. Ս. Ստրոգովիչը, զարգացնելով նախնական քննության փուլում մրցակցության սկզբունքի գոյության մասին միտքը, համարում էր, որ քննիչը նշյալ փուլում, բացի մեղադրանքի գործառույթից, իրականացնում է նաև պաշտպանության գործառույթ: Այդ կապակցությամբ նա գրում է. «Եթե քննիչը պաշտպանության գործառույթ չիրականացներ, կստացվեր, որ բոլոր քրեական գործերով... քննության ամբողջ ընթացքում մինչև դրա ավարտը մեղադրյալն ինքն է միայն պաշտպանում իրեն, ուրիշ ոչ ոք նրան չի պաշտպանում, իսկ քննիչը, որ քննում է գործը և լայն լիազորություններ ունի՝ ներառյալ մեղադրյալի նկատմամբ հարկադրանքի միջոցների կիրառումը, մերկացնում է մեղադրյալին: Այդպիսի կառուցվածքը քննիչի գործունեությանը կհաղորդեր միակողմանի մեղադրական բնույթ, մինչդեռ օրենքով (Քրեական դատավարության հիմունքներ, հոդված 14) քննիչը պարտավոր է պարզել ոչ միայն մեղադրյալին մերկացնող, այլև նրան արդարացնող հանգամանքները»²³: Նման տեսակետներ ունեին նաև այդ շրջանի այլ իրավագետներ: Այսպես, Վ. Պ. Նաժմովը ենթադրում էր, որ քննիչն իր գործողություններով իրականացնում է և՛ մեղադրանքի, և՛ պաշտպանության գործառույթներ: Սակայն գործառույթների այսպիսի համատեղումը առկա է միայն մինչև քննիչի կողմից որպես մեղադրյալ ներգրավելու որոշում կայացնելը²⁴: Նշված տեսակետները քննադատվել են դեռ խորհրդային քրեադատա-

վարական օրենսդրության գործողության շրջանում: Այսպես, Ա. Պ. Գուլյակը գրում է. «Անհասկանալի է, թե ում և ինչպես է միաժամանակ մեղադրում և պաշտպանում քննիչը նախքան անձին որպես մեղադրյալ ներգրավելը կամ մինչև գործը կարճելը, որով ոչ ոք ներգրավված չէ որպես մեղադրյալ, ինչի հիման վրա քննիչը կարող է անել այդ, եթե ոչ մեկը, ոչ մյուսը գերդասելի, ճիշտ և հիմնավորված չէ նրա համար, պարզ չէ, թե ինչ գործառույթ է ընտրում և իրացնում քննիչը, երբ ոչ արդարացնող հիմքով կարճում է գործը, որով ամձը չէր ներգրավվել որպես մեղադրյալ»²⁵:

Ժողովրդավարական պետության քրեադատավարական օրենսդրությունում նախնական քննության փուլի համար կատարյալ մոդել է փաստաբան-պաշտպանի ակտիվ դերակատարումը նշյալ փուլում: Դրա շնորհիվ հնարավոր է դառնում մրցակցության սկզբունքի ավելի լիակատար իրացումը: Պետք է ասել, որ իրավացի է այն պնդումը, թե «...ժամանակակից ռուսաստանյան քրեական դատավարությունում նախնական քննության փուլում մեղադրանքի և պաշտպանության կողմերի համագործակցությունը չի կարող կառուցվել «հիմնական մասնակից և օժանդակող» սկզբունքով»²⁶: Այս դիտարկումը միանգամայն արդարացի է նաև Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրության նկատմամբ: Հենց այդ պատճառով էլ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարությունում պաշտպանին տրվել է վերը նշված իրավունքները, որոնք հնարավորություն են ընձեռնում փաստաբան-պաշտպանին ակտիվ դիրք գրավելու իր պաշտպանյալի իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության հարցում դեռ նախնական քննության փուլում:

Նախնական քննության փուլում պաշտպանի իրավունքների ընդլայնումը քննիչի կամայականություններից պաշտպանվելու երաշխիք է: Դա բարենպաստ պայմաններ է ստեղծում՝ խուսափելու մեղադրական

ուղղվածությունից: Պաշտպանի ակտիվությունը օրենքով իրեն տրված իրավունքները կիրառելիս թույլ է տալիս ավելի արդյունավետորեն պաշտպանել կասկածյալների, մեղադրյալների իրավունքներն ու օրինական շահերը: Ընդ որում, պաշտպանին օրենքով վերապահվում է պաշտպանություն իրականացնելու ռազմավարության ընտրության իրավունք: Այսպես, նրանք կարող են ընտրել ակտիվ պաշտպանության ռազմավարություն, նաև հակառակը՝ պասիվ պաշտպանության: Քննության տարբեր պայմաններում և իրադրություններում թե՛ մեկը, թե՛ մյուսը կարող են լինել բավականին արդյունավետ պաշտպանյալի իրավունքները պաշտպանելու համար: Սակայն գործնականում մինչ այժմ փաստաբանները նախընտրում են կիրառել պասիվ պաշտպանություն, ինչպես Խորհրդային Միության ժամանակներում: Դա առավելապես պայմանավորված է այն բանով, որ նման ռազմավարությունը ավելի քիչ խնդրահարույց է. պաշտպանը խնայում է իր նյարդերը, ժամանակը, մտավոր ուժերը: Իսկ ակտիվ ռազմավարությունը ավելի շատ զոհողություն է ենթադրում, քանի որ փաստաբանից պահանջում է ոչ միայն գիտելիքներ ու հմտություններ, այլև կամք որոշակի հարցեր լուծելիս, որոնք կապված են մասնավոր անձանց հարցման և այդ կարգի հարցերի հետ: Նա պետք է կարողանա մարտավարական խնդիրներ լուծել: Պարզ է, որ այդպիսի ռազմավարությունը չափազանց աշխատատար է, ուստի և շատ քիչ է գրավում փաստաբաններին:

Սակայն բնավ էլ միայն փաստաբանների չկանությունը չէ պատճառը, որ նրանք չեն ընտրում ակտիվ գործողությունների ռազմավարությունը: Դրան նպաստում է նաև այն, որ քրեադատավարական օրենքը բավարար հստակությամբ չի կանոնակարգում մասնավոր անձանց հարցումն անցկացնելու, տարբեր կազմակերպություններից տեղեկանքներ, բնութագրեր և այլ փաստաթղթեր պահանջելու իրավունքները:

Այսպես, ԶԳ քր. դատ. օր.-ը չի բացատրում, թե ինչպես կարող է պաշտպանն իրականացնել մասնավոր անձանց հարցումը: Դա իրականացվում է բացատրությամբ, թե՞ որևէ այլ ձևով: Մասնավոր անձինք պարտավոր են պաշտպանին նման բացատրություններ տալ, թե՞ դա միայն իրենց իրավունքն է: Նմանապես պարզ չէ, թե ինչ նշանակություն է ունենալու հիշյալ հարցումը անցկացվող քննության համար, ապացույցների համակարգի համար, որը հավաքում է քննիչը, և որը հետագայում ներկայացվելու է դատարան: Օրինակ՝ ԶԳ քր. դատ. օր.-ի հոդված 104-ի մաս 2-ում մասնավոր անձանց հարցումը չի համարվում որպես ապացույցների աղբյուրներից մեկը: Այդ առումով անհասկանալի է դառնում, թե ինչու է պետք մասնավոր անձանց հարցումը, եթե այն չի կարող դիտվել որպես ապացույց: Մասնավոր ԶԳ քր. դատ. օր.-ի 16-րդ գլխում, որտեղ խոսվում է ապացուցման գործընթացի մասին, ոչինչ չի ասվում պաշտպանի՝ որպես այդ գործընթացի սուբյեկտի մասին: Թեև, օրինակ, ԶԳ քր. դատ. օր.-ի հոդված 124-ի մաս 2-ում ասված է. «Մեղադրյալի մեղքի և պատասխանատվությունը խստացնող հանգամանքների առկայության ապացուցման պարտականությունը կրում են քրեական հետապնդման մարմինները»: Այսինքն՝ քրեական հետապնդում իրականացնող մարմինները ճանաչվում են որպես ապացուցման գործընթացի սուբյեկտներ: Մեղադրանքի կողմի հետ պաշտպանության կողմի դատավարական իրավունքները քիչ թե շատ հավասարեցնելու համար թերևս ճիշտ կլինի լրացնել ԶԳ քր. դատ. օր.-ի հոդված 124-ը մաս 3-ով, որը հարկ է շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Պաշտպանության կողմը մասնակցում է կոնկրետ քրեական գործերով ապացուցման գործընթացին և իրավունք ունի ներկայացնելու ապացույցներ, որոնք հիմնավորում են սեփական դիրքորոշումը և հերքում մեղադրանքի կողմի հավաքած ապացույցները»: Այս նորմի ներմուծումը թույլ

ԳԻՏԱԿԱՆ ԿՅՈՒՆ

կտա փաստաբանին դառնալու քրեական դատավարության լիիրավ մասնակից դեռ նախնական քննության փուլում:

Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրությունը պատասխան չունի նաև այն հարցին, թե ինչպես պետք է կիրառի պաշտպանը մասնավոր անձանց հետ անցկացրած իր հարցումը: Պե՞տք է արդյոք նա դիմի իր ձեռք բերած բացատրությունները քրեական գործի նյութերին կցելու միջնորդությամբ, թե՞ կարող է միջնորդել միայն նշված անձանց հարցաքննությունն իր ներկայությամբ անցկացնելու համար, ընդ որում՝ օգտագործելով իր ստացած բացատրությունները հարցեր առաջադրելու նպատակով: Համապատասխանաբար նաև հարց է ծագում, թե ինչպես պետք է արձագանքի քննիչը պաշտպանի տվյալ միջնորդությամբ: Պարտավո՞ր է նա բավարարել նշված միջնորդությունները հենց միայն այն պատճառով, որ դրանք արդեն հնչել են, թե՞ որոշել այդ հարցը՝ կախված այն բանից, թե ինչով է հիմնավորվում այդ միջնորդությունը: Ցավոք, Հայաստանի Հանրապետության քրեադատավարական օրենսդրությունը այս հարցերին պատասխաններ չի տալիս: Ըստ այդմ՝ անհրաժեշտ է ՀՀ քր. դատ. օր.-ում համապատասխան նորմեր ավելացնել, որոնք կպատասխանեն վերոնշյալ հարցերին: Ընդ որում, թերևս ճիշտ կլիներ, որ պաշտպանի ձեռք բերած բացատրությունները դիտարկվեն ոչ թե որպես ապացույցների աղբյուրներ, այլ որպես համապատասխան քննչական գործողություն կատարելու առիթ: Օրինակ՝ պաշտպանը կոնկրետ անձից բացատրություն է վերցրել, որում շարադրվում են կոնկրետ քննվող գործի համար նշանակություն ունեցող հանգամանքներ, ընդ որում՝ տվյալ անձը բացատրության մեջ շարադրված մի շարք հարցերի առնչությամբ չի հարցաքննվել: Այդ դեպքում ճիշտ կլիներ

այդպիսի միջնորդությունը դիտել որպես անվիճելի առիթ՝ հիշյալ անձին հարցաքննելու համար: Ըստ այդմ՝ ճիշտ կլիներ լրացնել ՀՀ քր. դատ. օր.-ի հոդված 199-ը մաս 3-ով՝ այն շարադրելով հետևյալ կերպ. «Պաշտպանի միջնորդությունները ենթակա են պարտադիր բավարարման այն դեպքում, եթե դրանք հիմնավորված են քննվող դեպքին առնչվող հանգամանքների մասին այն անձի՝ կից ներկայացվող բացատրությամբ, որը նախկինում կամ չի հարցաքննվել, կամ նախկինում նրա տված ցուցմունքներում չեն եղել տեղեկություններ քննության համար նշանակալի հանգամանքների մասին»: Կարծում ենք, որ այս նորմի ամրագրմամբ պաշտպանը հնարավորություն կստանա ավելի ակտիվորեն պաշտպանելու իր պաշտպանյալի իրավունքներն ու օրինական շահերը: Ընդ որում, կստեղծվեն բարենպաստ պայմաններ մրցակցության սկզբունքի իրացման համար դեռ նախնական քննության փուլում: Բացի այդ՝ հասկանալի կդառնա, թե ինչու է անհրաժեշտ, որ պաշտպանը մասնավոր անձանց հարցում անցկացնի: Իսկ մինչ այդ, այսինքն՝ մինչ ՀՀ քր. դատ. օր.-ում այդ նորմի ներառումը, փաստաբանի կողմից մասնավոր անձանց հարցումը դատավարական որևէ նշանակություն չունի:

Համաձայն ՀՀ քր. դատ. օր.-ի հոդված 73-ի մաս 1-ի 5-րդ կետի՝ պաշտպանը, ըստ էության, ապացուցման սուբյեկտներից մեկն է, քանի որ նրան իրավունք է տրված «քրեական գործով ձեռք բերել նյութեր, դրանք ներկայացնել քրեական գործին կցելու և հետազոտելու համար»: Դա էական առաջընթաց է, որի շնորհիվ դեռ նախնական քննության փուլում պաշտպանը հնարավորություն է ստանում մասնակցելու ապացույցների համակարգի ձևավորմանը: ՀՀ քր. դատ. օր.-ի 6-րդ հոդվածի 3-րդ կետում տրվում է «նյութեր» հասկացության բնորոշումը, որը նկատի ունի. «փաստաթղթեր և այլ առարկաներ, որոնք գործի բաղկացուցիչ մասն են կամ ներկա-

յացված են գործին կցելու համար, հաղորդումներ, ինչպես նաև փաստաթղթեր և այլ առարկաներ, որոնք կարող են նպաստել գործով վարույթի ընթացքում նշանակություն ունեցող հանգամանքների բացահայտելուն»։ Կարծում ենք, որ նյութեր հասկացությանը օրենքով տրված բնորոշումը հավասարապես վերաբերում է «քրեական գործին վերաբերող նյութեր» արտահայտությանը։ Ավելի ճիշտ՝ խոսքը վերաբերում է ոչ միայն ապացույցներին, այլև բոլոր նյութ տեղեկանքներին, փաստաթղթերին, որոնք թեև ապացույցներ չեն, սակայն նշանակություն ունեն քրեական գործի արդարացի լուծման համար։

Պաշտպանին թույլատրելով քրեական գործին վերաբերող նյութեր հավաքել՝ օրենսդիրը չի հստակեցնում բուն կարգը, որի համապատասխան դա պետք է կատարվի։ Չի հստակեցվում նաև, թե ինչպես պետք է այդ նյութերը կցվեն քրեական գործին։ Իսկ դա անհրաժեշտ է, քանի որ առանց այդպիսի կարգի սահմանման պաշտպանի ակտիվությունը նյութեր հավաքելիս, որոնց շարքում կարող են լինել նաև ապացույցներ, առաջանում է որոշ ապացույցների ոչնչացման վտանգ (կորստի)։ Դա կարող է տեղի ունենալ այն պատճառով, որ պաշտպանի կողմից ապացույցների հավաքման ընթացակարգի օրենսդրորեն կարգավորված չլինելը կհանգեցնի նրա ձեռք բերած ապացույցները անթույլատրելի ճանաչելուն։ Չէ՞ որ ՀՀ քր. դատ. օր.-ի հոդված 105-ի մաս 1-ի 3-րդ կետի համաձայն՝ անթույլատրելի են ճանաչվում այն ապացույցները, որոնք ստացվել են «այն անձի կողմից, որն իրավունք չունի իրականացնել տվյալ քրեական գործով քրեական դատավարություն, կատարել համապատասխան քննչական կամ այլ դատավարական գործողություններ»։ Պաշտպանն իր դատավարական վիճակի պատճառով չի համարվում քրեական դատավարություն իրականացնելու իրավունք ունեցող անձ։ Նա նաև իրավունք չունի իրականացնելու քննչական կամ այլ դատա-

վարական գործողություններ։ Քանի որ պաշտպանի կողմից ապացույցների հավաքման նշյալ կարգը բացակայում է, ապա նրան նշյալ իրավունքով օժտելը լոկ դեկլարատիվ բնույթ ունի, որը ոչնչով չի ամրապնդվում։

Չի կարելի թույլ տալ, որ պաշտպանն իրավունք ունենա ինքնուրույնաբար հավաքելու ապացույցներ՝ հաշվի առնելով նրա շահագրգռությունը քրեական գործի ելքի նկատմամբ։ Այստեղ միանգամայն ակնհայտ է այն վտանգը, որ ապացույցները կարող են կեղծվել անբարեխիղճ պաշտպանների կողմից։ Միանգամայն հնարավոր են իրավիճակներ, երբ պաշտպանները նշյալ իրավունքը կօգտագործեն իրականացվող քննությանը ակտիվորեն հակադեյու նպատակով։ Այդ ամենը կարող է անհնար դարձնել յուրաքանչյուր կոնկրետ գործով ճշմարտության բացահայտումը։ Որպեսզի նախնական քննությունը կարողանա հասնել իր առջև դրված նպատակին, ասել է թե՛ կոնկրետ իրադարձության հանագամանքները պարզելուն, անհրաժեշտ է այդ գործընթացը ենթարկել պատշաճ կարգավորման։

Արդյունավետ պաշտպանության համար կարևոր է այն իրավունքը, որը ձևակերպված է ՀՀ քր. դատ. օր.-ի հոդված 73-ի մաս 1-ի 2-րդ կետում, որի համաձայն՝ պաշտպանը իրավունք ունի «առանձին, կոնֆիդենցիալ, անարգել տեսակցել իր պաշտպանյալի հետ՝ առանց տեսակցությունների թվի և տևողության սահմանափակման»։ Դա հնարավորություն է ընձեռում պաշտպանին ստանալու պաշտպանություն իրականացնելու համար անհրաժեշտ տեղեկատվություն և իր պաշտպանյալի հետ մշակելու միասնական վարքագիծ։ Տեսակցությունը հնարավորություն է տալիս կոնկրետ գործով մեղադրյալին, կասկածյալին լրացնելու անհրաժեշտ իրավական գիտելիքների բացը պաշտպանի հետ զրույցի շնորհիվ։ Չէ՞ որ այդպիսի տեսակցության բացակայությունը կասկածյալին, մեղադրյալին նախօրոք դնում է

ԳԻՏԱԿԱՆ ԿՅՈՒՆՔ

ոչ շահավետ վիճակում, երբ նրանք հնարավորություն չեն ունենում մեղադրող կողմին համահավասար պաշտպանելու իրենց իրավունքներն ու օրինական շահերը, քանի որ նրանք չեն տիրապետում իրավական գիտելիքների, որոնց տիրապետում են քննիչը, դատախազը, որոնք հանդես են գալիս մեղադրանքի կողմում: Նշյալ իրավունքը, ըստ էության, մրցակցության սկզբունքի իրացման մեխանիզմի մասնակի դեպք է: Ուստի նշյալ իրավունքի քննադատությունը պատճառաբանված ու հիմնավորված չէ, քանի որ հաշվի չի առնում մրցակցային քրեական դատավարության էությունը: Ընդ որում, անհրաժեշտ է նշել, որ պաշտպանության համար կարևոր է տեսակցությունը նախքան որպես կասկածյալներ գրավվելը կամ մինչև մեղադրանք առաջադրելը, քանի որ այդ դեպքում պաշտպանության կողմը հնարավորություն է ստանում մշակելու միասնական վարքագիծ կոնկրետ քրեական գործով քննության ողջ ընթացքում:

ՀՀ քր. դատ. օր.-ում ամրագրված նշյալ իրավունքները պայմաններ կստեղծեն՝ կոնկրետ գործերով արդյունավետ պաշտպանություն իրականացնելու: Փաստաբանն արդեն իրավունք կունենա չլինելու

իրականացվող քննչական գործողությունների պասիվ մասնակիցը, ինչպես նախկինում էր, այլ հնարավորություն կստանա ակտիվորեն մասնակցելու ապացույցների համակարգի ձևավորմանը յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործով: Սակայն, ինչպես վերը նշվեց, օրենսդիրը չի սահմանել նշյալ իրավունքների իրացման մեխանիզմները, քրեադատավարական օրենսդրությունում բացակայում են հիշյալ իրավունքների իրացման կարգը սահմանող նորմերը: Դա լուրջ դժվարություններ է ստեղծում իրավակիրառողների և, առաջին հերթին, պաշտպանի համար: Չէ՞ որ այդ կարգի նորմատիվ ամրագրումը կարող է դառնալ նշյալ իրավունքների պաշտպանության լրացուցիչ երաշխիք: Ուստի պետք է խոստովանել, որ ներկայումս կատարվել է միայն առաջին քայլը նախնական քննության փուլում մրցակցության սկզբունքի ավելի ամբողջական իրացման ուղղությամբ: Դեռևս հարկավոր է կատարել ոչ պակաս հեղափոխական մի շարք քայլեր ևս, որպեսզի այդ սկզբունքը լիովին իրացվի քրեական դատավարության հիշյալ փուլում: Այդ քայլերը ենթադրում են պաշտպանի՝ ապացույցներ հավաքելու, մասնավոր անձանց հարցման, փաստաթղթեր և բնութագրեր ստանալու վերը նշված իրավունքների իրացման կարգի նորմատիվ ամրագրումը:

¹ Տե՛ս Фойницкий И.Я. Курс уголовного судопроизводства. Т. II, СПб., 1996, էջ 353:

² Строгович М.С. Курс Советского уголовного процесса. Том II: Порядок производства по уголовным делам по Советскому уголовно-процессуальному праву. М., 1970, էջ 40:

³ Фойницкий И.Я. Курс уголовного судопроизводства. Т. II, СПб., 1996, էջ 353:

⁴ Чельцов М.А. Советский уголовный процесс. М., 1951, էջ 227:

⁵ Масленникова Л.Н. Досудебное производство по УПК РФ. // Материалы международной научно-практической конференции, посвященной принятию нового Уголовно-процессуального кодекса Российской Феде-

рации, М., 2002, էջ 139:

⁶ Гуляев А.П. Следователь в уголовном процессе. М., 1981, էջ 12:

⁷ Նույն տեղում:

⁸ Гуляев А.П. Следователь в уголовном процессе. М., 1981, էջ 9:

⁹ Տե՛ս Ղազինյան Գ.Ս. Քրեական դատավարության պատմական և արդի հիմնահարցերը Հայաստանում: Եր., Երևանի համալս. հրատ., 2001, էջ 234:

¹⁰ Տե՛ս Татоян А.А. Расследование дела в системе уголовно-процессуальных функций (сравнительно-правовой анализ). Ер., Изд. Ереванского ун-та, 2007, էջ 88:

¹¹ Уголовный процесс Российской Федерации. / отв. ред. проф. А.П. Кругликов, М., 2009, т. 15:

¹² Տե՛ս Կалиновский К.Б. Основные виды уголовного судопроизводства. СПб., 2002, էջ 57:

¹³ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատախազություն: Հատուկ մաս, Եր.: Երևանի համալս. հրատ., 2005, էջ 43:

¹⁴ Տե՛ս Франциферов Ю.В. Сочетание гласности и тайности при производстве предварительного расследования и судебного разбирательства. // Адвокатская практика, 2007, N 4, էջ 9:

¹⁵ Гуляев А.П. Следователь в уголовном процессе. М., 1981, էջ 98:

¹⁶ Строгович М.С. Курс Советского уголовного процесса. Том II: Порядок производства по уголовным делам по Советскому уголовно-процессуальному праву. М., 1970, էջ 45:

¹⁷ Տե՛ս Ղազինյան Գ.Ս. Քրեական դատախազության պատմական և արդի հիմնահարցերը Հայաստանում: Եր., Երևանի համալս. հրատ., 2001, էջ 324:

¹⁸ Տե՛ս Ларин А.М., Мельникова Э.Б., Савицкий В.М. Уголовный процесс России. Лекции-очерки. / под ред. проф. В.М. Савицкого, М., 1997, էջ 151:

¹⁹ Строгович М.С. Курс Советского уголовного процесса. Том II: Порядок производства по уголовным делам по Советскому уголовно-процессуальному праву. М., 1970, էջ 45:

²⁰ Колбая Г.Н. Соотношение предварительного следствия и судебного разбирательства. М., 1975, էջ 24:

²¹ Склизков А.Н. Взаимодействие сторон уголовного судопроизводства на стадии предварительного расследования. // Адвокатская практика, 2007, N 3, էջ 22:

²² Давлетов А. Право защитника собирать доказательства. // Российская юстиция, 2003, N 7, էջ 50:

²³ Строгович М.С. Курс Советского уголовного процесса. Том I: Основные положения науки Советского уголовного процесса, М., 1968, էջ 227:

²⁴ Տե՛ս Нажимов В.П. Об уголовно-процессуальных функциях. // Правоведение, 1973, N 5, էջ 75, 78:

²⁵ Гуляев А.П. Следователь в уголовном процессе. М., 1981, էջ 27:

²⁶ Склизков А.Н. Взаимодействие сторон уголовного судопроизводства на стадии предварительного расследования. // Адвокатская практика, 2007, N 3, էջ 22:

ԳԻՏԱԿԱՆ ԿՅՈՒՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ
ԱՆՁՆԱԿԱՆ ՕՐԵՆՔԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՆՆԳԻՐՆԵՐ**

Արմեն ՀԱՅԿՅԱՆՑ

*ԵՊՀ քաղաքացիական իրավունքի սաբֆոնի
դոցենտ, իրավ. գիտ. դոկտոր*

1 . «Ֆիզիկական անձի անձնական օրենք» ասելով հասկանում ենք այն իրավակարգը, որի հետ կապված է ֆիզիկական անձը՝ անկախ այն հանգամանքից, թե որ պետության տարածքում է գտնվում նա: Անձնական օրենքով են կարգավորվում ֆիզիկական անձի քաղաքացիաիրավական վիճակն ամբողջացնող որոշ հարցեր: ԴՅ քաղ.օր. 1264 հոդվածի համաձայն. «Օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի իրավունքներն իր անվան, դրա օգտագործման եւ պաշտպանության նկատմամբ որոշվում են նրա **անձնական օրենքով**, եթե այլ բան չի բխում սույն օրենսգրքի 22 հոդվածի 2-րդ կետի երկրորդ պարբերության եւ 4-րդ կետի, 1280 ու 1291 հոդվածներով սահմանված կանոններից»: Զամաձայն ԴՅ քաղ. օր. 1265 հոդվածի. «Օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի քաղաքացիական գործունակությունը որոշվում է նրա **անձնական օրենքով**»: ԴՅ քաղ.օր. 1268 հոդվածով սահմանվում է. «Անչափահասների, անգործունակ կամ սահմանափակ գործունակ չափահաս անձանց նկատմամբ խնամակալություն կամ հոգաբարձություն սահմանվում եւ վերացվում է այն անձի **անձնական օրենքով**, որի կիրառմամբ սահմանվել կամ վերացվել է խնամակալությունը կամ հոգաբարձությունը: Խնամակալություն (հոգաբարձություն) ստանձնելու խնամակալի (հոգաբարձուի) պարտականությունը որոշվում է խնամակալ (հոգաբարձու) նշանակված անձի **անձնական օրենքով**»: Իրա-

վակարգի հետ ֆիզիկական անձի կապը, այսինքն՝ անձնական օրենքն (lex personalis) արտահայտվում է կամ քաղաքացիության հատկանիշով (lex patriae), կամ բնակության վայրի հատկանիշով (lex domicilii): Քաղաքացիության հատկանիշը շատ կոնկրետ է և որոշակի, մինչդեռ բնակության վայրի հատկանիշը փոփոխական է, ոչ կոնկրետ: Այս երկու հանգամանքները կիրառվում են կախված այն բանից, թե ով է ֆիզիկական անձը՝ օտարերկրյա քաղաքացի¹, թե՞ քաղաքացիություն չունեցող անձ: Միջազգային մասնավոր իրավունքում հանրահայտ է, որ ֆիզիկական անձի, որի քաղաքացիությունը հայտնի է, անձնական օրենքը քաղաքացիության վայրի օրենքն է, իսկ ֆիզիկական անձի, որի քաղաքացիությունը հայտնի չէ, կամ որը քաղաքացիություն չունի, անձնական օրենքը բնակության վայրի օրենքն է: Սա է ընդհանուր կանոնը, որը, սակայն, առանձնահատուկ դեպքերում ունի բացառություններ: Այդ բացառությունները, որոնք կոչված են էլ ավելի արդյունավետորեն արծագանքելու միջազգային մասնավոր շրջանառության առանձնահատուկ պահանջներին, իրենց հերթին չեն իմաստագրվում ընդհանուր կանոնը:

Վերոշարադրյալ ընդհանուր դիրքերից փորձենք վերլուծել ԴՅ օրենսդրական մոտեցումները և գնահատել դրանք օտարերկրյա ու միջազգային օրենսդրության հետ համեմատության տիրություն:

2. ԴՅ քաղաքացիական օրենսգրքի 1262 հոդվածի 1-ին մասով սահմանվում է. «Քաղաքացու անձնական օրենքն այն պետության իրավունքն է, որի քաղաքացիությունն ունի տվյալ անձը»: Քաղաքացիների անձնական օրենքը որպես քաղաքացիութ-

յան օրենք ճանաչելը համեմատաբար նոր մոտեցում է: Մինչև 19-րդ դարը անձնական օրենք էր ճանաչվում միայն բնակության վայրի օրենքը: 1804թ-ին Ֆրանսիայի քաղաքացիական օրենսգրքի ընդունմամբ ներդրվեց քաղաքացիության վայրի օրենքը որպես անձնական օրենք ընդունելու մոտեցումը: Համաձայն Ֆրանսիայի քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի՝ **«Քաղաքացիների գործունակության և քաղաքացիական կացության նկատմամբ կիրառվող օրենքները տարածվում են ֆրանսիայի քաղաքացիների վրա, ներառյալ երբ նրանք ապրում են արտերկրում»:**

Lex patriae-ն որոշվում է ֆիզիկական անձի քաղաքացիությամբ, իսկ վերջինս որոշելու շատ հստակ մեխանիզմներ են գործում: Քաղաքացիության նասին ՀՀ օրենքի 4-րդ հոդվածով սահմանվում է. «Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը հաստատող փաստաթղթերն են՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիրը, իսկ մինչև 16 տարին լրանալը՝ նաև ծննդյան վկայականը կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը հաստատող վկայականը» (4-րդ հոդվածը փոփ. 26.02.07 ՀՕ-75-Ն օրենք): Պաշտոնական փաստաթղթերի միջոցով քաղաքացիությունը որոշակիացնելը բնութագրական է ժամանակակից բոլոր պետություններին:

Որոշակի բարդություններ են ծագում, երբ անձն ունի երկքաղաքացիություն, որի դեպքում երբքաղաքացիների անձնական օրենքն այլևս չի կարող Lex patriae-ով որոշվել: Որոշ պետություններ, այդ թվում նաև Հայաստանի Հանրապետությունը, այս պարագայում հարցը լուծում է lex causae-ի սկզբունքով: Այսպես, ՀՀ քաղ.օր. 1262 հոդվածը սահմանում է. «Եթե անձն ունի երկու կամ ավելի պետության քաղաքացիություն, ապա նրա անձնական օրենքն այն պետության իրավունքն է, որի հետ այդ անձն առավել սերտ է կապված»: Իսկ վայրի առավել սերտ կապի իրավունքը տվյալ դեպքում կարող է որոշվել անեմատարբեր

հանգամանքների ուժով: Դրա տակ կարելի է հասկանալ այն պետության իրավունքը,

1) որտեղ անձը բնակվում է մշտապես կամ առավելապես,

2) որտեղ գտնվում է անձին պատկանող գույքը կամ դրա առավել արժեքավոր մասը,

3) որի ազգային-պետական լեզվով է խոսում անձը մշտապես կամ առավելապես,

4) որի ազգային պատկանելությունն ունի անձը,

5) որի հետ այդ անձը հոգեբանորեն ավելի է կապված:

Փաստորեն չափանիշների ընտրությունը թողնված է պրակտիկային, իսկ պրակտիկայում էլ այն կարող է ձևավորվել և/կամ դատարանի հայեցողությամբ, և/կամ անձի կարծիքը հաշվի առնելով:

Ակնհայտ է, որ նման մոտեցումն անցանկալի վիճակներ կարող է առաջ բերել: Նախ հայտնի չէ՝ առավել սերտ կապվածությունը որոշելու պարտականությունը դատարանի կամ իրավակիրառ այլ մարմնի գործն է, թե՞ կողմի հայեցողությամբ է լուծվում: Այնուհետև, պարզ չէ՞ օրենսդիրն «առավել սերտ կապ» ասելով նկատի ունի ընդհանրապես ցանկացած պետության հետ ունեցած սերտ կապ, թե՞ միայն այն պետությունների, որոնց քաղաքացիությունն ունի ֆիզիկական անձը: Բացի այդ, թվարկված հանգամանքներն էլ իրենց ներսում ունեն «կշիռ»: Կան հանգամանքներ, որոնք շատ ավելի ծանրակշիռ են առավել սերտ կապը որոշակիացնելու համար, քան մյուսները: Դրանց շարքում միանշանակ առավելություն ունի բնակության վայրի հանգամանքը: Բնակության ուժով ֆիզիկական անձն իրեն «կապում է» տվյալ վայրի կամ պետության հետ, գտնվում է տվյալ պետության օրենքների ներգործության ոլորտում, բնակության ուժով՝ ֆիզիկական անձը որպես կանոն իր գործունեությունն է ծավալում ու նաև գույք է ձեռք բերում հենց այդ պետությունում: Ստացվում է այնպես, որ բնակության վայ-

ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱԼՔ

րը «կլանում է» մյուս բոլոր հանգամանքները, ուստի հենց այդ հանգամանքն էլ պետք է բացառապես ընդունվի առավել սերտ կապի վայրը, դրանով պայմանավորված նաև՝ կիրառման ենթակա իրավունքը որոշելիս: Եվ այդ բնակության վայրը չպետք է կապել երկաթաղաքացու որևէ քաղաքացիության պատկանելության պետության հետ: Այսինքն՝ պետք է հաշվի առնել, որ անձը կարող է ունենա երկաթաղաքացիություն, իսկ բնակության վայր կարող է ունենալ երրորդ պետությունում, ուստի նրա անձնական օրենքը պետք է լինի բնակության վայրի օրենքը: ԶԳ քաղ.օր. 1262 հոդվածի նորմը պետք է հասկանալ հենց այս մեկնաբանությամբ¹:

Վերոնշյալի դեպքերում մենք կունենանք առավել հստակ իրավակիրառ պրակտիկա, սակայն այդ մոտեցումը հիմնված է մեկնաբանման վրա: Կասկածից վեր է, որ որքան էլ հիմնավորված ու տրամաբանական լինի այդ մեկնաբանությունը, շատ ավելի ճիշտ կլիներ ունենալ կոնկրետ իրավանորմ, որն իրերի դրությունը հենց այդ մեկնաբանությանը հարիր էլ կսահմաներ: Առաջարկում ենք ԶԳ քաղաքացիական օրենսգրքի 1262 հոդվածը լրացնել նոր նորմով, ինչպիսին է, օրինակ, ՌԴ քաղ. օրենսգրքը հետևյալ բովանդակությունը. **«Երբ ֆիզիկական անձն ունի մի քանի օտարերկրյա պետությունների քաղաքացիություն, նրա անձնական օրենքը բնակության վայրի օրենքն է»²:**

ԶԳ 1262-րդ հոդվածն առանձին անդրադարձ չունի ԶԳ երկաթաղաքացիների կատեգորիային՝ դրանով իսկ ԶԳ երկաթաղաքացիներին դասելով այլ պետությունների երկաթաղաքացիների շարքում և ցուցաբերելով համանման իրավական մոտեցում: Սա, իհարկե, արդարացված չէ. անհրաժեշտ է տարբերակված մոտեցում: Քանի որ յուրաքանչյուր պետության երկաթաղաքացին տվյալ պետությունում դիտվում է հենց

միայն այդ պետության քաղաքացի, ուստի անհրաժեշտ էր ԶԳ քաղ.օր. 1262 հոդվածը լրացնել նոր նորմով՝ հետևյալ բովանդակությամբ. **«Նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ունեցող երկաթաղաքացու անձնական օրենքը Հայաստանի Հանրապետության օրենքն է»³:**

3. ԶԳ քաղաքացիական օրենսգրքի 1262 հոդվածի 2-րդ մասով սահմանվում է. «Քաղաքացիություն չունեցող անձի անձնական օրենքն այն պետության իրավունքն է, որտեղ տվյալ անձը **մշտապես բնակվում է**» (ընդգծումը մերն է): Այս նորմը նույնությամբ փոխառված է ԱՊՀ մոդելային քաղաքացիական օրենսգրքից (1204 հոդված): Նույնն է նաև մոտեցումը Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավահարաբերությունների մասին Սինսկի կոնվենցիայով (23 հոդված)⁴: ԱՊՀ պետություններից ամբողջովին նույնն է նաև Ղազախստանի օրենսդրությամբ⁵:

ԱՊՀ որոշ պետություններ ընտրել են այլ ձևակերպումներ: Այսպես, ՌԴ քաղաքացիական օրենսգրքի 1195 հոդվածում նշվում է. «Քաղաքացիություն չունեցող անձի անձնական օրենքն այն պետության իրավունքն է, որտեղ տվյալ անձը **բնակվում է**»⁶ (ընդգծումը մերն է): Մոլդովայի քաղաքացիական օրենսգրքի 1587 հոդվածում սահմանվում է. «Քաղաքացիություն չունեցող անձի անձնական օրենքն այն պետության իրավունքն է, որտեղ տվյալ անձն ունի **բնակության վայր կամ գտնվելու վայր**»⁷ (ընդգծումը մերն է): Շատ են տարբերվում նաև մի շարք եվրոպական պետությունների օրենսդրական մոտեցումները: Այսպես, Լիխտենշտեյնի Սիջազգային մասնավոր իրավունքի մասին 1996թ. օրենքի 10 հոդվածում նշվում է. «Երբ անձը որևէ պետության քաղաքացիությունը չունի, կամ չի կարող պարզվել, թե նա որ պետության քաղաքացիությունն ունի, նրա անձնական օրենքը այն պետության օրենքն է, **որտեղ այդ անձը գտնվում է**»⁸: Լեհաստանի Սիջազգային մասնավոր իրա-

վունքի մասին 1965 թ. օրենքի 3 հոդվածում ամրագրված է. «Երբ անձը չունի քաղաքացիություն, կամ նրա քաղաքացիությունը հնարավոր չէ պարզել, այդ անձի անձնական օրենքը վերջինիս **բնակության վայրի օրենքն է**»⁹:

Քաղաքացիություն չունեցող անձանց անձնական օրենքը որոշող նորմեր են սահմանվում նաև միջազգային պայմանագրերում: Այսպես, Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին կոնվենցիայի 12 հոդվածում նշվում է. «Քաղաքացիություն չունեցող անձի անձնական կարգավիճակը որոշվում է նրա **մշտական բնակության** երկրի օրենսդրությամբ կամ, եթե նա չունի մշտական բնակության վայր, **բնակության երկրի օրենսդրությամբ**»¹⁰: Համանմանորեն է մոտեցումը նաև Բուստամանտեի օրենսգրքում, որի 26 հոդվածում ուղղակիորեն նշվում է. «**Անձի ապրելու կամ գտնվելու վայրը** համարվում է նրա դոմիցիլը»¹¹:

Օրինակներն այսպես կարելի է շարունակել: Սակայն բերվածներն էլ բավարար են նկատելու, որ մոտեցումները հիմնականում բաժանվում են երկու մասի: Մի դեպքում ապատրիդների՝ քաղաքացիություն չունեցող անձանց անձնական օրենքը բնակության վայրի օրենքն է (որը երբեմն ձևակերպվում է «մշտական բնակության վայրի օրենք» արտահայտությամբ), մյուս դեպքում գտնվելու վայրի օրենքն է:

Փորձենք հասկանալ, թե որքանով են տարբերվում այս երկու մոտեցումները, և միևնույն ժամանակ՝ ինչ ընդհանրություններ կարող են լինել նրանց միջև:

Դեռ Հին Հռոմում պատկանելությունը քաղաքային համայնքին որոշվում էր երկու եղանակով՝ *Jus origio* (ծննդյան, որդեգրման ազատագրման հիմքերով) և *Jus domicilium* (բնակության վայրի հիմքով): Բնակության վայր ասելով հասկանում էին այն վայրը, որն ընտրում էր ֆիզիկական անձը՝ որպես իր գործունեության իրականացման և հարաբերությունների մեջ մտնելու վայր: Եվ համարվում էր, որ ֆիզիկական անձը

կարող էր ունենալ մի քանի բնակության վայր (երբ նա իրականացնում էր գործունեություն մի քանի վայրերում) կամ ուղղակի չունենալ ոչ մի բնակության վայր (երբ նա հիմնական գործունեություն որևէ վայրում չէր իրականացնում)¹²: Ստացվում էր այնպես, որ Հին Հռոմում «բնակության վայր» հասկացությունը կապված չէր անձի գտնվելու վայրի հետ. «բնակության վայր» հասկացությունը կապված էր անձի գործունեության և հիմնական հարաբերությունների մեջ մտնելու վայրի հետ, այլ կերպ ասած՝ այն վայրի հետ, որտեղ անձը նպատակադրվել է գործունեություն իրականացնել:

Գերմանացի իրավագետ Լ.Ռաապեն, քննարկելով անձի անձնական օրենքը որոշելու հարցը, անձի դոմիցիլիա ասելով նկատի ունի հենց միայն **մշտական բնակության վայրը**՝ համարելով, որ անձնական օրենքը կարող է որոշվել մշտական բնակության վայրի օրենքով (և ոչ թե գտնվելու վայրի օրենքով), քանի որ մշտապես գտնվելով որևէ պետության տարածքում՝ անձն ավելի լավ է տիրապետում այդ վայրի օրենքներին, իր հարաբերությունները և գործունեությունը ենթարկվում են հենց այդ վայրի օրենքների պահանջներին¹³:

Ռուս իրավագետ Գ.Կ.Դմիտրիևան գրում է. «Օտարերկրյա քաղաքացու ժամանակավոր ժամանումը Ռուսաստանի Դաշնություն չի կարող համարվել նրա բնակության վայր»: Ըստ Գ.Կ.Դմիտրիևայի՝ ֆիզիկական անձի բնակության վայրը որպես այդպիսին կախված է այդ վայրում մշտապես կամ առավելապես ապրելու՝ ֆիզիկական անձի մտադրությունից: Դա առաջին հերթին կարող է հավաստվել մշտական բնակության համար համապատասխան կացության կարգավիճակ ստանալու փաստով¹⁴:

Նույն տեսակետն են արտահայտում նաև ռուս հայտնի իրավագետներ Ա.Լ.Մակոլսկին և Ե.Ա. Սուխանովը՝ վկայակոչելով այլ երկրների, մասնավորապես Շվեյցարիայի օրինակը, երբ օրենսդրորեն սահ-

ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱԼՔ

մանվում է, որ բնակության վայրն այն վայրն է, որտեղ ապրում է ֆիզիկական անձը այնտեղ երկարատև ապրելու մտադրությամբ¹⁶:

Վերադառնալով ՀՀ օրենսդրությանը՝ նախ նշենք, որ ՀՀ քաղ.օր. 23 հոդվածով սահմանվում է. «Բնակության վայր է համարվում այն վայրը, որտեղ քաղաքացին մշտապես կամ առավելապես ապրում է»: Ուրեմն, բնակության վայրի համար սահմանվում է երկու հանգամանք, երբ տվյալ վայրում անձը պետք է ապրի նախ մշտապես, որն առաջնահերթ է, և որի բացակայության դեպքում միայն կարող է հաշվի առնվել առավելապես ապրելու հանգամանքը: Իսկ թե որոնք են «մշտապես»-ի և «առավելապես»-ի չափանիշները, օրենսդիրը քաղաքացիական օրենսգրքով չի մանրամասնում:

Վերևում մենք արդեն նշել ենք, որ ՀՀ քաղ.օր 1262 հոդվածի 2-րդ մասով ամրագրված է միայն «մշտապես»-ը, այսինքն՝ ՀՀ օրենսդիրն այս հոդվածում «կատեգորիկ արգելում է ժամանակավոր բնակվելը կամ գտնվելը» համարել որպես ֆիզիկական անձի անձնական օրենքը որոշելու չափանիշ:

Հայաստանի Հանրապետությունում «մշտական բնակության վայր» հասկացությունը պարզաբանված և մանրամասնված է համապատասխանաբար Բնակչության պետական ռեգիստրի մասին (2002թ. հոկտեմբերի 21) ՀՀ օրենքում և ՀՀ Կառավարության 2005 թվականի հուլիսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրի համակարգ ներդնելու մասին» N 1231-Է որոշմամբ: Բնակչության պետական ռեգիստրի մասին ՀՀ օրենքը նախ սահմանում է, որ «Ռեգիստրը բնակչության վերաբերյալ օրենքով սահմանված անհատական հաշվառման տվյալների տեղեկատվական համակարգ է, որն ստեղծվում է Հայաստանի

Հանրապետությունում բնակվող անձանց (անկախ քաղաքացիությունից), ինչպես նաև օտարերկրյա պետություններում բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների (այսուհետ՝ բնակիչների)՝ **ըստ բնակության վայրի հաշվառման նպատակով**»: Այնուհետև նույն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասում պարզաբանվում է, որ «**Մշտական բնակության վայր (կացարան) է համարվում այն տարածքը, որտեղ բնակիչն ունի բնակվելու իրավունք, որը նա համարում է և հայտարարում է որպես իր կացարան: Բնակիչը կարող է հաշվառվել միայն մեկ կացարանում**»: Իսկ «Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրի համակարգ ներդնելու մասին» ՀՀ Կառավարության N 1231-Է որոշման 2-րդ կետում մանրամասնվում է, որ «**Բնակչի մշտական բնակության վայր է համարվում այն վայրը (կացարանը), որտեղ բնակիչն ունի բնակվելու իրավունք, որը հայտարարում է որպես իր մշտական բնակության վայր (կացարան), որտեղ մինչև Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հուլիսի 14-ի “Հայաստանի Հանրապետությունում բնակչության պետական ռեգիստրի համակարգ ներդնելու մասին” N 1231-Ն որոշումն ուժի մեջ մտնելը՝ գործող օրենսդրությամբ հաշվառված է եղել՝ ըստ մշտական, ժամանակավոր կամ փաստացի բնակության վայրի**» (ընդգծումը մերն է):

ՀՀ Կառավարության N 1231-Է որոշման 7-րդ կետում միևնույն ժամանակ մասնավորապես սահմանվում է. «Չհաշվառված անձը բնակության վայրի տեղական ռեգիստրին դիմում է ներկայացնում հետևյալ ժամկետներում՝ նշելով բնակության վայրի հասցեն՝

գ) Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակ ստացած, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում փախստականի կարգավիճակ, ժամանակավոր ապաստան եւ քաղաքական ապաստան ստացած անձը՝ համապատասխան կարգավիճակ ստանալուց հետո

15-օրյա ժամկետում»:

Ինչպես նկատում ենք, օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի միայն գտնվելու վայրը դեռևս հիմք չէ նրան հաշվառելու, հետևաբար նրա համար մշտական բնակության վայր սահմանելու համար: Օտարերկրացիների մասին ՀՀ օրենքի 3-րդ հոդվածում սահմանվում է. «Արտոնագիր կամ մուտքի վիզա՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի թույլտվություն, որն օտարերկրացուն իրավունք է տալիս մուտք գործելու Հայաստանի Հանրապետություն, տարանցիկ երթեւեկելու Հայաստանի Հանրապետության տարածքով, գտնվելու Հայաստանի Հանրապետությունում եւ դուրս գալու Հայաստանի Հանրապետությունից՝ դրանում նշված նպատակներով, պայմաններով եւ ժամկետներում»: Օրենսդիրը մուտքի վիզայի պարագայում բնակության վայր ունենալու հանգամանքի մասին նշում չի կատարում, այլ ընդամենը շեշտադրում է հանրապետությունում գտնվելու հանգամանքը: Օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք Հայաստանում առանց կացության կարգավիճակ ունենալու գտնվել կարող են միայն մուտքի վիզայի հիման վրա առավելագույնը 180 օր, այսինքն՝ 6 ամիս ժամանակով (Օտարերկրացիների մասին ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մաս), որի պարագայում բնակչության պետական ռեգիստրում չի իրականացվում նրանց հաշվառում: Այդ ժամկետից ավելի մնալու համար օտարերկրացիները պետք է ստանան կացության կարգավիճակ, հակառակ պարագայում Հայաստանի Հանրապետության ոստիկանության բնագավառում լիազորված պետական կառավարման մարմինը արտաքսման վերաբերյալ գործ է հարուցում և ներկայացնում դատարան (Օտարերկրացիների մասին ՀՀ օրենքի 31 հոդված):

Համաձայն օտարերկրացիների մասին ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի՝ «Հայաստանի

Հանրապետությունում օտարերկրացիների համար սահմանվում են կացության հետևյալ կարգավիճակները՝ **ա) ժամանակավոր, բ) մշտական, գ) հատուկ**»:

Նույն օրենքի 3-րդ հոդվածում տրվում է կացության կարգավիճակների հասկացության բովանդակությունը.

- ժամանակավոր կացության կարգավիճակ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի թույլտվություն, որն օտարերկրացուն իրավունք է տալիս բնակվելու Հայաստանի Հանրապետության տարածքում որոշակի ժամկետով.

- մշտական կացության կարգավիճակ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորված պետական կառավարման մարմնի թույլտվություն, որն օտարերկրացուն իրավունք է տալիս մշտապես բնակվելու Հայաստանի Հանրապետության տարածքում.

- հատուկ կացության կարգավիճակ՝ Հայաստանի Հանրապետության Նախագահի թույլտվություն, որն օտարերկրացուն իրավունք է տալիս բնակվելու Հայաստանի Հանրապետության տարածքում՝ այդ կարգավիճակը հավաստող փաստաթղթի վավերականության ժամկետներում:

Ստացվում է այնպես, որ եթե անձն ունի կացության կարգավիճակ և Հայաստանում է բնակվում է մեկ ամիս, նա արդեն իսկ մշտական բնակության վայր ունի Հայաստանում: Եվ նույն օտարերկրացին, եթե հանկարծ չունենար կացության կարգավիճակ, սակայն մուտքի արտոնագրով Հայաստանում փաստացի գտնվեր վեց ամիս, չէինք համարի, որ նա Հայաստանում ունի մշտական բնակության վայր:

Վերադառնալով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1262 հոդվածի 2-րդ մասով սահմանվող նորմի մեկնաբանմանը՝ պետք է ասել, որ **Հայաստանի Հանրապետության օրենքը կարող է լինել քաղաքացիություն**

ԳԻՏԱԿԱՆ ԿՅՈՒՄ

չունեցող անձի անձնական օրենքը, երբ նա Հայաստանի Հանրապետությունում ձեռք է բերում ժամանակավոր, մշտական, հատուկ կացության կարգավիճակ և հաշվառվում է Հայաստանի Հանրապետությունում, այսինքն՝ երբ քաղաքացիություն չունեցող անձը Հայաստանում է գտնվում այնտեղ մշտապես բնակվելու նպատակով:

Կացության կարգավիճակ ունեցող ու քաղաքացիություն չունեցող անձի մշտական բնակության վայրը կարող է փոխվել միայն, երբ նա բացակայի Հայաստանի Հանրապետությունից մշտական բնակության նպատակով մեկնելու պարագայում՝ համաձայն «Հայաստանի Հանրապետությունում բնակչության պետական ռեգիստրի համակարգ ներդնելու մասին» ՀՀ Կառավարության N 1231-Ն որոշման 24 կետի: Իսկ եթե կացության կարգավիճակ ունեցող ու քաղաքացիություն չունեցող անձը հանրապետությունից մեկնի առանց մշտական բնակության վայրը փոխելու նպատակ հետապնդելու, նրա մշտական բնակության վայրը կշարունակի համարվել Հայաստանի Հանրապետության տարածքը:

Հատուկ ուշադրության է արժանի նաև այն հանգամանքը, թե ինչպես պետք է որոշվի քաղաքացիություն չունեցող անձի անձնական օրենքը, երբ նա կացության կարգավիճակ չունի և այդքանով նաև՝ մշտական բնակության վայր չունի Հայաստանում, ու հայտնի էլ չէ, թե որտեղ ունի մշտական բնակության վայր: Նմանատիպ դեպքերի համար հատուկ նորմ է նախատեսում *Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին կոնվենցիայի 12-րդ հոդվածը, որի 1-ին մասում սահմանվում է. «Քաղաքացիություն չունեցող անձի անձնական կարգավիճակը որոշվում է նրա մշտական բնակության երկրի օրենսդրությամբ կամ, եթե նա չունի մշտական բնակության վայր, բնակության երկրի օրենսդրությամբ»*¹⁶: Հիշյալ կոնվենցիայից բխում է, որ ՀՀ դատարանի համար քաղաքացիություն չունեցող անձի անձնական օրենքն ընդամենը գտնվելու վայրի հանգամանքով որոշելը բացառված չէ, սակայն միայն այն բանից հետո, երբ պարզվի, որ քաղաքացիություն չունեցող անձը չունի մշտական բնակության վայր: Փաստորեն ստացվում է, որ եթե հանկարծ քաղաքացիություն չունեցող անձը մուտքի վիզայով գտնվի Հայաստանում, և պարզվի, որ նա որևէ այլ պետությունում մշտական բնակության վայր չունի, նրա անձնական օրենքը պետք է համարվի գտնվելու վայրի, այսինքն՝ Հայաստանի Հանրապետության օրենքը: **Մեր կարծիքով, ՀՀ օրենսդրությունը պետք է նույնությամբ փոխառեր Քաղաքացիություն չունեցող անձանց կարգավիճակի մասին կոնվենցիայի 12-րդ հոդվածի 1-ին մասի դրույթը**, թեկուզև հայտնի է, որ ՀՀ միջազգային պայմանագրերը ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են, և այդքանով դրանց նորմերը գործում են հանրապետության տարածքում:

4. ՀՀ քաղ.օր. 1262 հոդվածի 3-րդ մասով սահմանվում է. «Փախստականի անձնական օրենքը նրան ապաստան տրամադրած պետության իրավունքն է»: Այս կոլիզիոն նորմը նորություն է Հայաստանի Հանրապետության օրենսդրության մեջ: Փախստականների անձնական օրենքի նկատմամբ կոլիզիոն-իրավական հատուկ ուշադրությունը պայմանավորված է համաշխարհային մակարդակով բնակչության լուրջ տեղաշարժերի և փախստականների թվի շեշտակի մեծացման հետ:

Փախստականների անձնական օրենքի վերաբերյալ դրույթները մանրամասնվել են Փախստականների և ապաստանի մասին ՀՀ օրենքով (ընդունվել է 2008 թվականի նոյեմբերի 27-ին): Համաձայն հիշյալ օրենքի 6-րդ հոդվածի՝ փախստական է հա-

մարվում.

1) այն օտարերկրյա քաղաքացին, որը ռասայական, կրոնական, ազգային, սոցիալական որոշակի խմբի պատկանելության կամ քաղաքական հայացքների համար հետապնդման ենթարկվելու հիմնավոր երկյուղի հետևանքով գտնվում է իր քաղաքացիության երկրից դուրս և չի կարող կամ նույն երկյուղի պատճառով չի ցանկանում օգտվել իր քաղաքացիության երկրի պաշտպանությունից, կամ նա, ով, չունենալով քաղաքացիություն և գտնվելով իր նախկին մշտական բնակության երկրից դուրս, չի կարող կամ այդ նույն երկյուղի պատճառով չի ցանկանում վերադառնալ այնտեղ.

2) այն օտարերկրյա քաղաքացին, որը ստիպված է լքել իր քաղաքացիության երկիրը, իսկ քաղաքացիություն չունեցող անձը՝ իր նախկին մշտական բնակության երկիրը՝ համատարած բռնության, արտաքին հարձակման, ներքին հակամարտությունների, մարդու իրավունքների զանգվածային խախտումների կամ հասարակական կարգը խախտող այլ լուրջ իրադարձությունների պատճառով:

3) Մեկից ավելի քաղաքացիություն ունեցող անձի համար «իր քաղաքացիության երկիր» հասկացությունը նշանակում է այդ երկրներից յուրաքանչյուրը, որի քաղաքացին է նա: Այդ դեպքում անձը համարվում է իր քաղաքացիության երկրների պաշտպանությունը կորցրած, եթե նա սույն հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերում նշված պատճառներով չի կարող օգտվել իր քաղաքացիության երկրներից որևէ մեկի պաշտպանությունից:

Փախստականի անձնական օրենքը որոշելու համար կարևոր նշանակություն ունի նրա ապաստան ստանալու հանգամանքը: Երբ օտարերկրյա քաղաքացին ապաստան է ստանում Հայաստանի Հանրապետությունում, ապա ՀՀ օրենքն էլ կհամարվի նրա անձնական օրենքը: Համաձայն ՀՀ

Փախստականի և ապաստանի մասին ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի՝ «Ապաստանը օտարերկրյա քաղաքացուն կամ քաղաքացիություն չունեցող անձին Հայաստանի Հանրապետությունում շնորհված պաշտպանություն է, որը երաշխավորում է նրա նկատմամբ անվերադարձնելիության սկզբունքի կիրառումը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված անձանց՝ Կոնվենցիայով, սույն օրենքով և ՀՀ այլ իրավական ակտերով շնորհված բոլոր իրավունքները»: Այդ իրավունքների շարքում է նաև բնակության վայր ունենալու իրավունքը (Փախստականի և ապաստանի մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդված): Ի դեպ, նշենք, որ Հայաստանի Հանրապետությունում փախստականներին հավասարեցված են նաև ապաստան հայցող անձինք: Փախստականների և ապաստանի մասին ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝

«1.Ապաստան հայցողն այն օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձն է, որը Հայաստանի Հանրապետությունում ապաստանի հայց է ներկայացրել:

2.Ապաստան հայցող է համարվում նաև որևէ պետության կողմից փախստական ճանաչված անձը, որը Հայաստանի Հանրապետությունում ապաստանի հայց է ներկայացրել:

3.Հայաստանի Հանրապետության տարածքում ապաստանի հայց ներկայացրած օտարերկրյա քաղաքացին կամ քաղաքացիություն չունեցող անձը մինչև ապաստանի ստացման համար իր դիմումի վերջնական որոշում կայացնելը համարվում է ապաստան հայցող և Հայաստանի Հանրապետությունում օգտվում է ապաստան հայցողների՝ օրենքով սահմանված բոլոր իրավունքներից»:

Համաձայն Փախստականի և ապաստանի մասին ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի՝ ապաստան հայցողին Հայաստանի Հան-

ԳԻՏԱԿԱՆ ԿՅՈՒՄ

րապետությունում ևս տրվում է բնակության իրավունք:

Վերադառնալով 33 քաղ.օր. 1262 հողվածին՝ պետք է ասել, որ այնտեղ նշվում է միայն փախստականների մասին, իսկ ապաստան հայցողների մասին որևէ նշում չկա: Դա նշանակում է, որ Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցողի անձնական օրենք կարող է համարվել, մասնավորապես, նրա քաղաքացիության վայրի պետության օրենքը, ինչն արդարացի համարվել չի կարող: Ապաստան հայցելով՝ անձը ցանկանում է բնակվել հայցվող պետությունում, հետևաբար նաև ցանկանում է իրեն կապված տեսնել հայցվող պետության իրավունքի հետ, ուրեմն՝ ճիշտ կլինե՞ր ապաստան հայցողի անձնական օրենք համարել հայցվող պետության օրենքը մինչև ապաստանի հայցի վերաբերյալ հարցի վերջնական լուծումը:

Հաշվի առնելով վերոնշյալը՝ կարծում ենք, Փախստականների և ապաստանի մասին ՀՀ օրենքն ընդունելիս անհրաժեշտ էր համապատասխան լրացում կատարել նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1262 հոդվածում հետևյալ բովանդակությամբ. **«Փախստականի և ապաստան հայցողի անձնական օրենքը նրան ապաստան տրամադրած պետության օրենքն է»:**

Հատուկ կցանկայինք շեշտադրել մի հանգամանք, որն ուղղակի կարգավորում է ստացել Փախստականների և ապաստանի մասին ՀՀ օրենքում, և որը կարող է նոր լույս սփռել ՀՀ քաղ.օր. 1262 հոդվածի 3-րդ մասի կոլիզիոն նորմի ճիշտ ընկալման վրա: Կրկին մեջբերենք ՀՀ քաղ.օր. 1262 հոդվածի 3-րդ մասում ամրագրված նորմը. «Փախստականի անձնական օրենքը նրան ապաստան տրամադրած պետության իրավունքն է»: Այս ձևակերպումից պարզ չէ, թե արդյոք որպես փախստակա-

նի անձնական օրենք կշարունակվի համարվել ապաստան տրամադրած պետության իրավունքը, երբ այդ փախստականը բնակության նպատակով մեկնում է այլ պետություն: Փախստականների և ապաստանի մասին ՀՀ օրենքում 2-րդ հոդվածի 2-րդ մասում նշվում է. «Սույն հոդվածի 1-ին մասով սահմանված՝ ապաստանը տարածվում է նաև այլ պետության կողմից փախստական ճանաչված օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի վրա, եթե նա սահմանված կարգով մուտք է գործել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ բնակության իրավունք տվող կացության կարգավիճակ»: Պարզ է, որ Հայաստանի Հանրապետությունում կացության ցանկացած կարգավիճակ ստացած փախստականի բնակության վայր պետք է համարվի Հայաստանի Հանրապետության տարածքը, ուրեմն ՀՀ օրենքը կհամարվի նրա անձնական օրենք:

Այսպիսով, եթե ի մի բերենք ՀՀ քաղ.օր. 1262 հոդվածի առնչությամբ ողջ ասվածը, պետք է արձանագրել, որ նոր իրողություններով պայմանավորված՝ ՀՀ-ում այդ հողվածը կարիք ունի անհրաժեշտ լրացումների: Ամփոփ ներկայացնենք հիշյալ հողվածը մեր կողմից առաջարկվող լրացումներով.

Հողված 1262. Քաղաքացու անձնական օրենքը

1. Քաղաքացու անձնական օրենքն այն պետության իրավունքն է, որի քաղաքացիությունն ունի տվյալ անձը:

Եթե անձն ունի երկու կամ ավելի պետության քաղաքացիություն, ապա նրա անձնական օրենքն այն պետության իրավունքն է, որտեղ նա ունի մշտական բնակության վայր:

Եթե անձն ունի երկու կամ ավելի պետության քաղաքացիություն, որոնցից մեկը Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունն է, ապա անձի անձնական օ-

րենքը Հայաստանի Հանրապետության օրենքն է:

2. Քաղաքացիություն չունեցող անձի անձնական օրենքն այն պետության իրավունքն է, որտեղ տվյալ անձը մշտապես բնակվում է:

Եթե հայտնի չէ քաղաքացիություն չունեցող անձի մշտական բնակության վայրը,

կամ եթե նա չունի մշտական բնակության վայր, ապա քաղաքացիություն չունեցող անձի անձնական օրենքը նրա գտնվելու վայրի օրենքն է:

3. Փախստականի և ապաստան հայցողի անձնական օրենքը նրանց ապաստան տրամադրած պետության իրավունքն է:

¹ Իսկ թե ո՞րն է այդ բնակության վայրը, և ինչպե՞ս է այն որոշվում, մենք այդ հարցը քննարկում ենք քաղաքացիություն չունեցող անձանց օրինակով, ուստիև այստեղ դրան անդրադարձ չենք կատարի:

² Իրավաճանաչողության համար նշենք, որ երկքաղաքացիների անձնական օրենքը *lex domicilii*-ով որոշելու հստակ իրավանորմ է նախատեսված ՌԴ քաղաքացիական օրենսգրքով. «Երբ ֆիզիկական անձն ունի մի քանի օտարերկրյա պետությունների քաղաքացիություն, նրա անձնական օրենքը բնակության վայրի օրենքն է» (1195 հոդվածի 4-րդ մաս):

³ Հայաստանի Հանրապետության երկքաղաքացիների անձնական օրենքի խնդրին մենք մանրամասնորեն արդեն անդրադարձել ենք մեր նախորդ հրատարակումներում:

⁴ Տե՛ս Дмитриева Г.К., Филимонова М.В. *Международное частное право (действующие нормативные акты)*, М., 1999, с. 51-52:

⁵ Տե՛ս Гражданский кодекс Республики Казахстан. СПб., 2002, с. 1009:

⁶ Дмитриева Г.К. *Комментарий к Гражданскому кодексу Российской Федерации, части третьей, разделу VI «Международное частное право»*. М., 2002, с. 84.

⁷ Гражданский кодекс Республики Молдова. Кишинев. 2007, с. 299.

⁸ *Международное частное право: Иностранное законодательство (сост. Жильцов А.Н., Муранов А.И.)*, М., 2000, с. 407.

⁹ Տե՛ս նույն տեղը, էջ 470:

¹⁰ Կոնվենցիան ընդունվել է Նյու Յորքում 1954 թ.-ին: Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1994 թվականի օգոստոսի 16-ից:

¹¹ Բուստամանտի օրենսգիրքը 1928 թ.-ին Հավանայում վեցերորդ ամերիկյան կոնֆերանսում ընդունված Միջազգային մասնավոր իրավունքի մասին կոնվենցիայի հավելվածն է (տես՝ *Международное частное право: Иностранное законодательство*, էջ 746-798):

¹² Տե՛ս Барон Ю. *Система римского частного права*, СПб. 2005, с. 100-101:

¹³ Տե՛ս Раапе Л. *Международное частное право*. М., 1960, с. 53-54:

¹⁴ Дмитриева Г.К. *Комментарий к Гражданскому кодексу Российской Федерации, части третьей, разделу VI «Международное частное право»*. М., 2002, с. 91.

¹⁵ Տե՛ս *Международное частное право: Иностранное законодательство (сост. Жильцов А.Н., Муранов А.И.)*, էջ 632:

¹⁶ Ընդունվել է ՍՍՀ-ում 1954թ.-ին Նյու Յորքում: Կոնվենցիան Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1994 թվականի օգոստոսի 16-ից:

ՊԱՅԲԱՐ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ

**ՔՐԵԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԱՊԱՔՐԵԱԿԱՆԱՑՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՅՆԵՐՈՒՄ ԿՐԻՄԻՆԱԼՈՎԻԱԿԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՆԵՐԴՐՄԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՅԵՐ**

Միսակ ՄԱՐԿՈՍՅԱՆ

*ՀՀ ոստիկանության ակադեմիայի
քրեական իրավունքի և քրեական դատավա-
րության ամբիոնի ուսումնական սահպտենյր,
ոստիկանության ավագ լեյտենանյր*

Հանցագործությունների կանխարգելման ուղղությամբ իրականացվող գործունեության արդյունավետությունը բարձրացնելու գործում առաջընթաց քայլ պետք է համարել Հայաստանի Հանրապետությունում հանցագործությունների կանխարգելման պետական ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) մշակումն ու հաստատումը¹: Նման ծրագրի մշակման անհրաժեշտությունը պայմանավորող հանգամանքներից մեկն այն է, որ բարելավման կարիք ունի հանցագործությունների կանխարգելման ոլորտին առնչվող օրենսդրությունը (ծրագրի 2-րդ մասի գ) կետ): Եվ այս առումով ամենևին էլ պատահական չէ, որ ծրագրային միջոցառումների համակարգում որպես առաջնային նշվել են օրենսդրության կատարելագործմանն ուղղված միջոցառումները (ծրագրի 5-րդ մասի ա) կետ), իսկ որպես ծրագրի իրագործումից սպասվող արդյունքներից մեկը՝ հանցագործությունների կանխարգելման ուղղությամբ տարվող աշխատանքների իրավական դաշտի էական կատարելագործումը (ծրագրի 8-րդ մասի դ) կետ):

Օրենսդրության կատարելագործմանն ուղղված ծրագրային միջոցառումներից մեկն օրենսդրական փոփոխությունների փաթեթի մշակումն է՝ ուղղված Ազգային ժողով ներկայացված օրենքների նախագծերը պարտադիր կրիմինալոգիական փոր-

ձաքննության ենթարկելու պրակտիկայի ներդրումանը (20-րդ ծրագրային միջոցառում):

Կրիմինալոգիական փորձաքննության ներդրման խնդիրը լայնորեն քննարկվում է հայրենական և արտասահմանյան հեղինակների վերջին ժամանակաշրջանի գիտական հետազոտություններում²: Կրիմինալոգիական փորձաքննությունը բնորոշվում է որպես օրենքների և նորմատիվ իրավական այլ ակտերի նախագծերի հետազոտություն, որը մասնագետ-քրեաբանների կողմից կատարվում է հանցավորության, այն պայմանավորող գործընթացների, ինչպես նաև հանցավորության դեմ պայքարի վիճակի վրա այդ նախագծերի ազդեցության տեսանկյունից³:

Բելառուսի Հանրապետությունը հետխորհրդային տարածքում առաջինը օրենսդրական մակարդակով կարգավորեց իրավական ակտերի նախագծերի կրիմինալոգիական փորձաքննության իրականացումը⁴: Բելառուսի Հանրապետությունում կրիմինալոգիական փորձաքննության իրականացման իրավական և կազմակերպչական հիմքերը սահմանված են Բելառուսի Հանրապետության օրենքների նախագծերի կրիմինալոգիական փորձաքննության իրականացման կարգի մասին դրույթներով⁵: Այդ դրույթների 3-րդ կետի համաձայն՝ կրիմինալոգիական փորձաքննության հիմնական խնդիրներն են օրենքների կիրառման գործընթացում քրեածին բնույթի ռիսկերի առաջացման հնարավորության՝ քրեաբանության գարգացման ժամանակակից մակարդակին համապատասխանող օբյեկտիվ և բազմա-

կողմանի կանխատեսումը, օրենքների նախագծերում հայտնաբերված և քրեաժին բնույթի ռիսկերի առաջացմանը նպաստող անկատարությունների վերացման վերաբերյալ գիտականորեն հիմնավորված առաջարկությունների մշակումը, համակարգային և համաձայնեցված օրենսդրական կարգավորման ձևավորումը, որը կբացառի քրեաժին բնույթի ռիսկերի առաջացումը:

Հայաստանի Հանրապետության օրենսդրական գործընթացում կրիմինալոգիական փորձաքննության ներդրման համար անհրաժեշտ է լուծել խնդիրն առնչվող իրավական, կազմակերպչական և ֆինանսական բնույթի մի շարք հարցեր: Իրավական բնույթի հարցերի լուծումը պետք է ենթադրի կրիմինալոգիական փորձաքննության խնդիրների ու օբյեկտների, անցկացման կարգի ու ժամկետների, փորձագետների իրավունքների ու պարտականությունների, փորձագիտական եզրակացության քննարկման կարգի և այլ հարցերի իրավական կարգավորումը: Օրենսդրության կատարելագործմանն ուղղված ծրագրային միջոցառումների շարքում նախատեսված է «Հանցագործությունների կանխարգելման մասին» ՀՀ օրենքի նախագծի մշակումը, որի նպատակը պետք է լինի հանցագործությունների կանխարգելման պետական քաղաքականության մշակումը և իրականացումը (18-րդ միջոցառում): Կարծում ենք, որ կրիմինալոգիական փորձաքննության իրականացման օրենսդրական կարգավորումը կարող է իրականացվել նշված օրենքով և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով: Ինչ վերաբերում է կազմակերպչական բնույթի հարցերին, ապա ծրագրով որպես կազմակերպչական գործունեության կատարելագործմանն ուղղված միջոցառում նախատեսվում է քրեաբանության կիրառական հիմնախնդիրներով զբաղվող գիտահետազոտական կենտրոն ստեղծելու ուղղությամբ անհրաժեշտ միջոցների ձեռնարկումը, որի նպատակը պետք է լինի հանցավորության ծնող պատճառների ու պայմանների ուսումնա-

սիրմանը և հանցագործությունների կանխարգելմանն ուղղված կոնկրետ միջոցառումների գիտական մշակումն ու ներդրումը, ինչպես նաև Ազգային ժողով ներկայացված օրինագծերի կրիմինալոգիական փորձաքննությունների իրականացումը (47-րդ միջոցառում): Բելառուսի Հանրապետությունում կրիմինալոգիական փորձաքննությունն իրականացնում է «Բելառուսի Հանրապետության գլխավոր դատախազության օրինականության և իրավակարգի ամրապնդման հիմնախնդիրների գիտագործնական կենտրոն» պետական հաստատությունը:

Ինչևէ, Հայաստանի Հանրապետությունում կրիմինալոգիական փորձաքննության ներդրմանն առնչվող խնդիրների հետազոտությունը խիստ արդիական է և հեռանկարային: Այդ ծավալուն աշխատանքում բավականին արդյունավետ կլինի նշված ոլորտում արտասահմանյան երկրների առաջավոր փորձի ուսումնասիրությունը:

Սույն հոդվածի շրջանակներում կրիմինալոգիական փորձաքննության դերն ու հնարավորությունները կքննարկվեն միայն այնպիսի կոնկրետ օրենսդրական ոլորտների կապակցությամբ, ինչպիսիք են քրեականացման և ապաքրեականացման գործընթացները:

Ծրագրում որպես կրիմինալոգիական փորձաքննության նպատակ նշվել է հանրապետության քրեաժին իրավիճակի վրա տարբեր օրինագծերի ուղղակի կամ անուղղակի ազդեցության գնահատումը: Ուշադրություն դարձնենք այն հանգամանքին, որ ծրագիրը չի շեշտում օրինագծերի միայն բացասական ազդեցության գնահատումը: Եթե քրեական օրենսգրքի խնդիրներից մեկը հանցագործությունների կանխումն է, ապա քրեաժին իրավիճակի և հանցավորության վրա քրեական օրենքների նախագծերի ազդեցության գնահատումը պետք է ենթադրի քրեաիրավական նորմերի արդյունավետության պարզումը: Ասվածն ավելի քան նշանակալի է դառնում այնպիսի քրեաիրավական նորմերի կա-

ՊԱՅԲԱՐ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ

պակցությամբ, որոնցով սահմանվում կամ վերացվում է այս կամ այն արարքի հանցավորությունը:

Ն.Ի.Մելնիկը, առանձնացնելով սխալ քրեականացման չորս տարատեսակներ (չհիմնավորված, ավելորդ, թերի և ոչ ճիշտ) հանգում է այն հետևության, որ դրանք օրինաստեղծման ոլորտում օրենսդրի գործունեության «խտուան» են, որը պայմանավորված է հետևյալ պատճառներով՝ քրեական օրենքի էության, իրավական համակարգում դրա տեղի, պետական և հասարակական կյանքում ունեցած նշանակության ոչ ճիշտ ընկալումը, քրեականացման վերաբերյալ օրինագծեր նշակողների անբավարար տեսական մակարդակը, քրեական օրենքի ընդունման ընթացակարգի չպահպանումը կամ ձևական պահպանումը: Ելնելով դրանից՝ հեղինակը նպատակահարմար է համարում քրեականացման վերաբերյալ օրենքների նախագծերի կրիմինալոգիական փորձաքննության իրականացումն անկախ (ոչ պառլամենտական) գիտական հաստատությունների (առաջատար բուհերի և հետազոտական ինստիտուտների) և մասնագիտացված գերատեսչությունների կողմից՝ գլխադասային հանձնաժողովի և պառլամենտի նիստերում այդպիսի փորձաքննության արդյունքների պարտադիր քննարկմամբ⁶:

Իսկ արդյո՞ք կա արարքի հանցավորությունը սահմանող և վերացնող օրենքների նախագծերի կրիմինալոգիական փորձաքննության անհրաժեշտություն, եթե դրանք ենթարկվում են պետական իրավական փորձաքննության:

Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի կամ նորմատիվ իրավական ակտերի պետական իրավական փորձաքննության իրականացումը նախատեսված է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով: Օրենքի հոդված 31-ի երկրորդ մասը սահմանում է, որ այդ փորձաքննությունը

իրականացվում է ՀՀ արդարադատության նախարարությունում, և դրա նպատակներն են այդ նորմատիվ իրավական ակտերի նախագծերը կամ նորմատիվ իրավական ակտերը ՀՀ Սահմանադրությանը, ՀՀ օրենքներին և իրավական այլ ակտերին համապատասխանեցնելն ու այդ ակտերի մշակման ժամանակ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի պահանջների և օրենսդրական տեխնիկայի կանոնների պահպանումն ապահովելը:

Ինչպես տեսնում ենք, օրենքի նախագծի պետական իրավական փորձաքննությունն ապահովում է օրենսդրական տեխնիկայի կանոնների պահպանումն ու համապատասխան հասարակական հարաբերությունների համակարգային և համաձայնեցված իրավական կարգավորումը: Մինչդեռ արարքի հանցավորությունը սահմանող և վերացնող օրենքների նախագծերի կրիմինալոգիական փորձաքննությամբ լուծվող խնդիրները դուրս են գալիս զուտ ձևական-իրավաբանական և տեխնիկական-խմբագրական խնդիրների շրջանակից:

Որո՞նք պետք է լինեն արարքի հանցավորությունը սահմանող և վերացնող օրենքների նախագծերի կրիմինալոգիական փորձաքննության խնդիրները:

Ինչպես նշում են Վ.Ն.Կուդրյավցևը և Վ.Պ.Կազիմիրչուկը, օրենսդրական գործունեությունը կարող է դիտարկվել որպես որոշումների ընդունման տարատեսակ⁷: Իսկ ցանկացած որոշում ընդունելու նախադրյալն այդ որոշման հիմնավորումն է: «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ օրենքի հոդված 47-ի չորրորդ մասը սահմանում է, որ օրենքի նախագիծը կամ նախագծերի փաթեթն օրենսդրին ներկայացնելիս դրանց կցվում է օրենքի ընդունման հիմնավորումը: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի հոդված 28-ի առաջին մասի համաձայն՝ նորմատիվ իրավական ակտի նախագիծն իրավաստեղծ մարմնին քննարկման ներկայացնելիս դրան կցվում է իրավական ակտի ընդունման հիմնավորումը:

Նշենք, որ Բելառուսի Հանրապետության օրենքների նախագծերի կրիմինալոգիական փորձաքննության իրականացման կարգի մասին դրույթների 8-րդ կետը սահմանում է, որ օրենքի նախագծի հետ միասին կրիմինալոգիական փորձաքննության ներկայացվող օբյեկտների շարքում նշված է նաև տվյալ օրենքի ընդունման անհրաժեշտության հիմնավորումը: Հիմնավորել որևէ դատողություն նշանակում է բերել այդ դատողության հետ տրամաբանորեն կապված և դրանով իսկ այն հաստատող այլ դատողություններ⁸: Ուստի կարելի է պնդել, որ արարքի հանցավորությունը սահմանող և վերացնող օրենքի ընդունման հիմնավորումը երկկողմանի փաստարկման⁹ յուրահատուկ գործընթաց է, որում որպես փաստարկող հանդես է գալիս օրենսդրական նախաձեռնության հեղինակը, իսկ որպես ընդդիմախոս՝ օրենսդիր մարմինը¹⁰: Կրիմինալոգիական փորձաքննության ներդրմամբ քրեականացման և ապաքրեականացման գործընթացներում որպես փաստարկողի (օրենսդրական նախաձեռնության հեղինակի) ընդդիմախոսներ հանդես կգան քրեաբանության, քրեական իրավունքի և այլ գիտությունների ոլորտի առաջատար մասնագետներ, ինչը, անշուշտ, թույլ կտա նվազեցնել սոցիալապես չպայմանավորված քրեական օրենքների ընդունման դեպքերը:

Բելառուսի Հանրապետության օրենքների նախագծերի կրիմինալոգիական փորձաքննության իրականացման մեթոդական ցուցումների¹¹ 4-րդ կետում որպես կրիմինալոգիական փորձաքննության իրականացման սկզբունք նշված է օրենքի նախագծի գնահատումը՝ հաշվի առնելով դրա կարգավորիչ ուղղվածությունը, գործառնական բովանդակությունը, իրացման ձևերը, ինչպես նաև՝ կիրառման սուբյեկտներն ու կարգը: Գտնում ենք, որ ելնելով քրեաիրավական արգելքը սահմանող և վերացնող նորմերի կարգավորիչ ուղղվածությունից և իրացման ձևերից՝ արարքի հանցավորությունը սահմանող և վերաց-

նող օրենքների նախագծերի կրիմինալոգիական փորձաքննության խնդիրը պետք է լինի քրեաիրավական արգելքի սահմանման կամ վերացման համար բերված փաստարկների հիմնավորվածության, հավաստիության և բավարարության ստուգումն ու սպասվող (ցանկալի) արդյունքին հասնելու գործում քրեաիրավական միջոցների արդյունավետության գնահատումը:

Արարքի հանցավորության սահմանման կամ վերացման փաստարկումը պետք է ներառի՝

1. քրեականացման կամ ապաքրեականացման պահանջումների հիմնավորումը,
2. քրեականացման կամ ապաքրեականացման թույլատրելիության հիմնավորումը,
3. քրեաիրավական նորմի իրացման հնարավորության հիմնավորումը¹²:

Ընդ որում, քրեականացման պահանջումների հիմնավորումն իր հերթին ներառում է արարքի հանրային վտանգավորության հիմնավորումը և արարքի նկատմամբ սոցիալական վերահսկողության այլ միջոցների համեմատությամբ քրեականացման նպատակահարմարության փաստարկումը: Քրեականացման թույլատրելիության հիմնավորումը ներառում է արարքի հանցավորության սահմանված չլինելու, ընդունվելիք քրեաիրավական նորմի համակարգային-իրավական անհակասականության և հասարակական գիտակցությանը քրեաիրավական արգելքի համապատասխանության հիմնավորումը: Իսկ քրեաիրավական նորմի իրացման հնարավորության հիմնավորումը ներառում է արարքի հատկանիշների իրավական հստակ բնորոշման, թույլատրելի միջոցներով արարքը հայտնաբերելու և ապացուցելու հնարավորության հիմնավորումը, ինչպես նաև քրեաիրավական նորմի կիրառման համար անհրաժեշտ նյութատեխնիկական և կազմակերպչական միջոցների առկայության հիմնավորումը:

Ինչպիսի՞ մեթոդիկայով պետք է իրականացվի արարքի հանցավորությունը

ՊԱՅՔԱՐ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՍ

սահմանող և վերացնող օրենքների նախագծերի կրիմինալոգիական փորձաքննությունը:

Բելառուսի Հանրապետության օրենքների նախագծերի կրիմինալոգիական փորձաքննությունն իրականացնելու մեթոդական ցուցումների 6-րդ կետի համաձայն՝ օրենքի նախագծի կրիմինալոգիական փորձաքննության ընթացքում կիրառվում են համակարգային, համակարգակառուցվածքային, համեմատախրավական, պատմախրավական, ձևական-իրավաբանական մեթոդները, ինչպես նաև իրավական մոդելավորման, փորձագիտական գնահատականների, վիճակագրական տվյալների և իրավակիրառ պրակտիկայի ընդհանրացման և սոցիալ-իրավական երևույթների հետազոտման այլ ընդհանուր գիտական և հատուկ մեթոդներ:

Արարքի հանցավորությունը սահմանող և վերացնող օրենքների նախագծերի կրիմինալոգիական փորձաքննության ընթացքում նշված մեթոդների կիրառմամբ պետք է ի հայտ բերվեն դրանցում առկա այն անկատարությունները, որոնք կասկածի տակ են դնում քրեաիրավական արգելքի սահմանման կամ վերացման պահանջումը ու թուլատրելիությունը, ինչպես նաև քրեաիրավական նորմերի իրացման հնարավորությունը:

Այս առումով բավականին ուշագրավ է վերոնշյալ մեթոդական ցուցումների 12-րդ կետը, որում նշված են օրենքի նախագծի այն հնարավոր անկատարությունները, որոնց անհրաժեշտ է ուշադրություն դարձնել կրիմինալոգիական փորձաքննությունն իրականացնելիս: Այդ անկատարությունները կարող են կապված լինել՝

- իրավական կարգավորման մեթոդների և ձևերի սոցիալական անհամապատասխանության, անհամակարգվածության և հակասականության հետ,

- իրավահարաբերությունների օր-

յեկտային-առարկայական և սուբյեկտային կազմի, դրանց առաջացման, փոփոխման և վերացման պայմանների և հիմքերի անորոշության հետ,

- իրավահարաբերությունների սուբյեկտների շահերի անհավասարակշռվածության, նրանց իրավունքների և պարտականությունների, ինչպես նաև դրանց իրացման և կատարման կարգի անորոշության հետ,

- օրենքի իրացումը և դրա դրույթների կատարման նկատմամբ հսկողությունն ապահովող սոցիալական, տնտեսական և կազմակերպչաիրավական մեխանիզմների բացակայության հետ,

- իրավաբանական պատասխանատվություն սահմանելու, այն կիրառելու և կատարելու կարգի հետ:

Մեթոդական ցուցումների 13-17-րդ կետերում մանրամասն նշվում են այն կոնկրետ անկատարությունները, որոնք կարող են դասվել նշված խմբերից յուրաքանչյուրին: Քանի որ նշված բոլոր անկատարությունների ներկայացումը դուրս է սույն հոդվածում քննարկվող հարցերի շրջանակից, մատնանշենք միայն այն անկատարությունները, որոնք տեսակաճորեն կարող են հայտնաբերվել արարքի հանցավորությունը սահմանող և վերացնող օրենքների նախագծերում:

Իրավական կարգավորման մեթոդների և ձևերի սոցիալական անհամապատասխանության, անհամակարգվածության և հակասականության հետ կապված անկատարությունների թվին կարող է դասվել իրավական կարգավորման եղանակների (տիպերի) անհամապատասխանությունը իրավական կարգավորման ոլորտին և առարկային, դրա նպատակներին, սկզբունքներին, ինչպես նաև օրինականության և իրավակարգի պահանջներին:

Քրեականացման դեպքում որպես իրավական կարգավորման եղանակ համդես է գալիս քրեաիրավական արգելքի սահմանումը, իսկ որպես իրավական կարգավորման նպատակ՝ հանցագործությունների

կանխումը: Պետք է նկատի ունենալ նաև այն հանգամանքը, որ արարքի հանցավորությունը և պատժելիությունը սահմանող նորմի կիրառումը վերջին հաշվով գլխավորապես դրսևորվում է պատժի նշանակմամբ, իսկ պատիժը, ինչպես գիտենք, բացի հանցագործությունների կանխման նպատակից, հետապնդում է նաև սոցիալական արդարության վերականգնման և անձի ուղղման նպատակներ: Հետևաբար, քրեականացման վերաբերյալ օրենքի նախագծի կրիմինալոգիական փորձաքննությամբ պետք է պարզվի քրեականացման նպատակահարմարությանն առնչվող այն հարցը, թե արդյոք քրեականացվող արարքն իր բնույթով կարող է դիտարկվել որպես հանցագործություն, և արդյո՞ք պատիժն իր նպատակներով համապատասխանում է արարքի հանդեպ արձագանքի սպասվող արդյունքին:

Օրենքի իրացումը և դրա դրույթների կատարման նկատմամբ հսկողությունն ապահովող սոցիալական, տնտեսական և կազմակերպչահրավական մեխանիզմների բացակայության հետ կապված անկատարությունների թվին կարող է դասվել օրենքի իրացման համար անհրաժեշտ կազմակերպչական, նյութական կամ տեխնիկական պայմանների բացակայությունը, ինչպես նաև օրենքի իրացման համար պատասխանատու անձանց նախապատրաստման, ընտրության և հայտագրման արդյունավետ մեխանիզմների բացակայությունը:

Քրեականացումն ու ապաքրեականացումը իրականացնում են հանցավորության ծավալի կարգավորման գործառույթ, և քրեականացման նախաձեռնողը պետք է հաշվի առնի քրեականացման հետևանքով քրեական գործերի քանակի աճի, քրեահրավական ներգործության միջոցների իրացման հետ կապված բոլոր ծախսերը: Ըստ Գ.Վ.Կրիլովի՝ քրեահրավական արգելքի իրացման գործնական հնարավորությունը պայմանավորված է ոչ միայն հանցագործության ու հանցագործի հայտնաբեր-

ման հնարավորություններով, այլև տվյալ իրավական նորմը կիրառելուն կոչված պետական ապարատի հնարավորություններով¹³: Վ.Պ. Արտամոնովը գրում է. «Քրեական քաղաքականության առավել արդիական սոցիալ-իրավական հիմնախնդիրներից մեկը դրա իրացման ուժերի, մեթոդների և միջոցների խնդիրն է: Անուր գիտական-տեսական (այդ թվում՝ քրեահրավական) հիմք ունենալը բավարար չէ. անհրաժեշտ է համապատասխան կազմակերպչական գործունեության և այն իրականացնող կադրերի առկայություն, ինչը պետությունից պահանջում է մասնագետների պատրաստում, ինչպես նաև ֆինանսատնտեսական միջոցներ՝ նրանց գործունեության ապահովման համար»¹⁴: Ըստ Ա.Ի.Կորոբեևի՝ քրեահրավական արգելք սահմանելիս անհրաժեշտ է զնահատել քրեական գործերի նախնական և դատական քննության, ինչպես նաև պատիժների ի կատար ածման ծախսերը: Այդ գնահատումը ներառում է նաև իրավապահ մարմինների աշխատակիցների հաստիքների թվի, նրանց ծանրաբեռնվածության ծավալի վերլուծությունը¹⁵: Արարքի հանցավորությունը սահմանող օրենքի նախագծի կրիմինալոգիական փորձաքննության ընթացքում պետք է ուշադրություն դարձվի այն հարցին, թե կոնկրետ ինչպիսի տեխնիկական միջոցների կիրառման, փորձաքննությունների ինչպիսի տեսակների ներդրման անհրաժեշտություն կառաջանա քրեականացված արարքների վերաբերյալ գործեր քննելիս: Համապատասխանաբար՝ արարքի հանցավորությունը վերացնող օրենքի նախագծի կրիմինալոգիական փորձաքննությամբ կարող է լուծվել այն հարցը, թե արդյոք ավելի արդյունավետ կլինի քրեականացմանն այլընտրանքային այն միջոցի կիրառումը, որն առաջարկվում է ապաքրեականացման նախաձեռնողի կողմից: Ընդ որում, որպես արդյունավետության գնահատման չափանիշներ կարող են հանդես գալ տվյալ հանցագործությունների բացահայտմամբ և քննությամբ զբաղվող

ՊԱՅՔԱՐ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՍ

պետական մարմինների աշխատակիցների ծանրաբեռնվածությունը, այլընտրանքային միջոցի (օրինակ, վարչական պատասխանատվության սահմանման) կիրառման դեպքում տվյալ արարքների վերաբերյալ գործով վարույթի կարգը, ինչպես նաև քրեաիրավական միջոցների և այլընտրանքային տարբերակների կիրառման դեպքում ծախսվող միջոցների վերաբերյալ տվյալները:

Իրավաբանական պատասխանատվության սահմանման, դրա կիրառման և կատարման կարգի հետ կապված անկատարությունների թվին կարող է դասվել իրավախախտման կազմի հատկանիշների չկոնկրետացված նկարագրությունը:

Քրեականացման անմիջական խնդիրը թույլատրելի և անթույլատրելի վարքագծի միջև սահմանի հաստատումն է և վարքագծի որոշակի տարբերակ դրսևորելու օրենսդրական պահանջի ձևակերպումը: Հետևաբար, քրեաիրավական նորմի անմիջական իրացման (դրանում բովանդակվող պահանջի պահպանման) անհրաժեշտ նախապայմանն այն է, որ նորմի հասցեատերը, ելնելով դրա բովանդակությունից, հստակ հասկանա, թե որն է հանցավոր և ոչ հանցավոր վարքագծի սահմանագիծը:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը Կոկինակիսն ընդդեմ Հունաստանի գործով վճռում նշել է. «...Քրեական օրենքը չպետք է ի վնաս մեղադրյալի լայն մեկնաբանության տեղիք տա, օրինակ, համանմանությամբ. սրանից հետևում է, որ հանցանքը պետք է հստակորեն սահմանված լինի օրենքով: Այս պայմանը բավարարված է այն դեպքում, երբ անձը համապատասխան դրույթի ձևակերպումից, անհրաժեշտության դեպքում դատարանների մեկնաբանության օգնությամբ, կարող է հասկանալ, թե հատկապես որ գործողությունների ու անգործության համար է նա ենթակա պատասխանատվության»¹⁶:

Հետևաբար, արարքի հանցավորությունը սահմանող օրենքի նախագծի կրիմինալոգիական փորձաքննությամբ պետք է պարզվի քրեաիրավական նորմի իրացման հնարավորությանն առնչվող այն հարցը, թե արդյոք քրեականացվող արարքի՝ ընդունվելիք նորմում ամրագրված էական հատկանիշների կոնկրետացման աստիճանը բավարար է քրեաիրավական արգելքի սահմանների մասին պատկերացում կազմելու համար, և արդյոք նորմում օգտագործված գնահատողական հասկացություններին հնարավոր է տալ միասնական մեկնաբանություն:

Այսպիսով, արարքի հանցավորությունը սահմանող և վերացնող օրենքների նախագծերի կրիմինալոգիական փորձաքննության խնդիրները պետք է լինեն քրեաիրավական նորմերի իրացման բացասական հետևանքների բազմակողմանի կանխատեսումը, նման հետևանքների բացառման վերաբերյալ գիտականորեն հիմնավորված առաջարկությունների մշակումը, նորմերի իրացումն ապահովող մեխանիզմների արդյունավետության գնահատումը, նորմերի իրացման համար անհրաժեշտ միջոցների հաշվարկումը: Ինչպես տեսնում ենք, կրիմինալոգիական փորձաքննությամբ լուծվում են գլխավորապես կանխատեսական խնդիրներ: Վ.Ե.Նովիչկովը, նշելով, որ քրեաիրավական, կրիմինալոգիական և քրեակատարողական կանխատեսման առարկաներն ունեն ընդհանուր գծեր, առաջարկում է դրանք միավորել, դիտարկել և հետազոտել մեկ ընդհանուր՝ քրեաքաղաքական կանխատեսման շրջանակներում: Որպես այդպիսի կանխատեսման առարկայի տարրերից մեկը հեղինակը նշում է իրավաստեղծման գործընթացում քրեաիրավական նորմերի արդյունավետության գնահատումը¹⁷: Կարծում ենք, որ քրեաքաղաքական կանխատեսման առարկայի այդ տարրը լիովին տեղավորվում է քրեականացման և ապաքրեականացման մասին օրենքների նախագծերի կրիմինալոգիական փորձաքննությամբ

լուծվող հարցերի շրջանակում: Ինչպես իրավագիտորեն նշվել է մասնագիտական գրականության մեջ, ցանկացած պետության քրեական քաղաքականությունը պետք է հիմնվի այն բանի հստակ ընկալման վրա, թե հանցավորության կառուցվածքում և շարժընթացում ինչպիսի փոփոխությունների հնարավոր կլինի հասնել համապատասխան նորմերի և ինստիտուտների կատարելագործմամբ¹:

Ավելացնենք նաև, որ քրեականացման համար էական նշանակություն կարող է ունենալ նաև այլ օրենքների նախագծերի կրիմինալոգիական փորձաքննությունը: Քրեականացման համակարգային-իրավական գործառույթի միջոցով իրականացվում է իրավունքի այլ ճյուղերի կողմից կարգավորվող առավել արժեքավոր հասարակական հարաբերությունների պաշտպանություն: Հետևաբար՝ օրենքների նախագծերի կրիմինալոգիական փորձաքն-

նությանը կարող է լուծվել այն հարցը, թե արդյոք անհրաժեշտ չէ տվյալ օրենքով կարգավորվող այս կամ այն հասարակական հարաբերությունները վերցնել քրեաիրավական պաշտպանության տակ, քրեականացնել դրանց դեմ ոսնձգող հանրորեն վտանգավոր արարքները:

Ամփոփելով շարադրանքը՝ նշենք, որ կրիմինալոգիական փորձաքննության ներդրման ծրագրային միջոցառման հետևողական իրականացումը թույլ կտա էապես կատարելագործել օրենսդրական դաշտն ընդհանրապես և քրեական օրենսդրությունը մասնավորապես: Օրենսդրական գործընթացում կրիմինալոգիական փորձաքննության եզրակացության պարտադիր քննարկման պրակտիկայի ձևավորումն անկասկած կամրապնդի այն հիմնադրույթը, որ օրենսդրական աշխատանքներին գիտնականների ներգրավումը պետք է լինի կանոն, ոչ թե բացառություն:

¹ Ծրագիրը հաստատվել է ՀՀ կառավարության 27.03.2008թ. N 1039-Ն որոշմամբ (ուժի մեջ է մտել 02.10.2008թ.) և նախատեսված է 2008-2012 թթ. համար:

² Տե՛ս Գաбузян А.А. Проблемы преступности в Республике Армения в переходный период, Ереван, 2007, էջ 228, Бажанов О.И. Научные основы концептуальных решений в области борьбы с преступностью//Вестник Белорусского информационного центра “Верховенство закона”, Минск, 1998, էջեր 46-53, Грищук В.К. Некоторые вопросы разграничения преступлений и административных проступков//Соотношение преступлений и иных правонарушений: современные проблемы. М., 2005, էջ 145, Звечаровский И. О концепции развития уголовного законодательства России//Уголовное право, 2005, N3, էջ 33, Десять лет уголовному кодексу Российской Федерации: достоинства и недостатки (Научно-практическая конференция)//Государство и право, 2006, N11, էջ 108, Кострова М. Уголовный кодекс Рос-

сийской Федерации-пять лет спустя: проблемы и перспективы совершенствования норм уголовного законодательства//Уголовное право, 2003, N3, էջ 32, Криминология: Учебник для вузов/Под общ. ред. А.И.Долговой, 3-е изд., перераб. и доп. М., 2007, էջեր 446-448:

³ Տե՛ս Разделы проекта Федерального закона о криминологической экспертизе// Преступность и правовое регулирование борьбы с ней. Под. ред. А.И.Долговой, М., 1996, էջեր 390-393:

⁴ «Բելառուսի Հանրապետության նորմատիվ իրավական ակտերի մասին» ԲՀ օրենքը 01.11.2004թ. լրացվել է 49.1 (Նորմատիվ իրավական ակտերի նախագծերի կրիմինալոգիական փորձաքննությունը) հոդվածով:

⁵ Նշված դրույթները հաստատվել են ԲՀ նախագահի 29.05.2007թ. N 244 հրամանագրով:

⁶ Տե՛ս Мельник Н.И. Проблемы определения преступности деяния в процессе его криминализации//Соотношение преступлений и иных правонарушений: современные проблемы, М., 2005, էջեր 370-375:

⁷ Տե՛ս Кудрявцев В.Н., Казимирчук В.П. Современная социология права. М., 1995, էջ 37:

⁸ Տե՛ս Кириллов В.И., Старченко А.А., Логика. Учебник для юридических факультетов и институтов. М., 1995, էջ 200:

⁹ Երկկողմանի փաստարկումը (բոլորն ընդդեմ մեկի) վիճելի հարցերի քննարկումն է մեկ պրոպոնենտի հետ, որն առաջ է քաշում և հիմնավորում իր թեզը: Տե՛ս Кириллов В.И., Старченко А.А., Նշվ. աշխ., էջ 205:

¹⁰ Փաստարկողը (պրոպոնենտը) փաստարկման այն մասնակիցն է, որն առաջ է քաշում և պաշտպանում որոշակի դրույթ, իսկ ընդդիմախոսը (օպոնենտը) փաստարկման այն մասնակիցն է, որն անհամաձայնություն է արտահայտում պրոպոնենտի դիրքորոշմանը: Տե՛ս Кириллов В.И., Старченко А.А., Նշվ. աշխ., էջ 203:

¹¹ Մեթոդական ցուցումները հաստատվել են ԲԶ գլխավոր դատախազի 17.09.2007թ. N 35 հրամանով:

¹² Լրիվ ապաքրեականացման դեպքում նորմի իրացման հնարավորությունը հիմնավորելու անհրաժեշտություն չի առաջանում:

¹³ Տե՛ս Крылов Г.В. Проблемы декриминализации деяний в советском уголовном праве. Автореф. дис... канд. юр. наук. М., 1986, էջ 22:

¹⁴ Տե՛ս Артамонов В.П. Проблемы профессиональной подготовки кадров в контексте реализации уголовной политики// Современные проблемы уголовной политики, уголовного права, криминологии и уголовно-исполнительного права. Академия управления МВД России. Сборник научных статей. М., 2007, էջ 63:

¹⁵ Տե՛ս Коробеев А.И. Уголовная наказуемость общественно опасных деяний. Хабаровск, 1986, էջ 47:

¹⁶ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Վճիռների ժողովածու: Երևան, 2003, էջ 365:

¹⁷ Տե՛ս Новичков В.Е. Уголовно-политическое прогнозирование или уникальная возможность объединения прогнозных исследований в сфере борьбы с преступностью// Современные проблемы уголовной политики, уголовного права, криминологии и уголовно-исполнительного права. Академия управления МВД России. Сборник научных статей. М., 2007, էջ 68:

¹⁸ Տե՛ս Алексеев А.И., Овчинский В.С., Побегайло Э.Ф. Российская уголовная политика: преодоление кризиса. М., 2006, էջեր 15-16:

ԳԱՏԱԿԱՆ ՀԵՂԻՆԱԿԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻ ՀԱՍԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԸ

Լյուովիկ ԳՎԼԹՅԱՆ

ԵՊՀ քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի սապիրանդ

Ճիշտ է, անձի գրավոր և բանավոր խոսքի հատկանիշներն անհատական են ու անկրկնելի, միևնույնն է, անհրաժեշտ է մշակել կրիմինալիստիկական այնպիսի արդյունավետ միջոցներ և հնարքներ, որոնց կիրառմամբ հնարավոր կլինի ճշգրիտ կերպով պարզել վիճելի տեքստի հեղինակին և լուծել դատական հեղինակագիտական փորձաքննության խնդիրները:

Պետք է նշել, որ դատական հեղինակագիտական փորձաքննության զարգացման պատմության մեջ առանձին գիտնականների կողմից տարբեր ժամանակներում մշակվել են զանազան մեթոդներ վիճելի տեքստի հեղինակին պարզելու համար, սակայն դատական հեղինակագիտության տեսության մեջ ցայսօր համընդհանուր մեթոդ գոյություն չունի:

Կարծում ենք, դատական հեղինակագիտական հետազոտության մեթոդի հիմնահարցը պետք է քննարկել կրիմինալիստիկական մեթոդաբանության ընդհանուր դրույթների շրջանակներում: Բանն այն է, որ հեղինակին պարզելու նպատակով տեքստերի կրիմինալիստիկական հետազոտությունը կրիմինալիստիկական նույնացման տեսակներից մեկն է, ուստի այս հետազոտության մեթոդիկան հիմնվում է կրիմինալիստիկական նույնացման ընդհանուր դրույթների վրա:

Ընդունված է, որ ամենալայն իմաստով մեթոդը նյութական իրականության, բնության ու հասարակական կյանքի երևույթների ուսումնասիրման միջոցներն ու հետազոտության նկատմամբ ունեցած վերաբերմունքն է: Դրանցից յուրաքանչյուրն իրենից ներկայացնում է հետազոտական գոր-

ծողությունների սկզբունքների համակարգ, որը նախատեսվում է իրականացնել որոշակի հաջորդականությամբ:

Մեկ այլ սահմանմամբ՝ կրիմինալիստիկական հետազոտության մեթոդը ուսումնասիրության օբյեկտի և շրջակա միջավայրի միջև առկա օրինաչափ, էական կապերի և հատկությունների բացահայտմանն ուղղված հնարքների համալիր է, որոնցում դրսևորվում է հետազոտության օբյեկտի էությունը: Միաժամանակ, մեթոդը կիրառվող փորձագիտական հետազոտության մեթոդիկայի բաղկացուցիչ մասն է, որը բովանդակում է հանձնարարականներ դրա ընտրության, կիրառման պայմանների և ակնկալվող արդյունքների վերաբերյալ:

Այսպիսով, դատական հեղինակագիտական հետազոտության մեթոդը կարելի է սահմանել որպես այն եղանակների, միջոցների ու հնարքների ամբողջություն, որն ուղղված է վիճելի տեքստի հեղինակի նույնացմանը, տեքստի հեղինակման և կատարման պայմանների որոշմանը և մի շարք դիագնոստիկ խնդիրների լուծմանը՝ քրեական գործի համար նշանակություն ունեցող հանգամանքների բացահայտման նպատակով:

Հարկ է նշել, որ հեղինակագիտական հետազոտությունների ձևավորման վաղ փուլում տեքստերի հեղինակագիտական հետազոտության համար կիրառվող մեթոդները գլխավորապես կրել են ոչ կրիմինալիստիկական բնույթ և իրականացվել առավելապես ոչ լեզվաբանական գիտելիքների՝ մասնավորապես մաթեմատիկական և վիճակագրական վերլուծությունների հիման վրա: Սակայն ժամանակի ընթացքում հեղինակագիտական հետազոտությունների զուտ վիճակագրական, մաթեմատիկական մեթոդները ցույց տվեցին իրենց անարդյունավետությունը, քանի որ

ՊԱՅՔԱՐ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՍ

դրանք զուրկ էին լեզվաբանական հիմքից: Ինչպես նշում է Ռ. Ու. Շույը, «... պարզունակ եղանակով լեզվական հատկանիշների գնահատումը նույնը չէ, ինչ որ լեզվաբանական վերլուծությունը»⁴:

Նշենք, որ դատական հեղինակագիտության մեջ տեքստի զուտ բառային կազմի քանակական վերլուծության կիրառմամբ հեղինակի անհատական ոճը գնահատելուն ուղղված մոտեցումն արտասահմանյան գրականության մեջ ստացել է դատական ոճաչափություն՝ «ստիլոմետրիա», անվանումը⁵:

Դատական հեղինակագիտական հետազոտությունների հետագա զարգացումը պայմանավորեց գրավոր տեքստերի կրիմինալիստիկական հետազոտության ընթացքում առավելապես լեզվաբանական գիտելիքներին դիմելու անհրաժեշտությունը, ինչի արդյունքում դատական հեղինակագիտական հետազոտության մեթոդի մշակման հարցում մեծ նշանակություն ձեռք բերեցին լեզվաբանական վերլուծությունները: Ընդ որում, արտասահմանյան գրականության մեջ այս մոտեցումն անվանվում է դատական ոճագիտություն՝ «դատական ստիլիստիկա»⁶:

Տեքստերի դատական հեղինակագիտական հետազոտության մեթոդը սերտորեն կապված է այն հմտությունների և դրանցով պայմանավորած՝ գրավոր տեքստի հատկանիշների որոշման հետ, որոնց հետազոտության համար այն կիրառվում է: Ուստի, այդ հատկանիշների ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի հեղինակագիտական հետազոտության մեթոդի սահմանման և դրա առանձնահատկությունների պարզաբանման գործում:

Դատական հեղինակագիտությունից հայտնի է, որ գրավոր տեքստում արտահայտված խոսքի հատկանիշները դասակարգվում են երկու հիմնական խմբերի՝ լեզվական և մտավոր (ինտելեկտուալ), ո-

րոնցից յուրաքանչյուրն իր հերթին դասակարգվում է ընդհանուր և մասնավոր հատկանիշների⁷:

Հայտնի է, որ լեզվական ընդհանուր հատկանիշները գրավոր և բանավոր խոսքի այն հատկանիշներն են, որոնք արտահայտում են հետազոտվող գրավոր տեքստի էական լեզվական հատկությունները: Լեզվական ընդհանուր հատկանիշներն են՝ բառապաշարային, դարձվածաբանական, ոճաբանական, ձևաբանական, շարահյուսական, քերականական, ուղղագրական և կետադրական հատկանիշները: Այս հատկանիշների հիման վրա կարելի է գնահատել խոսքի կառուցվածքային բնութագրի կատարելիության և զարգացվածության աստիճանը⁸ կամ, այսպես ասած, խոսքի որակը:

Լեզվական մասնավոր հատկանիշներն արտահայտում են լեզվական միջոցների և դրանց կառուցվածքների տարբեր առանձնահատկությունները, որոնք տեղ են գտել գրավոր կամ բանավոր խոսքի կանոններից որոշակի կայուն շեղումների, որոշակի լեզվական միջոցների հաճախակի օգտագործման մեջ և որոշակի լեզվական միջոցների կայուն կապերում, որոնք օգտագործվում են ստուգվող անձի կողմից նրա հարողակցության տիպական իրադրություններում:

Ընդ որում, մասնավոր հատկանիշներ կարող են համարվել ոչ միայն լեզվական նորմերից կայուն շեղումները, այլ նաև դրանց պահպանումը: Այս կապակցությամբ գրականության մեջ արդարացիորեն նշվում է, որ ինչպես միևնույն սխալը, այնպես էլ լեզվական նորմի ճիշտ կիրառությունը ևս կարող են կրկնվել վիճելի և համեմատվող տեքստերում⁹: Հետևաբար, դատական հեղինակագիտական հետազոտություններում տեքստի իդենտիֆիկացնող հատկանիշների շարքից չի կարելի բացառել լեզվական նորմերի անսխալ կիրառությունները:

Ինչ վերաբերում է գրավոր տեքստի մտավոր ընդհանուր հատկանիշներին, ա-

պա դրանք արտացոլում են հեղինակի կողմից մտածողության ձևական-տրամաբանական կանոնների տիրապետման մակարդակը, տրամաբանական միջոցների ճիշտ կիրառման աստիճանը, նրա տրամաբանական մտածողության, զարգացվածության մակարդակը՝ ցածր, միջին, բարձր աստիճանակարգությամբ:

Տեքստի ինտելեկտուալ մասնավոր հատկանիշները կարող են արտահայտվել տեքստի շարադրման տրամաբանության որոշակի խախտումներում, տրամաբանական կառուցվածքների և կանոնների կայուն կիրառություններում¹⁰: Մասնավոր ինտելեկտուալ հմտությունների մեջ առանձնացվում են նաև իրականության ընկալման մտավոր ունակության առանձնահատկությունները, փաստարկումները, գնահատականները, շեշտադրումները և մյուս հատկանիշները¹¹: Ինտելեկտուալ մասնավոր հատկանիշները, մասնավորապես, կարող են դրսևորվել տրամաբանական մտածողության որոշակի ձևերի՝ անալիզի, սինթեզի, ինդուկցիայի, դեդուկցիայի, վերացարկման, ընդհանրացման և այլ տրամաբանական կանոնների կայուն կիրառությունների կամ դրանցից կայուն շեղումների ձևով:

Ակնհայտ է, որ գրավոր տեքստերի վերը թվարկված լեզվական և մտավոր հատկանիշների վերհանումն ու հետազոտությունն իրականացվում են որակական մեթոդի կիրառմամբ: Վերջինս թույլ է տալիս որոշելու հեղինակի խոսքը բնութագրող իդենտիֆիկացնող հատկանիշները, դրանց համապատասխանությունը կամ անհամապատասխանությունը լեզվական նորմերին և տրամաբանական կանոններին: Միաժամանակ, հեղինակին պարզելու նպատակով տեքստերի կրիմինալիստիկական հետազոտության արդյունավետության բարձրացման և ստացված տվյալների ճշգրտության ապահովման համար անհրաժեշտ է տեքստի լեզվաբանական հատկանիշների վերլուծության (որակական մեթոդ) և վիճակագրական վերլուծություններ-

րի (քանակական մեթոդ) միաժամանակյա կիրառում:

Մեթոդը համարվում է որակական, եթե գրավոր տեքստի հատկանիշներն իդենտիֆիկացված են և նկարագրված են որպես հեղինակի խոսքին բնորոշ հատկանիշներ¹²: Այլ խոսքերով՝ գրավոր տեքստի հետազոտման որակական մեթոդը հեղինակի կողմից կիրառված լեզվական և ինտելեկտուալ միջոցների, դրանց կիրառման եղանակների և առանձնահատկությունների համակարգված լեզվաբանական վերլուծությունն է:

Մեթոդը համարվում է քանակական, եթե վիճելի գրավոր տեքստում իդենտիֆիկացվում են որոշակի ցուցիչներ, որոնք էլ գնահատվում են այս կամ այն եղանակով¹³ (օրինակ, հետազոտվող գրավոր նյութերի ամբողջության մեջ որոշակի ցուցիչի հանդիպման հարաբերական հաճախականությունը՝ արտահայտված թվերով կամ տոկոսներով): Ի տարբերություն որակական մեթոդի՝ քանակական մեթոդը ցույց է տալիս, թե հեղինակի կողմից օգտագործվող լեզվական որոշակի ձևերը ինչպիսի՞ հաճախականությամբ են օգտագործվում նրա գրավոր տեքստերում:

Դատական հեղինակագիտական հետազոտություններում որակական և քանակական մեթոդները լրացնում են միմյանց, և շատ հաճախ կիրառվում են միաժամանակ՝ իդենտիֆիկացնելու և գնահատելու լեզվաբանական հատկանիշների առկայությունը կամ բացակայությունը վիճելի և համեմատվող փաստաթղթերում: Ընդ որում, որքան գրավոր տեքստում ցածր է իդենտիֆիկացնող այս կամ այն հատկանիշի հանդիպման հաճախականությունը տարբեր անձանց լեզվական հմտություններով պայմանավորված հատկանիշներում, այնքան բարձր է այդ հատկանիշի նույնացման արժեքը: Միևնույն ժամանակ, որքան բարձր է որոշակի հատկանիշի հանդիպման հաճախականությունը միևնույն անձի կատարած տեքստերում, այնքան բարձր է այդ հատկանիշի իդենտիֆիկաց-

ՊԱՅՔԱՐ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ

ման արժեքը:

Պետք է նկատել սակայն, որ կրիմինալիստիկական հետազոտություններում քանակական կամ վիճակագրական մեթոդների կիրառումը ոչ միշտ է հնարավոր: Բանն այն է, որ շատ դեպքերում հետազոտության օբյեկտի որոշ հատկանիշների բնույթը թույլ չի տալիս այն ենթարկել քանակական վերլուծության: Նույնը վերաբերում է նաև գրավոր տեքստերի որոշ հատկանիշներին. տեքստի՝ լեզվաբանական վերլուծության ենթակա շատ հատկանիշներ քանակական մեթոդով հաշվել (գնահատել) հնարավոր չէ: Այս առումով տեղին է Գ. Կնիֆֆկայի տեսակետը, ըստ որի՝ ամեն ինչ չէ, որ քանակապես հաշվելի է, վիճակագրորեն վերլուծելի¹⁴:

Տեքստերի հեղինակագիտական կրիմինալիստիկական հետազոտության դեպքում, օրինակ, քանակապես անհաշվելի հատկանիշներ կարող են լինել տեքստի ոճը, իմաստը կամ հեղինակին բնութագրական ինտելեկտուալ հատկանիշները¹⁵: Բոլոր դեպքերում պետք է նկատի ունենալ, որ դատական հեղինակագիտական փորձաքննության ժամանակ անհրաժեշտ է հետազոտել տեքստի այնպիսի անհատական հատկանիշներ, որոնք լեզվաբանական որակական վերլուծության հետ միաժամանակ կարող են ենթարկվել նաև քանակական գնահատման: Օրինակ, հեղինակի անհատական ոճն ամբողջությամբ վերցված, կարծում ենք, քանակական վերլուծության ենթարկել հնարավոր չէ: Սակայն անհատի ոճը կազմող բառապաշարային, դարձվածաբանական և քերականական հատկանիշներն առանձին-առանձին կարող են ենթարկվել քանակական վերլուծության: Որպես օրինակ կարելի է մատուցանել սովորություն դարձած բառերի օգտագործման հաճախականությունը կամ պատկերավոր արտահայտչական այս կամ այն միջոցի յուրահատուկ կիրառման հա-

ճախականությունը տեքստում:

Նկատենք, որ հեղինակագիտական հետազոտություններում որակական և քանակական մեթոդների կիրառումն անմիջականորեն կապված է լեզվական նորմի հասկացության հետ, քանի որ վիճելի տեքստի հեղինակի պարզումն իրականացվում է հեղինակի կողմից գրավոր տեքստեր կազմելիս լեզվական նորմի պահպանման կամ դրանից շեղումների վերլուծության միջոցով: Լեզվական նորմն այն գիտական լեզվաբանական չափանիշն է, որով որոշվում է գրավոր և բանավոր խոսքի հատկանիշների որակական բնութագիրը:

Որակական մեթոդի կիրառմամբ հետազոտվում են գրավոր տեքստերում հեղինակի կողմից համապատասխան լեզվական նորմից շեղումները կամ դրանց պահպանումը, իսկ քանակական մեթոդի կիրառմամբ պարզվում է համապատասխան նորմից (նորմերից) շեղումների կամ դրա (դրանց) պահպանման հարաբերական հաճախականությունը: Քանակական մեթոդի կիրառման համար չափորոշիչ են համարվում մաթեմատիկական և վիճակագրական վերլուծությունների օբյեկտիվ տվյալները: Ըստ այդ չափորոշիչների՝ գրավոր տեքստում լեզվական նորմերի պահպանման կամ խոսքի զարգացվածության աստիճանը կարող է բնութագրվել բարձր, միջին, ցածր և զրոյական զարգացվածության: Այլ կերպ ասած՝ քանակական մեթոդի կիրառմամբ որոշվում է հեղինակի խոսքի՝ որակապես որոշված հատկանիշների՝ լեզվական նորմին (նորմերին) համապատասխանության կամ դրանցից շեղումների աստիճանը:

Մինևույն ժամանակ, միայն լեզվական նորմով սահմանված դրույթները բավարար չեն հեղինակի խոսքի լիարժեքությունը գնահատելու համար, քանի որ նորմը հիմնականում կարգավորում է խոսքի կառուցվածքային, նշանային, լեզվական կողմը և չի ընդգրկում խոսքի հարաբերությունն իրականությանը, հասարակությանը, մարդկանց գիտակցությանն ու վարքագ-

ծին:

Այս առնչությամբ լեզվագետ պրոֆ. Լ. Եզեկյանը գրում է. «Խոսքը կարող է լինել ճիշտ, այսինքն՝ համապատասխանել և չխախտել լեզվական նորման, բայց և ունկնդրին անհասանելի ու ոչ մատչելի: Այն կարող է լինել տրամաբանորեն անճշգրիտ և հակասական, բայց և ճիշտ, այն կարող է լինել ճշգրիտ, բայց որոշակի դեպքերում բացարձակապես ոչ տեղին, ոչ պատեհ: Հենց դա էլ նշանակում է լավ գրել կամ լավ խոսել: Ուստի և լեզվական նորմային զուգահեռ գործում է նաև մի շատ կարևոր հանգամանք, որը և կարգավորում է մարդկանց խոսքային մշակույթն ու վարքագիծը. դա խոսքի նպատակահարմարությունն է»¹⁶:

Այսպիսով, տեքստերի դատական հեղինակագիտական հետազոտության գործընթացում, մեր կարծիքով, խոսքի մտավոր հատկանիշների շարքում գնահատման ենթակա հատկանիշներից է նաև խոսքի նպատակահարմարությունը՝ որպես հեղինակի մտավոր և լեզվական զարգացվածության գնահատման ինքնուրույն հատկանիշ:

Կրիմինալիստիկական գրականության մեջ դատական հեղինակագիտական հետազոտության մեթոդի հետ կապված վիճելի հարցերից մեկն առնչվում է հեղինակին իդենտիֆիկացնող հատկանիշների խմբի պարզաբանմանը: Բանն այն է, որ, ըստ որոշ հեղինակների, դժվար է որոշել գրավոր տեքստի հատկանիշների այն խմբերը, որոնք ի վիճակի են ծառայելու որպես վստահելի և ճշգրիտ հիմքեր այս կամ այն վիճելի տեքստի հեղինակին պարզելու համար¹⁷: Այդ իսկ պատճառով գրականության մեջ տարբեր գիտնականների կողմից բազմիցս փորձեր են արվել ստույգ որոշե-

լու լեզվական հատկանիշների այն շրջանակը, որոնք կարող են օգտագործվել որպես հեղինակին իդենտիֆիկացնող համընդհանուր հատկանիշներ, սակայն խնդրո առարկայի շուրջ դատական հեղինակագիտությունում դեռևս միասնական մոտեցում գոյություն չունի¹⁸:

Մեր կարծիքով, հեղինակին իդենտիֆիկացնող հատկանիշները կարող են տեղ գտնել լեզվի տարբեր մակարդակներում, այդ թվում՝ հնչյուններում, բառերում, նախադասություններում, խոսքի դարձվածաբանական, շարահյուսական, քերականական, ոճական հատկանիշներում, տեքստի արտաքին կառուցվածքի առանձնահատկություններում, մտավոր հմտություններում, խոսքի նպատակահարմարության մեջ, ինչպես նաև նշված հատկանիշների համատեղ կիրառություններում: Ուստի, հեղինակին իդենտիֆիկացնող հատկանիշ ծառայող ցուցիչները յուրաքանչյուր կոնկրետ դեպքում պետք է ընտրվեն վիճելի և համեմատական հետազոտության նմուշ հանդիսացող տեքստերում արտահայտված լեզվական և մտավոր հատկանիշների այն ամբողջությունից, որոնք ներկայացվել են փորձագիտական հետազոտության:

Այսպիսով, տեքստերի դատական հեղինակագիտական հետազոտության մեթոդը ենթադրում է հեղինակի գրավոր կամ բանավոր խոսքի՝ վիճելի և համեմատվող տեքստերում արտահայտված լեզվական և մտավոր հմտություններով պայմանավորված հատկանիշների որակական և քանակական վերլուծություն, որն ուղղված է մի շարք իդենտիֆիկացիոն և դիագնոստիկ խնդիրների լուծմանը՝ գործով նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու համար:

¹ Տե՛ս **Grant T.** Approaching Questions in Forensic Authorship Analysis. In Gibbons J., Turell T.M. Dimensions of Forensic Linguistics, Amsterdam, 2008, էջ 216:

² Տե՛ս **Օհանյան Լ.Պ.** Կրիմինալիստիկական Հա-

յաստանի Հանրապետությունում, Երևան, 2007, էջ 7:

³ Տե՛ս Энциклопедия судебной экспертизы / Под ред. Т.В. Аверьяановой, Е.Р. Россинской. М., 1999, էջ 226:

ՊԱՅԲԱՐ ՀԱՆՑԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ

⁴ Տե՛ս **Shuy R.W.** Linguistics in the Courtroom: a Practical Guide. Oxford University Press, 2006, էջ 4:

⁵ Տե՛ս **Gibbons J.P.** Forensic Linguistics: an Introduction to Language in the Justice System, Blackwell Publishing LTD, Oxford, 2003, էջ 303; **Галяшина Е.И.** Основы судебного речеведения, Москва, 2003, էջ 14-17:

⁶ Տե՛ս **Howald B.S.** Authorship Attribution under the Rules of Evidence: Empirical Approaches — a Layperson's Legal System. "Forensic Linguistics: International Journal of Speech, Language and the Law". Equinox Publishing LTD, 2008, Volume 15, Number 2, էջ 234; **McMenamin G.R.** Linguistics: Advances in Forensic Stylistics. Boca Raton, CRC Press LLC, 2002, էջ 163:

⁷ Տե՛ս **Вул С.М.** Теоретические и методологические вопросы криминалистического исследования письменной речи: Методическое пособие. М., 1977, էջ 25:

⁸ Տե՛ս Криминалистика. **Отв. ред. Н.П. Яблоков.** М., 1999, էջ 298:

⁹ Տե՛ս **Kniffka H.** Working in Language and Law: a German Perspective. Palgrave Macmillan, New York, 2007, էջ 171:

¹⁰ Տե՛ս **Баранов Ю.Н.** Теоретические основы применения лингвистических знаний в криминалистике при производстве фоноскопических и автороведческих экспертиз: диссертация ... кандидата юридических наук. Челябинск, 2004, էջ 71:

¹¹ Տե՛ս Криминалистика: Учеб. для вузов / **Под ред. Р.С. Белкина,** Москва, 1999, էջ 299:

¹² Տե՛ս **McMenamin G.R.** Forensic Linguistics: Advances in Forensic Stylistics. Boca Raton, 2002, էջ 75-76:

¹³ Տե՛ս **McMenamin G.R.** Forensic Linguistics: Advances in Forensic Stylistics. Boca Raton, 2002, էջ 76:

¹⁴ Տե՛ս **Kniffka H.** Working in Language and Law: A German Perspective. Palgrave Macmillan, New York, 2007, էջ 79:

¹⁵ Արտասահմանյան գրականության մեջ փորձեր են արվել քանակական վերլուծության ենթարկել նաև հեղինակի «մտքի խտությունը», սակայն այդ մոտեցումը դեռևս լայն տարածում չի գտել (մանրամասն տե՛ս **Cooper B.** Idea Density as a Marker of Authorship: a Preliminary Study, In Kredens K. and Gozdz-Roszkowski (Eds). Language and the Law: International Outlooks, Peter Lang GmbH, Frankfurt am Main, Volume 16, 2007, էջ 411-423):

¹⁶ Տե՛ս **Եղեկյան Լ.** Ոճագիտություն, Երևան, 2006, էջ 97:

¹⁷ Տե՛ս **Галяшина Е.И., Комиссаров А.Ю., Боровиков Д.С., Шашкин С.Б.** Правовые и методологические аспекты установления факта предварительной подготовки письменных и устных текстов // Криминалистика. 21 век. Мат-лы науч.-практ. конф. 26—28 февраля 2001г., М., 2001, էջ 84-89; **McMenamin G.R.** Style Markers in Authorship Studies. "Forensic Linguistics: International Journal of Speech, Language and the Law". The University of Birmingham Press, 2001, Volume 8, Number 2, էջ 93-98:

¹⁸ Տե՛ս **Chaski C.E.** Empirical Evaluations of Language-based Author Identification Techniques. "Forensic Linguistics: International Journal of Speech, Language and the Law". The University of Birmingham Press, 2001, Volume 8, Number 1, էջ 1-65; **Gran T. and Baker K.** Identifying Reliable, Valid Markers of Authorship: a Response to Chaski. "Forensic Linguistics: International Journal of Speech, Language and the Law". The University of Birmingham Press, 2001, Volume 8, Number 1, էջ 66-80:

ՌԵԿՎԻԶԻՑԻԱՆ՝ ՈՐՊԵՍ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԵՎ ՊԵՏՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՏԱՐՄԱՆ ՀԻՄՔ

Նորա ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ասանքիոնի ասպիրանտ, ՀՀ դարսական դեպարտամենտի դեկավարի առաջին տեղակալ, Գարարսանների նախագահների խորհրդի քարտուղար

Ռեկվիզիցիա բառը (լատիներեն requisitio) նշանակում է պահանջ: Ռեկվիզիցիան ցանկացած իրավակարգի համար քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականության իրավունքի դադարման ավանդական եղանակներից է՝ 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին ռեկվիզիցիա անվանում էին բանակի պահանջները բավարարելու համար անհրաժեշտ տեղական միջոցների ձեռքբերումը՝ սահմանված տարիքներին կամ գներին համապատասխան գումարը վճարելով կամ անդորրագիր տալով: «Օժվային պատերազմի օրենքների և սովորույթների մասին» 1907 թվականի Հասագայի կոնվենցիայի 52-րդ հոդվածի համաձայն՝ ռեկվիզիցիան իրականացվում է միայն տարածքը գրաված բանակի պահանջների համար և չպետք է գործի պատերազմող պետությունների պահանջների համար ընդհանրապես: Յուրաքանչյուր ռեկվիզիցիա պետք է վճարվի կանխիկ գումարով, իսկ եթե դա անհնար է, գույքը վերցնելու հանգամանքը պետք է հաստատել հատուկ փաստաթղթով և վճարել հնարավորինս կարճ ժամանակահատվածում²:

ՀՀ իրավական համակարգում ռեկվիզիցիային է նվիրված ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 285-րդ հոդվածը և ՀՀ հողային օրենսգրքի 105-րդ հոդվածը, որոնց իրավական կարգավորումները հիմնականում համընկնում են:

Ռեկվիզիցիան ունի մի քանի հատկանիշներ:

Առաջինը սեփականատիրոջը սեփակա-

նությունից զրկելն է:

Երկրորդը օտարումն է հարկադիր կարգով: Եթե օտարման հիմքում ընկած է սեփականատիրոջ համաձայնությունը, ապա գործ ունենք պայմանագրային հարաբերությունների հետ:

Երրորդ՝ սեփականության իրավունքից զրկելը միշտ պետք է ունենա հիմնավոր պատճառներ: Քաղաքացիական օրենսգիրքը նման հիմքերի շարքին է դասում տարերային աղետները, տեխնոլոգիական վթարները, համաճարակների դեպքերը եւ արտակարգ իրավիճակի այլ հանգամանքները:

Չորրորդ՝ օտարվող սեփականության դիմաց սեփականատերը ստանում է համապատասխան փոխհատուցում:

Հինգերորդ՝ իրականացվող օտարումը պետք է լինի միակ միջոցը սպառնացող վտանգը կանխելու համար:

Վեցերորդ՝ ռեկվիզիցիան իրականացվում է հասարակության կամ պետության շահերից ելնելով:

Յոթերորդ՝ քանի որ խոսքը տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների և այլ արտակարգ բնույթ կրող հանգամանքների մասին է, ապա այստեղ առանձնահատուկ դեր ունի ժամանակի գործոնը: Բոլոր պետությունները պետք է պատրաստ լինեն նման դժբախտությունների և պետք է պաշտպանված լինեն, այդ թվում՝ քաղաքացիաիրավական կարգավորման մեխանիզմներով³:

Այդ իրավիճակներին պետք է արձագանքել հնարավորինս արագ, քանի որ այդ ժամանակ պետական մարմինների գործողությունների արագությունից շատ բան է կախված, այդ թվում՝ մարդկանց կյանքը, առողջությունը, այդ իսկ պատճառով ռեկվիզիցիայի իրականացման համար

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

գործում է այլ կարգ՝ համեմատած «սովորական» պայմաններում գույքը վերցնելու հետ: Սակայն ռեկվիզիցիան իրականացնելիս սեփականատերը, այնուամենայնիվ, զրկվում է իր գույքից: Այստեղ սեփականության անձեռնմխելիության սկզբունքի կարևորագույն դրսևորումը այն է, որ գույքը վերցնելն իրականացվում է՝ սեփականատիրոջը գույքի արժեքը վճարելով⁴:

ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի համաձայն՝ ոչ ոքի չի կարելի զրկել սեփականությունից՝ բացառությամբ դատական կարգով՝ օրենքով նախատեսված դեպքերի:

Սեփականության օտարումը հասարակության եւ պետության կարիքների համար կարող է կատարվել միայն բացառիկ՝ գերակա հանրային շահերի դեպքերում, օրենքով սահմանված կարգով, նախնական համարժեք փոխհատուցմամբ:

Ռեկվիզիցիայի օրենսդրական կանոնների վերլուծությամբ մի շարք իրավագետներ հանգել են այն եզրակացության, որ դրանք հակասում են սեփականության պաշտպանությունն ապահովող սահմանադրական նորմերի պահանջներին: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 279-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետը ռեկվիզիցիան դասում է սեփականության իրավունքի դադարման հիմքերի թվին: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 285-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների դեպքերում եւ արտակարգ բնույթ կրող այլ հանգամանքներում գույքը կարող է օրենքով սահմանված պայմաններում ու կարգով, պետական մարմինների որոշմամբ վերցվել սեփականատիրոջից՝ ի շահ հասարակության՝ դրա արժեքը վճարելու պայմանով (ռեկվիզիցիա): ՀՀ հողային օրենսգրքի 105-րդ հոդվածը նույնպես հողամասերի վերաբերյալ նույնանման նորմ է պարունակում: Իրավաբան-գիտնա-

կանների կարծիքով, իրավական նման կարգավորման պարագայում միանգամից խախտվում է սահմանադրական երկու պահանջ. առաջինը՝ սեփականությունից զրկելն է պետական մարմնի և ոչ դատարանի որոշմամբ, և երկրորդ՝ ռեկվիզիցիայի դեպքում սեփականությունից անձին զրկվելն է հանրային շահերի համար, մինչդեռ օրենքը հնարավորություն է տալիս ոչ միայն նախնական, այլ նաև հետագա փոխհատուցման, ինչը նույնպես հակասահմանադրական է: Այս ամենը լուրջ դիսսոնանս է առաջացնում սեփականության ինստիտուտի իրավական կարգավորման մեջ⁵:

Սահմանադրության հետ հնարավոր հակասությունների խնդիրը լուծելու համար որոշ գիտնականներ փորձել են օգտագործել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 285-րդ հոդվածի 3-րդ մասում և ՀՀ հողային օրենսգրքի 105-րդ հոդվածի 2-րդ մասի այն դրույթը, համաձայն որի՝ անձը, ում գույքը հարկադրաբար վերցվել է, իրավունք ունի պահանջելու, որ իրեն վերադարձվի պահպանված գույքը, եթե վերացել են այն հանգամանքները, որոնց կապակցությամբ կատարվել է ռեկվիզիցիա: Այդ գիտնականները նշում են, որ նշված նորմը նշանակում է, թե գույքի սեփականատիրոջ սեփականության իրավունքը ռեկվիզիցիայի դեպքում պահպանվում է, հետևաբար սահմանադրության հետ այս դեպքում խնդիր չի առաջանում⁶: Այս տեսակետը խիստ քննադատության է արժանացել իրավական գրականությունում և որակվել որպես «սահմանադրության հետ հակասությունը ծածկելու անհաջող փորձ»⁷, քանի որ նախ՝ ռեկվիզիցիան քաղաքացիական օրենսգրքում նշված է որպես սեփականության դադարման հիմք, երկրորդ՝ օրենքը խոսում է գույքը «վերցնելու» մասին, ինչը Սահմանադրական դատարանի 2006 թվականի ապրիլի տասնութի թիվ ՍԴՈ-630 որոշման վերլուծությունների համաձայն՝ երբեք չի կարելի գնահատել որպես սեփականության իրավունքի

պահպանում, և երրորդ՝ սեփականության իրավունքը բացարձակ իրավունք է, և նույն գույքի նկատմամբ չի կարող լինել և՛ պետության, և՛ անձի սեփականության իրավունք:

Գ. Հաջիկը կարծում է, որ սեփականությունն առանց դատարանի վերցնելը տվյալ դեպքում չի հակասում Սահմանադրությանը, քանի որ Սահմանադրության հոդվածում տրված բանաձևը նշանակում է, որ սեփականատերը պետք է սեփականությունից զրկելու ցանկացած ակտ դատարանում վիճարկելու իրավունք ունենա՞:

Ըստ էության, այն անձինք, որոնք գտնում են, որ Սահմանադրության հետ խնդիր չի կարող առաջանալ, քանի որ պետական մարմնի համապատասխան ակտը ենթարկվում է հետագա դատական հսկողության, կարծում ենք, իրականում գիտակցում են, որ Սահմանադրությունը խոսում է դատարանի որոշմամբ զրկելու, այլ ոչ թե դատարանի հետագա վերահսկողության մասին, սակայն մյուս կողմից էլ բոլորի համար հասկանալի է արտակարգ իրավիճակներում համապատասխան դատական որոշում ստանալու բարդությունն ու անհետաձգելի գործողություններ կատարելու անհրաժեշտությունը: Ճիշտ է՝ մի շարք անհետաձգելի գործողությունների համար էլ է Սահմանադրությունը պահանջում դատարանի թույլտվություն (բնակարանի խուզարկություն, օպերատիվ-հետախուզական այնպիսի միջոցառումներ, ինչպիսիք են նամակագրության, հեռախոսային խոսակցությունների գաղտնալուծումը), որի համար բոլոր դատարաններում այժմ գործում է դատավորների հերթապահություն: Կան գիտնականներ, որ առաջարկում են փոփոխություն կատարել ռեկվիզիցիային նվիրված օրենսդրական հոդվածներում և մնացած անհետաձգելի գործողությունների նման այն նույնպես կատարել դատարանի որոշմամբ⁹, սակայն պետք է նկատի ունենալ, որ ռեկվիզիցիայի դեպքում արտակարգ իրավիճակը կարող է անհնարին դարձնել նույնիսկ դատարանին

դիմելու հնարավորությունը:

Սահմանադրության հետ խնդիր է առաջացնում նաև վճարման օրենսդրական կարգը: Ռեկվիզիցիան կատարվում է ի շահ հանրության, ուստի սահմանադրության 31-րդ հոդվածի համաձայն՝ վճարումը պետք է լինի նախնական համարժեք, մինչդեռ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 285-րդ հոդվածը և ՀՀ հողային օրենսգրքի 105-րդ հոդվածը օգտագործում են «դրա արժեքը վճարելու պայմանով» արտահայտությունը, ինչը թույլատրելի է դարձնում փոխհատուցումը վճարել նաև ռեկվիզիցիայից հետո: Նման կարգավորումը նույնպես հասկանալի է, քանի որ արտակարգ իրավիճակի պայմաններում բարդանում է նաև նախնական հատուցում ապահովելը: Այդ դեպքում ի՞նչ անել: Թվում է, թե իրավաբանորեն անլուծելի խնդիր են Սահմանադրական նորմի պահանջը և իրական կյանքի պահանջը: Որոշ գիտնականներ խնդրի հնարավոր լուծումը տեսնում են միայն սահմանադրական նորմի փոփոխության մեջ: Օրինակ՝ Յու. Կ. Տոլստոյը գտնում է, որ սահմանադրության հոդվածը պետք է ձևակերպել հետևյալ կերպ. «...դատարանի որոշմամբ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Գույքը վերցնելու մասին որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով»¹⁰: Ա. Ա. Սանուկյանը խնդրի լուծման նույն տարբերակն է առաջարկում՝ սահմանադրական նորմը հիմնականում չի համապատասխանում հասարակության տնտեսական պայմաններին, իսկ դատարանները պատրաստ չեն այդպիսի օպերատիվությամբ քննարկել բոլոր վեճերը¹¹:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ռեկվիզիցիա կարող է իրականացվել միայն տարբերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների դեպքերում եւ արտակարգ բնույթ կրող այլ հանգամանքներում, այն դեպքում երբ սեփականությունը վերցնելը աղետը կանխելու միակ տարբերակն է, մեր կարծիքով, փաստացի իրավիճակը նույնանում է ծայ-

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

րահել անհրաժեշտության հետ: Քաղաքացիական օրենսգրքի 1061-րդ հոդվածի համաձայն՝ ծայրահեղ անհրաժեշտության, այսինքն՝ վնաս պատճառողին կամ այլ անձանց սպառնացող վտանգի վերացման պայմաններում պատճառված վնասը, եթե այդ վտանգը տվյալ հանգամանքներում չէր կարող վերացվել այլ միջոցներով, պետք է հատուցի վնաս պատճառած անձը: Ռեկվիզիցիայի կիրառման համար անհրաժեշտ իրավիճակը միանգամայն տեղավորվում է 1061-րդ հոդվածի դիսպոզիցիայի մեջ, ուստի այս պարագայում պետական մարմինը, որը կայացնում է գույքը վերցնելու վերաբերյալ որոշում, հանդես է գալիս պետության անունից, նրա գործողությունները համարվում են պետության գործողություններ, իսկ պետությունը՝ վնաս պատճառող: Կարծում ենք՝ նման դեպքերում խնդիր չի առաջանում Սահմանադրության հետ, քանի որ տվյալ իրավահարաբերությունը դիտարկվում է որպես ծայրահեղ անհրաժեշտության մասնավոր տեսակ, որտեղ վնաս պատճառող սուբյեկտը պետությունն է: Այդ հարաբերությունների առանձնահատկությունը նաև այն է, որ 1061-րդ հոդվածի 2-րդ մասը չի կարող կիրառվել: Ըստ սույն մասի՝ հաշվի առնելով նման վնասի պատճառ դարձած համապատասխան գործունեության հանգամանքները՝ դատարանը կարող է այն հատուցելու պարտականությունը դնել երրորդ անձի վրա՝ ի շահ որի գործել է վնաս պատճառողը, կամ վնասը հատուցելուց լրիվ կամ մասնակիորեն ազատել, ինչպես այդ երրորդ անձին, այնպես էլ վնասը պատճառողին: Մինչդեռ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ռեկվիզիցիան ծայրահեղ անհրաժեշտության մասնավոր դեպք է, և դրա իրավական կարգավորման դեպքում բացառվում է վնասը հատուցելուց ազատելը, դատարանը նույնպես իրավասու չէ նման որոշում կայացնելու:

Եթե բերված փաստարկները բավարար չեն, և, այնուամենայնիվ, կլինեն առարկողներ՝ նշելով, որ, միևնույն է, տեղի է ունենում պետության կողմից հանրության կամ պետության շահերի համար սեփականությունից զրկում՝ անկախ նրանից, թե մենք դրա կարգավորումը կտանք ծայրահեղ անհրաժեշտության, թե այլ իրավական կարգավորման շրջանակներում, նշենք, որ, բացի առաջարկված տարբերակից, Սահմանադրության հետ հնարավոր խնդիրը լուծում է հենց ինքը՝ Սահմանադրությունը: ՀՀ Սահմանադրության 44-րդ հոդվածի համաձայն՝ մարդու եւ քաղաքացու առանձին հիմնական իրավունքներ ու ազատություններ, բացառությամբ Սահմանադրության 15, 17-22 եւ 42-րդ հոդվածներում նշվածների, կարող են օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես սահմանափակվել ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ՝ արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում: Ինչպես տեսնում ենք, Սահմանադրության 31-րդ հոդվածը սույն հոդվածի բացառությունների մեջ ներառված չէ, մինչդեռ ռեկվիզիցիան այնպիսի միջոցառում է, որն իրականացվում է միայն արտակարգ բնույթ ունեցող իրավիճակներում, հետևաբար այս պարագայում կարևորը օրենքում համապատասխան իրավական կարգավորում ունենալն է:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հողամասը, լինելով այնպիսի գույքի տեսակ, որի ոչնչացումն այնքան էլ հավանական չէ, Հողային օրենսգիրքը ռեկվիզիցիան կարգավորող հոդվածում ներառել է դրույթ, որի բովանդակության համաձայն՝ համապատասխան հանգամանքները վրա հասնելու դեպքերում, եթե բացակայում է հողամասի կամ դրա մասի ռեկվիզիցիայի անհրաժեշտությունը, հողամասը կամ դրա մասը ժամանակավորապես այդ հանգամանքների գործողության ժամանակահատվածում կարող է օգտագործվել պե-

տության կամ համայնքների կարիքների համար՝ այդ հողամասի սեփականատիրոջ իրավունքների ժամանակավոր սահմանափակման հետ կապված վնասների հատուցմամբ:

1998 թվականի դեկտեմբերի 2-ին ընդունված «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածում որպես հնարավոր միջոցառում նշված է աղետի գոտում ոչ պետական սեփականություն համարվող գույքի տիրապետումը եւ օգտագործումը՝ հետագա համարժեք փոխհատուցմամբ: Այս միջոցառումների իրավական բնույթը տարբեր գիտնականներ տարբեր կերպ են բացատրում: Հողային օրենսգրքում ռեկվիզիցիան կարգավորող հոդվածում նման դրույթի առկայությամբ պայմանավորված որոշ իրավաբան գիտնականներ առանձնացնում են ռեկվիզիցիայի երկու տեսակ՝ ռեկվիզիցիա, որն իրենից ներկայացնում է գույքը ժամանակավորապես վերցնելը, և ռեկվիզիցիա, որի արդյունքում սեփականության իրավունքը դադարում է¹²: Այսինքն՝ որոշ գիտնականներ այս միջոցառումները համարում են ռեկվիզիցիայի երկրորդ տեսակ¹³:

Սակայն իրավագետների մյուս խումբն էլ արտակարգ իրավիճակներում սեփականատիրոջից գույքը ժամանակավոր վերցնելը համարում է հատուկ ինքնուրույն միջոցառում¹⁴: Մենք նույնպես կարծում ենք, որ այս միջոցառումը չի կարելի դիտարկել որպես ռեկվիզիցիա, քանի որ նախ՝ ռեկվիզիցիան սեփականության իրավունքի դադարման հիմքերից է, իսկ այս պարագայում սեփականության իրավունքի դադարում տեղի չի ունենում, և երկրորդ՝ Հողային օրենսգրքի շարադրանքը նույնպես ցույց է տալիս, որ այն երբևէ չի կարելի համարել ռեկվիզիցիա (եթե բացակայում է հողամասի կամ դրա մասի ռեկվիզիցիայի անհրաժեշտությունը):

Ռեկվիզիցիային առնչվող իրավահարաբերությունները կարգավորող հոդվածը նախատեսում է նաև ռեկվիզիցիայի կարգով վերցված գույքը վերադարձնելու հնարավորություն:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 285-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ անձը, որի գույքը հարկադրաբար վերցվել է, իրավունք ունի պահանջելու, որ իրեն վերադարձվի պահպանված գույքը, եթե վերացել են այն հանգամանքները, որոնց կապակցությամբ կատարվել է ռեկվիզիցիա: Նույնանման նորմ պարունակում է ՀՀ հողային օրենսգրքի 105-րդ հոդվածի 2-րդ մասը, համաձայն որի՝ անձը, որի հողամասը կամ դրա մի մասը հարկադրաբար վերցվել է, իրավունք ունի պահանջելու, որ իրեն վերադարձվի պահպանված հողամասը կամ դրա մասը, եթե վերացել է այն հանգամանքը (պետք է լինի հանգամանքները), որոնց կապակցությամբ կատարվել է ռեկվիզիցիան: Օրենսդիրը չի պատասխանում այն հարցին, թե գույքը ետ պահանջելու պարագայում ուրիշ ինչ հաշվարկներ կարող են կատարվել: Մասնավորապես, եթե արդեն կատարվել է գույքի արժեքի փոխհատուցում, արդյո՞ք այն ենթակա է վերադարձման, և եթե այո, ապա ի՞նչ չափով: Կամ, եթե նման փոխհատուցում չի կատարվել, արդյո՞ք օրենսդրական կարգավորման բացակայությունը ենթադրում է, որ գույքը պահանջելուց բացի անձը փոխհատուցում չի կարող պահանջել: Խնդիրն այն է, որ եթե գույքը վերցվում է հասարակության շահերի համար տարերային աղետների, տեխնոլոգիական վթարների, համաճարակների դեպքերում և արտակարգ բնույթ կրող այլ հանգամանքներում օգտագործելու նպատակով, ապա դրա մաշվածությունը կմեծանա, իսկ արտակարգ հանգամանքները մեծացնում են հավանականությունը, որ այդ մաշվածությունը բնականոնից ավելի մեծ կլինի, գույքին կհասցվի էական վնաս: Ամենայն հավանականությամբ այդ պատճառով է, որ օրենսդիրը գույքը պահպանվելու դեպքում այն ետ պահանջելու իրավունքից օգտվելու հայեցողությունը թողել է գույքի նախկին սեփականատիրոջը: Այսինքն, եթե գույքի արժեքը չի փոխհատուցվել, և գույքը պահպանվել է, նախկին սեփականատերը կարող է պահանջել միայն գույքի արժեքը: Իսկ այն պարագայում, երբ սեփակա-

ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

նատերը գերադասում է պահպանված գույքը ետ պահանջել, ապա այս դեպքում հատուկ կարգավորումները բացակայում են: Մ. Գ. Մասկիչը գտնում է, որ գույքը վերադարձնելու պարագայում սեփականատերը պետք է վերադարձնի ստացված փոխհատուցումը՝ հաշվի առնելով հասարակության կամ պետության օգտագործման ժամանակահատվածում գույքի արժեքի նվազումը¹⁶: Մեր կարծիքով, այս դեպքում պետք է ղեկավարվել ռեստիտուցիայի կամ անհիմն հարստացման ընդհանուր կանոններով (ՀՀ քաղ. օր. 1094 հոդված), այսինքն՝ գույքի նախկին սեփականատերը գույքը բնեղենով պահանջելուց զուգահեռ իրավունք ունի պահանջելու գույքի ամեն մի, այդ թվում՝ նաև պատահական կորստի եւ պակասորդի կամ վատթարացման համար վնասների հատուցում, իսկ եթե նրան նախնական փոխհատուցում է տրվել, ապա նա ստացած գումարը պետք է վերադարձնի՝ հաշվանցելով իր կրած վնասները: Միայն թե բաց է մնում այն հարցը, թե պահանջը որ մարմնին պետք է ներկայացնել, և թե որ պահից է անձը զրկվում գույքը բնեղենով պահանջելու իր իրավունքից: Քանի որ օրենսդիրը հստակեցումներ չի տալիս, կարծում ենք՝ համապատասխան պահանջը պետք է ներկայացվի դատարան, որն էլ կլուծի համապատասխան հաշվանցի հարցերը: Մյուս խնդիրը, որ օրենսդրական կարգավորման բացակայությամբ պայմանավորված, նույնպես անորոշ է, բաց թողնված օգուտը հաշվանցի ժամանակ հաշվարկելն է: Երբ սեփականատերը ետ է պահանջում իր պահպանված գույքը, արդյո՞ք նա իրավունք ունի պահանջելու նաև տվյալ ժամանակահատվածում բաց թողնված օգուտը: Այս հարցի վերաբերյալ նույնպես գրականության մեջ միակարծություն չկա: Որոշ գիտնականներ կարծում են, որ բաց թողնված օգուտը ենթակա է հատուցման¹⁶: Ն. Ի Տասկինը, հակառակը, կարծում է, որ եթե ռեկվիզիցիան կատարվել է օրենքի պահանջների պահպանմամբ, ապա այդ դեպքում բաց թողնված օգուտը հատուցման ենթակա չէ: Բաց թողնված օգուտը ենթակա է հատուցման միայն այն դեպքում, երբ անձը վնասներ է կրել օրենքի խախտմամբ կատարված ռեկվիզիցիայի արդյունքում¹⁷: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածը բաց թողնված օգուտը սահմանում է որպես չստացված եկամուտներ, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, *եթե նրա իրավունքը չխախտվեր*: Մինչդեռ տվյալ դեպքում անձի սեփականության իրավունքը դադարում է օրենքով սահմանված կարգով, հետևաբար Ն. Ի. Տասկինի տեսակետը միանգամայն ընդունելի է նույնիսկ այն պարագայում, երբ անձն իր գույքը ետ է պահանջում: Սակայն այն դեպքում, երբ փոխհատուցումը նախնական չէ, մեր կարծիքով, նախկին սեփականատերը իրավունք ունի պահանջել ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 411-րդ հոդվածով նախատեսված տոկոսները, քանի որ սեփականությունից զրկելու պահից նրա մոտ ծագում է գույքի արժեքին համարժեք փոխհատուցում ստանալու իրավունքը, իսկ այդ պահից սկսած մինչև վճարման պահը՝ որպես կետանց, տոկոսները պահանջելու իրավունքը: Այն դեպքում, երբ սեփականատերը ետ է պահանջում պահպանված գույքը, գույքի դիմաց վճարվելիք գումարները վերադարձնելիս, կարծում ենք, նա իրավունք ունի, ի թիվս այլ գումարների, հաշվանցել նաև համապատասխան տոկոսները:

Մինչդեռ ռեկվիզիցիայի իրականացումը իրավաչափ է եղել, թե ոչ, գործող օրենսդրության ձևակերպումները հնարավորություն չեն տալիս պարզելու: Հարցն այն է, որ չնայած ՀՀ սահմանադրությամբ և մի շարք միջազգային պայմանագրերով երաշխավորվել է իրավունքների դատական պաշտպանության իրավունքը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 285-րդ հոդվածի 2-րդ մասը նշում է միայն սեփականատիրոջ կողմից դատարանում հարկադրաբար վերցված գույքի հատուցման արժեքի չափը վիճարկելու հնարավորությունը: Նմա-

նապես ՀՀ հողային օրենսգրքի 105–րդ հոդվածի 3–րդ մասի համաձայն՝ հողամասի սեփականատերը վնասների համար փոխհատուցման վճարների չափերը կարող է վիճարկել դատական կարգով:

Կարծում ենք, որ գույքի սեփականատերը, բացի փոխհատուցման չափերից, պետք է իրավունք ունենա արտակարգ իրավիճակ հանդիսացող հանգամանքները վերանալուց հետո վիճարկել նաև իրականացված միջոցառումների իրավաչափությունը, մասնավորապես՝ արդյո՞ք իրականացված միջոցառումը անհրաժեշտ է եղել տվյալ իրավիճակում, կամ ռեկվիզիցիան եղել է վտանգը կանխելու կամ դրա հետևանքները վերացնելու միակ միջոցը, կամ արդյո՞ք ռեկվիզիցիան իրականացվել է օրենքի և այլ իրավական ակտերի պահանջների պահպանմամբ: Այդ նպատակով անհրաժեշտ է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 285–րդ հոդվածի 2–րդ մասում և ՀՀ հողային օրենսգրքի 105–րդ հոդվածի 3–րդ մասում չափ(երը) բառից հետո ավելացնել «և իրականացված գործողությունների իրավաչափությունը» արտահայտությունը:

Բացի այդ, կարծում ենք, իրավական հստակ կարգավորման անհրաժեշտության կարիք ունի ևս մեկ խնդիր: Գործող օրենսդրության ձևակերպումները հնարավորություն են տալիս այն մեկնաբանել այնպես, որ անկախ նախնական կամ հետագա փոխհատուցում ստանալու հանգամանքից՝ նախկին սեփականատերը պահպանում է գույքը ետ պահանջելու իր իրավունքը, մինչդեռ կարծում ենք, երբ խոսքը հետագա փոխհատուցման մասին է, ապա հետագա փոխհատուցում ստանալն անձին ինքնին պետք է զրկի գույքը բնեղենով ստանալու իրավունքից, ուստի առաջարկում ենք համապատասխան փոփոխություններ կատարել և քաղաքացիական օրենսգրքի 285–րդ հոդվածի 3–րդ մասը և ՀՀ հողային օրենսգրքի 105–րդ հոդվածի 2–րդ մասը լրացնել հետևյալ դրույթով. «Ռեկվիզիցիայի համար հիմք հանդիսացած հանգամանքներից հետո կատարված փոխհատուցման դեպքում անձը

զրկվում է գույքը բնեղենով պահանջելու իրավունքից փոխհատուցումը ստանալու պահից»:

Վ. Ժ. Մոզուլինը գտնում է, որ այնպիսի օբյեկտներ, ինչպիսիք են հողը և ձեռնարկությունը, սովորաբար կարիք չկա պետական սեփականություն դարձնել, ավելի արդյունավետ է այն համարժեք և արդյունավետ փոխհատուցմամբ վերցնել օգտագործման իրավունքով¹⁸: Ն. Պ. Տասկինը այս հարցում համակարծիք է և գտնում է, որ կարող են լինել իրավիճակներ, երբ հողը անհրաժեշտ է վերցնել հենց ժամանակավոր օգտագործման նպատակով, առանց հողամասի նկատմամբ սեփականության իրավունքի դադարման¹⁹: Գույքը ետ պահանջելու հնարավորությունը կասկածի տակ է դնում նաև ռեկվիզիցիան սեփականության իրավունքի դադարման հիմքերի թվին դասելը: Իրավական գրականության մեջ առաջարկվում է իրաժարվել ռեկվիզիցիան որպես սեփականության իրավունքի դադարման հիմք դիտարկելուց և այն դիտել միայն որպես գույքը ժամանակավոր վերցնել, որը չի հանգեցնում սեփականության իրավունքի դադարմանը²⁰: Եվ միայն այն դեպքում, երբ գույքը ոչնչանում է, դադարում է սեփականության իրավունքը, ընդ որում՝ գույքը ոչնչանալու հիմքով այլ, ոչ թե ռեկվիզիցիայի: Մենք այս հարցում համակարծիք չենք, քանի որ գույքը ժամանակավոր վերցնելու դեպքում գույքը վերցնողը չի կարող տնօրինել այդ գույքի ճակատագիրը, մինդեռ կան դեպքեր, երբ գույքը վերցնելիս նախօրոք պարզ է, որ այն սեփականատիրոջը այլևս չի վերադարձվելու, քանի որ ավելի մեծ վտանգ կանխելու նպատակով օգտագործելու պատճառով ոչնչանալու է, ուստի այդ պարագայում ռեկվիզիցիան սեփականության իրավունքի դադարման հիմք չդիտելն անընդունելի է:

Ընդհանուր առմամբ ռեկվիզիցիայի դեպքում, մեր կարծիքով, ամենալուրջ խնդիրն իրավական կարգավորման բացակայությունն է, որը պետք է խիստ բացասական գնահատել: Ռեկվիզիցիան պետք է իրականացվի իրավական հստակ կարգա-

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

վորման պայմաններում: Հողային օրենսգրքի ընդունումից հետո կառավարությունն իր 1999 թվականի օգոստոսի 5-ի նիստում հաստատել էր Հայաստանի Հանրապետության հողային նոր օրենսգրքի կիրարկումն ապահովող անհրաժեշտ իրավական ակտերի մշակման ժամանակացույցը, որտեղ, որպես առանձին կետ, նախատեսված էր «Հողի ռեկվիզիցիայի ընթացակարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի կազմումը (վերջնաժամկետը 01 նոյեմբերի 1999 թվական), սակայն նման իրավական ակտ այդպես էլ կառավարությունը չի ընդունել: Թեև քաղաքացիական օրենսգրքի 285-րդ հոդվածի 1-ին մասը օգտագործում է «օրենքով սահմանված պայմաններում ու կարգով» արտահայտությունը, ինչը ենթադրում է, որ համապատասխան հարաբերությունները պետք է կարգավորվեն օրենքի մակարդակով: Միակ օրենքը, որը քիչ թե շատ անդրադառնում է արտակարգ իրավիճակներում սեփականությունը վերցնելուն թերևս 1998 թվականի դեկտեմբերի 2-ին ընդունված «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքն է, որի 5-րդ հոդվածը, թվարկելով միջոցառումները, նշում է, որ համապատասխան միջոցառումներ իրականացնելու նպատակով անհրաժեշտության դեպքում Հայաստանի Հանրապետության կառավարությունն աղետի գոտում կարող է ստեղծել կառավարման հատուկ մարմիններ: Սույն դրույթից կարելի է եզրակացնել, որ գույքի վերցնելը կատարվելու է կառավարման հատուկ մարմինների որոշմամբ: Մեր երկրում արտակարգ իրավիճակների ժամանակ սովորաբար նման մարմիններ հայտարարվել են ՀՀ վարչապետը, ներքին գործերի նախարարությունը, ազգային անվտանգության վարչությունը /ի դեպ, արտակարգ իրավիճակների մեծ մասը հայտարարվել է 1992թ-ին/: Թե այդ մարմինները որ դեպքերում, ինչպիսի պայմաններով, ինչ կարգով

անհրաժեշտության դեպքում պիտի վերցնեին քաղաքացիների կամ իրավաբանական անձանց գույքը, որևէ իրավական ակտ չի նշում: Միայն «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածը քաղաքացիների իրավունքները կարգավորելիս ամրագրում է դրույթ, համաձայն որի՝ արտակարգ իրավիճակներում քաղաքացիների սեփականության տիրապետումը եւ ժամանակավոր օգտագործումը հասարակության եւ պետության կարիքների համար կարող է կատարվել հետագա համարժեք փոխհատուցմամբ (միայն կյանքի փրկության եւ առողջության հետ կապված փրկարարական աշխատանքների նպատակահարմար իրականացման համար)՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով: Սույն դրույթը թեև ուղղակիորեն ռեկվիզիցիային չի վերաբերում, սակայն դրա տարածական մեկնաբանության պարագայում կարելի է թերևս եզրակացություն անել, թե ինչ դեպքերում է թույլատրելի ռեկվիզիցիան (միայն կյանքի փրկության եւ առողջության հետ կապված փրկարարական աշխատանքների նպատակահարմար իրականացման համար): Պետք է նշել, որ մնացած հարցերում իրավական որոշակիությունը մնում է միայն բարի ցանկություն:

Ելնելով վերոգրյալից՝ մեր կարծիքով, անհրաժեշտ է «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքը լրացնել նոր գլխով, որտեղ մանրամասն կնկարագրվեն ռեկվիզիցիայի կամ գույքը ժամանակավոր վերցնելու պայմանները և կարգը, մասնավորապես՝ անհրաժեշտ է հստակ սահմանել.

1. անձի պարտականությունը հանձնելու այն գույքը, որի վերաբերյալ ռեկվիզիցիայի որոշում է կայացվել,

2. այն մարմինը, որը իրավասու է կոնկրետ գույքի ռեկվիզիցիայի մասին որոշում կայացնելու,

3. ժամկետները, որոնց ընթացքում պետությունը պարտավոր է իրականացնել փոխհատուցումը,

4. պետական մարմինը, որին կարող է

ներկայացվել փոխհատուցման պահանջը,
5. ինչ որոշում պետք է կայացվի կամ կոնկրետ գույքի վերաբերյալ, կամ կոնկրետ տարածքում գտնվող գույքի վերաբերյալ, երբ կատարվում է հողամասի ռեկվիզիցիա, ընդ որում՝ գույքը պետք է նկարագրվի:

6. որոշման մեջ պետք է նշվի իրականացվող ռեկվիզիցիայի նպատակը,

7. ինչ որոշում պետք է կայացվի վարչական ակտին ներկայացվող պահանջները

պահպանելով,

8. այն պահը, որի դրությամբ որոշվում է գույքի արժեքը,

9. ռեկվիզիցիային վկաների պարտադիր մասնակցության պահանջ,

10. այն գույքը, որը չի կարող ռեկվիզիցիայի ենթարկվել,

11. գույքի կամ հողամասի մի մասը վերցնելու դեպքում սեփականատիրոջ պահանջով մնացած մասը վերցնելու պետության պարտականությունը:

¹ Տե՛ս Горбачев Д.К., Конституционные гарантии охраны права собственности // Хоз-во и право. 1997, N 11, էջ 125:

² Տե՛ս Гагская конвенция о законах и обычаях сухопутной войны 1907 г. // Правовая база данных «Гарант Платформа F1».

³ Տե՛ս *Щенникова Л.В.* О реквизиции в гражданском праве: гимн или реквием // Законодательство. 2006. N 6:

⁴ Տե՛ս Гайдук А. С. Гражданско-правовой принцип неприкосновенности собственности, Рязань, 2003, էջ 76:

⁵ Տե՛ս <http://www.vuzlib.net/beta3/html/1/9621/9897> Комментарий к Гражданскому кодексу Российской Федерации, части первой / Под ред. Т.Е. Абовой, А.Ю. Кабалкина. М., 2004 (242-րդ հոդվածի մեկնաբանության հեղինակ - А.А. Рубанов):

⁶ <http://law.edu.ru/book/book.asp?bookID=107226>, Крысанов, А. А. Принудительное прекращение права собственности. Рязань, 2002:

⁷ Комментарий к Гражданскому кодексу Российской Федерации, части первой / Под ред. Т.Е. Абовой, А.Ю. Кабалкина,

⁸ Տե՛ս Гаджиев Г. Конституционные гарантии предпринимательской деятельности // Хоз-во и право. 1995, N 8, էջ 28-29:

⁹ *Крысанов А.А.* *Նշված աշխատությունը*, էջ 102; Бюллетень Верховного Суда. 1994. N 12 էջ 5-11; Международное публичное право: Сб. док-в. Т. 1. М.: БЕК, 1996. էջ 483-485.

¹⁰ Гражданское право: Учебник. Т. 1 / Под ред. А.П. Сергеева, Ю.К. Толстого. 4-е. М., 1999, էջ 368.

¹¹ Տե՛ս Манукян А.А., Ограничение права собственности по законодательству РФ: Дис. ... канд. юрид. наук. М., 1997, էջ 92 — 93:

¹² Տե՛ս Научно-практический комментарий к Гражданскому кодексу РФ, части первой / Под ред. В.П. Мозолина, М.П. Малеиной. М., 2004, էջ 509, *Жабреев В.С.* Возникновение вещных прав на недвижимое имущество: Дис. ... канд. юрид. наук. – Екатеринбург, 2005, էջ 175:

¹³ Տե՛ս Комментарий к Земельному кодексу Российской Федерации / Под ред. С.А. Боголюбова, Е.Л. Мининой. М., 2004. էջ 249 (մեկնաբանության հեղինակ М.Г. Масевич):

¹⁴ Տե՛ս Таскин Н.И. Реквизиция как один из случаев принудительного прекращения права собственности на земельные участки // Юрист. 2003, N 3:

¹⁵ Гражданское право России. Курс лекций. Ч. 1, М., 1996, էջ 203:

¹⁶ Տե՛ս *Манукян А.А.* *Նշված աշխատությունը*, էջ 90:

¹⁷ Տե՛ս *Таскин Н.И.* Принудительное прекращение права собственности на земельный участок: Дис. ... канд. юрид. наук. Рязань, 2003, էջ 111:

¹⁸ Տե՛ս *Мозолин В.П.* Право собственности в РФ в период перехода к рыночной экономике. М., 1992, էջ 70:

¹⁹ Տե՛ս *Таскин Н.И.* *Նշված աշխատությունը*, էջ 105:

²⁰ Տե՛ս Научно-практический комментарий к Гражданскому кодексу РФ, части первой, Под ред. В.П. Мозолина, М.П. Малеиной. М., 2004, էջ 503:

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

**ՄԻԱՆԱԼՈՒ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՈՐԾԱՐԱՐԱԿԱՆ
ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Գայանե ՄԱՐՈՒՔՅԱՆ

*ԵՊՀ քաղաքացիական իրավունքի
ամբիոնի աասիորանկր,*

*ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի
աշխատակազմի մասնագետ*

Իրավաբանական գրականության մեջ միանալու պայմանագիրը ներկայացվում է որպես պայմանագրային իրավունքի նովելներից մեկը: Միանալու պայմանագրի՝ որպես պայմանագրային հարաբերություններում առկա ինստիտուտներից կարևորագույնի հիմնական առանձնահատկությունը այն է, որ պայմանագրային հարաբերության հաստատումը կանխորոշվում է մեկի կողմից սահմանված ստանդարտ պայմաններին մյուսի միանալով: Այսինքն, ըստ էության, այս պարագայում պայմանագրի պայմանները սահմանվում են հարաբերության մեկ սուբյեկտի կողմից, իսկ մյուսին մնում է ընդամենը ամբողջությամբ միանալ արդեն իսկ սահմանված պայմաններին: Յենց այդ միանալն էլ հիմք է հանդիսանում պայմանագրային հարաբերությունների հաստատման համար: Գերմանական իրավունքում պայմանագրի այս ձևն անվանվում է «թելադրված պայմանագիր» (Dictiertier Vertrag): Պայմանագրի այս ձևի ամենահաջողված բնորոշումը տվել է Լ.Ս. Տալը: Նա նշում է, որ «միանալու պայմանագրով մի կողմը իր իսկ համար ընդունելի պայմանները թելադրում է ոչ թե կոնկրետ անհատների, այլ անձանց անորոշ շրջանակի՝ դրանով իսկ ինքն իրեն պարտավորեցնելով իրեն միանալու դեպքում ի կատար ածել իր կողմից սահմանված պարտավորությունները»¹:

Ըստ Մ.Ի. Բրագինսկու՝ միանալու պայ-

մանագրի կիրառման հիմնական ոլորտը մենաշնորհային գործունեություն իրականացնող սուբյեկտների շրջանակն է, ընդ որում նրանք, ովքեր ոլորտում զբաղված են որոշակի տեսակի ապրանքների մատակարարմամբ, ծառայությունների մատուցմամբ կամ աշխատանքների կատարմամբ: Այդ պատճառով էլ Լ.Ա. Լունցը միանալու պայմանագրերը բնութագրում էր «պայմանագրեր, որոնց պայմանները թելադրված են մենաշնորհ ունեցող կազմակերպությունների կողմից, այնպես որ այդ կազմակերպության հետ գործարքի մեջ մտնող կողմն ընդամենը միանում է սահմանված պայմաններին»³: Ե.Ա. Ֆլեյշիցը միանալու պայմանագիրը բնորոշում է հետևյալ կերպ. «Պայմանագրի պայմանները կողմերը չեն քննարկում, համենայն դեպս երբ կողմերից մեկը՝ մենաշնորհային գործունեություն իրականացնող սուբյեկտը, իր կոնտրագենտին ներկայացնում է պայմաններ «ֆորմուլյարի» ձևով, և կոնտրագենտին մնում է ընդամենը ընդունել իրեն ներկայացված պայմանները, միանալ դրանց կամ հրաժարվել պայմանագրային հարաբերությունների հաստատումից»⁴:

Ըստ մեզ՝ միանալու պայմանագրում համաձայնությունը՝ որպես պայմանագրային հարաբերությունների հաստատման նախապայման, ստանում է ընդամենը արտաքին դրսևորում: Այսինքն՝ այստեղ պայմանագրային հարաբերության սուբյեկտներից մեկի գործողություններն իրենցից ընդամենը ներկայացնում են մեխանիկական գործընթաց՝ միանալ արդեն իսկ սահմանված պայմաններին:

Շնորհիվ միանալու պայմանագրի կնքման կարգին վերաբերող առանձնա-

հատկություններից դրանք լայն կիրառություն են ստացել նաև մենաշնորհային գործունեություն իրականացնող սուբյեկտների շրջանակներում: Ոլորտում մենաշնորհունեցող սուբյեկտի համար ընդունելի պայմանները սահմանվում են ֆորմուլյարներում կամ այլ ստանդարտ ձևերում (մեր օրենսդրության մեջ օգտագործվում է *բաճառային* եզրույթը), որոնց միանալու դեպքում էլ հաստատվում են պայմանագրային հարաբերությունները: Հաշվի առնելով պայմանագրի այս տեսակի կիրառման ոլորտը՝ հաճախ գրականության մեջ կապիտալիստական երկրների շուկայական տնտեսության ցայտուն ընդգծվող բացասական գծի դերում հենց նշվում է միանալու պայմանագիրը՝ հաշվի առնելով նաև, որ այն ըստ էության անուղղակիորեն սպասարկում է մենաշնորհային բիզնեսը:

ՀՀ քաղ. օր. 444 հոդվածի համաձայն՝ միանալու պայմանագիր է համարվում պայմանագիրը, որի պայմանները կողմերից մեկը սահմանում է բանաձևային կամ այլ ստանդարտ ձևերով, իսկ մյուս կողմը դրանք կարող է ընդունել՝ առաջարկվող պայմանագրին *ամբողջապես* միանալով: Օրենսգրքում միանալու պայմանագրին տրված ձևակերպումից պարզ է դառնում, որ այս պարագայում բացառվում են ցանկացած քննարկումները՝ ուղղված պայմանների շուրջ համաձայնության գալուն, քանզի կողմը հստակ սահմանում է իր համար ընդունելի պայմաններ և մյուսին առաջարկում ընդամենը միանալ դրան կամ զերծ մնալ պայմանագրային հարաբերությունների հաստատումից: Չնայած այս հանգամանքին՝ իրավաբանական գրականության մեջ կարծիք է արտահայտվել առ այն, որ անգամ այս դեպքում պայմանագրի ազատության սկզբունքը չի խախտվում, քանզի կողմին հնարավորություն է տրվում սեփական կամքով միանալ կամ չմիանալ պայմանագրին⁶: Սակայն ըստ մեզ այս կարծիքը չի կարելի ընդունելի համարել մի քանի պատճառներով: Նախ ՀՀ քաղ. օր. 437 հոդվածը պայմանագրի ազատության

սկզբունքը, որպես պայմանագրային հարաբերությունների հաստատման հիմք, խնդիրը դիտարկում է մի քանի ասպեկտներով: Այն անդրադառնում է պայմանագիր կնքելուն հարկադրելու օրենսդրական արգելքին, եթե օրենքով կամ կանոնակարգմամբ ստանձնած պարտականությամբ այլ բան սահմանված չէ: Բացի այդ, պայմանագրի ազատության օրենսդրական նորմը անդրադառնում է այլ ասպեկտների և: Խոսքը մասնավորապես վերաբերում է պայմանագրի պայմաններն ազատ որոշելու իրավունքին: Համաձայն ՀՀ քաղ. օր. 437-րդ հոդվածի 4-րդ կետի՝ պայմանագրի պայմանները որոշվում են կողմերի հայեցողությամբ, բացի այն դեպքերից, երբ համապատասխան պայմանի բովանդակությունը սահմանված է օրենքով կամ այլ իրավական ակտերով: Օրենսդրական սույն նորմը պայմանագրի ազատությունը դիտարկում է որպես մի իրավիճակ, երբ կողմերը փոխադարձ համաձայնությամբ, քննարկումների միջոցով սահմանում են այն թույլատրելի և իրենց համար ընդունելի պայմանները, որոնց շրջանակներում կարող են հաստատվել պայմանագրային հարաբերությունները: Ընդ որում, նույն նորմը հնարավոր է համարում նաև խառը պայմանագրերի կնքումը: Այսպիսով, ինչպես կարելի է եզրակացնել պայմանագրի ազատության օրենսդրական բնորոշումից, այն կարող է համարվել պահպանված, եթե լիարժեքորեն գործել է պայմանագրային հարաբերությունների հաստատման ժամանակ, ինչը, սակայն, միանալու պայմանագրի տեսանկյունից թույլատրելի չէ, քանզի այն կարող է համարվել կնքված, եթե կողմը միանում է արդեն իսկ սահմանված պայմաններին *ամբողջապես*:

Միանալու պայմանագրի վերաբերյալ գրականության մեջ առկա են որոշ կարծիքներ ևս, որոնց հիմքում դրված են դրա կնքման կարգին վերաբերող առանձնահատկությունները: Սասնավորապես, Մ.Ի. Բրազինսկին և Վ.Վ. Վիտրյանսկին կարծիք են հայտնել, որ միանալու պայմանագրի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆԵՔ

անոմալիան դրսևորվում է նրանում, որ այս պարագայում պահվում է համաձայնության միայն արտաքին, ձևական կողմը, քանի որ այստեղ պայմանագրի ազատության սկզբունքը՝ որպես պայմանագրային հարաբերությունների ծագման նախապայման, դրսևորվում է միայն միակողմ կամքի արտահայտմամբ՝ այն սուբյեկտից, որը պայմանագրային հարաբերությունների հաստատման համար դիմում է ֆորմուլյար ձևին⁶: Այս առումով որպես պարտավորությունների ծագման հիմք՝ միանալու պայմանագիրն այլ քաղաքացիաիրավական պայմանագրերից տարբերվում է ոչ առաջացրած պարտավորությամբ, որն ըստ էության հիմք է հանդիսանում քաղաքացիաիրավական պայմանագրերի տարբերակման համար, ոչ պայմանագրային հարաբերությունների սուբյեկտային կազմով (հրապարակային պայմանագիր), այլ կնքման եղանակով⁷:

Միանալու պայմանագրի իրավական կարգավորման հիմնաքարն ըստ էության, միացող կողմի և միանալու պայմանագրի կնքման առաջարկ ներկայացնող կողմի միջև հակակշիռների համակարգի սահմանումն է, ինչն էլ ապահովվել է միացող կողմի իրավունքների օրենսդրորեն ամրագրմամբ: ՀՀ քաղ. օր. 444 հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ պայմանագրին միացող կողմն իրավունք ունի պահանջել լուծելու կամ փոփոխելու պայմանագիրը, եթե միանալու պայմանագիրը թեկուզև չի հակասում օրենքին կամ այլ իրավական ակտերին, սակայն այդ կողմին զրկում է մնան տեսակի պայմանագրերով սովորաբար տրամադրվող իրավունքներից, բացառում կամ սահմանափակում է մյուս կողմի պատասխանատվությունը պարտականությունները խախտելու համար կամ պարունակում է միացած կողմի համար այլ ակնհայտ ծանր պայմաններ, որոնք նա, ելնելով ողջամտորեն գիտակցված իր շահե-

րից, չէր ընդունի, եթե հնարավորություն ունենար մասնակցել պայմանագրի պայմանների որոշմանը: Տվյալ պարագայում որոշակի բարդություններ են ծագում՝ կապված այնպիսի կատեգորիաների հաստատման հետ, ինչպիսիք են «ակնհայտ ծանր պայմաններ», «ողջամտորեն գիտակցված շահ» և այլն: Սակայն այս պարագայում առաջանում է խնդիր. այն է, թե որքանով են այդ կատեգորիաները համապատասխանում օբյեկտիվության չափանիշներին: Ակնհայտ ծանր պայմանների մասով խոսքը վերաբերում է այն պայմաններին, որոնց ծանրության մասին կասկած չի կարող առաջանալ որևէ մեկի մեջ, և որոնք ակնհայտորեն ծանր են այլոց համար ևս⁸: Օբյեկտիվությունը դրսևորվում է նաև այն առումով, որ այս պայմաններում խնդիրն առնչվում է այն իրավունքներին, որոնք սովորաբար կարող էին ենթադրվել մնան բնույթի պայմանագրերի համար: Սակայն «պայմանագրով իրավունքներից զրկում» կամ «պատասխանատվության բացառում կամ սահմանափակում» հանգամանքներն ընդամենը կարող են տվյալ պայմանագրի անվավերության պայմանական նախապայմաններ դառնալ, քանզի կողմը հավասարապես կարող է վիճարկել, օրինակ, պայմանագրի կնքման վայրը կամ ժամկետը և այլն⁹:

Միանալու պայմանագրի իրավական հատկանիշների ուսումնասիրությունը թերևս լիարժեք չէր լինի, եթե անդրադարձ չկատարվեր ՌԻՆԻԴՐՈՒԿ սկզբունքներին: ՌԻՆԻԴՐՈՒԿՆ ուղղակիորեն անդրադարձել է պայմանագրի կնքման այս կարգին վերաբերող առանձնահատկություններին՝ խնդիրն առավելապես դիտարկելով ստանդարտ և ոչ ստանդարտ պայմաններ պարունակող պայմանագրերի կնքման ժամանակ դրանց միջև առաջացող հակասությունների մեկնաբանման և հաղթահարման համատեքստում: Այլ կերպ ասած՝ խոսքն այստեղ վերաբերում է միանալու պայմանագրի մեկնաբանման խնդրին, մի բան, որը մեր օրենսդրության մեջ բացա-

կայուն է: Թերևս հենց այդ թերացումն է, որ կարող է դառնալ խնդրահարույց, ինչի դեպքում կբախվենք ոլորտի ոչ լիարժեք իրավական կարգավորմամբ պայմանավորված գործնական կիրառման բարդությունների:

ՈՒՆԻԴՐՈՒՄ 2.19 հոդվածի 2-րդ կետի համաձայն պայմանագրի ստանդարտ պայմաններ են համարվում նրանք, որոնք, մշակվելով մի կողմի կողմից ենթարկվում են ընդհանուր և ոչ մեկանգամյա օգտագործման առանց մյուս կողմի հետ բանակցությունների անցկացման: Դժվար չէ հասկանալ, որ մեր օրենսդրության պրիզմայով այստեղ խնդիրը վերաբերում է հենց միանալու պայմանագրերին, քանզի միայն միանալու պայմանագրերի դեպքում է, որ կողմին հնարավորություն է տրվում սահմանել ստանդարտ պայմաններ, որոնք մյուսի կողմից ամբողջապես ընդունելը հիմք է հանդիսանում պայմանագրային հարաբերությունները հաստատված համարելու համար:

Ելնելով միացող կոնտրագենտի շահերի պաշտպանության խնդրից՝ ՈՒՆԻԴՐՈՒՄ 2.19 սահմանել է նաև, այսպես կոչված, «անսպասելի պայմանների» վավերականությանը վերաբերող մի շարք նախապայմաններ: Մասնավորապես, համաձայն 2.20 հոդվածի՝ կնքվող պայմանագրում ներառված այնպիսի ստանդարտ պայմանները, որոնք մյուս կողմը չէր կարող ակնկալել, համարվում են անվավեր, եթե մյուս կողմը դրանք ակնհայտորեն չի ընդունել: Այդպիսի պայմանների որոշման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնելով դրանց բովանդակությունը, սահմանումը և արտահայտման ձևը:

Ինչպես վերը նշվեց, ՈՒՆԻԴՐՈՒՄ անդրադառնում է նաև պայմանագրի պայմանների մեկնաբանմանը: Մասնավորապես, համաձայն 2.21 հոդվածի, եթե կնքված պայմանագրում առկա են ստանդարտ և ոչ ստանդարտ պայմաններ, և դրանցում առկա են հակասություններ, ապա կիրառվում են ոչ ստանդարտ պայմանները: Այստեղ

անուղղակիորեն ընդգծվում է պայմանագրի այն պայմանների նախապատվությունը, որոնց մշակումը կատարվել է երկու կողմերի անմիջական մասնակցությամբ: Նման եզրահանգումը, թերևս, պատահական չէ, քանի որ մեկ այլ՝ 2.19 հոդվածն արդեն սահմանել էր ստանդարտ պայմանների հասկացությունը՝ այդպիսիք համարելով նրանք, որոնք, մշակվելով մեկի կողմից և ենթարկվելով ոչ մեկանգամյա օգտագործման, դրան միանալու միջոցով հիմք են հանդիսանում պայմանագրային հարաբերությունների հաստատման համար: Այս պայմաններում ոչ ստանդարտ կհամարվեն այն պայմանները, որոնց մշակմանը մասնակցել են պայմանագրային հարաբերության երկու սուբյեկտները: Իսկ քննարկվող նորմի կոնտեքստում ոչ ստանդարտ պայմաններին տրված նախապատվությունը, ըստ մեզ, կմեկնաբանվի որպես պայմանագրի ազատության սկզբունքի դրսևորում միանալու պայմանագրի ժամանակ:

ՈՒՆԻԴՐՈՒՄ սկզբունքների ֆորմատով պայմանագրային հարաբերությունների հաստատում հնարավոր է նաև ստանդարտ և ոչ ստանդարտ պայմանների միաժամանակյա առկայությամբ: Ընդ որում, այս դեպքում ևս ՈՒՆԻԴՐՈՒՄ պարունակում է անհրաժեշտ մեխանիզմներ դրանց միջև առաջացող հակասություններ հաղթահարման ուղղությամբ: Մասնավորապես, 2.22 հոդվածը, անդրադառնալով հիշատակված խնդրին, պարզաբանում է, որ եթե պայմանագրային հարաբերության երկու սուբյեկտների կողմից էլ պայմանագրի կնքման ընթացքում օգտագործվել են ստանդարտ պայմանները, սակայն կողմերը համաձայնություն են ձեռք բերել ոչ ստանդարտ պայմանների շուրջ, ապա պայմանագիրը համարվում է կնքված քննարկված պայմաններով և այն ստանդարտ պայմաններով, որոնք համարվում են ըստ էության համընկնող, բացառությամբ այն դեպքերի, երբ կողմը նախապես կամ առանց անհիմն ուշացման մյուս կողմին իրազեկել է, որ չի

ՔԱՂԱՔԱՑԻՎԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

պատրաստվում պարտավորվել տվյալ պայմանագրով: Այս նորմով ևս, նախապատվություն է տրվում ոչ ստանդարտ պայմաններին և անգամ դրանց ու ստանդարտ պայմանների միաժամանակյա օգտագործման դեպքում բացի նորմով նշված վերապահումներից, դրանց շուրջ ձեռք բերված համաձայնություն համարվում պայմանագրային հարաբերությունների հաստատման հիմք:

Թերևս, ինչպես կարելի է եզրակացնել, միանալու պայմանագրին, կամ ՈՒՆԻԴ-ՐՈՒՎ տերմինաբանությամբ՝ ստանդարտ պայմաններով կնքվող պայմանագրին վերաբերող հարցերը միջազգային այս փաստաթղթում կարգավորվել են պատշաճ մասնարանասանությամբ՝ դրանով իսկ ապահովելով պայմանագրային հարաբերության բոլոր սուբյեկտների շահերի պաշտպանությունը: Ըստ մեզ, հենց այսօրինակ իրավական կարգավորումը կարող է դառնալ ուղորտի պրակտիկ կիրառման բարձր արդյունավետության նախապայման, ինչը կապահովի գործարար առողջ միջավայրի գոյությունը:

Այս առումով առանձնակի կարևորում ենք ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ միանալու պայմանագրին վերաբերող նորմում փոփոխությունների կատարումը, որն առավելագույնս կապահովի նաև միացող կողմի շահերի պաշտպանությունը: ՈՒՆԻԴ-ՐՈՒՎ սկզբունքների՝ պայմանագրի ստանդարտ և ոչ ստանդարտ պայմանների միջև հակասությունների առաջացման դեպքում դրանց տրվող նախապատվությամբ օժտվող պայմաններն ընդգծող նորմի ինտերպրետացումը մեր օրենսդրության մեջ, ըստ մեզ, կհանդիսանա այն ձևը, որը կկարողանա ապահովել ուղորտի առավել արդյունավետ գոյությունը: Սակայն դա հնարավոր կլինի կատարել միայն այն դեպքում, երբ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ միանալու պայմանագրին վերաբերող իրավանոր-

մի համապատասխան մասում սահմանվի վերապահում այն մասին, որ միանալու պայմանագրերում կարող են փոխադարձաբար զուգակցվել ստանդարտ և ոչ ստանդարտ պայմանները:

Այլ խոսքով ասած, ըստ մեզ, հնարավոր է համարվում **ՀՀ քաղ. օր. 444 հոդվածի առաջին մասով սահմանել, որ միանալու է համարվում ոչ միայն այն պայմանագիրը, որի պայմանները սահմանել է կողմերից մեկը բանաձևային կամ այլ ստանդարտ ձևերով իսկ մյուս կողմը միացել է՝ դրանք ամբողջությամբ ընդունելով, այլև այն, որի հաստատման համար կողմերը համաձայնության են եկել՝ նաև կիրառելով ոչ ստանդարտ պայմաններ: Գտնում ենք, որ տվյալ պարագայում նույն հոդվածի 2-րդ մասում օգտագործվող «ողջամտորեն գիտակցված շահի» խնդիրն առավել հեշտ կլուծվի: Այսինքն՝ հիշատակված փոփոխությունը հնարավորություն կստեղծի կողմի համար հասկանալու, թե կոնկրետ որ դեպքում իրավաչափ կլինի նրա պահանջը՝ փոփոխել կամ լուծել պայմանագիրը:**

ՀՀ քաղ. օր. 444 հոդվածի 3-րդ կետը նախատեսում է մի բացառություն, որը տարածվում է գործարարական գործունեություն իրականացնող սուբյեկտների վրա: Մասնավորապես, համաձայն այդ հոդվածի 2-րդ կետի՝ նշված հանգամանքների առկայության դեպքում պայմանագիրը լուծելու կամ փոփոխելու մասին պայմանագրին միացած կողմի ներկայացրած պահանջը կապված նրա ձեռնարկատիրական գործունեության իրականացման հետ, ենթակա չէ բավարարման, եթե նա գիտեր կամ պետք է իմանար, թե ինչ պայմաններով է կնքում պայմանագիրը:

Դատական պրակտիկայի տեսանկյունից հիմնական խնդիրը կապված է գործարարական գործունեություն իրականացնող առևտրային ընկերությունների կողմից սահմանված պայմանների փոփոխման հետ: Այստեղ հիմնական առանձնահատկությունն այն է, որ անվավեր են համարվում պարտապանի պատասխանատվու-

յունը մեղմացնող կամ բացառող պայմանները: Այդ պատճառով էլ այս պայմանի ներմուծումը օրենսդրություն և հիշատակված նորմին իմպերատիվ բնույթով օժտելն է պայմանավորում այն, որ կոնտրագենտի ներկայացրած նման հայցն անմիջապես ենթակա է մերժման: Նույն ձևով է հարցը լուծվում նաև այն դեպքում, երբ հայցով հանդես է գալիս քաղաքացին, որը պայմանագիր է կնքել պարտապան առևտրային գործունեություն իրականացնող կազմակերպության հետ¹⁰:

Ինչպես երևում է հարցի կարգավորման կապակցությամբ օրենսդրի դրսևորած դիրքորոշումից, հիշյալ սանկցիաների կիրառման հիմքում դրվում են պատասխանատվության չափի նվազումը կամ պատասխանատվության բացառումը: Նշենք, որ հարցի իրավական կարգավորումը սրանով չի սահմանափակվում: Մասնավորապես, համաձայն ՀՀ քաղ. օր 416-րդ հոդվածի՝ միանալու կամ այլ պայմանագրով, որով պարտատերը սպառող քաղաքացի է, պարտապանի պատասխանատվության չափը սահմանափակելու մասին համաձայնությունը առոչինչ է, եթե պարտավորության տվյալ տեսակի կամ տվյալ խախտման համար պատասխանատվության չափը սահմանված է օրենքով, կամ համաձայնությունը կայացվել է մինչև պարտավորության չկատարելը կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն նախատեսող հանգամանքների ի հայտ գալը: Ըստ էության, այս պարագայում ևս պարտավորության համար պատասխանատվության չափի սահմանափակման կապակցությամբ օրենսդիրը նախատեսել է երկակի կարգավորման մեխանիզմ: Մի կողմից այն բացառում է պատասխանատվության չափի սահմանափակումը, եթե դրա չափը հստակ սահմանված է օրենքով, մյուս կողմից՝ համարում է թույլատրելի, եթե համաձայնությունը կայացվել է մինչև պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հետ կապված հանգամանքների ի հայտ

գալը: Հարկ է նշել, որ սույն նորմի կանոնները կիրառելի չեն, եթե խոսքը վերաբերում է գործարարական գործունեություն իրականացնող սուբյեկտներին:

Իրավաբանական գրականության որոշ աղբյուրներում լայն կիրառություն ունի նաև «փոխհամաձայնեցված պայմանագիր» եզրույթը: Գիտնականները, անդրադառնալով պայմանագրի այս տեսակին բնորոշ առանձնահատկություններին և համեմատելով այն միանալու պայմանագրերի հետ, նշում են, որ «փոխհամաձայնեցված» պայմանագրի պայմանները մշակվում են պայմանագրին մասնակից բոլոր կողմերի մասնակցությամբ, մինչդեռ միանալու պայմանագրի պարագայում հարցը լուծվում է միայն մի կողմից պայմաններ նախատեսելով¹¹: Ընդ որում, ինչպես նշում է օրենսդրությունը, միանալու պայմանագրերում կողմն իր համար թույլատրելի պայմանները, որպես կանոն, սահմանում է ֆորմուլյարներում (մեր օրենսդրությամբ՝ բանաձևային) կամ այլ ստանդարտ ձևերում: Սակայն, ինչպես փաստում է ամենօրյա գործարարական պրակտիկայի ուսումնասիրությունը և որոշ գիտական աղբյուրներում տեղ գտած կարծիքները, գործարարական գործունեություն իրականացնող սուբյեկտները ոչ միշտ են այս պարագայում կիրառում ֆորմուլյարներ¹²:

Միանալու պայմանագրին օրենսդրությամբ տրված կարգավորումը թույլ է տալիս վեր հանել դրա հիմնական բնորոշ երեք առանձնահատկություններ.

-միանալու պայմանագրում պայմանները պետք է սահմանված լինեն ֆորմուլյարներում կամ այլ ստանդարտ ձևերում

-որպես կանոն նման ստանդարտ ձևեր միացող կողմի դերում հանդես է գալիս գործարարական գործունեություն իրականացնող սուբյեկտը, որի գործունեության հիմնական ոլորտն անմիջական կապի մեջ է գտնվում մասսայական արտադրության և սպառման կամ միատեսակ գործարքների կնքման հետ

-այդ պայմանները մյուսի կողմը կարող

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

են ընդունել միայն դրանց **ամբողջապես** միանալու միջոցով: Այսինքն, նրան հնարավորություն չի տրվում մասնակցելու պայմանագրի պայմանների մշակմանը:

Այսպիսով, միանալու պայմանագրի՝ վերը հիշատակված առանձնահատկությունների ընդհանուր վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ այն առավելապես կիրառելի է համարվում գործարարական գործունեության ոլորտում, երբ տնտեսական գործունեության տվյալ ճյուղում դոմինանտ դերակատարություն ունե-

ցող սուբյեկտն օգտագործում է իր դիրքը այդ ոլորտում պայմանագրային հարաբերությունների հաստատման համար:

Կատարված վերլուծությունը թույլ տվեց վեր հանել պայմանագրի կնքման այս եղանակում օրենսդրությամբ առկա կարգավորման որոշակի բացթողումներ, որոնց վերացմամբ էլ, ըստ մեզ, կարելի կլինի ապահովել միանալու պայմանագրերի առավել լայն կիրառություն: Գտնում ենք, որ այդ պայմաններում հնարավոր կլինի խոսել նաև գործարարական գործունեության շահերի ու պահանջումների՝ իրավական կարգավորմամբ ապահովված լիարժեք սպասարկման մասին:

¹ Տե՛ս *Таль Л.С.* Трудовой договор: Цивилистическое исследование. ч. 1. Ярославль, 1918, էջ 6:

² Տե՛ս *Брагинский М. И., Витрянский В. В.*, Договорное право. М., Изд Статут, 2000, էջ 258:

³ Տե՛ս *Лунц Л.А.* Денежное обязательство в гражданском и коллизионном праве капиталистических стран. М., Изд “Юриздат”, 1948, էջ 96:

⁴ Տե՛ս *Флейшиц Е. А.* Буржуазное гражданское право на службе монополистического капитала. М. Изд., “Юриздат” 1948, էջ 38:

⁵ Տե՛ս *Борисов А.Б.* Комментарий к ГК РФ (части 1,2 постатейный), М., Изд. “Книжный мир”, 2001, էջ 475:

⁶ Տե՛ս *Брагинский М.И., Витрянский В. В.*, նշված աշխատ., էջ 209:

⁷ Տե՛ս *Витрянский В. В.* Новые типы гражданско-правовых договоров// Закон, N 5, էջ 93:

⁸ Տե՛ս *Брагинский М. И., Витрянский В. В.*, նշված աշխատ., էջ 263:

⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 212:

¹⁰ Տե՛ս Сделки и договоры. Судебная практика. Под ред. *А. В. Коновалова*, СПб. Изд. “Юридический центр пресс”, 2004, էջ 396:

¹¹ Տե՛ս Гражданское право. Учебник. Под. ред. *А. П. Сегеева, Ю. К. Толстого*. Часть 1. М., Изд. “Проспект”, 1999, էջ 512:

¹² Տե՛ս *Завидов Б.Д.* Договорное право России, М., Изд. “НПК Лига-Разум”, 1998, էջ 60:

ЗАЩИТА КОНСТИТУЦИОННЫХ ПРАВ И СВОБОД ГРАЖДАН НКР

Рита АРУСТАМЯН

*Доцент кафедры права АргУ,
канд. юрид. наук*

Проблема защиты прав и свобод человека и гражданина была и остается одной из приоритетных в научной среде. Как справедливо подмечает В. С. Нерсисянц, права человека, их генезис, социальные корни, назначение — одна из «вечных» проблем социально-культурного развития человечества, прошедшая через тысячелетия и неизменно находившаяся в центре внимания политической, правовой, этнической, философской и религиозной мысли¹.

Решающим этапом в развитии прав человека явились буржуазно-демократические революции XVII-XVIII вв. И не случайно первыми документами конституционного характера, которые в последующем заложили краеугольные камни современного конституционализма, явились такие акты всемирно-исторического значения, как английский Билль о правах 1689 года, Декларация независимости США 1776 года, выдающийся документ Великой Французской революции — Декларация прав человека и гражданина 1789 года. В ст. 1 Французской Декларации сказано: «Люди рождаются и остаются свободными и равными в правах».

После окончания второй мировой войны стало стремительно развиваться международное право, относящееся к защите прав человека. Права и свободы человека перестали быть только внутренним делом государства, они стали объектом внимания всего международ-

ного сообщества.

Среди многочисленных современных международно-правовых документов в области прав человека особое место принадлежит Всеобщей декларации прав человека, которая была принята Генеральной Ассамблеей ООН 10 декабря 1948 года. Первый пункт е, гласит: «Люди рождаются свободными и равными в достоинстве и правах. Все они наделены разумом и совестью...». Идеи и принципы, заложенные во Всеобщей декларации, получили дальнейшее развитие в многочисленных международно-правовых актах о правах человека. Среди наиболее важных выделяются: «Международный пакт о гражданских и политических правах» (1966 г.), «Международный пакт об экономических, социальных и культурных правах» (1966 г.), «Европейская конвенция о защите прав человека» (1950 г.). Благодаря этим документам человек стал субъектом международного права.

Подчеркивая значение международно-правового признания прав человека, следует иметь в виду, что эффективная государственная защита и охрана этих прав становится возможной лишь после государственного признания этих прав. Это происходит путем их юридического закрепления в конституциях государств.

Почти все современные конституции провозглашают права и свободы человека², т. к. уже на заре становления современного конституционализма проблема взаимоотношений государства и личности стала рассматриваться как одна из центральных в механизме конституционного регулирования всей системы общественных отношений. Необходимо

ՍԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

подчеркнуть, что юридическим средством выражения этих взаимоотношений является институт прав и свобод человека и гражданина.

Нельзя не отметить, что этот институт закрепляет свободу народа и каждого гражданина от произвола государственной власти³.

10 декабря 2006 г. путём референдума была принята Конституция Нагорно-Карабахской Республики. С принятием Основного закона начался новый период в правовой системе Нагорно-Карабахской Республики, ознаменованный признанием гарантированных прав и свобод человека и гражданина. Правам и свободам человека и гражданина посвящена глава 2 Конституции НКР. (Глава 2 Конституции — «Основные права, свободы и обязанности человека и гражданина» включает 44 ст., подавляющая часть которых посвящена конкретным правам и свободам.)

Согласно ст. 2 Конституции НКР «Нагорно-Карабахская Республика признаёт основные права и свободы человека, как неотъемлемые и высшие ценности, как основу свободы, справедливости и мира». Отметим, что признание высшей ценностью прав и свобод человека означает приоритет прав и свобод человека в деятельности всех органов государства, их ориентацию на эти права и свободы⁴.

По Конституции НКР государство не только признаёт, но и обеспечивает защиту основных прав и свобод человека и гражданина, в соответствии с общепризнанными принципами и нормами международного права (ст. 5).

Чтобы обеспечить государственную защиту прав и свобод человека и граж-

данина, Конституция НКР предусматривает систему гарантий, включающую многообразные способы и формы осуществления этой функции. Следует согласиться с мнением В. В. Лазарева о том, что гарантированность прав и свобод — это своеобразный внешний механизм ограничения власти, которая всегда стремится к саморасширению и усилению своего присутствия во всех сферах человеческой жизни⁵.

Итак, для реализации провозглашенных Конституцией прав и свобод, необходимо установить механизм правовой защиты этих прав и свобод, т. к. посредством конституционных средств охраны и защиты прав и свобод человека и гражданина, охраняется и защищается правовой статус человека, устанавливаются юридические гарантии защиты его конституционных прав, свобод и обязанностей.

Для понимания действия механизма правового обеспечения конституционных прав и свобод граждан необходимо:

- раскрыть роль государства в обеспечении прав и свобод граждан,
- создать систему охраны и защиты прав и свобод в обеспечении их реально-го использования,
- развивать общественно-политическую активность граждан,
- создать государственный и общественный контроль над соблюдением гарантий,
- повысить правосознание и правовую культуру граждан.

Следует отметить, что гарантии конституционных прав граждан зависят от уровня демократии, развития экономики, правовой культуры общества, от степени независимости судебной власти⁶.

Таким образом, говоря о роли госу-

дарства в создании системы защиты прав и свобод, необходимо подчеркнуть то, что государство должно создавать систему защиты прав и свобод, в которую включены президентские и парламентские структуры, правоохранительные и судебные органы. Также важно отметить, что в правовой системе практически нет законов безразличных к правам человека даже в тех случаях, когда эти законы регулируют отношения, удаленные от этих прав. Следовательно, любые законодательные акты замыкаются на сфере прав и свобод человека и гражданина. Поэтому важнейшее требование, адресованное Конституцией органам законодательной власти — обеспечить верховенство прав и свобод человека. Это требование обращено и к органам исполнительной власти.

Особая роль в защите прав и свобод человека и гражданина принадлежит Президенту НКР. Как глава государства Президент обладает широкими полномочиями и имеет большие возможности для обеспечения прав и свобод человека и гражданина. В его непосредственном подчинении имеется аппарат, который занимается рассмотрением поступающих к Президенту жалоб, предложений и других обращений.

Следует особо подчеркнуть, что наиболее эффективной гарантией прав и свобод человека и гражданина является правосудие. Обеспечение прав и свобод правосудием означает, что неправомерные действия органов государственной власти, органов местного самоуправления, а также любых организаций и индивидов, посягающие на права и свободы человека и гражданина могут быть обжалованы в суде.

Конституция НКР восприняла демократические принципы и средства гаран-

тий и прав и свобод личности. Согласно ст. 44 Конституции НКР, «каждый имеет право на судебную защиту своих прав и свобод». Гарантия судебной защиты означает, с одной стороны, право гражданина подать жалобу в соответствующий суд и, с другой стороны, обязанность последнего рассмотреть жалобу и принять по ней законное, справедливое и обоснованное решение. Всеобщая Декларация прав человека прямо закрепляет в ст. 8, что «каждый человек имеет право на эффективное восстановление в правах компетентными национальными судами в случаях нарушения его основных прав, предоставленных ему Конституцией или законом».

Обеспечение правовой помощи в защите прав закреплено в ст. 46 Конституции НКР, где указано, что «каждый имеет право на получение юридической помощи», в том числе каждый с момента задержания, выбора меры пресечения или предъявления обвинения имеет право на защитника по своему выбору. Положение ст. 46 Конституции закреплено и конкретизировано в ст. 10 Уголовно-процессуального кодекса НКР. В уголовном процессе право пользоваться услугами защитника принадлежит подозреваемому, обвиняемому, а услугами представителя имеют право пользоваться гражданский истец, гражданский ответчик.

Действующее уголовно-процессуальное законодательство приведено в соответствии с этой и другими нормами Конституции НКР. Во второй главе Конституции НКР содержится также основные принципы судопроизводства:

1. Презумпция невиновности (ст.48). Принцип невиновности — общепризнанный принцип провозглашенный в ст. 11 Всеобщей декларации прав человека, в

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

ст. 14 Международного пакта о гражданских и политических правах, а также в ст. 6 Европейской Конвенции о защите прав человека и основных свобод 1950 года, где установлено: «каждый обвиняемый в уголовном преступлении считается невиновным пока виновность его не будет доказана в соответствии с законом».

2. Никто не может быть судим вторично за одно и то же деяние (ст. 49). Данный принцип закреплен в пункте 7 ст. 14 Международного пакта о гражданских и политических правах, где сказано: «Никто не должен быть вторично судим или наказан за преступление, за которое он уже был окончательно осужден или оправдан в соответствии с законом и уголовно-процессуальным правом каждой страны».

3. Отмена обратной силы закона, устанавливающего или отягчающего ответственность (ст. 51). Этот принцип указывает законодателю на неправомерность законов, устанавливающих ответственность за деяния, совершенные до принятия новых законов.

4. Право на пересмотр приговора вышестоящим судом в установленном законом, а также каждый осужденный имеет право просить о помиловании или смягчении наказания (ст. 50). Осуществление права на пересмотр приговора вышестоящим судом — одна из гарантий выявления и исправления судебных ошибок.

Конституция НКР содержит такие значимые юридические гарантии, которые закрепляют моральные принципы и нормы. Согласно ст. 47 Конституции НКР никто не обязан давать показания отно-

сительно себя самого, своего супруга (супруги) и близких родственников. Запрещается также использование доказательств, приобретенных с нарушением закона. Следует отметить, что формулировка ст. 47 Конституции НКР шире, чем закрепленное в ст. 14 Международного пакта о гражданских и политических правах, где сказано: «Каждый имеет право, при рассмотрении любого предъявляемого ему уголовного обвинения ... не быть принуждаем к даче показаний против самого себя или к признанию себя виновным». Нужно подчеркнуть, что Конституция НКР наделяет соответствующим правом не только обвиняемого, но и его супруга и близких родственников.

Конституционно-судебный механизм по защите прав и свобод человека отражен в ст. 114 Конституции НКР, где в Верховный Суд имеет право обращаться каждое лицо по конкретному делу, когда в наличии имеется акт суда, исчерпаны все средства судебной защиты и оспаривается конституционность положений нормативного акта, примененного к нему этим актом суда. Согласно ст. 113 Конституции, Верховный Суд состоит из Конституционной и Кассационной палат. Хочется надеяться, что создание Конституционной палаты создает и обеспечивает основу механизма эффективной реализации по охране прав и свобод человека и гражданина.

К числу институтов, гарантирующих права и свободы, относится институт Защитника прав человека. Конституция НКР предусматривает институт Защитника прав человека. Защитник рассматривает жалобу в отношении нарушений государственными органами и органами местного самоуправления и их должностными лицами прав и основных сво-

бод человека (в том числе и гражданина), предусмотренных законом НКР, международными договорами и нормами международного права. Порядок рассмотрения таких жалоб специфичен. Он рассматривает жалобу только в том случае, если заявитель уже обжаловал соответствующее решение в судебном порядке, но не согласен с решением принятым по жалобе⁷. Надо сказать, что этот институт в НКР является абсолютно новым. Защитник, выявив нарушение прав и свобод гражданина, принимает меры по их восстановлению.

С момента образования данного института для восстановления своих прав, к Защитнику обратилось свыше 200 граждан НКР. В основном жалобы, заявления, обращения были по жилищному вопросу, несогласие с решением суда, незаконное увольнение с работы. При рассмотрении поступивших жалоб были зафиксированы и восстановлены в правах в 17 случаях нарушения прав человека⁸. Думается, что полное осуществление механизма охраны и защиты прав и свобод человека и гражданина приведет к доверию граждан к государству, т. к. наблюдается недостаток доверия народа к государственным структурам.

Существенной гарантией прав и свобод по конституциям всех государств является помощь профессионального защитника (адвоката) в уголовном, гражданском и административном процессе. Представляется необходимым отметить, что к гарантиям прав и свобод относится также юридическая ответственность за их нарушения. Имеется в виду ответственность, прежде всего органов государства и должностных лиц. Поэтому в первую очередь необходима эффективная охрана и защита прав и свобод человека и гражданина, как от самой власти,

так и от других граждан.

Говоря о гарантиях соблюдения прав и свобод человека и гражданина, нельзя не упомянуть положения Конституции, в соответствии с которыми сам человек может выступать защитником своих прав и свобод всеми средствами, не запрещенными законом (ст. 44).

В Конституции НКР довольно обстоятельно изложены все основные права и свободы человека и гражданина, соответствующие положениям основных международных правовых документов. Однако многие ее положения остались декларативными, так как провозглашенные в Конституции и правовых актах права и свободы граждан реализуются очень медленно. Следует также отметить, что конституционные права и свободы граждан нередко игнорируются и нарушаются. Это связано с несовершенством нормативной базы, а иногда и правонарушением со стороны государственных органов и должностных лиц, в обязанность которых входит воплощение прав и свобод человека и гражданина и контроль над их соблюдением.

В этой связи в нашем государстве проводятся комплекс конституционных мер по защите прав и свобод человека. Также в целях дальнейшей разработки действенных правозащитных механизмов, опирающихся на конституционные нормы, были разработаны и приняты ряд законов и кодексов направленные на обеспечение защиты прав и свобод человека и гражданина.

Уместно отметить, что принятие Национальным Собранием 17 декабря 2008 года Уголовно-процессуального, Гражданско-процессуального, Судебного, Административно-процессуального кодексов НКР, явилось ответом на требования времени и стало очередным

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

ключевым звеном реформирования законодательства НКР.

Таким образом, несмотря на созданный механизм защиты прав и свобод человека, наблюдаются нарушения конституционных прав, следовательно, возникает вопрос: «Достаточно ли существующих форм для защиты прав и свобод человека?».

И в заключение хочется сказать, что

концепция прав человека заслуживает пристального внимания. Несмотря на то, что государство разрабатывает комплекс конституционных мер, направленных на защиту прав и свобод человека и гражданина, в стране нет еще эффективно действующего механизма защиты, и поэтому защита человека, его прав требует от государства активных действий и предоставления ему соответствующих прав на случай возможных нарушений прав и свобод человека в повседневной жизни.

¹ См.: *Нерсисянц В. С.* Проблемы общей теории права и государства. М., 1999, с. 218.

² См.: *Чиркин В. Е.* Конституция: российская модель. М., 2004, с. 24.

³ См.: *Баглай М. В.* Конституционное право Российской Федерации. М., 1999, с. 154.

⁴ См.: Конституция Российской Федерации: Научно-практический комментарий. / Под ред. акад. *Б. Н. Топорнина.* М., 1997, с. 97.

⁵ См.: *Лазарев В. В.* Конституционное право М., 1998, с. 100.

⁶ См.: *Чиркин В. Е.* Сравнительное конституционное право. М., 2002, с. 165.

⁷ Закон НКР «О защитнике прав человека. 2005 г. (В НКР институт Защитника прав человека начал действовать с 20 мая 2008 г.)

⁸ Газета «Азат Арцах» от 4 апреля 2009 г.

ՀԱՇՄԱՆԳԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՉԱՆՑ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Արև ԴԱՉԱՐՅԱՆ

*ԵՊՀ սահմանադրական իրավունքի
ամբիոնի ասպիրանտ*

Յուրաքանչյուր պետության հիմնական պարտականությունն իր քաղաքացիների արժանապատվության հարգումն ու պաշտպանությունն է: Այդ խնդրի իրականացման համար պետությունը ոչ միայն պետք է իր քաղաքացիներին զերծ պահի խտրական վերաբերմունքից, այլև ապահովի արժանավայել կյանքով ապրելու համար անհրաժեշտ պայմաններ:

Սովորաբար յուրաքանչյուր մարդ պարտավոր է ինքը հոգալ իր ապրուստի միջոցները, սեփական ուժերով ապահովել իր գոյությունը հասարակության մեջ: Սակայն ամեն մի երկրում էլ կան մարդիկ, որոնք տարբեր հանգամանքների բերումով (տարիք, առողջական վիճակ և այլն) ի վիճակի չեն այդ անել: Միայնակ կանայք, հաշմանդամները, բազմանդամ ընտանիքները պարբերաբար հայտնվում են կարիքի մեջ: Անաշխատունակ անձինք խնամքի կարիք են զգում: Հասարակությունը չի կարող մեծան մարդկանց թողնել բախտի քմահաճույքին: Ելնելով այդ մարդասիրական սկզբունքներից՝ պետությունը ստեղծում է նրանց նյութական բարիքներով հասարակության հաշվին ապահովելու մի համակարգ, որն անվանվում է սոցիալական ապահովություն¹: Դա բխում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 1 հոդվածից, համաձայն որի՝ Հայաստանի Հանրապետությունը սոցիալական պետություն է: Սահմանադրական այս նորմից բխում է, որ պետությունը պարտավոր է իր բոլոր քաղաքացիների համար ստեղծել արժանավայել կյանքով ապրելու բոլոր պայմանները:

Հասարակության մեջ խոցելի խավեր են հատկապես **հաշմանդամները**: Այս կատեգորիայի անձանց իրավական կարգավիճակը ամրագրող նորմատիվային բազան բխում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունից (հոդվ. 37-րդ), որը յուրաքանչյուր մարդու ընձեռում է ծերության, **հաշմանդամության**, հիվանդության, կերակրողին կորցնելու, գործազրկության և օրենքով նախատեսված այլ դեպքերում սոցիալական ապահովության իրավունք: Բացի այդ, երկրի հիմնական օրենքը սոցիալական ոլորտում պետության առաջնահերթ խնդիրներից մեկը համարում է հաշմանդամության կանխարգելման և բուժման ծրագրերի իրականացումը, ինչպես նաև հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանումը (48-րդ հոդվ., կետ 7-րդ): Նրանք համարվում են հասարակության լիիրավ անդամներ և իրավունք ունեն հավասարապես մասնակցելու հասարակության տնտեսական, քաղաքական, սոցիալական և հոգևոր-մշակութային կյանքին: Բացի այդ, ՀՀ Սահմանադրությունը (14-րդ հոդվ.), մարդու արժանապատվությունը համարելով բարձրագույն արժեք, ամրագրում է իրավահավասարության սկզբունքը (հոդվ. 14.1), որն արգելում է խտրականության ցանկացած դրսևորում կախված մի շարք հանգամանքներից, այդ թվում՝ հաշմանդամությունից:

Սահմանադրական նշված դրույթների հիման վրա հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալական պաշտպանությունը կարելի է բնութագրել որպես **պետության կողմից երաշխավորված տնտեսական, սոցիալական և իրավական միջոցների համակարգ, որը հաշմանդամների համար պայմաններ է ապահովում հաղթահարելու և փոխհատուցելու կենսագործունեության**

ՍԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

սահմանափակումները, և որոնք ուղղված են հասարակության կյանքին մասնակցելու համար մյուս քաղաքացիներին հավասար պայմաններ ստեղծելուն:

Հասարակության մեջ հաշմանդամների իրավական վիճակը կարգավորող հիմնարար օրենսդրական ակտերի առկայությունը իրավական պետության կարևորագույն չափորոշիչներից մեկն է:

Սակայն նրանց իրավունքների պաշտպանության հիմնախնդիրը չի կարող պարփակվել միայն պետությունների ազգային օրենսդրությունների շրջանակներում, քանի որ այն ունի համամարդկային բնույթ: Խնդիրն այն է, որ նրանց վիճակը հասարակության մեջ այնքան խոցելի է, որ վերջինների վրա էական բացասական ազդեցություն են ունենում տնտեսական ճգնաժամը, ազգային տարադրամի արժեզրկումը, զնաճը և այլն: Այդ է պատճառը, որ հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների իրականացման հարցը զերծ չի մնացել միջազգային հանրության ուշադրությունից: Նշված ոլորտում վերջիններիս իրավունքներին նվիրված հիմնական միջազգային-իրավական փաստաթուղթը ՄԱԿ-ի Գլխավոր վեհաժողովի՝ 2006 թ. դեկտեմբերի 13-ին ընդհանուր կոնսենսուսով ընդունած «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիան է և դրան կից Կամընտիր Արձանագրությունը²: Փաստաթուղթն ուժի մեջ է մտել 2008 թ. մայիսին: Կոնվենցիան և Կից Կամընտիր արձանագրությունը Հայաստանի Հանրապետությունն ստորագրել է 2007 թ. մարտի 30-ին, սակայն այն դեռևս չի վավերացվել:

Հայաստանի Հանրապետությունում 2009թ. հունվարի 1-ի դրությամբ հաշվառված են 170,950 հաշմանդամ, որից 14336-ը՝ 1-ին, 94899-ը՝ 2-րդ, 53009-է՝ 3-րդ խմբի: Մինչև 18 տարեկան հաշմանդամություն ունեցող երեխաների թիվը 8706 է³:

Նրանց կարգավիճակը հանրապետությունում իրավական կարգավորում է ստացել Կոնվենցիայի ընդունումից շատ ավելի վաղ: Մասնավորապես, այդ ոլորտի կարգավորմանն է նվիրված «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» օրենքը⁴, որն ընդունվել է 1993 թ. ապրիլի 14-ին: Այն սահմանում է Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության իրավական, տնտեսական և կազմակերպական հիմունքները, հաշմանդամներին հանրապետության մյուս քաղաքացիներին հավասար հնարավորություններ ապահովելու նպատակով նրանց իրավունքներն ու ընդունակություններն իրականացնելու համար առավել բարենպաստ պայմանների ու արտոնությունների տրամադրման պետական քաղաքականության հիմնադրույթները: Օրենքի 2-րդ հոդվածը տալիս է հաշմանդամ եզրույթի սահմանումը, համաձայն որի՝ ***հաշմանդամն այն անձն է, որը մտավոր կամ ֆիզիկական անլիարժեքությամբ պայմանավորված՝ կենսագործունեության սահմանափակումների պատճառով սոցիալական օգնության ու պաշտպանության կարիք է զգում:*** Բերված սահմանումը, մեր կարծիքով, ամբողջ ծավալով չի ներառում հիմնախնդիրը, ուստի չի կարող լիարժեքորեն պաշտպանության տակ առնել հաշմանդամություն ունեցող անձանց: Այդ իմաստով ավելի ամբողջական է «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվենցիայի մոտեցումը: Միջազգային այս փաստաթուղթը չնայած կոնկրետ չի սահմանում հաշմանդամ եզրույթը, սակայն դրա նախաբանը սահմանում է, որ հաշմանդամություն եզրույթը զարգացող հասկացություն է, որը ***ներառում է այն անձանց, որոնք ունեն երկարաժամկետ ֆիզիկական, հոգևոր, մտավոր կամ զգայական խեղումներ և բացասական վերաբերմունքի կամ ֆիզիկական խոչընդոտների պատճառով չեն կարողանում լիարժեք մասնակցել հա-***

սարակական կյանքին: Նման ձևակերպումը թույլ է տալիս եզրակացնելու, որ Կոնվենցիան պաշտպանության տակ է առնում հաշմանդամություն ունեցող ավելի լայն շրջանակի անձանց, հետևաբար անդամ պետություններին հնարավորություն է ընձեռում ընդլայնելու պաշտպանության ենթակա անձանց շրջանակը: Օրինակ, պետությունը կարող է պաշտպանության տակ առնել նաև կարճաժամկետ խեղումներով անձանց: Այդ առումով «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» ՀՀ օրենքի այս և մի շարք այլ դրույթներ վերանայման կարիք ունեն:

Հաշմանդամի կարգավիճակը անձին շնորհում է բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնը: Կախված անձի օրգանիզմի ֆունկցիաների խթաբարձան և կենսագործունեության սահմանափակման աստիճանից՝ բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնից հաշմանդամ ճանաչված անձին տրվում է հաշմանդամության խումբ (1-ին, 2-րդ, 3-րդ), իսկ մինչև 18 տարեկան երեխաներին՝ հաշմանդամ երեխայի կարգավիճակ:

Այդ ճանապարհով պետությունը անձին վերապահում է լրացուցիչ իրավունքներ ու արտոնություններ՝ հասարակության կյանքին նրա լիարժեք մասնակցությունն ապահովելու նպատակով:

Հայաստանի Հանրապետության Հիմնական օրենքը մարդու սոցիալական իրավունքների երաշխավորման նպատակով պետության վրա դրված պարտականությունների մեջ առանձնացնում է հաշմանդամության կանխարգելման և բուժման ծրագրերի իրականացումը, ինչպես նաև հասարակական կյանքին հաշմանդամների մասնակցության խթանումը (48-րդ հոդվ., 7-րդ կետ): Սահմանադրական այս նորմը կյանքի կոչելու նպատակով «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին» օրենքը նախատեսում է հաշ-

մանդամության կանխարգելման միջոցառումները, բժշկական վերականգնումն ու դրա չափորոշիչները, ինչպես նաև առողջարանային սպասարկման ձևերն ու միջոցները: Օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ հաշմանդամության կանխարգելումը ներառում է բնակչության առողջ կենսաձևի ապահովման, բնապահպանական անվտանգության, աշխատանքի անվտանգ պայմանների ստեղծման, հիվանդների ժամանակին բուժման և ժառանգական հիվանդությունների կանխման սոցիալ-տնտեսական համալիր միջոցառումների համակարգ, որը մշակում և իրականացնում են պետական իշխանության և կառավարման շահագրգիռ մարմինները հաշմանդամների հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ:

Հաշմանդամության կանխարգելումն իրականացվում է **բժշկական և բժշկամասնագիտական վերականգնման** միջոցով: Բժշկական վերականգնումը տարբեր հիվանդությունների, վնասվածքների, ֆիզիկական, մտավոր և այլ խանգարումների բուժման միջոցառումների համակարգն է հաշմանդամության հանգեցրած խեղումների և հիվանդությունների զարգացումն ու ծանրացումը կանխելու նպատակով: Այս առաքելությունն իրականացնում են Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության համակարգի օղակները, գերատեսչական, ապահովագրական, բարեգործական և այլ բուժական հիմնարկները:

Ինչ վերաբերում է բժշկամասնագիտական վերականգնմանը, ապա այն ուղղված է հաշմանդամների նվազած կամ կորցրած մասնագիտական ֆունկցիաների վերականգնմանը, մասնագիտության ընտրությանն ու դրան ընտելանալու և նախկին կամ նոր մասնագիտությամբ աշխատանքային գործունեությունը վերսկսելը հաշմանդամի համար հնարավոր դարձնելուն:

Հաշմանդամություն երևույթի մի զգալի մասն առաջանում է մարդկանց աշխատանքային գործունեության ոլորտում, երբ

ՍԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

չեն պահպանվում աշխատանքի անվտանգության կանոնները: Այդ է պատճառը, որ ՀՀ աշխատանքային օրենսգիրքը (հոդվ. 243) բոլոր գործատուներին պարտավորեցնում է աշխատանքի ժամանակ յուրաքանչյուր աշխատողի համար ստեղծել պատշաճ, անվտանգ և առողջության համար անվնաս պայմաններ:

Հաշմանդամության կանխարգելման, մատաղ սերնդի առողջության պահպանման նկատառումներով արգելվում է մինչև տասնութ տարեկան անձանց աշխատանքը հետևյալ ոլորտներում՝

- ծանր աշխատանքներ,
- թունավոր քաղցկեղածին կամ առողջության համար վտանգավոր գործոնների ազդեցության արտադրություններում աշխատանքներ,
- աշխատանքներ, որոնց կատարման ժամանակ հանարավոր է իոնացված ռադիոակտիվ ազդեցություն,
- աշխատանքներ, որոնց կատարման ժամանակ առկա է դժբախտ պատահարների կամ մասնագիտական հիվանդություններով հիվանդանալու մեծ հավանականություն,
- աշխատանքներ, որոնց անվտանգ իրականացումը պահանջում է բարձր զգոնություն կամ փորձառություն⁶:

Աշխատավայրերում դժբախտ պատահարների կամ սուր հիվանդությունների առաջացման դեպքերում գործատուն պարտավոր է աշխատողներին ապահովել առաջին բժշկական օգնությամբ: Աշխատանքի վայրում հիվանդացած կամ վնասվածքներ ստացած աշխատողի տեղափոխումն առողջապահական կազմակերպություն իր միջոցների հաշվին կազմակերպում է գործատուն:

Սակայն փորձը ցույց է տալիս, որ աշխատանքային պարտականությունների կատարման ժամանակ խեղումների, մասնագիտական պարտականությունները կա-

տարելիս վնասվելու հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման խնդիրը դեռևս հեռու է բավարար լինելուց: Ասվածը կարելի է հիմնավորել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի 2007 թ. տարեկան զեկույցում⁶ տեղ գտած վիճակագրությամբ, համաձայն որի՝ նշված հարցով նրան դիմել է մոտ 250 քաղաքացի: Մարդու իրավունքների պաշտպանին հասցեագրած դիմումների շարքում առանձնակի ուշադրության են արժանացել այնպիսիք, որոնք վերաբերում են կազմակերպության լուծարման հետևանքով քաղաքացիների աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության և առողջության այլ վնասման հետևանքով պատճառված վնասի փոխհատուցման մերժման հարցերին: Համաձայն ՀՀ կառավարության 1992թ. նոյեմբերի 15-ի թիվ 579 որոշման 16-րդ կետի՝ կազմակերպության լուծարման կամ վերակառուցման հետևանքով նրա գործունեության դադարեցման դեպքում վնասը փոխհատուցում է նրա իրավահաջորդը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ սոցիալական ապահովության մարմինը՝ պետական բյուջեի միջոցների հաշվին: 1999թ. ուժի մեջ մտած ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1086-րդ հոդվածը նույն հարցի կապակցությամբ սահմանել է, որ կյանքին կամ առողջությանը պատճառված վնասի համար սահմանված կարգով պատասխանատու ճանաչված իրավաբանական անձի լուծարման դեպքում համապատասխան վճարներն օրենքով կամ այլ իրավական ակտերով սահմանված կանոններով կապիտալացվում են՝ դրանք տուժողին վճարելու համար:

Կազմակերպության լուծարման և նրա գործունեության դադարեցման դեպքում աշխատանքային խեղման հետևանքով աշխատողներին պատճառված վնասի փոխհատուցման հարցը ներկայումս ՀՀ օրենսդրությամբ կարգավորված չէ: Այսինքն՝ կարգավորված չեն այն հարցերը,

թե որ մարմինը պետք է վճարի այդ փոխհատուցման գումարները, որտեղ և ինչ եղանակով պետք է կուտակվեն և բաշխվեն կապիտալացված միջոցները և այլն: Կարելի է կարծել, որ օրենքով կամ կառավարության որոշմամբ պետք է սահմանվի կարգ, որի համաձայն կիստակեցվեն աշխատանքային պարտականությունների կատարման ժամանակ խեղում ստացած քաղաքացիներին փոխհատուցում տրամադրելու կառուցակարգերն այն դեպքում, երբ կազմակերպության գործունեությունը դադարել է լուծարմամբ:

Հաշմանդամների իրավունքների իրականացման և հասարակական կյանքին լիարժեք մասնակցությունն ապահովելու համար առավել կարևորվում են սոցիալական, տնտեսական և բարոյա հոգեբանական երաշխիքները, հակառակ դեպքում նրանք կհայտնվեն **կյանքի դժվարին իրավիճակում**: Վերջինիս սահմանումը տրված է «Սոցիալական աջակցության մասին»⁷ ՀՀ օրենքով, համաձայն որի՝ **կյանքի դժվարին իրավիճակը հաշմանդամության հետ կապված ինքնասպասարկման ունակությունների կորստի, հիվանդության, առանձրի մնալու, աղքատության, երկարատև գործազրկության, ընտանեկան կոնֆլիկտների, դաժան վերաբերմունքի, բռնության ենթարկվելու, անօգնականության, միայնակության, սոցիալական մեկուսացման, դժբախտ պատահարի կամ արտակարգ իրավիճակներում հայտնվելու հետևանքով մարդու կենսագործունեությանը խանգարող օբյեկտիվ իրավիճակ է, որն անձն ինքնուրույն հաղթահարել չի կարող**: Այդ է պատճառը, որ հատկապես հաշմանդամի կարգավիճակ ունեցող անձանց իրավունքները կյանքում իրագործելու համար անհրաժեշտ են սոցիալ-տնտեսական և կազմակերպական երաշխիքներ: Իհարկե այդ երաշխիքների արդյունավետությունը կարող է պայմանավորված լինել նաև որոշակի օբյեկտիվ հանգամանքներով, որպիսիք են պետության տնտեսության փաստացի վիճակը, ինչպես նաև հասարակության մեջ

ընթացող ժողովրդավարական գործընթացները:

Հաշմանդամների իրավունքների ապահովման նպատակով «Սոցիալական աջակցության մասին» ՀՀ օրենքը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին պարտավորեցնում է սոցիալական ծառայությունների միջոցով լուծել հաշմանդամների և այլ խոցելի խավերի անհետաձգելի, տարրական, նվազագույն խնդիրները:

Սոցիալական աջակցությունն իր մեջ ներառում է սոցիալական ծառայությունների համակցություն (խնամք, սննդի կազմակերպում, բժշկական, իրավական, սոցիալ-հոգեբանական և բնական ձևերի օգնություն ստանալուն աջակցություն, մասնագիտական պատրաստման, զբաղվածության, ժամանցի կազմակերպման հարցում օգնություն), որը տրամադրվում է հաշմանդամներին իրենց տանը կամ այլ սոցիալական ապահովության հաստատություններում՝ անկախ սեփականության ձևից:

Սոցիալական աջակցության հիմնական նպատակն է բավարարել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված անձի հիմնական պահանջները, ստեղծել պայմաններ հասարակության մեջ ինտեգրվելու համար, նպաստել նրանց ինքնօգնության և ծագած հիմնախնդիրներն ինքնուրույն լուծելու ունակությունների զարգացմանը, կանխարգելել նրանց սոցիալական մեկուսացումը, ինչպես նաև օժանդակել նրանց սոցիալական, ֆինանսական խնդիրների լուծմանը:

Հաշմանդամների սոցիալական սպասարկման ոլորտի գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով, կարծում ենք, Հայաստանի Հանրապետությունը (ինչպես նաև ցանկացած իշխանություն) պետք է հենվի հետևյալ սկզբունքների վրա՝

- մարդու և քաղաքացու իրավունքների ապահովում և պահպանում,

- սոցիալական սպասարկման ոլորտում

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ

պետական երաշխիքների տրամադրում,

- սոցիալական ծառայություններ ստանալիս հաշմանդամների համար հավասար հնարավորությունների ապահովում և դրանց մատչելիություն,

- հաշմանդամներին բոլոր տեսակի սոցիալական ծառայությունների տրամադրման համարժեքություն և շարունակականության ապահովում,

- սոցիալական սպասարկման ժամանակ հաշմանդամների անհատական պահանջմունքների հաշվառում,

- հասարակության մեջ հաշմանդամների ադապտացիային ուղղված միջոցների առաջնայնություն,

- հաշմանդամների սոցիալական աջակցության ոլորտում նրանց իրավունքների իրականացման ժամանակ պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և դրանց պաշտոնատար անձանց պատասխանատվություն:

Հասարակության կյանքին հաշմանդամների ինտեգրման և նրանց համար արժանավայել կենսապայմաններ ապահովելու համար ամենաառաջնահերթ խնդիրը նրանց զբաղվածության հիմնահարցի լուծումն է: Հանրապետության Հիմնական օրենքը չի ամրագրում աշխատանքի իրավունքը, որը կպարտավորեցներ պետությանը անձին, քաղաքացուն ապահովել իր մասնագիտական որակին, կրթությանը համապատասխան աշխատանքով: Այն ամրագրում է ընդամենը աշխատանքի ընտրության ազատությունը, ինչը նշանակում է, որ յուրաքանչյուր ոք ազատորեն ընտրում է իր մասնագիտությունը և զբաղմունքի տեսակը: Սակայն պետությունը հաշմանդամների ստեղծագործական և արտադրական ընդունակությունների իրականացման նպատակով ապահովում է նրանց աշխատանքի սովորական պայմաններ ունեցող ձեռնարկություններում, հիմնարկներում և կազմակերպություններում,

իսկ հաշմանդամների աշխատանքը կիրառող մասնագիտացված ձեռնարկություններում, արտադրամասերում և տեղամասերում աշխատելու, ինչպես նաև ձեռնարկատիրական և օրենքով չարգելված այլ գործունեությամբ զբաղվելու իրավունքով: Նշված իրավունքի երաշխավորման նպատակով անթույլատրելի է համարվում հաշմանդամության պատճառով նրա հետ աշխատանքային պայմանագրի կնքման կամ պաշտոնի բարձրացման մերժումը, ադմինիստրացիայի նախաձեռնությամբ աշխատանքից հեռացումը կամ այլ աշխատանքի փոխադրումը, բացառությամբ այն դեպքերի, երբ բժշկաաշխատանքային փորձաքննության մարմինների եզրակացությամբ նրա առողջական վիճակը խոչընդոտում է մասնագիտական պարտականությունների կատարմանը կամ սպառնում է այլ անձանց առողջությանը և աշխատանքի անվտանգությանը:

Աշխատանքային իրավունքի երաշխիքների հետ մեկտեղ պետությունն ապահովում է նաև զբաղվածության երաշխիքներով, որոնք դրսևորվում են.

ա) հաշմանդամների աշխատուժն օգտագործող կազմակերպությունների, հիմնարկների, ինչպես նաև հաշմանդամների հասարակական կազմակերպությունների նկատմամբ արտոնյալ ֆինանսատնտեսական քաղաքականության իրականացմամբ,

բ) կազմակերպություններում հաշմանդամներին աշխատանքի ընդունելու համար քվոտաների և հաշմանդամների համար՝ օրենսդրությամբ սահմանված միջոցառումների իրականացմամբ,

գ) հաշմանդամներին առավել համապատասխանող մասնագիտություններով աշխատանքային տեղերի վերապահմամբ,

դ) հաշմանդամների համար լրացուցիչ աշխատատեղերի ստեղծման խրախուսմամբ:

«Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության մասին»⁸ ՀՀ օրենքը (20-

րդ հողվ.) հաշմանդամներին դատում է աշխատաշուկայում անմրցունակ խմբերի շարքը և նրանց տալիս սոցիալական պաշտպանության լրացուցիչ երաշխիքներ: Մասնավորապես, զբաղվածության պետական ծառայությունը հաշմանդամների զբաղվածության ապահովման նպատակով մշակում և իրականացնում է մասնագիտական ուսուցման, ինչպես նաև աշխատանքի տեղավորման աջակցության նպատակով աշխատավարձի փոխհատուցման ծրագրեր:

Զբաղվածության ոլորտում ներգրավված հաշմանդամներին օրենսդրությամբ տրամադրվում են աշխատանքի որոշակի արտոնյալ պայմաններ: Այսպես, հաշմանդամի ներգրավումն արտաժամյա, ոչ աշխատանքային օրերի կամ գիշերային աշխատանքներում թույլատրվում է միայն նրանց համաձայնությամբ և պայմանով, եթե նման աշխատանքները բժշկական եզրակացությամբ նրանց արգելված չեն: Բացի այդ, 1-ին և 2-րդ խմբերի հաշմանդամների համար սահմանվում է աշխատաժամերի կրճատված տևողություն՝ շաբաթական 36 ժամից ոչ ավելի: Հաշմանդամների պահանջով և վերականգնման անհատական ծրագրերին համապատասխան գործատուն պարտավոր է նրանց համար սահմանել ոչ լրիվ աշխատանքային օր կամ ոչ լրիվ աշխատանքային շաբաթ: Նման դեպքերում հաշմանդամների աշխատանքի վարձատրությունը կատարվում է՝ ելնելով փաստացի աշխատած աշխատաժամանակից կամ թողարկած արտադրանքի քանակից: Աշխատանքի ընդունելիս հաշմանդամների համար փորձաշրջան չի սահմանվում: Աշխատողների թվի կամ հաստիքների կրճատման ժամանակ աշխատանքի հավասար արտադրողականության և նույն որակավորման դեպքում հաշմանդամներն օգտվում են աշխատանքում մնալու առավելությունից:

Ինչպես երևում է շարադրվածից, ՀՀ օրենսդրությամբ նախատեսված մեծաթիվ երաշխիքները վերաբերում են բացառա-

պես զբաղվածության ոլորտում ներգրավված հաշմանդամներին: Մինչդեռ մեր երկրի օրենսդրության մեջ բացակայում են հաշմանդամներին աշխատատեղերով ապահովելու երաշխիքները: Այդ պատճառով էլ հանրապետությունում գործազուրկների շարքում մեծ տեղ են զբաղեցնում հաշմանդամները: Արդյունքում ունենում ենք իրավիճակ, երբ օրենսդրությամբ ամրագրված բազմաթիվ երաշխիքները դառնում են անիմաստ, քանի որ զբաղվածության ոլորտում գրեթե բացակայում են հաշմանդամները: Խնդիրն այն է, որ ՀՀ օրենսդրության մեջ բացակայում են այնպիսի նորմեր, որոնք գործատուների համար նախատեսեն համապատասխան պարտադիր քվոտաներ հաշմանդամներին աշխատանքով ապահովելու համար: Այդ քվոտաների հետ մեկտեղ պետությունը պետք է գործատուների համար նախատեսի որոշակի հարկային արտոնություններ, որպեսզի այդ հանգամանքը խթանի նրանց՝ ապահովելու հաշմանդամների զբաղվածության խնդիրը:

Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածության հարցը լուրջ խնդիր է հարուցում նաև այն պատճառով, որ բժշկասոցիալական փորձաքննության ոլորտում իրավասու պետական մարմնից հաշմանդամներին տրվող անաշխատունակության թերթիկը խոչընդոտում է նրանց գրանցվելու զբաղվածության պետական ծառայությունում: Հարցի լուծման կապակցությամբ, մեր կարծիքով, նպատակահարմար է հաշմանդամին տրվող փաստաթղթում անպայման ունենալ հատուկ նշումների հատված, որտեղ կարող է կատարվել հետևյալ նշումը. «Աշխատունակ է համապատասխան պայմաններ ստեղծելու դեպքում»:

Հաշմանդամություն ունեցող անձանց համար մեր երկրում շարունակում է լուրջ հիմնախնդիր հանդիսանալ վերջիններիս տեղաշարժման հարցը: Խնդիրն այն է, որ հասարակական տրանսպորտը մատչելի չէ հաշմանդամություն ունեցող անձանց հա-

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՍԲԻՈՆ

մար: Այս առումով նպատակահարմար է, մեր կարծիքով, երթուղիների համար հայտարարվող նրցույթին մասնակցելու համար, որպես պարտադիր նախապայման սահմանվեն որոշակի քվոտաներ այն հայտատուի համար, որը հաշմանդամու-

յուն ունեցող անձանց սպասարկելու հարմարություն կունենա: Առանց համապատասխան քվոտաների առկայության թույլ չտալ տրանսպորտային միջոցները մտնեն երթուղի: Սահմանված կարգի խախտման համար ՀՀ օրենսդրությամբ կարելի է նախատեսել վարչական պատասխանատվություն:

¹ Մանրամասն տե՛ս Վ. Այվազյան, Մարդու իրավունքներ, ուսումնական ձեռնարկ բուհերի համար, Երևան, 2007, էջ 198-202:

² Տե՛ս www.un.org:

³ Տե՛ս www.mss.am:

⁴ Ընդունվել է 14.04.1993 թ., ՀՀԳԽՏ 1993/10:

⁵ Տե՛ս Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 257-րդ հոդվածը: ՀՀԳՏ 21.12.04./69(368):

⁶ Տարեկան զեկույց 2007 թ. ընթացքում ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանի գործունեության և երկրում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների խախտման մասին, Երևան 2008:

⁷ Ընդունվել է 24.10.2005 թ., ՀՀԳՏ 07.12.05/75(447):

⁸ Ընդունվել է 24.10.2005, ՀՀԳՏ 07.12.05/75(447):

ԲՈՆԱԲԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Գևորգ ԻՍԻԱՅԵԼՅԱՆ

ՀՀ սարիկանության

սկզբնախաղի սասիրաներ

Սեռական հանցագործությունների տեսակներից է բռնաբարությունը, որի համար պատասխանատվություն է նախատեսում ՀՀ քրեական օրենսգրքի 138 հոդվածը: Բռնաբարության հանրային բարձր վտանգավորության մասին են վկայում այն կատարելու համար օրենսդրի կողմից սահմանված խիստ սանկցիաները: Ըստ այդմ, բռնաբարությունը դասվում է ծանր, իսկ նրա որակյալ տեսակներից մեկը՝ դեռահասի բռնաբարությունը, առանձնապես ծանր հանցագործությունների շարքին:

Վերոհիշյալ հոդվածի դիսպոզիցիայի վերլուծությունը հնարավորություն է տալիս առանձնացնելու բռնաբարության հետևյալ հիմնական հատկանիշները.

1. Բռնաբարությունից տուժող կարող է լինել միայն կինը. հետևաբար, եթե սեքսուալ բնույթի բռնի գործողություններ կատարվել են արական սեռի ներկայացուցչի նկատմամբ, արարքը ՀՀ քրեական օրենսգրքի 138 հոդվածով չի կարող որակվել:

2. Բռնաբարության սուբյեկտ կարող է լինել միայն տղամարդը. ուստի, եթե հանցանքի կատարմանը մասնակցում է իգական սեռի ներկայացուցիչ, ապա նա կարող է համարվել միայն որպես կազմակերպիչ, դրդիչ կամ օժանդակող:

3. Բռնաբարությունը դրսևորվում է սեռական հարաբերության իրականացմամբ:

4. Բռնաբարությունը կատարվում է կնոջ կամքին հակառակ, նրա կամ այլ անձի նկատմամբ բռնություն գործադրելով կամ դրա սպառնալիքով կամ տուժողի անօգնական վիճակն օգտագործելով:

Կոնկրետ հանցագործության վերլուծությունն ավանդաբար սկսվում է դրա անմիջական օբյեկտի վերլուծությունից: Մեզ համար մատչելի մասնագիտական գրա-

կանության մեջ միասնական մոտեցում չի ձևավորվել բռնաբարության անմիջական օբյեկտի վերաբերյալ: Կարծում ենք, որ բռնաբարության անմիջական օբյեկտը չափահաս կնոջ սեռական ազատության կամ սեռական անձեռնմխելիության (անօգնական վիճակն օգտագործելու դեպքում), իսկ անչափահասի կամ դեռահասի նկատմամբ կատարվելու դեպքում՝ սեռական անձեռնմխելիությունից բացի նաև նրանց սեռական, ֆիզիկական ու բարոյական զարգացման ապահովմանն ուղղված հարաբերություններն են: Որպես լրացուցիչ օբյեկտ կարելի է դիտարկել կնոջ կյանքի և առողջության, պատվի և արժանապատվության ապահովմանն ուղղված հարաբերությունները:

Օբյեկտիվ կողմից բռնաբարությունը դրսևորվում է երկու տեսակի գործողություններով՝ 1) սեռական հարաբերությամբ և 2) բռնություն գործադրելով կամ դրա սպառնալիքով կամ կնոջ անօգնական վիճակն օգտագործելով:

Սեռական հարաբերությունը ֆիզիոլոգիական ակտ է՝ ուղղված ցեղի շարունակությանը, որը դրսևորվում է տղամարդու առնանդամը կնոջ հեշտոցի մեջ մտցնելով: Սեռական հարաբերությունը որպես նորմալ, այսինքն՝ ֆիզիոլոգիական ակտ, կարող է կատարվել տարբեր սեռերի անձանց՝ տղամարդու և կնոջ միջև: Այլ ձևերով սեռական պահանջմունքի բավարարմանն ուղղված մյուս բոլոր գործողությունները սեռական հարաբերություն չեն: Գիտական տեսանկյունից սեռական հարաբերության բնորոշ հատկանիշը տղամարդու և կնոջ սեռական օրգանների միավորումն է (շփումը)¹: Այսպիսով, նույն սեռին պատկանող անձանց միջև տարբեր եղանակներով իրականացվող սեռական շփումները սեռական հարաբերություն անվանելը ճիշտ չի լինի: Այս դրույթի օրենսդրական ձևակերպմանը կարելի է հանդիպել նաև ՀՀ քրեական օրենսգրքի 18-րդ գլխի (սեռական անձեռնմխելիության և սեռական ազա-

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՍԲԻՈՆ

տության դեմ ուղղված հանցագործություններ) հողվածներում, որոնց վերլուծությունը ցույց է տալիս, որ սեռական հարաբերություն ասելով՝ պետք է հասկանալ տղամարդու և կնոջ միջև սեռական շփումը բնական եղանակով:

Բռնաբարության մասին կարող է խոսք լինել միայն այն դեպքում, երբ բացակայել է տուժողի՝ սեռական գործողություններ կատարելու համաձայնությունը: Կնոջ՝ սեռական հարաբերության մեջ մտնելու համաձայնությունը կարող է դրսևորվել.

1) իրական համաձայնություն կամ սեռական ակտին գիտակցաբար մասնակցություն,

2) ինպուլսիվ համաձայնություն կամ սեռական ակտ, որին հավանություն է տրվել տվյալ պահին, իսկ ավելի ուշ կատարվածի համար առաջացել է զղջում, ստորացման և մեղքի զգացում,

3) պասիվ համաձայնություն, երբ տուժողը չի ցանկանում, բայց չի էլ խոչընդոտում ակտին, ինչը մյուսի կողմից գնահատվում է որպես համաձայնության դրսևորում:

Սեռական հարաբերության մեջ մտնելու կամավորությունը պայմանավորված է նաև այլ հանգամանքներով: Բանն այն է, որ սեքսալոգիայում կոպուլյատիվ ցիկլ (սեռական հարաբերություն, կենսակցություն և այլն) կոչվող գործընթացը նախատեսում է տղամարդու և կնոջ փոխադարձ, հավասարարժեք և հավասարազոր մասնակցություն: Դրա նախապատրաստումն ու իրականացումը պայմանավորված են որոշակի հոգեբանական, ֆիզիոլոգիական և վարքային հատկանիշների առկայությամբ և փոխազդեցությամբ: Դրանց խախտման (բացակայության) դեպքում բացակայում է բուն գործընթացը: Սեռական հարաբերությունը՝ որպես զույգակատար սեռական ակտ, կարելի է համարել նորմային համապատասխանող, եթե ոչ միայն տղամարդը, այլև կինը անցնում են նախաիմիսիոն (սեռական գրգռման) փուլերը՝ կապված նա-

խապատրաստական ընթացաշրջանի հետ: Հենց այս ընթացաշրջանում է կինը կատարում իր ընտրությունը՝ համաձայնելով կամ չհամաձայնելով մտնել սեռական հարաբերության մեջ:

Այժմ անդրադառնանք բռնաբարության օբյեկտիվ կողմը բնութագրող մյուս հատկանիշներին:

Ֆիզիկական բռնությունը մեկ այլ մարդու օրգանիզմի վրա հանրորեն վտանգավոր հակաիրավական ներգործությունն է, որն իրականացվում է նրա կամքին հակառակ: Այն կարող է դրսևորվել անձին հարվածներ հասցնելով, ծեծելով, մարմնական վնասվածքներ պատճառելով կամ այլ ներգործությամբ՝ ֆիզիկական ուժ, սառը զենք, հրազեն կամ այլ առարկաներ, հեղուկներ՝ թթվուտ, եփջուր և սորուն նյութեր գործադրելով: Ֆիզիկական բռնություն պետք է համարել նաև տուժողի ներքին օրգանների վրա ներգործությունն առանց արտաքին հյուսվածքների վնասման՝ արբեցնող նյութերով թունավորման կամ խմեցնելու միջոցով: Եթե մեղավորը նշված նյութերը մտցրել է տուժողի օրգանիզմ նրա կամքին հակառակ (բռնություն գործադրելով, տուժողից աննկատ), ապա նրան մեղսայնացվում է երկու հատկանիշ՝ բռնության գործադրում և տուժողի անօգնական վիճակի օգտագործում:

Ընդհանուր առմամբ համակարծիք լինելով նշվածի հետ՝ կարծում ենք, որ երկու հատկանիշները կարելի է մեղսայնացնել հանցավորին միայն այն պարագայում, եթե անօգնական վիճակն առաջացել է թվարկված միջոցների «հյուրասիրությունից», քանի որ հնարավոր են դեպքեր, երբ տուժողն անօգնական վիճակի չհասնի, օրինակ՝ նրա օրգանիզմը սովոր լինի ալկոհոլին:

Ինչպես վերը նշվեց, բռնության միջոցով հաղթահարվում է տուժողի դիմադրությունը, կամ ճնշվում սպասվող կամ ենթադրյալ դիմադրությունը: Դա նշանակում է, որ վերանայման կարիք ունի երկար ժամանակ իրավաբանական գրականության մեջ կարծրացած այն դրույթը, ըստ որի՝ ֆիզիկական բռնություն հասկացությունը

կապվում էր տուժողի ցուցաբերած դիմադրության փաստի հետ: Խնդիրն այն է, որ տուժողը կարող է դադարեցնել դիմադրությունը՝ չօգտագործելով բոլոր հնարավոր միջոցները, ավելի լուրջ բռնության վախից կամ հասկանալով դիմադրության անհիմաստ լինելը (օրինակ՝ երբ սեռական գործողությունների կատարման պահանջը դրվում է անայի վայրում անծանոթ մարդկանց խմբի կողմից): Նա կարող է ընդհանրապես դիմադրության փորձեր չկատարել, քանի որ ֆիզիկական բռնությունը միաժամանակ ներգործում է նաև հոգեկանի վրա, այսինքն՝ բռնությունը կարող է ուղղված լինել ոչ միայն տուժողի դիմադրությունը հաղթահարելուն, այլև դրա նախականմանը: Այլ կերպ ասած՝ տուժողի կամքը կարող է կոտրվել և դիմադրությունը՝ դադարել՝ դեռևս չսկսված: Հոգեբանները պարզել են, որ վախը որոշ մարդկանց ակտիվացնում է, մյուսներին, ընդհակառակը, կաթվածահար անում: Վերջին դեպքում տուժողի կողմից ոչ մի դիմադրություն չի էլ սպասվում: Բացի այդ, ֆիզիկական բռնության առկայության վճռորոշ հիմք պետք է դիտվի ոչ այնքան դիմադրության ինտենսիվությունը, որքան տուժողի վարքագիծը՝ կատարվող գործողությունների սուբյեկտիվ ընկալման տեսակետից, նրա ցանկանալը կամ չցանկանալը մեղավորի հետ սեռական կապի մեջ մտնելու, քանի որ կարծեցյալ դիմադրությունը, որը հաճախ սեռական խաղի տարր է, կարող է բավականին ինտենսիվ լինել⁷:

Կարծում ենք, որ քննարկվող հարցում կարևոր է տուժողի դիմադրության (առկայության դեպքում) իրական լինելը: Ինչպես նշում է սեռական հանցագործությունների հետազոտման խնդրով զբաղված Մ.Ն. Խլինցևը, տուժողի դիմադրությունը պետք է լինի ոչ թե կարծեցյալ, շինծու, այլ իրական: Ուռնձգողի հետ սեռական կապի մեջ մտնելու տուժողի չցանկանալը պետք է արտահայտվի այնպես, որ նրա մեջ կասկածներ չմնան իր ցանկության նկատմամբ տուժողի վերաբերմունքի վերաբերյալ⁸: Դիմադրության իրական լինելու հասկացությունը չպետք է շփոթել դիմադրության

ինտենսիվության և անընդհատության հետ, քանի որ հաճախ իրադրության արտասովորությունը, սեփական կյանքի համար մտավախությունը, սեփական ուժերի և բռնությունը հաղթահարելու հնարավորության նկատմամբ անվստահությունը կարող են կաթվածահար անել տուժողի կամքը և հարկադրել նրան զիջելու հանցավորի նկրտումներին առանց ինտենսիվ դիմադրության⁹: Նաև չի կարելի համաձայնել այն գաղափարի հետ, թե տուժողի դիմադրությունը պետք է տևի մինչև ուժերի սպառվելը կամ գիտակցության կորուստը: Քրեական օրենքը կնոջ սեռական ազատության իրավունքի պաշտպանությունը չի պայմանավորում նրա կողմից համապատասխան դիմադրության ինտենսիվությամբ, քանի որ դա նշված իրավունքը կվերածեր իրավական պատրանքի¹⁰:

Ինչպես վերը նշվեց, ֆիզիկական բռնության գործադրումը կարող է առաջացնել ամենատարբեր հետևանքներ, ուստի անհրաժեշտություն է քննարկել դրանց ճիշտ որակման խնդիրը: ՀՀ քրեական օրենսգրքի դրույթների վերլուծությունը թույլ է տալիս ենթադրելու, որ տուժողի առողջությանը թեթև կամ միջին ծանրության վնաս պատճառելու դեպքում արարքը ենթակա է որակման 138 հոդվածի առաջին մասով: Ընդ որում, կատարված անձի դեմ ուղղված հանցագործությունների վերաբերյալ այլ հոդվածներով լրացուցիչ որակման կարիք չի զգում, քանի որ բռնության գործադրումը և նշված տեսակի վնաս հասցնելը ներառվում են նշված հոդվածի դիսպոզիցիայում: Եթե բռնաբարության ընթացքում տուժողը դիտավորությամբ կյանքից զրկվում է, ապա, կարծում ենք, արարքը պետք է որակել բռնաբարությամբ զուգորդված սպանություն և բռնաբարություն: Նույն կերպ պետք է որակել նաև դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելու դեպքերը: Եթե տուժողին անզգուշությամբ պատճառվել են մահ կամ այլ ծանր հետևանքներ, ապա արարքը պետք է որակվի 138 հոդվածի երկրորդ մասի չորրորդ կետով:

Բռնաբարությունը ենթադրում է ոչ

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՍԲԻՈՆ

միայն ֆիզիկական, այլև հոգեկան բռնության գործադրում, որը՝ որպես տուժողի դիմադրությունը կոտրելու միջոց, դրսևորվում է տուժողի կամ այլ անձանց նկատմամբ ֆիզիկական բռնություն գործադրելու սպառնալիքով: Այլ բնույթի սպառնալիքները չեն ձևավորում բռնաբարության հանցակազմ: Բռնության սպառնալիքն արտահայտվում է ցանկացած տեսակի բռնության՝ ծեծից մինչև սպանության սպառնալիքի գործադրմամբ: Սպառնալիքի դրսևորման ձևը կարող է տարբեր լինել՝ բառեր, ժեստեր, զենքի ցուցադրում և այլն¹¹: Բռնաբարության ժամանակ սպառնալիքը հաճախ գործադրվում է այնպիսի հանգամանքներում, որոնցում տուժողը չի կարող դիմադրություն ցույց տալ հանցագործին, որպեսզի չվտանգի իր և իր հարազատների բարօրությունը և կյանքը¹²:

Սպառնալիքի հիմնական տարրը տուժողին ահաբեկելն է: Ինչպես նշվեց, սպառնալիքը պետք է հասնի ինտենսիվության այնպիսի աստիճանի, որպեսզի հավասարազոր լինի ֆիզիկական բռնությանը, ուստի այն պետք է իրական լինի: Սպառնալիքի իրական լինելը ենթադրում է դրա իրականացման վերաբերյալ տուժողի մեջ հանդիմանական առաջացում, այսինքն՝ տուժողի կողմից այն զնահատվում է որպես իր կամ այլ անձանց մարմնական անձեռնմխելիությանը, կյանքին կամ առողջությանը սպառնացող իրական վտանգ: Սպառնալիքի իրական լինելը զնահատելիս պետք է հիմք ընդունել դրան բնորոշ այն ներքին որակները, որոնք տվյալ տուժողի հոգեկանի վրա ներգործության օբյեկտիվ միջոց են ծառայել: Ընդ որում, չի կարելի հաշվի առնել միայն տուժողի կարծիքը, քանի որ վերջինս ուժեղ ահաբեկության պատճառով կարող է որպես սպառնալիք ընդունել այն գործողությունները, որոնք այդպիսին չեն:

Այդպիսով, սպառնալիքը պետք է իրական լինի, այլ ոչ թե տուժողի երևակայության արդյունք: Բացի այդ, սպառնալիքը

պետք է անմիջական լինի, այսինքն՝ հարկադրի սեռական գործողության անհապաղ կատարման և բովանդակի տուժողի հակագործունեության դեպքում այն միանգամից իրագործելու մեղավորի մտադրությունը¹³: Միաժամանակ նշանակություն չունի՝ մեղավորը իսկապես մտադիր է իրականացնել սպառնալիքը, թե հույսը դրել է միայն հոգեբանական ներգործության վրա¹⁴:

Բռնությունը կամ սպառնալիքը ժամանակային առումով պետք է նախորդեն սեռական հարաբերությանը: Այն դեպքերում, երբ դրանց տեղերը փոխվում են, այսինքն՝ կինը սկզբում կամավոր կատարում է սեռական հարաբերություն, սակայն ինչ-ինչ պատճառներով մեղավորը նրա նկատմամբ գործադրում է բռնություն, կատարվածը պետք է որակվի ըստ փաստացի հետևանքների: Նման կերպ պետք է որակվի նաև տուժողի նկատմամբ բռնության գործադրումը, եթե այն պայմանավորված չէ նրան բռնաբարելու դիտավորությամբ, օրինակ՝ որպես վրեժ՝ սեռական ակտի մեջ մտնելը մերժելու համար¹⁵:

Ինչպես վերը նշվեց, բռնությունը կամ այն գործադրելու սպառնալիքը կարող են ուղղվել տուժողին կամ այլ անձի: «Այլ անձ» հասկացությունը օրենքում չի պարզաբանվում: Մեր կարծիքով, այդպիսիք կարող են լինել ինչպես տուժողի հարազատները, մերձավորները, այնպես էլ ցանկացած այլ անձ, ում վրա ներգործելով՝ հանցավորը ձգտում է ճնշել տուժողի դիմադրությունը:

Բռնաբարությունը պետք է համարվի կնոջ անօգնական վիճակի օգտագործմամբ կատարված այն դեպքերում, երբ տուժողն իր ֆիզիկական կամ հոգեկան վիճակի (դեռահաս տարիք, հոգեկան գործունեության խանգարում, այլ հիվանդագին կամ անգիտակից վիճակ և այլն) հետևանքով չի կարողացել ըմբռնել իր հետ կատարվող գործողությունների բնույթը և նշանակությունը կամ ֆիզիկապես ի վիճակի չի եղել հանցավորին դիմադրություն ցուցաբերել, իսկ վերջինս գիտակցել է, որ տուժողը գտնվում է հենց այդպիսի վիճա-

կում¹⁶: Ըստ տուժողի անօգնականության բնույթի քննարկվող վիճակը կարելի է դասակարգել երկու տեսակի՝ հոգեկան անօգնական վիճակ, որի դեպքում տուժողը չի հասկանում իր հետ կատարվող սեռական ակտի նշանակությունը (հոգեկան հիվանդությունը, անգիտակից վիճակը, փոքր տարիքը), և ֆիզիկական անօգնական վիճակ, որի դեպքում տուժողը թեև հասկանում է, որ իր հետ սեռական ակտ են կատարում, սակայն ի վիճակի չէ դրան դիմադրել (հոգեկան գործունեության խանգարման հետ չկապված հիվանդություն, ֆիզիկական թերություններ և այլն)¹⁷:

Տուժողի մոտ հոգեկան հիվանդության առկայությունը միշտ չէ, որ հանգեցնում է անօգնական վիճակի: Հոգեկան հիվանդության որոշ տեսակների առկայության դեպքում հիվանդները կարող են գիտակցել իրենց հետ կատարվող սեռական գործողությունները և ցուցաբերել լուրջ դիմադրություն: Որոշ դեպքերում հոգեկան հիվանդությունները կարող են ուղեկցվել բարձր սեռական հակվածության և գրգռման ախտանշաններով, ինչի պատճառով հիվանդներն իրենք են հակում իրենց հետ սեռական հարաբերության¹⁸: Նման դեպքերում կատարվածին իրավաբանական զնահատական տալու համար վճռական նշանակություն ունի մեղավորի սուբյեկտիվ վերաբերմունքն իր կատարած գործողությունների նկատմամբ: Հոգեկան հիվանդ կնոջ հետ առանց բռնության կատարված սեռական հարաբերությունը կարող է դիտարկվել որպես տուժողի անօգնական վիճակն օգտագործելով բռնաբարություն միայն այն դեպքում, եթե հանցավորն ինացել է տուժողի հոգեկան հիվանդության մասին և գիտակցաբար օգտագործել է նրա՝ իրադարձությունը ճիշտ գիտակցելու և զնահատելու անկարողությունը¹⁹:

Հոգեկան անօգնականությունը կարող է պայմանավորված լինել նաև տարբեր տեսակի ժամանակավոր բնույթ կրող անգիտակից վիճակներով: Դրանցից է քնած վիճակում գտնվելը: Դատական բժիշկները կարծում են, որ քնի ժամանակ կարելի է

բռնաբարել միայն այն կնոջը, ով մինչ այդ չի ապրել սեռական կյանքով: Ընդ որում, սեռական ակտը կարող է միայն սկսվել, իսկ հետո կինը, եթե հարբած վիճակում կամ քնաբեր միջոցների ազդեցության տակ չէ, պարտադիր արթնանում է: Բացի դրանից, արթնանալով՝ նա չի կարող միանգամից հասկանալ, թե ինչ է կատարվում, որի պատճառով էլ նրա դիմադրությունը նվազ ինտենսիվ է: Նշվածից պետք է հանգել այն եզրակացության, որ սկզբունքորեն հնարավոր է բռնաբարել ցանկացած քնած կնոջ, քանի որ ավարտված բռնաբարության հանցակազմի համար չի պահանջվում լրիվ սեռական հարաբերության լրիվ կատարում, ուստի բավական է միայն սկսելը²⁰:

Ժամանակավոր անգիտակից վիճակների թվին է դասվում նաև հիպնոսի վիճակը: Իրավաբանական տեսանկյունից հիպնոսը մարդուն իր կամքին հակառակ ապօրինի անօգնական վիճակի դիտավորությամբ հասցնելն է՝ նրա հոգեկանի վրա ներգործության միջոցով: Ըստ բժիշկ-հոգեբանների՝ հիպնոսը հոգեկանի ժամանակավոր քնանման վիճակ է, որը բնութագրվում է գիտակցության և ինքնագիտակցության կտրուկ նեղացմամբ, ներշնչման բովանդակության վրա դրա կենտրոնացմամբ, որը պայմանավորված է անհատական վերահսկողության գործառույթի փոփոխությամբ: Այդպիսով, հիպնոսի էությունը բնորոշող կարևոր որակը հիպնոտիկ քնի (տրանս) վիճակի ձևավորումն է՝ որպես գիտակցության փոփոխության յուրահատուկ տեսակ: Մասնագիտական գրականության մեջ կարելի է հանդիպել վեճեր առ այն, թե հնարավոր է արդյոք անձին հիպնոսացնել նրա կամքին հակառակ: Այսպես, ֆրանսիացի գիտնական Գ. Բերնգեյմը պնդում էր, թե ոչ ոքի հնարավոր չէ քնեցնել իր կամքին հակառակ: Ռուս հանրահայտ գիտնականներ Վ.Մ. Բեխտերևի, Կ.Ի. Պլատոնովի, Ի.Պ. Պավլովի գիտական հետազոտությունները վկայում են, որ համապատասխան պայմանների առկայության դեպքում (հիպնոս իրականացնողի հոգետեխնիկայի վարպետությունը, հիպնոսի են-

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՍԲԻՈՆ

թարկվող անձի հոգեֆիզիոլոգիայի նախատրամադրվածությունը ներշնչմանը և այլն) դա հնարավոր է: Նման վիճակում կարող են կատարել տարբեր հանցանքներ, մասնավորապես՝ բռնաբարություններ: 19-րդ դարի վերջին Ռ. Կրաֆտ-Էբինգը դատական հոգեպաթոլոգիայի իր ձեռնարկում բերել է հիպնոսի միջոցով կատարված բռնաբարությունների բազմաթիվ օրինակներ: Նա նշում էր, որ հիպնոսի կիրառմամբ առաջացած լեթարգիկ քնի վիճակում գտնվող կնոջ բռնաբարությունը հեշտությամբ հնարավոր է իրականացնել, քանի որ այդ վիճակում տեղի է ունենում կամքի և գիտակցության լրիվ կորուստ: Բացի այդ, նշված վիճակն օգտագործելով՝ հանցավորը կարող է նաև ներշնչմամբ հիպնոսացված կնոջ մեջ կեղծ պատկերացում առաջացնել, թե, իբր, տվյալ պահին նա գործ ունի իր ամուսնու կամ սիրեկանի հետ²¹:

Հոգեկան անօգնական վիճակի օգտագործմամբ բռնաբարությանն առնչվող կարևոր հարցերից է տուժողի հարբածությունը: Մասնագիտական գրականության մեջ այս հարցի կապակցությամբ նշվում է, որ հարբածության ծանր աստիճանը տուժողին կարող է զրկել իր հանդեպ կատարվող արարքը զնահատելու ունակությունից և հանցավորին դիմադրելու հնարավորությունից²²: Ուստի հոգեկան անօգնական վիճակը բացակայում է, եթե հարբածությունը չի զրկել տուժողին իրադրությունը գիտակցելու, հանցավորի կողմից կատարվող գործողությունների նշանակությունը հասկանալու կամ նրան դիմադրություն ցուցաբերելու հնարավորությունից: Սակայն, մեր կարծիքով, դա չի բացառում ծանր հարբածության ազդեցության տակ ֆիզիկական անօգնականության առաջացման հնարավորությունը:

Հարկ ենք համարում անդրադառնալ նաև, այսպես կոչված, տարիքային անօգնականության հարցին: Այս առումով կարծում ենք, որ չի կարելի ճիշտ համարել տասնչորս տարին չլրացած տուժողի հետ

սեռական հարաբերությունը բոլոր դեպքերում որպես տուժողի անօգնական վիճակի օգտագործմամբ բռնաբարություն որակելը, քանի որ 12-14 տարեկան հասակում աղջիկները կարող են լիովին կողմնորոշվել սեռական կյանքի հարցերում: Հետևաբար, «տարիք-անօգնական վիճակ» իրավաբանական նշանակություն ունեցող հարաբերակցությունն անհրաժեշտ է որոշել յուրաքանչյուր կոնկրետ դեպքում՝ հաշվի առնելով տուժողի մտավոր և ֆիզիկական զարգացման և սեռերի փոխհարաբերության հարցերում նրանց տեղեկացվածության աստիճանը²³:

Ֆիզիկական անօգնական վիճակին բնութագրական են տուժողի ֆիզիկական այնպիսի հատկությունները, որոնք նրան զրկում են դիմադրելու հնարավորությունից: Օրինակ՝ մասնակի անդամալուծությունը, բարձր ջերմաստիճանը, ֆիզիկական այլ թերությունները (խուլ և համր, կուրություն, ձեռքի կամ ոտքի բացակայություն) և այլն: Առանձին դեպքերում հանգամանքները կարող են դասավորվել այնպես, որ տուժողն անկախ իր կամքից, առանց մեղավորի միջամտության հայտնվի սեռական հանցագործության կատարման համար նպաստավոր վիճակում: Այսպես, տուժողը մեղավորի հետ ուղևորվում էր սայլով, երբ հանկարծակի ընկավ տեղափոխվող բարձերի և ծղոտի միջև, ինչը հնարավորություն տվեց մեղավորին սեռական ակտ կատարել, քանի որ տուժողը չէր կարող մեջքի վրա պառկած դիրքից բարձրանալ²⁴:

ՀՀ քրեական օրենսգրքի 138 հոդվածի վերլուծությունը ցույց է տալիս, որ բռնաբարությունը նախատեսված է ձևական հանցակազմով: Ուստի քննարկվող հանցատեսակը պետք է համարել ավարտված սեռական հարաբերությունը սկսելու պահից:

Ստորև կանդրադառնանք բռնաբարության սուբյեկտիվ հատկանիշներին:

ՀՀ քրեական օրենսգրքի 138 հոդվածում ուղղակիորեն նախատեսված է, որ բռնաբարության սուբյեկտ կարող է հանես գալ միայն տղամարդը, այսինքն՝ տվյալ

դեպքում առկա է հատուկ սուբյեկտ: Բնական է, նա պետք է օժտված լինի մեղսունակությամբ: Ինչ վերաբերում է սուբյեկտի տարիքին, ապա քրեական օրենսգրքի 24 հոդվածի երկրորդ մասի վերլուծությունը ցույց է տալիս, որ բռնաբարության համար պատասխանատվության կարող է ենթարկվել այն անձը, ում տասնչորս տարին լրացել է մինչև հանցանքը կատարելը:

Սուբյեկտիվ կողմից բռնաբարությունը դրսևորվում է միայն ուղղակի դիտավորությամբ: Հանցավորը գիտակցում է, որ կնոջ կամքին հակառակ նրա հետ իրականացնում է սեռական հարաբերություն՝ տուժողի կամ այլ անձի նկատմամբ բռնություն

գործադրելով կամ դրա սպառնալիքով կամ կնոջ անօգնական վիճակն օգտագործելով, և ցանկանում է դա: Այս հանցանքի դրդապատճառները տարբեր են: Ավելի հաճախ հանդիպում է սեռական շարժառիթը՝ սեռական պահանջմունքը բավարարելու դրդապատճառը: Կարող են առկա լինել նաև խուլիգանական, վրեժի և այլ շարժառիթներ:

Այսպիսով, բռնաբարությունների քրեաիրավական որակման արդյունավետության ապահովման առումով յուրաքանչյուր կոնկրետ դեպքում անհրաժեշտ է հաշվի առնել վերը քննարկված օբյեկտիվ և սուբյեկտիվ բոլոր հանգամանքները:

¹ Տե՛ս Могачев М.И. Серийные изнасилования. М., 2003, էջ 98:

² Տե՛ս նույն տեղում, էջ 89:

³ Տե՛ս նույն տեղում, էջ 103:

⁴ Տե՛ս Гаухман Л.Д. Насилие как средство совершения преступления. М., 1974, էջ 3:

⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 76:

⁶ Տե՛ս Головлев Ю.В. Уголовная ответственность за изнасилование: проблемы квалификации и применения // Закон и право, N 10, 2004, էջ 37:

⁷ Տե՛ս Озова Н.А. Насильственные действия сексуального характера, էջեր 52-53:

⁸ Տե՛ս Хлынцев М.Н. Расследование половых преступлений. Саратов, 1965, էջ 6:

⁹ Տե՛ս Хлынцев М.Н. Борьба с половыми преступлениями. Автореф. канд. дисс. Саратов, 1966, էջեր 7-8:

¹⁰ Хлынцев М.Н. Расследование половых преступлений, էջեր 6-7:

¹¹ Տե՛ս Головлев Ю.В. Նշված աշխատություն, էջ 37:

¹² Տե՛ս Скорченко П.Т. Расследование изнасилований. М., 2004, էջ 22:

¹³ Տե՛ս Озова Н.А. Նշված աշխատություն, էջեր 66-67:

¹⁴ Տե՛ս Головлев Ю.В. Նշված աշխատություն, էջ 37:

¹⁵ Агафонов А.В. Половые преступления. М., 2009, էջ 181:

¹⁶ Տե՛ս Головлев Ю.В. Նշված աշխատություն, էջ 37:

¹⁷ Տե՛ս Яковлев Я.М. Половые преступления. Душамбе, 1969, էջեր 130-131:

¹⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 135:

¹⁹ Տե՛ս Агафонов А.В. Նշված աշխատություն, 2009, էջ 191:

²⁰ Տե՛ս նաև Яковлев Я.М. Նշված աշխատություն, էջ 138:

²¹ Տե՛ս Шарапов Р.Д. Криминальная гипносуггестия: криминологические и уголовно-правовые аспекты // Государство и право, 2004, N 11, էջեր 46-48:

²² Տե՛ս Сердюков М.Г. Судебная гинекология и судебное акушерство. М., 1964, էջ 95:

²³ Տե՛ս նաև Агафонов А.В. Նշված աշխատություն, էջ 212:

²⁴ Տե՛ս Яковлев Я.М. Նշված աշխատություն, էջ 134:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄԲԻՈՆ

ԴԱՏԱԿԱՆ ՓՈՐՉԱԳԵՏԻ ԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

Լևոն ԹԱԳԵՎՈՍՅԱՆ

*«Հ ԳԱՄ» «Փորձարևութիւնների ազգային բյուրո»-ի ՊՈԱԿ-ի փորձագետ
Երևանի Գարական փորձագիտության և հոգեբանության ինստիտուտի դասախոս*

ՅՅ Քրեական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Քր. դատ. օր.) 85-րդ հոդվածի համաձայն փորձագետը քրեական գործով չչափազորված այն անձն է, որին քրեական վարույթն իրականացնող մարմնի որոշմամբ կամ փորձաքննությունն նշանակելու մասին որոշման համապատասխան՝ նշանակում է փորձագիտական հաստատության ղեկավարը՝ գիտության, տեխնիկայի, արվեստի կամ արհեստի որևէ բնագավառում իր հատուկ գիտելիքներն օգտագործելով գործի նյութերը հետազոտելու և դրա հիման վրա եզրակացություն տալու համար: Քր. դատ. օր-ը դատավարության սուբյեկտներին դասակարգում է հիմքում դնելով, մի դեպքում՝ կոնկրետ դատավարական ֆունկցիաներ իրականացնելու, մյուս դեպքում՝ այդ ֆունկցիաների իրականացմանը օժանդակելու հանգամանքը: Այս առումով, փորձագետը, այնպիսի սուբյեկտների հետ միասին ինչպիսիք են ընթարական, դատական նիստի քարտուղարը, թարգմանիչը, մասնագետը և վկան, դասվում է քրեական դատավարությանը մասնակցող անձանց շարքին (Քր. դատ. օր. 6-րդ հոդվածի 32-րդ կետ): Ի տարբերություն դատավարության մասնակիցների, փորձագետը քրեական դատավարությունում չունի ինքնուրույն դատավարական շահ, հանդես չի գալիս մեղադրանքի կամ պաշտպանության կողմում, գործելով օրենսդրության իրեն վերապահված իրավունքների շրջանակում չի կարող ուղղությամբ տալ քննությանը, այլ իր մասնագիտական գիտելիքներն օ-

րենքով սահմանված կարգով ներդնում է գործի համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով: Սակայն դատական փորձագետը կոչված է իրականացնելու լուրջ և պատասխանատու խնդիր, որն օրգանապես կապված է ճշմարտության բացահայտման և արդարացի դատավճիռ կայացնելու հետ: Քրեական դատավարությունում փորձագետի գործունեությունն ուղղակիորեն կապված է հետաքննության մարմնի, քննիչի, դատախազի կամ դատարանի կողմից իրեն առաջադրված հարցերի առթիվ փորձաքննություն կատարելու և եզրակացություն տալու հանգամանքի հետ: ՅՅ քրեական դատավարության օրենսգրքում փորձագետի իրավունքների ու պարտականությունների ճիշտ սահմանումը և վարույթն իրականացնող մարմնի, ինչպես նաև փորձագիտական հիմնարկի ղեկավարի կողմից այդ նորմերի անշեղ պահպանումը օբյեկտիվ, հավաստի և հիմնավորված եզրակացություն ստանալու անհրաժեշտ նախապայման է:

Քր. դատ. օր. 85 հոդվածի համաձայն փորձագետը քրեական դատավարության մասնակից է դառնում վարույթն իրականացնող մամնի որոշմամբ: ՅՅ քր. դատ. օր. 6-րդ հոդվածի 30-րդ կետի համաձայն քրեական վարույթն իրականացնող մարմն է հանդիսանում դատարանը, իսկ քրեական գործի մինչդատական վարույթում՝ հետաքննության մարմինը, քննիչը, դատախազը: Անձը որպես փորձագետ, քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված իրավունքները և պարտականությունները կարող է ստանձնել համապատասխան պաշտոնատար անձանց կողմից փորձաքննություն նշանակելու մասին կայացրած որոշման հիման վրա: Յետաքննության մարմնի աշխատակիցը, քննիչը,

դատախազը և դատարանը փորձաքննության նշանակելու մասին որոշում են կայացնելու, երբ քրեական գործով նշանակություն ունեցող հանգամանքները պարզելու համար անհրաժեշտ են գիտության, տեխնիկայի, արվեստի կամ արհեստի, այդ թվում՝ համապատասխան հետազոտությունների մեթոդիկայի բնագավառում հատուկ գիտելիքներ: Ընդ որում, հետաքննության մարմնի աշխատակցի, քննիչի, դատախազի, մասնագետների, ընթերակաների հատուկ գիտելիքների առկայությունը չի ազատում համապատասխան դեպքերում փորձաքննությունն նշանակելու անհրաժեշտությունից (Քր. դատ. օր 243-րդ հոդված):

ՀՀ քր. դատ. օր-ը հստակ պահանջներ է ներկայացնում փորձաքննությունն նշանակելու մասին որոշմանը: Մասնավորապես, Քր. դատ. օր. 244 հոդվածի համաձայն քրեական հետապնդման մարմինը փորձաքննությունն նշանակելու մասին կայացնում է որոշում, որում պետք է նշվեն՝ փորձաքննությունը նշանակելու հիմքերը, փորձաքննության ուղարկվող իրեղեն ապացույցները և այլ օբյեկտները՝ նշելով երբ, որտեղ և ինչ հանգամանքներում են դրանք հայտնաբերվել կամ ձեռք բերվել, իսկ քրեական գործի նյութերով փորձաքննություն կատարելիս տեղեկություններ, որոնց վրա կարող են հիմնվել փորձագետի հետևությունները, փորձագետին առաջադրված հարցերը, փորձագիտական հիմնարկի անվանումը կամ անձի ազգանունը, որին հանձնարարված է փորձաքննության կատարումը: Փորձաքննություն կատարելու մասին որոշմանը ներկայացվող այս պահանջների պահպանումն անհրաժեշտ է ինչպես եզրակացության հավաստիության, այնպես էլ որպես ապացույց դրա թույլատրելիության ապահովման համար:

Օրենսդիրը հստակ սահմանել է փորձագետի իրավունքներ ու պարտականությունները (քր. դատ. օր. հոդված 85): Մի կողմից փորձագետն օժտված է համապատասխան հետազոտության մեթոդիկայի

ընտրության ազատությամբ և մասնագիտական ինքնուրույնությամբ, մյուս կողմից յուրաքանչյուր փորձագետ իր տված եզրակացության համար կրում է անձնական պատասխանատվություն: Ընդ որում, ՀՀ քր. դատ. օր-ը (85-րդ հոդվածի 4-րդ մասի 4-րդ կետ), փորձագետին պարտավորեցնում է եզրակացություն տալ ոչ միայն առաջադրված հարցերով, այլ նաև իր իրավասության մեջ մտնող և փորձաքննության կատարման ընթացքում ի հայտ եկած հանգամանքներով:

Դատական փորձագետի իրավունքների և պարտականությունների ծավալը որոշ չափով կախված է այն հանգամանքից, թե փորձագետը դատավարության որ պահից է ներգրավվում քրեական դատավարությանը: Այն դեպքում, երբ փորձագետը մասնակցում է դատավարության վաղ փուլերից, վերջինիս համար ստեղծվում են քննչական և դատավարական գործողություններին մասնակցելու բավականին լայն հնարավորություններ: Արդարադատության շահը պահանջում է, որ փորձաքննությունն նշանակող մարմինները փորձագետին նրա իրավունքները և պարտականությունները բացատրելիս տեղյակ պահեն նաև քրեական դատավարությանը նրա մասնակցությունը բացառող հանգամանքներին:

Հավաստի եզրակացություն տալու անհրաժեշտ և կարևոր նախապայման է դատական փորձագետի կողմից գործի նյութերի հետ ծանոթանալը:

Առանց նշված պայմանի բավարարման, փորձագետը չի կարող փորձաքննություն կատարել և եզրակացություն տալ: Քր. դատ. օր 85 հոդվածի համաձայն փորձագետն իրավունք ունի քրեական վարույթն իրականացնող մարմնի թույլտվությամբ ծանոթանալ եզրակացություն տալու համար անհրաժեշտ նյութերին և գործի նյութերից դուրս գրել անհրաժեշտ տեղեկություններ, իր պարտականությունները պատշաճ կատարելու համար հարցեր տալ կասկածյալին, մեղադրյալին, տուժողին, վկա-

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՍԲԻՈՆ

ներին, ծանոթանալ փորձաքննության առարկային վերաբերող նյութերին, դրանցից դուրս գրել անհրաժեշտ տեղեկություններ:

Դատական փորձագետի այդ իրավունքը փորձաքննություն նշանակող պաշտոնատար անձի համար առաջ է բերում համապատասխան պարտականություններ: Փորձաքննություն նշանակելիս նա պարտավոր է որոշել, թե քրեական գործի որ նյութերն են անհրաժեշտ փորձաքննություն կատարելու համար և դրանք տրամադրել փորձագետին:

Վտանգավոր պետք է համարել այն պրակտիկան, երբ հետաքննություն կատարող անձը, քննիչը կամ դատախազը, վկայակոչելով նախաքննության գաղտնիության պահպանման անհրաժեշտությունը, փորձաքննություն նշանակելիս քննչական գաղտնիքի պահպանման անվան տակ սահմանափակում են փորձագետին տրվելիք նյութերը, որոնք զրկում են նրան ճիշտ եզրակացություն տալու հնարավորությունից: Գործն ամբողջությամբ տրամադրելու դեպքում հնարավոր է, որ փորձագետը, ուսումնասիրելով գործի նյութերը, կորցնի իր ինքնուրույնությունը, անտեսի գործի մյուս հանգամանքները:

Այսպիսով, փորձագետի՝ գործի նյութերի հետ ծանոթանալու իրավունքը պետք է իրացվի հնարավորինս ճիշտ ձևով: Փորձագետին նյութեր տրամադրելիս հետաքննություն կատարող անձը, քննիչը, դատախազը կամ դատարանը պետք է հաշվի առնեն գործի առանձնահատկությունները և որոշեն հատկացվող նյութերի չափն ու տեսակը:

Փորձաքննություն կատարելու համար գործից նյութեր հատկացնելու հարցը լուծելիս պետք է հաշվի առնել նաև դատական փորձագետի կարծիքը: Փորձաքննություն նշանակելիս փորձագետին պետք է հայտնել փորձաքննություն նշանակելու

նպատակը և գործում եղած այն տվյալների մասին, որոնք կարող են տրամադրվել նրան փորձաքննություն կատարելու համար: Հաշվի առնելով փորձագետի կարծիքը՝ փորձաքննություն նշանակող պաշտոնատար անձը լուծում է նրան նյութեր տրամադրելու հարցը:

Եթե փորձագետը փորձաքննություն նշանակող անձի տրամադրած նյութերը համարում է եզրակացություն տալու համար անբավարար, իրավունք ունի պահանջել լրացուցիչ օբյեկտներ, մոուշներ և այլ նյութեր:

Օբյեկտիվ եզրակացություն տալու համար շատ կարևոր հանգամանք է քննչական և դատական գործողություններին փորձագետի մասնակցությունը: Այս պայմաններում փորձագետը հնարավորություն է ստանում անմիջականորեն ուսումնասիրել գործի այն հանգամանքները, որոնք վերաբերում են փորձաքննության առարկային:

Փորձաքննության ընթացքում հաճախ անհրաժեշտ է լինում, որ փորձագետն անձամբ ծանոթանա դեպքի վայրի պարագային, վերականգնի դեպքի հանգամանքները, զննի գործին վերաբերող առարկաներն ու փաստաթղթերը: Նման գործողություններ կատարելիս փորձագետը գործում է իրնքնուրույն և որևէ ձևով կաշկանդված չէ վարույթն իրականացնող մարմնի կամ դատավարության այլ մասնակիցների կամքով: Այդ գործողությունների կատարմամբ փորձագետը նպատակ է հետապնդում պատասխանելու փորձաքննություն նշանակող անձանց կողմից իրեն առաջադրված հարցերին: Փորձագետի կատարած գործողությունները առանձին փաստաթղթում չեն ամրագրվում, այլ դրանց արդյունքները մտցվում են համապատասխան եզրակացության մեջ:

Այսպիսով ակնհայտ է, որ դատական փորձագետի կողմից կատարվող գործողություններն իրենց բովանդակությամբ և նշանակությամբ դատավարական չեն, դրանք փորձաքննության կատարման ե-

ղանակ են:

Կարծում ենք, փորձագետը կարող է օժանդակել վարույթն իրականացնող մարմնին բացահայտել հանցագործությունների կատարմանը նպաստող պատճառներն ու պայմանները: Հանցագործության պատճառների և դրա կատարմանը նպաստող պայմանների հայտնաբերումը դրանց վերացման, իսկ շատ դեպքերում նաև արարքի ճիշտ որակման ամիրաժեշտ պայման է:

Գործող օրենսդրության համաձայն՝ փորձագետը փորձաքննության կատարման և եզրակացություն տալու ընթացքում անկախ է և ենթարկվում է միայն օրենքին: Այս դրույթն ուղղակիորեն նախատեսված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով: Նա անկախ է ինչպես փորձաքննություն նշանակող պաշտոնատար անձանցից, այնպես էլ դատավարության մասնիկներից և նույնիսկ՝ փորձաքննական հաստատության ղեկավարից:

Եթե փորձաքննությունը կատարվում է փորձագիտական հաստատություններում, ապա հաստատության ղեկավարը կարող է փորձագետի ուշադրությունը հրավիրել եզրակացության անճշտության, թերությունների և այլ հանգամանքների վրա: Նա ունի փորձագետին մասնագիտական ուղղություն տալու, առաջարկություններ ներկայացնելու իրավունք: Բայց դա չի նշանակում, որ փորձագիտական հաստատության ղեկավարը փորձագետին կարող է պարտադրել՝ տալու այս կամ այն բնույթի եզրակացություն:

Եթե փորձագիտական հաստատության ղեկավարը համաձայն չի լինում փորձագե-

տի տված եզրակացությանը, այն համարում է սխալ, ապա իրավունք ունի կազմակերպել հանձնաժողովային փորձաքննության կատարումը: Այս դեպքում հանձնաժողովի կազմում նպատակահարմար է մտցնել նաև նախկին եզրակացություն տվող անձին:

Դատական փորձագետի անկախության և անկողմնակալ եզրակացություն տալու երաշխիք է այն, որ ոչ նպաստավոր պայմանների առկայության դեպքում նրան իրավունք է վերապահվում չկատարելու կամ դադարեցնելու հանձնարարված փորձաքննությունը:

Երբ անհրաժեշտ ուսումնասիրություն կատարելուց հետո պարզվել է, որ տրված նյութերի անբավարար լինելու պատճառով անհնարին է ճիշտ եզրակացություն տալ փորձագետն այդ փաստը պետք է արձանագրի համապատասխան ակտով: Փորձագետը կարող է այդպիսի եզրակացության հանգել միայն այն դեպքում, երբ լրացուցիչ նյութեր է պահանջել և դրանք նույնպես անբավարար են եղել կամ ընդհանրապես չեն տրամադրվել:

Դատական փորձագետն իրավունք ունի բողոքարկել հետաքննություն կատարող անձի, քննիչի, դատախազի կամ դատարանի բոլոր այն գործողությունները, որոնք խախտում կամ սահմանափակում են օրենքով նախատեսված նրա իրավունքները:

Դատական փորձագետը կարող է հարցաքննվել միայն իր կատարած հետազոտությունների և հատուկ գիտելիքներին վերաբերող հարցերի շուրջ:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՍԲԻՈՆ

**ՋՐԱՅԻՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ
ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՄԵՐՉԱՎՈՐԱՐԱԵԼՅԱՆ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

Վաչե ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ

*Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի
Քաղաքագիտության ամբիոնի ասպիրանտ*

Երկրագնդի քաղցրահամ ջրի պաշարների վերաբերյալ ՄԱԿ-ի 2009 թ. մարտի 12-ի հերթական՝ երրորդ գեկուլցում՝ նախագուշացում կա ջրի պաշարների նվազման հետևանքով աշխարհի բազմաթիվ տարածաշրջաններում քաղաքական կայունությանը և տնտեսական զարգացմանը սպառնացող վտանգների մասին: Եվ դա պատահական չէ, քանզի գլոբալ ջերմացման հետևանքով երկրագնդի շատ վայրերում նվազում են ջրային պաշարների ծավալները, ավելանում երաշտահարվող տարածքները:

Մերձավոր Արևելքը աշխարհի ամենաջորային տարածաշրջանների թվում է: Այսպես, օրինակ, Սիրիայում ամապատները գրավում են երկրի տարածքի 70 տոկոսը, Իսրայելում՝ գրեթե 60 տոկոսը: Մերձավոր Արևելքի ջրային պաշարների զգալի մասը գտնվում է Թուրքիայում, Իրաքի և Իրանի հյուսիսային շրջաններում: Դրանց հիմնական մասը բաժին է ընկնում Տիգրիս և Եփրատ գետերի ավազաններին: Այդ հիդրոհամակարգը զգալիորեն ապահովում է Թուրքիայի, Սիրիայի և Իրաքի ջրի պահանջումները:

Մերձավոր Արևելքում ջրի հիմնախնդիրը հիմնականում պայմանավորված է ջրի աշխարհագրական անհավասարաչափ բաշխվածությամբ և ջրային պաշարների ու բնակչության թվի անհամաչափ հարաբերակցությամբ: Բացի վերոնշյալ գործոններից՝ ջրի հիմնախնդրի լուծմանը խոչըն-

դոտում են նաև առկա ջրային պաշարներն արդյունավետ օգտագործելու անկարողությունը, տարածաշրջանային հարատև կոնֆլիկտներն ու պետությունների միջև փոխադարձ անվստահությունը, Մերձավոր Արևելքի գետերի սնման շրջանին տիրապետող երկրների միջև ջրօգտագործումը կարգավորող բազմակողմ պայմանագրերի բացակայությունը և միջազգային իրավունքի անկատարությունը²:

Ջրի հիմնախնդիրը հիրավի արաբա-իսրայելյան կոնֆլիկտի գլխավոր բաղկացուցիչներից է: Խոսքը, առաջին հերթին, Յորդանան գետի ավազանի ջրերի և մի շարք այլ ջրային աղբյուրների պաշարների բաշխման մասին է, որոնք գտնվում են Իսրայելի, Յորդանանի, Լիբանանի, Պաղեստինի և Սիրիայի տարածքներում: Ըստ փորձագետների՝ Իսրայելին իր խմելու ջրի պաշարները կհերիքեն 20-30 տարի: Յարգն այն է, որ 2020թ. Իսրայելի բնակչության թիվը կկազմի 8 մլն, իսկ պաղեստինցի արաբ բնակչության թիվը կհասնի 7 մլն-ի: Եվ վերջիններս պետք է օգտագործեն նույնքան ջուր, որքան այսօր, որն արդեն իսկ համարում են անբավարար: Չենց այդ է պատճառներից մեկը, որ Իսրայելը չի ցանկանում Սիրիային վերադարձնել Գոլանի բարձունքները, քանի որ այդ տարածքը հարուստ է ջրային պաշարներով: Բացի ռազմավարական նշանակությունից՝ Գոլանի վերադարձը թույլ կտա Սիրիային վերահսկելու Իսրայելի ջրային քաղաքականությունը: Գոլանի ջրերը լցվում են Գալիլեայի լիճը, որը Իսրայելի մաքուր ջուր ունեցող միակ ավազանն է, և ապահովում է Իսրայելի ջրի կարիքների 1/3-ը: Նույնքան ստացվում է Յորդանան գետի արևմտյան

ափից: Իսրայելը 1995թ. վաշինգտոնյան բանակցությունների ժամանակ պատրաստակամություն հայտնեց զորքերը հետ քաշել մինչև 1923թ. մեծ տերությունների կողմից որոշված սահմանները, և այդ դեպքում Սիրիայի սահմանը կանցներ լճից 10 մետր հեռավորության վրա: Իսկ Սիրիան պահանջում էր վերականգնել 1967թ. հունիսի 4-ի սահմանները. այդ դեպքում սահմանը կհասցվեր մինչև ծովափ, ինչը Սիրիային հնարավորություն կտար վերահսկելու ջրի մի մասը:

Այսօր արաբա-իսրայելական խաղաղության վերջնական պայմանագրի կնքման խոչընդոտներից մեկը ջրի հարցի շուրջ անհամաձայնությունն է: Հարցը բարդանում է նրանով, որ հակասություններ կան ոչ միայն Իսրայելի և արաբական երկրների միջև, այլև հենց արաբական երկրների ներսում: Քիչ հավանական է, որ Իսրայելը որևէ տարածք կհանձնի, որտեղ ինքն է վերահսկում ջրային պաշարների բաշխումը:

Լիբանանյան սահմանամերձ Լիտանի գետի ջրերի բաշխման շուրջ վիճում են Լիբանանն ու Իսրայելը: Իսրայելը դեռևս չի կարողանում համաձայնության հասնել Հորդանանի հետ Հորդանան և Յարմուկ գետերի ջրերի բաշխման հարցում, թեև 1994 թ. կնքված համաձայնագրով նախատեսված էր տարեկան 50 մլն խմ ջուր հատկացնել Հորդանանին: Հորդանանի հետ ջրային խնդիրներ ունի նաև Սիրիան՝ պայմանավորված սահմանամերձ գետերի ջրերային պաշարների բաշխմամբ:

Առավել սուր են վեճերը Միջագետքի ջրային համակարգի (Տիգրիս-Եփրատ գետերը և նրանց վտակները³) ջրային պաշարների բաշխման շուրջ, որում ներգրավված են Թուրքիան, Սիրիան, Իրաքը, որոշ դեպքերում՝ նաև Իրանը⁴:

Եփրատ և Տիգրիս գետերի ջրային ավազանների օգտագործմանն առնչվող միջպետական հարաբերությունների իրավական կարգավորման պատմությունը սկիզբ է առնում Թուրքիայի և Իրաքի միջև

1946 թ. համաձայնագրի ստորագրումից, որի համաձայն՝ կողմերը պարտավորվեցին տեղյակ պահել միմյանց ջրային նախագծերի մասին: Այս համաձայնագրի հիման վրա 1980 թ. ստորագրվեց թուրք-իրաքյան արձանագրություն, որով ստեղծվեց Տիգրիսի և Եփրատի հարցով Համատեղ տեխնիկական կոմիտե (ՀՏԿ): Կոմիտեի խնդիրը համապատասխան զեկույցների ու առաջարկությունների պատրաստումն էր տարածաշրջանի երեք երկրների միջև ջրերի արդարացի բաշխման համար: Կոմիտեն մինչև 1983 թ. անգործության էր մատնված: Այդ թվականին ՀՏԿ-ի աշխատանքներին միացավ Սիրիան, սակայն դրանից հետո էլ կոմիտեն առանձնապես ակտիվ գործունեությամբ աչքի չընկավ: Մինչև 1993 թ. այդ կոմիտեի շրջանակում տեղի ունեցավ 16 հանդիպում, վերջինը 1992 թվականին էր: Ըստ փորձագետների՝ այդ հանդիպումներից ոչ մեկը իրական արդյունքի չհանգեցրեց: Սիրիան և Իրաքը մեղադրեցին Թուրքիային բանակցությունների անարդյունավետության համար: Իր հերթին Թուրքիան հայտարարեց, որ Բաղդադն ու Դամասկոսը անընդունելի պահանջներ են ներկայացնում իրեն: ՀՏԿ-ն հերթական ցիստը հրավիրեց 2007 թ. հուլիսի սկզբին՝ 15 տարվա ընդմիջումից հետո: Քննարկման էր դրված հրատապ մի հարց, որն առնչվում էր Թուրքիայում Տիգրիս գետի վրա Իլըսու ամբարտակի կառուցմանը: Սիրիական և Իրաքյան կողմերը իրենց մտահոգությունը հայտնեցին ամբարտակի կառուցման առիթով՝ ասելով, որ դրա հետևանքով կնվազի Տիգրիսի հոսքը այդ երկրներ և կվատանա ջրի որակը: Թուրքական կողմը վստահեցրեց հարևաններին, որ Իլըսու⁵ նախագիծը էլեկտրաէներգետիկական է և չի նվազեցնի գետի ջրի հոսքը դեպի Սիրիա և Իրաք:

Առհասարակ, Սիրիան ու Թուրքիան Եփրատ գետի վրա սկսեցին ջրային ծրագրեր իրականացնել 1950-ական թվականներից: Եվ հատկապես 1970-ականներին, երբ ավելի լայնածավալ ծրագրեր իրական

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՍԲԻՈՆ

նացվեցին, սիրիա-թուրքական փոխհարաբերություններում ջրի խնդիրը սկսեց առաջնային տեղ գրավել⁶:

Այսպես, սիրիական կողմի խնդրանքով ԽՍՀՄ-ի մասնագետները սկսեցին ուսումնասիրել Եփրատի ջրավազանում ամբարտակ կառուցելու հարցը և հնարավորությունները: 1966 թ. սկսվեց Տաբկա ամբարտակի շինարարությունը, որը շահագործման հանձնվեց 1973 թ. և վերանվանվեց ալ Սաուռա: Թուրքական կողմն իր հերթին սկսեց կազմել հարավարևելյան շրջանները զարգացնելու սեփական նախագիծը: 1966թ. Թուրքիայում սկսվեց Քեբան ամբարտակի կառուցման աշխատանքները: Եթե Սիրիայում ալ Սաուռա ամբարտակի կառուցմամբ սրվեցին սիրիա-իրաքյան հարաբերությունները⁷, ապա Քեբանի կառուցումը Սիրիային և Իրաքին ստիպեց Թուրքիայի դեմ հանդես գալ մեկ ճակատով⁸:

1980-ական թվականներին թուրքական ղեկավարությունը որոշում ընդունեց իրականացնել Հարավարևելյան Անատոլիայի հսկայածավալ նախագիծը⁹: Այն գնահատվում է 32 մլրդ դոլար: Ըստ նախագծի՝ նախատեսվում է կառուցել 22 ամբարտակ, 19 խոշոր հէկ՝ զուգահեռ 13 նախագծերով (7-ը Եփրատի վրա, 6-ը՝ Տիգրիսի), որոնց շնորհիվ նախատեսվում է 1.7 մլն հեկտարով ավելացնել ոռոգվող հողերի ծավալը: Համաձայն նախագծի՝ էլեկտրաէներգիայի արտադրությունը պետք է կազմի տարեկան 27 մլրդ Կվտ, որը Թուրքիայում արտադրվող էլեկտրաէներգիայի կեսից ավելին է: Հարավարևելյան Անատոլիայի նախագծի իրականացման արդյունքում Թուրքիան նախատեսում է ամբողջությամբ լուծել ազգային պարենային խնդիրները՝ մեծացնելով գյուղատնտեսական արտադրությունը 2-3 անգամ¹⁰:

Նախագիծը սկսեց իրականացվել 1983 թ. և նախատեսվում էր ամբողջովին ավար-

տել 30 տարվա ընթացքում: Սակայն 2005 թ. տվյալներով շահագործման հանձվել էր միայն 13,7%-ը, 8,3%-ը գտնվում էր կառուցման փուլում, 21,8%-ը ներկայացված էր տեղերի, իսկ 52,8%-ը գտնվում էր դեռ նախագծման փուլում¹¹:

1990թ. ջրային խնդրի պատճառով սիրիա-թուրքական հարաբերություններն էլ ավելի սրվեցին, երբ թուրքական կողմը Եփրատի հոսքն ուղղեց դեպի «Աթաթուրքի» ամբարտակը¹²: Համաձայն 1987 թ. Սիրիայի և Թուրքիայի միջև կնքված համաձայնագրի՝ Անկարան Դամասկոսին պետք է հատկացներ 15.8 մլրդ խորանարդ մետր ջուր¹³, սակայն ամբարտակի կառուցման պատճառով ջրի հոսքը զգալիորեն նվազեց:

Թեև Թուրքիան բազմիցս վստահեցրել է, որ անում է ամեն ինչ, նվազագույնի հասցնի Սիրիային և Իրաքին հասցրած վնասի չափը, սակայն արաբական աշխարհում այդ գործողությունները դիտվում են որպես Թուրքիայի կողմից գիտակցված քայլ՝ արաբական երկրներին ջրից զրկելու և, ըստ այդմ, նրանց վրա ճնշում բանեցնելու համար:

1990-ականներին ջրի հիմնախնդիրը բազմիցս քննարկվել է Սիրիայի, Թուրքիայի և Իրաքի միջև տարբեր երկկողմ բանակցությունների ժամանակ, սակայն արդյունքները հեռու են գոհացուցիչ լինելուց:

Իր հերթին Սիրիան փորձում է ջրի հիմնախնդիրը միջազգայնացնել՝ առաջարկելով խնդիրը լուծել ՄԱԿ-ի Միջազգային դատարանի, Միջազգային իրավական հանձնաժողովի և Արաբական պետությունների լիգայի (ԱՊԼ) միջոցով: Սիրիական պաշտոնական դիրքորոշումը հենվում է այն գաղափարի վրա, որ Եփրատը միջազգային ջրային զարկերակ է, և քանի որ այդ գետի ջրերը հոսում են երեք պետությունների տարածքով (Թուրքիա, Սիրիա, Իրաք), ապա ջրերի օգտագործումը պետք է սահմանվի երեք պետությունների կողմից¹⁴:

1996 թ. ԱՊԼ-ն ընդունեց բանաձև, որով համերաշխություն հայտնեց Սիրիայի և Իրաքի դիրքորոշմանը, ըստ որի Տիգրիսն ու Եփրատը համարվում էին միջազգային ջրեր՝ կոչ անելով ստեղծելու դրանց արդարացի բաշխման մեխանիզմներ:

Թուրքիան շարունակում է Տիգրիսը և Եփրատը համարել մեկ գետ, քանի որ նրանք միանում են Շատ էլ Արաբում¹⁵, և չի ճանաչում դրանք որպես միջազգային ջրեր (սահմանում է որպես իր սահմաններից բխող ջրեր): Այսպիսով, ո՛չ Սիրիան, ո՛չ Իրաքը չեն կարող վերահսկել այդ գետերի վրա ամբարտակներ կառուցելու նախագծերը: Թուրքիան իր հերթին քննադատում է Սիրիային ջրերի ոչ նպատակային օգտագործման համար: Նա պնդում է, որ Սիրիային բաժին է ընկնում բավարար քանակի, նույնիսկ չափից ավելի շատ ջուր, սակայն տեխնիկական անբավարար միջոցների պատճառով այն օգտագործվում է ոչ արդյունավետ: Բացի այդ Թուրքիան նշում է, որ սիրիական կողմը Լիբանանի հետ օգտագործում է Ասի գետի (սկիզբ էր առնում Սիրիայից և հոսում մինչև Թուրքիայի խորքերը) ջրի 98 տոկոսը՝ Թուրքիային թողնելով միայն 2 տոկոսը:

Վերլուծաբանների կարծիքով, Թուրքիան ջրային ռեսուրսներին տիրապետելը համարում է պետության ապագա հզորացման կարևոր գործոններից մեկը: Իսկ թուրք գեներալները հրապարակավ հայտարարում են, որ ամբարտակների կառուցման միջոցով արաբական երկրներ ջրի հոսքը վերահսկելով՝ Թուրքիան կարող է վերահսկել «արաբական քաղաքականությունը»¹⁶ 1990 թ. սկզբին Թուրքիայի նախագահ Սուլեյման Դեմիրելը հայտարարեց. «Ո՛չ Սիրիան, ո՛չ Իրաքը չեն կարող պահանջներ ներկայացնել Թուրքիայի գետերի նկատմամբ, ինչպես Անկարան պահանջ չի ներկայացնում նրանց նավթի նկատմամբ: Մենք իրավունք ունենք ինչ-որ բան կիսելու, ջուրը՝ Թուրքիային, նավթը՝

նրանց: Մենք չենք ասում՝ բերեք համատեղ օգտագործենք նավթային պաշարները, նրանք էլ չպետք է խոսեն ջրի համատեղ օգտագործման մասին»¹⁷:

Վերջին տասնամյակների փորձը ցույց է տալիս, որ Եփրատի և Տիգրիսի ջրերը օգտագործելու թուրքական ցանկացած նախագիծ հանգեցնում է քրդական բնակավայրերի ոչնչացմանը, տարածաշրջանի բնապահպանական վիճակի վատթարացմանը, սրում լարվածությունը թուրք-սիրիա-իրաքյան հարաբերություններում: Հենց նշյալ գործոնների պատճառով բրիտանական կառավարությունը 2000 թ. մայիսին հրաժարվեց ֆինանսավորել Իլը-սուլի նախագիծը, որի մասին խոսեցինք վերևում, թեև 2000 թ. Մեծ Բրիտանիայի խորհրդարանը տվել էր իր համաձայնությունը, իսկ Առևտրաարդյունաբերական կոմիտեն պատրաստակամություն էր հայտնել ներդնելու 200 մլն ԱՄՆ դոլար, ճիշտ է՝ պայմանով, որ Թուրքիան նախապես խորհրդակցություններ անցկացնի Սիրիայի և Իրաքի հետ և հավաստիացումներ ներկայացնի նախագծի անվտանգության և բնապահպանական հուսալիության մասին: Համաշխարհային բանկի զեկույցում մտահոգություն էր հայտնվում, որ ամբարտակի կառուցման հետևանքով կտուժի շուրջ 50 հազար մարդ, լարվածություն կառաջացնա հարակից երկրների հարաբերություններում¹⁸: Կտրուկ դեմ արտահայտվեց Արաբական պետությունների լիգան, որի ղեկավարությունը պնդում էր, որ ամբարտակի կառուցումը կարող է հանգեցնել պատերազմի Մերձավոր Արևելքում: Լիգան պահանջեց Մեծ Բրիտանիայի, Շվեյցարիայի կառավարություններից և միջազգային մի շարք ընկերություններից, որոնք մտադիր էին մասնակցել ամբարտակի շինարարությանը, հրաժարվել իրենց ծրագրերից: Այսպես, 1999 թ. ԱՊԼ-ն Մեծ Բրիտանիայի ԱԳՆ-ին նամակ ուղարկեց, որում նշվում էր, որ Թուրքիան, չխորհրդակցելով ամբարտակի կառուցման հարցի շուրջ Իրաքի հետ, խախտում է «Տիգրիսի և Եփրա-

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՍԲԻՈՆ

տի և դրանց վտակների ջրերի օգտագործումը կարգավորելու մասին» 1946 թ. ստորագրված թուրք-իրաքյան համաձայնագրի 5-րդ հոդվածը:

2001 թ. ԱՊԼ-ն ընդունեց բանաձև՝ կոչ անելով օտարերկրյա ներդրողներին չմասնակցել Իլըսուի նախագծին:

Այդ ժամանակահատվածում Սիրիան կարողացավ Իրաքի հետ համաձայնության հասնել Եփրատի ջրերի բաշխման հարցում. այդ երկիրն իրավունք ունի օգտագործելու Թուրքիայից եկող Եփրատի հոսքի 42 տոկոսը՝ 58 տոկոսը թողնելով Իրաքին: Ուստի նրա հիմնական խնդիրը ներկայումս Թուրքիայի հետ ջրերի բաշխման հարցում համաձայնության եզրեր գտնելն է:

Այս առումով հարկ է նշել, որ վերջին երկու տարում սիրիական պետության համար դրական միտումներ են նկատվում է: Թուրք-խորայեյան հարաբերությունների վատթարացմանը զուգահեռ՝ ավելի ու ավելի անրապնդվում է թուրք-սիրիական և թուրք-իրաքյան համագործակցությունը: Այսպես, թուրքական կողմը առաջարկել է Սիրիային և Իրաքին ստեղծել Համատեղ ջրային ինստիտուտ (ՀՁԻ)՝ ջրային խնդիրները լուծելու համար: ՀՁԻ-ն կազմված կլինի երեք երկրների 18 փորձագետներից: Երկարաժամկետ հեռանկարում ՀՁԻ-ի անդամների պարտականությունների մեջ կմտնի տարածաշրջանի ջրամբարների և ջրային մյուս պաշարների կառավարումը, ինչպես նաև

հիդրոտեխնիկական կառույցների շինարարության համատեղ նախագծերի համակարգումը: Մասնավորապես, Սիրիան և Թուրքիան արդեն հայտարարել են Ասի գետի վրա համատեղ ուժերով ամբարտակի կառուցման մասին: Բացի այդ՝ Թուրքիան առաջարկել է հարևաններին ստեղծել ջրօգտագործման արդար մոդելներ և ջրաբաշխման խնդիրները լուծել բացառապես երկկողմ բանակցությունների միջոցով՝ առանց երրորդ կողմի ներգրավման:

Այսպիսով, Միջագետքում ջրային պաշարների բաշխման հիմնախնդրի լուծման ուղղությամբ կարծես թե որոշ դրական տեղաշարժեր նկատվում են, ինչը փորձագետները պայմանավորում են տարածաշրջանում ստեղծված աշխարհաքաղաքական նոր իրողություններով: Դրանցից լրջագույնը Իրաքի հյուսիսում քրդական անկախ պետության ստեղծման վտանգն է, որին դիմակայելու համար իրենց ջանքերը միավորել են Թուրքիան, Սիրիան, Իրաքը և Իրանը: Ակնհայտ է, որ ջրի հիմնախնդիրը իրավական հարթությունում լուծելու հնարավորությունները շատ ավելի փոքր են, քան քաղաքական հարթությունում: Սակայն տարածաշրջանի երկրները, օգտվելով իրավիճակից, պիտի փորձեն նոր իրավիճակում ջրային պաշարների բաշխման խնդիրը կարգավորել իրավական մի շարք փաստաթղթերի և համաձայնագրերի կնքմամբ, որպեսզի քաղաքական իրավիճակի նոր փոփոխությունների պարագայում ավելի ծանրակշիռ կռվաններ ունենան միջազգային ատյաններում պայմանագրային պարտավորությունները խախտող կողմի դեմ:

¹ Կազմվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի հովանու ներքո, որին մասնակցել են ՄԱԿ-ի համակարգի 26 կազմակերպություններ, www.radiofarda.com:

² Տե՛ս **Կ. Հարությունյան**, Ջուրը կարևորագույն ռեսուրս Մերձավոր Արևելքում// «Մերձավոր Արևելք. պատմություն, քաղաքականություն, մշակույթ», հոդվածների ժողովածու, Երևան, 2002, էջ 89:

³ Եփրատի հիմնական վտակներն են Հաբուրը, Բալխը և Սայուրը, իսկ Տիգրիսինը՝ Մեծ և Փոքր Ձաբերը, Դիյալան, Քերխը և Էլ Ուզայմը:

⁴ Տե՛ս **Ա. Յ. Արությունյան**, Турецко-сирийские отношения на рубеже веков (1980-е г. начало XXI века), Диссертация на соискание уч. степени к.и.н., Москва, 2007, էջ 53:

⁶ Ի դեպ, ամբարտակի կառուցումը ոչ միանշանակ վերաբերմունքի է արժանացել հենց Թուրքիայում: Իրաքի և Սիրիայի սահմանից 65 կմ հեռավորության վրա գտնվող ամբարտակի նախագծային արժեքը 2 մլրդ դոլար է: Դրա կառուցման հետևանքով ջրի տակ կմնան քրդական 15 քաղաքներ և 50-ից ավելի գյուղեր: Այս հեռանկարը առաջ բերեց ինչպես բնապահպանների և հասարակական այլ կազմակերպությունների, այնպես էլ քրդական կուսակցությունների ու կազմակերպությունների բողոքը: Նրանք պնդում էին, որ այս նախագծի իրականացմամբ թուրքական կառավարությունը միաժամանակ քրդական հարցի լուծման հերթական խորամանկ քայլն է անում՝ տարհանելով քրդաբնակ խիտ բնակավայրերը (տես G. Jones. Tigris dam project stirs hopes, fears in Turkey // Hasankeyf, «Reuters», 30.04.2006.)

⁶ Տե՛ս **Կ. Հարությունյան**, նշված հոդվածը, էջ 89:
⁷ Իրաքը սպառնում էր ռմբակոծել ամբարտակը: Միայն ԽՍՀՄ-ի և Սաուդյան Արաբիայի միջնորդությամբ հնարավոր եղավ խուսափել տարածաշրջանում ռազմական բախումից (տես **T. Naff, R. Matson**, Water in the Middle East: Conflict or cooperation. Boulder: Westview Press, 1984):

⁸ Տե՛ս նույն տեղը:

⁹ Ավելի շատ հայտնի է թուրքերեն հապավումով՝ GAP (Gûneydoðu Anadolu Projesi):

¹⁰ Տե՛ս Реки Тигр и Евфрат (Иран, Ирак, Иордания, Саудовская Аравия, Сирия, Турция), «База знаний по международному и

национальному водному праву», раздел 5, Трансграничное сотрудничество на междуна-родных реках: проблемы, опыт, уроки, прогнозы экспертов, http://www.cawater-info.net/bk/water_law/2_4_1.htm:

¹¹ Տե՛ս Socio-economic Characteristic of the GAP, July 3rd, 2006, www.gap.gov.tr:

¹² Թուրքիայի ոռոգման համակարգի նախագծերը հիմնականում կապված են «Աթաթուրք» ամբարտակի հետ: Այդ ամբարտակից ջուրը երկու հիմնական հոսքերով 24.6 կմ երկարությամբ հասնում է Թուրքիայի հարավային և արևմտյան շրջանները, մինչև Սիրիայի սահմանը: Նախագծի արժեքը 4 մլրդ ԱՄՆ դոլար է:

¹³ Տե՛ս **В. М. Ахмедов, Л. М. Кулагина**, Сирия, Турция и Иран: новые подходы к межрегиональному сотрудничеству, Институт Ближнего Востока:

¹⁴ Նույն տեղում:

¹⁵ Եփրատի և Տիգրիսի միավորումից ձևավորվող գետ, որը 195 կմ հոսում է Իրաքի և Իրանի տարածքով և լցվում է Պարսից ծոցը: Համարվում է Տիգրիս-Եփրատ ջրավազանի մաս:

¹⁶ Տե՛ս **В. М. Ахмедов, Л. М. Кулагина**, նշվ. հոդվածը:

¹⁷ **Ա. Հովհաննիսյան**, «Ջրային մտրակը» մերձավոր արևելքում, «Ազգային գաղափար», N 1, հունվար 2009թ., :

¹⁸ Տե՛ս World Bank releases Ilisu report. // Kurdish Observer, 07 September 2000:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՄԲԻՈՆ

**ԳՈՐԾԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԼԻՑԵՆԶՎՈՐՄԱՆ ԲԱՐԵՓՈՒՍՈՒՄՆԵՐ**

Սոֆի ՈՍԿԱՆՅԱՆ

*ՀՀ կառավարության աշխատակազմի
ֆինանսադնրեսական վարչության փորձագետ*

Գործարարական գործունեության (բիզնեսի) լիցենզավորումը շատ երկրներում հակառակ արդյուն է տալիս: Պետության անհարկի միջամտությունը և արհեստական խոչընդոտները հանգեցնում են եկամտի ու արտադրողականության ցածր և կոռուպցիայի բարձր մակարդակի¹:

Ի՞նչ է բիզնեսի լիցենզավորումը: Ընդհանուր միասնական սահմանում որպես այդպիսին չկա: Այն սովորաբար օգտագործում են ընկերությունների՝ **հիմնական** գործունեությամբ զբաղվելու իրավունք տալու ընթացակարգը նկարագրելու համար:

Որոշ երկրներում թույլտվություն և լիցենզիա տեքմիները հոմանշային զույգ են: Հաշխարհային բանկի փորձագետներն այս երկու հասկացությունների միջև տարբերություն են դնում: Լիցենզիան վերաբերում է բիզնեսի հիմնական գործունեությանը, իսկ թույլտվությունը՝ այն գործողություններին, որոնք կապված են բիզնեսի հիմնական գործունեության հետ²:

Օրինակ, վերցնենք մասնավոր բժշկական կլինիկային գործունեության իրավունք տալու ընթացակարգը: Ըստ տվյալ երկրի լիցենզավորման և թույլտվության օրենքներից՝ աշխատակիցները պետք է ունենան՝

1. լիցենզիա՝ բժշկական ծառայություն մատուցելու համար, և թույլտվություններ, որոնցից են՝

- 1) կլինիկա կառուցելու թույլտվություն,
- 2) կլինիկայում ռադիոակտիվ սարքավորումներ օգտագործելու:

Շատ երկրներ օգտագործում են լիցենզիա բառը այն գործունեությունների համար, որոնք մասնակի կամ ոչ այդքան էլ կապ ունեն լիցենզավորման՝ վերը նշված սահմանման հետ: Օրինակ, մի շարք այնպիսի երկրներում, ինչպիսիք են Քենիան³ և Յունգարիան, կառավարությունը կամ տեղական ինքնակառավարման մարմինները պահանջում են, որ բիզնեսն ունենա առևտրային լիցենզիա: Լիցենզիա ստանալու անհրաժեշտ պայմանները շատ երկրներում միմյանցից տարբերվում են: Օրինակ, Քենիայում դիմումատուն պետք է ներկայացնի տարբեր տեսակի փաստաթղթեր՝ ներառյալ վարձակալական պայմանագիրը, ինչպես նաև դատվածություն չունենալը հաստատող փաստաթուղթ: Սրանք ավելի շատ բյուրոկրատական խոչընդոտներ են և կարգավորող նպատակ չեն հետապնդում, այդ իսկ պատճառով նման պահանջները պետք է վերացվեն:

Սաուդիան Արաբիան լիցենզիա է պահանջում օտարերկրյա ներդրումների համար, իսկ Հնդկաստանը՝ որոշակի շենք գերազանցող կապիտալ կամ ակտիվներ ունեցող ընկերություններից⁴: Այսպիսի լիցենզիաների պահանջելը հիմնված է ոչ թե ձեռնարկությունների հիմնական գործունեության վրա, այլ դրանց առանձնահատկությունների վրա:

Գործարարական գործունեության լիցենզավորման սկզբունքները

Այս սկզբունքները վերցված են լիցենզավորման լավ վարչարարություն ունեցող այնպիսի երկրների փորձից, ինչպիսիք են Բելգիան, Յուլանդիան, Մեքսիկան:

Լիցենզիան պետք է իրականացնի օրենքով կարգավորվող նպատակներ: Լիցենզավորման հիքում երկու հիմնական

նպատակ ընկած՝ ա. երաշխավորել հասարակական շահի, անվտանգության պաշտպանությունը և բ. կառավարել հազվագյուտ ռեսուրսների օգտագործումը:

ա. Հասարակական շահի, անվտանգության պաշտպանություն. որոշակի գործողություններով պետք է կանոնակարգվեն սպառողի առողջությունը, ապահովությունն ու անվտանգությունը երաշխավորելու շրջակա միջավայրը: Պարզ է, որ բիզնեսից պետք է պահանջել, որ այն բավարարի որոշակի ստանդարտների. ոչ կառավարությունը, ոչ էլ քաղաքացիները չեն ցանկանում գործ ունենալ խարդախ բանկերի և ոչ անորակ սնունդ արտադրողների հետ:

Երկրները սովորաբար օգտագործում են լիցենզիաներ, որպեսզի հետևեն վտանգավոր նյութերի և ապրանքների արտադրությանը (զենք, միջուկային նյութեր) կամ էլ հսկեն նման ճյուղ նույն գործելու ընթացքը:

բ. Սահմանափակ ռեսուրսներ. լիցենզիան օգտագործվում է նաև սահմանափակ ռեսուրսների օգտագործման վրա հիմնված բիզնեսում: Սրանք բիզնեսի այն ոլորտներն են, որտեղ օգտագործվող ռեսուրսը սահմանափակ է և չվերակազմվող կամ դժվար վերակազմվող, կամ էլ դրա վերակազմումը կախված է ճիշտ օգտագործումից:

Լիցենզավորումը ոչ մի դեպքում չպետք է հետապնդի հետևյալ նպատակները.

1. մրցակցության սահմանափակում. երկրները սովորաբար օգտագործում են լիցենզիա, որպեսզի դժվարացնեն ճյուղ նույն գործելու հնարավորությունը և պաշտպանելն ճյուղում առկա ձեռնարկատերերին մրցակցությունից:

2. Եկամտի աղբյուր. Լիցենզիայի վճարը պետք է ծածակի միայն վարչարարական ծախսերը: Երկրի համար եկամտի աղբյուրը հարկերն են, այլ ոչ թե լիցենզիան:

1990-ականներին Վիետնամը տրանսպորտային միջոցների արտադրության համար լիցենզիա էր տալիս միայն համատեղ

փոքր ընկերություններին, որի նպատակն էր իջեցնել սպառողական զնեքը և զարգացնել արդյունաբերության այդ ճյուղը: Այն ընկերությունները, որոնք մտան ճյուղ, հավատացած էին, որ իրենք ներքին շուկա կմտնեն առանց հանդիպելու այլ ընկերությունների մրցակցության: Սակայն, երբ կառավարման մարմինները գիտակցեցին, որ լիցենզիան կարող է լավ եկամտի աղբյուր լինել, նրանք նաև այլ ընկերությունների թույլ տվեցին նույն գործել ճյուղ: Արդյունքում բազմաթիվ ընկերություններ, որոնք ցանկանում էին ներդրումներ կատարել այդ ճյուղում, հրաժարվեցին իրենց ֆինանսական միջոցները ներդնել նման երկրում⁵⁶⁶:

Լիցենզավորման բարեփոխումների միջազգային փորձը

ԲԵԼԳԻԱ

Մինչև վերջերս Բելգիայի բիզնես միջավայրը համարվում էր կոշտ և անարդյունավետ: 1950 թվականից գործող հիմնադրման օրենքը (establishment law) պահանջում էր գործարարների մինչև գործունեություն ծավալելը նրանց մասնագիտական կարողությունների ստուգում: 2005 թվականի կառավարությունը հաստատեց, որ շատ լիցենզիաներ անհիմաստ են:

2005 թվականի հուլիսին կառավարությունը հաստատեց բարեփոխումների ծրագիր՝ Կաֆկա պլան: Այն ղեկավարում է երկրի պետքարտուղարը և ադմինիստրատիվ պարզեցման գործակալությունը (այս գործակալությունը հանդես է գալիս որպես անկախ մարմին և գործում է կառավարության շենքում): Գործակալությունը ղեկավարում է նաև էլեկտրոնային կայքը (www.kafka.be), որտեղ քաղաքացիները և ձեռնարկատերերը կարող են ծանր բյուրոկրատական պահանջների վերաբերյալ իրենց բողոքները հղել: Պետքարտուղարը և գործակալությունը բարեփոխումների առաջնահերթությունը սահմանելիս առաջնորդվում են այս բողոքներով:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՍԲԻՈՆ

Համաձայն կաֆկա պլանի^{7*9} լիցենզավորման բարեփոխումները երկու նպատակ են հետապնդում՝ լիցենզիաների քանակի կրճատում և լիցենզավորման ընթացակարգերի պարզեցում:

Լիցենզիաների քանակի կրճատում. Կաֆկայի էլեկտրոնային կայքը ստացավ բազմաթիվ բողոքներ՝ կապված հիմնադրման օրենքի հետ: Այս բողոքների հիման վրա պետքարտուղարը նախարարների հետ միասին քննարկում էր՝ արդյոք գործարության որոշ տեսակներ պետք է ազատվեն լիցենզիայից, թե ոչ: Նրանք եզրակացրին, որ՝

- լիցենզավորման պահանջներ պետք է ներկայացվեն միայն գործարարության այնպիսի տեսակների նկատմամբ, որոնք կապված են հասարակության առողջության և շրջակա միջավայրի պաշտպանության հետ,

- վերապատրաստման պահանջները տեղին չեն, եթե պահանջվող դիպլոմները անմիջականորեն չեն վերաբերում գործարարի հիմնական գործունեությանը:

Հաջող բարեփոխման համար կարևոր է նաև հասարակության լայն շրջանակների աջակցությունը: Բելգիայի փորձը ցույց է տալիս, որ երկիրը կարող է ընտրություն կատարել լիցենզիաների քանակի կրճատման և լիցենզավորման ընթացակարգերի պարզեցման միջև, այն կարող է երկուսն էլ անել:

ՆԻԴԵՐԼԱՆԴՆԵՐ

Մինչև 1990ականների վերջերը փոքր և միջին ձեռնարկությունների հիմնադրման պրոցեսը բարդ, ժամանակատար և շատ ծախսատար էր: 1954 թվականին ընդունված բիզնեսի հիմնադրման մասին օրենքը գործարարների խորտակման հիմնական պատճառն էր: Այս օրենքը, որ ընդունվել էր բարձրացնելու բիզնեսի որակը, բիզնեսի

ավելի քան 80 տեսակների համար էր լիցենզիա պահանջում մինչև հիմնադրվելը:

1980-ականների կեսերին գործազրկության բարձր մակարդակը, ֆիսկալ դժվարությունները, միջազգային մրցակցության ճնշումը և եվրոպական ինտեգրման անհրաժեշտությունը ստիպեցին, որ երկիրը քայլեր ձեռնարկի բարեփոխումների ուղղությամբ¹⁰: Հենց այդ ժամանակ կառավարությունը գիտակցեց, որ փոքր և միջին ձեռնարկատիրությունը հուլանդական տնտեսությունում շատ ավելի փոքր դեր ուներ, քան եվրոպական մյուս երկրներում և ԱՄՆ-ում:

Հոլանդիայում բիզնեսի հիմնադրման մասին օրենքի բարեփոխումը իրականացվեց երկու փուլով՝ 1996թ-ին և 2001 թվականին:

1996 թվականի բարեփոխումների շնորհիվ ստեղծվեց.

1.«ազատ գործարարության տեսակներ», որոնք լիցենզիա չէին պահանջում. դրանք էին իրավաբանությունը, հաշվապահությունը, ճարտարապետությունը:

2.Գործարարության այն տեսակները , որոնք լիցենզավորման ենթակա էին, բաժանվեցին 3 խմբի՝

ա. մանրածախ առևտրի ոլորտ, որտեղ գործարարները պետք է ունենային բիզնես հմտությունները հաստատող դիպլոմ, որը կոչվում էր AOV (Algemene omdenemers vaardigibeden.)

բ. գործարարեր շինարարության, էլեկտրամեխանիկայի, տրանսպորտի, սննդի և խմիչքի ոլորտներում. Սրանք AOV-ից բացի պետք է ունենան բիզնեսի կառավարման ավելի մասնագիտական դիպլոմ՝ BT:

գ. Հացթուխները, մսագործները և էլեկտրատեխնիկները, AOV, BT-ից բացի, պետք է տեխնիկական հմտությունների պահանջների բավարարեն, ունենան VT դիպլոմ:

Էկոնոմիկայի նախարարության անցկացրած մոնիտորինգի շնորհիվ, պարզվեց, որ նոր բիզնեսի քանակը աճել է 30%-ով այն ոլորտներում, որտեղ լիցենզավոր-

ման պահանջները մեղմացվել են և 50%-ով նվազել այն ոլորտում, որտեղ պահանջները խստացվել են¹¹: Այս հետազոտության հիման վրա կառավարությունը որոշեց նորից բարեփոխել բիզնեսի հիմնադրման օրենքը: Նոր չափանիշներն էին¹²՝

1. բոլոր AOV պահանջների կրճատում մանրածախ առևտրի, արհեստով զբաղվող ընկերությունների համար: Նոր օրենսդրության համաձայն՝ բիզնեսի այս տեսակները պետք է ընդհանուր գրանցում անցնեն առևտրի պալատում:

2. Շինարարական, էլեկրատեխնիկայի և մեխանիկայի, տրանսպորտի և սննդի պատրաստման ձեռնարկությունները պետք է ունենան BT և VT:

3. Հիմնադրման պահանջները նախորդ տարիների համեմատ չեն խստացվի:

ՎՐԱՍՏԱՆ

Մինչև 1999թ.-ը Վրաստանում բիզնեսի ավելի քան 900 տեսակների համար գործարարներից լիցենզիա էր պահանջվում: Բիզնեսի հիմնադրումը ի պահանջ երկար և բարդ ընթացակարգ էր. ոչ պարզ ու ավելորդ փաստաթղթեր, և համատարած կոռուպցիա: Բայց այս ամենից՝ մայրաքաղաքից դուրս գտնվող գործարարները լիցենզիա ստանալու հայտ ներկայացնելու համար ստիպված էին թիֆլիս մեկնել:

Վրաստանում լիցենզավորման բարեփոխումները երկու «ալիքով» տեղի ունեցան՝ առաջինը՝ էդուարդ Շեվերդնաձեի՝ 1990-2002թթ. և երկրորդը Միխայիլ Սահակաշվիլիի օրոք՝ 2004-2005թթ.¹³:

Վրաստանը լիցենզավորման մասին իր առաջին օրենքը ընդունեց 1999 թվականին: Բայց օրենքը չնվազեցրեց բոլոր այն պրոբլեմները, որոնք կային լիցենզավորման համակարգում: Վրաստանի խորհրդարանը զգաց, որ պետք էր կրկին ինչ-որ բան փոխել և 2002 թվականին ընդունեց նոր օրենք լիցենզիաների և թույլտվությունների տրամադրման հիմքերի մասին: Սակայն այս օրենքը լիցենզավորման վարչարարության պրոբլեմները լուծեց միայն

թղթի վրա: Իրականում բազմաթիվ պրոբլեմներ դեռ մնում էին. և դրանցից էին՝

1.«օրենսդրական վակուումներ»: Օրինակ՝ սննդի և ծխախոտի արտադրության լիցենզավորման օրենքը պառլամենտը չընդունեց մինչև 2003-ի մայիսի 7-ը, իսկ 2003թ.-ի սեպտեմբերին ընդունեց լիցենզավորման և թույլտվության վճարների մասին օրենքը: Այս ընթացքում բազմաթիվ ձեռնարկություններ շարունակում էին բացվել և գործել. չնայած լիցենզավորման դաշտը հստակ չէր:

2.Մայրաքաղաքից դուրս լիցենզիայի համար դիմելու դժվարություններ. օրենքը չվերացրեց այս արգելքը:

3.Դանդաղ ընթացակարգ և ոչ պաշտոնական ծախսեր. 2002 թվականի ուսումնասիրությունները պարզեցին, որ գործարարները լիցենզիա ստանալու համար 11 օր ավել պետք է սպասեին քան 2 տարի առաջ: Ոչ պաշտոնական վճարները աճեցին այդ ժամանակահատվածում միջինը 21\$-ով: Փոքր և միջին գործարարության 80%ից ավելին բողոքում էր լիցենզավորման երկար ընթացակարգից:

Երբ Միխայիլ Սահակաշվիլին դարձավ նախագահ, նա հայտարարեց, որ իր գլխավոր նպատակներից է բարելավել Վրաստանի գործարար միջավայրը:

2005 թվականին պառլամենտը ընդունեց «լիցենզավորման և թույլտվությունների» մասին նոր օրենք: Այս օրենքը լիցենզիա և թույլտվություն պահանջում էր գործունեությունների այն տեսակներից, որոնք իրենց մեջ պարունակում էին պետական և հասարակական կարևոր շահեր կամ կապված էին բնական ռեսուրսների օգտագործման հետ: Օրենքի հիմնական առանձնահատկություններն էին՝

1.լիցենզիաների քանակի կրճատում. օրենքը լիցենզավորում և թույլտվություն պահանջող զարծողությունների քանակը 909-ից հասցրեց 159-ի:

2.Տարբեր կատեգորիաների լիցենզիաների ստեղծում՝

- օգտագործման լիցենզիա (use

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՍԲԻՈՆ

license) թույլ է տալիս օգտագործել բնական ռեսուրսները: Այսպիսի լիցենզիաները տրվում են աճուրդով:

- գործունեության լիցենզիա (activity license) մնացած գրեթե բոլոր գործունեությունների համար: Այս լիցենզիայի վճարը սահմանված է լիցենզավորման և թույլտվության մասին օրենքով:

Օգտագործման և գործունեության բոլոր լիցենզիաները բաժանվում են ընդհանուր և հատուկ կատեգորիաների: Ընդհանուր լիցենզիաները թույլ են տալիս, որ գործարարները լիցենզիայով զբաղվեն մի շարք գործունեությամբ: Հատուկ լիցենզիաները ավելի կոնկրետ գործունեությամբ զբաղվելու թույլտվություն են տալիս:

Օրինակ՝ օգտագործման լիցենզիա. անտառային ռեսուրսների օգտագործման ընդհանուր լիցենզիա, որը ներառում է՝

ա. անտառային պտուղների օգտագործման հատուկ լիցենզիա,

բ. անտառային որսորդության հատուկ լիցենզիա,

Գործունեության լիցենզիա. ընդհանուր լիցենզիա հանրակրթական ուսուցման համար՝

ա. հատուկ լիցենզիա տարրական կրթության համար,

բ. հատուկ լիցենզիա հիմնական կրթության համար,

գ. հատուկ լիցենզիա միջնակարգ կրթության համար:

3.Մեկ պատուհանի (one-stop shop) սկզբունք. դիմումատուները գործ ունեն միայն լիզենզիա տրամադրող մեկ գործակալության հետ: Հենց այդ գրասենյակն է պատասխանատու կառավարման բոլոր մարմինների հետ համագործակցության համար:

4. «Լռելյայն համաձայնություն». օրենքը սահմանում է լիցենզիաների մեծ մասի տրամադրման համար 30-օրյա վերջնաժամկետ: Եթե սահմանված ժամկետում գործակալությունը չի բավարարում, չի մերժում կամ հետ չի վերադարձնում հայտն ուղ-

ղումների, ապա գործարարը կարող է սկսել իր գործունեությունը առանց լիցենզիայի:

5. Մերժման դեպքում պարզ բացատրություններ. գործակալները պետք է բացատրություններ տան հայտը մերժելու մասին, իսկ հայտատուն էլ այն կարող է բողոքարկել դատարանում:

Այլ կարևոր պայմաններ.

- Մինչև նոր օրենքի ուժի մեջ մտնելը տրամադրված լիցենզիաները ուժը կորցրած չճանաչվեցին.

- Չեռնակության մասնաճյուղը լիցենզիա ձեռք բերելու կարիք չունի:

Իրականացում. այս փուլը բարեփոխումների իրականացման թերևս ամենաանհաջող փուլն էր: Նոր օրենքի ընդունումը մնացած գործող օրենքներում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն էր սեղծում, որը այդ ժամանակ Վրաստանում չկատարվեց: Մնացած պրոբլեմներից էին՝ կառավարական գործակալությունները ֆիզիկապես չէին հասցնում օրենքով սահմանված ժամկետում կատարել համապատասխան աշխատանքը: Ոչ արդարացված ուշացումները դիմումատուին թույլ են տալիս գործունեություն ծավալել առանց լիցենզիայի: Պարզ է արդեն, որ ուշացումները համակարգային պրոբլեմների պատճառ էին, ոչ թե արտակարգ իրավիճակների:

- Մեկ պատուհանի սկզբունքի իրականացման ձախողում. օրենքը կարճ նշում է մեկ պատուհանի ստեղծման կարիքը, սակայն Վրաստանում դրա ստեղծման համար ոչ մի քայլ չձեռնարկվեց:

- Լիցենզավորման ընթացակարգերի ուղեցույցի բացակայություն. գործարարները լիցենզավորման ընթացակարգի մանրամասները իմանալու կարիք ունեին, այնչինչ Վրաստանում ոչ մի ուղեցույց չկար:

Լիցենզավորման բարեփոխումներ

ՀՀ գործարար միջավայրում

ՀՀ կառավարության 2008թ. հունիսի 26-ի «Հայաստանի գործարար միջավայրի բարելավման միջոցառումների ծրագրին

հավանություն տալու մասին» N 775-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի գործարար միջավայրի բարելավման» միջոցառումների ծրագրի 3.12 կետի համաձայն նախատեսվում է ՀՀ լիցենզավորման մասին օրենքում փոփոխություններ կատարել:

Հայաստանի Հանրապետությունում լիցենզավորման հարաբերությունները կարգավորվում են ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքով և ՀՀ միջազգային պայմանագրերով և օրենսդրական այլ ակտերով:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ գործունեության առանձին տեսակներով, որոնց ցանկը սահմանվում է օրենքով, իրավաբանական անձը կարող է զբաղվել միայն հատուկ թույլտվության (լիցենզիայի) հիման վրա: Այդ պահանջը տարածվում է բոլոր իրավաբանական անձանց և անհատ գործարարների նկատմամբ: Այս հոդվածի բովանդակությունից բխում է, որ լիցենզիան հատուկ թույլտվություն է, որը գործարարական հարաբերությունների մասնակիցներից իրավունք է վերապահում զբաղվելու լիցենզավորման ենթակա գործունեությամբ:

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքում (ընդունվել է 30.03.2001թ.) լիցենզիա սահմանվում է՝ լիցենզավորման ենթակա գործունեության տեսակով զբաղվելու իրավունքը հաստատող պաշտոնական թույլտվություն, ինչպես նաև այդ իրավունքը հաստատող պաշտոնական փաստաթուղթ: Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը սույն օրենքում սահմանվում է՝ գործունեության տեսակ, որի իրականացման համար օրենքով պահանջվում է լիցենզիա, լիցենզավորում՝ գործընթաց՝ կապված լիցենզիաների տրման, դրանց գործողության ժամկետի երկարաձգման, վերածնակերպման, գործողության կասեցման և դադարեցման հետ: Այստեղից ակնհայտ է, որ հիշյալ օրենքում, ըստ էության, չի բացահայտվում լիցենզիա հասկացու-

յան իմաստը, հետևաբար չի բացահայտվում նաև լիցենզավորումը:

Մասնագիտական գրականության մեջ լիցենզավորումը բնորոշվում է որպես գործարարական գործունեության կառավարման և դրա նկատմամբ վերահսկողություն իրականացնելու եղանակ⁴, որպես գործարարական գործունեության առանձին տեսակներով զբաղվելու սկզբնական և հետագա իրականացման օրենքով սահմանված կարգ, տվյալ գործունեության նկատմամբ պետական հսկողության եղանակ⁵: Լիցենզավորման իմաստն այն է, որ ապահովում է պետության կազմակերպակարգավորիչ ներգործությունը տնտեսվարման կարևոր հարաբերությունների նկատմամբ, հնարավորություն է տալիս ստուգելու լիցենզիա հայցողի որակավորումը, բացահայտելու լիցենզավորող գործունեությանը զբաղվելուն խանգարող հանգամանքները, սահմանելու լիցենզիոն պայմանները⁶: Գործնականում լիցենզավորումը լիցենզիա տալու, լիցենզիայի գործողության ժամկետը երկարացնելու, գործողությունը կասեցնելու և դադարեցնելու գործընթաց է («Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մաս):

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքը նախատեսում է բարդ և պարզ ընթացակարգով տրամադրվող լիցենզիաներ: Ներկայումս գործում են 150 բարդ և 12 պարզ ընթացակարգով տրամադրվող լիցենզիաներ: Նշված ընթացակարգերը միմյանցից տարբերվում են մի շարք հատկանիշներով: Ի տարբերություն պարզ ընթացակարգով տրվող լիցենզիայի, որը, որպես կանոն, տրվում է անժամկետ, առանց լիցենզավորող հանձնաժողովի որոշման՝ հայտատուի կողմից օրենքով նախատեսված փաստաթղթերը ներկայացնելուց երեք օրվա ընթացքում, բարդ ընթացակարգով լիցենզիան տրվում է լիցենզիա ստանալու համար օրենքով նախատեսված բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց հետո երեսուն օրվա ընթացքում, եթե օրենքով այլ ժամկետ նախատեսված չէ:

ԵՐԻՏԱՍԱՐԴ ԳԻՏՆԱԿԱՆԻ ԱՍԲԻՈՆ

Պարզ լիցենզիան սահմանվում է այնպիսի գործունեության տեսակների համար, որոնց դեպքում անհրաժեշտ է, որ պետությունը նախապես իմանա այդ գործունեությամբ զբաղվողների տվյալները՝ հետագայում իր գործառույթները իրականացնելու համար: Պարզ լիցենզիան տրվում է անվճար: Բարդ ընթացակարգով տրվող լիցենզիաները սահմանվել են գործունեության այն տեսակների համար, որոնցով զբաղվելու դեպքում կազմակերպչի համար նախատեսված են պարտադիր նախնական պայմաններ և պահանջներ, որոնցով նա պետք է ապահովված լինի, որպեսզի իրավունք ունենա զբաղվելու տվյալ գործունեությամբ: Այդ պայմանները պետք է ապահովեն սպառողների շահերը, պետական համակարգերի (օրինակ՝ ֆինանսական, էներգետիկ, առողջապահական և այլն) կայուն գործունեությունը: Միաժամանակ այդ գործունեությունները առնչվում են բնակչության լայն հատվածի հետ: Բարդ լիցենզիաները տրվում են լիցենզավորող մարմինների կողմից ստեղծված լիցենզավորող հանձնաժողովի եզրակացությունների հիման վրա:

Չաշվի առնելով վերոգրյալը առաջարկում ենք՝

- Պարզ լիցենզիայի կիրառումը, որը ինչպես վերը նշեցինք, սահմանվում է գործունեության այնպիսի տեսակների համար, որոնց դեպքում անհրաժեշտ է, որ պետությունը նախապես իմանա այդ գործունեությամբ զբաղվողների տվյալները՝ հետագայում իր գործառույթները իրականացնելու համար, իրենից գրեթե գործունեության գրանցման ֆունկցիա է ներկայացնում, ինչը, մեր կարծիքով, բյուրոկրատական խոչընդոտ է և օրենսդրորեն կարգավորող նպատակ չի հետապնդում: Չետևաբար պարզ լիցենզիաները առաջարկում ենք վերացնել, քանի որ այդ ամե-

նը կարելի է կարգավորել համապատասխան հաշվառման համակարգ ներդնելով:

- Գնահատել լիցենզավորվող գործունեությունների հետագա կրճատման կարիքը, ներառել միայն այն գարածարարության տեսակները լիցենզավորվողների մեջ, որոնք՝

ա. պահանջում են կառավարության խիստ հսկողություն պաշտպանելու համար քաղաքացիների առողջությունն ու անվտանգությունը, շրջական միջավայրի պաշտպանությունը:

բ. Գործ ունեն հազվագյուտ ռեսուրսների վարաբաշխման և օգտագործման հետ:

Սրանք են լիցենզավորման այն հիմանակն սկզբունքները, որոնցով պետք է առաջնորդվի ցանկացած երկիր: Գործունեության այն տեսակները, որոնք չեն հիմնվում վերոգրյալ սկզբունքների վրա, լիցենզավորման առարկա չպետք է հանդիսանան:

Այս ամենը կկրճատի ձեռնարկատերերի ծախսերը, կմեծացնի ձեռնարկությունների քանակը այն ոլորտներում, որտեղ պահանջները մեղմացվել են, ինչը կբերի մասնավոր հատվածի եկամուտների և հարկային մուտքերի աճի: Կրճատել լիցենզավճարները, քանի որ այս վճարը պետք է ծածկի վարչարարական ծախսերը միայն: Լիցենզիան պետք է օրենսդրորեն կարգավորող նպատակ հետապնդի, այլ ոչ թե պետության համար ֆիսկալ գոծիք ծառայի:

- Չնարավորություն ընծեռնել մասնավորապես ՓՍԶ-ներին ձեռք բերել երկար գործունեության ժամկետով լիցենզիաներ սկզբից վճարելով լիցենզիայի վճարի մի մասը միայն, իսկ մնացածը՝ տարվա ընթացքում: Այս ամենը կպաշտպանի նրանց իրավունքները ավելի երկար ժամանակաշրջանում և կնվազեցնի ֆինանսական արգելքը, մասնավորապես, այն ընկերությունների համար, որոնք ֆինանսական

դժվարություններ ունեն: Վճարելով լիցենզիայի վճարի մի մասը, ֆինանսական պրոբլեմ ունեցող ընկերությունների համար կնվազեցնի շուկա մուտք գործելու արգելքները, ինչը կբերի գործող ընկերությունների քանակի ավելացմանն, կավելացնի շահույթը ու պետության հարկային մուտքերը:

- Լիցենզիայի տրամադրման որոշումների ընդունման մեջ թափանցիկություն մտնել¹: Ավելի թափանցիկ որոշումների ընդունման պրոցեսը կնվազեցի ոչ պաշտոնական ծախսերը:

- Ներդնել լիցենզավորման մոնիտորինգի համակարգ, որը թույլ կտա ստուգել լի-

ցենզավորման բարեփոխումների արդյունքները, ինչպես նաև մոնիտորինգի արդյունքներից պարզ կլինեն բոլոր այն բացերը, որոնք հետագա լիցենզավորման բարեփոխումների համար ուղեցույց կհանդիսանան:

- Հաշվի առնելով միջազգային փորձը՝ կարելի է միանշանակ պնդել, որ հաջող բարեփոխման համար շատ կարևոր է հասարակության լայն շրջանակների աջակցությունը, այդ իսկ պատճառով լիցենզավորման բարեփոխումներ կատարելիս պետք է մեծապես հաշվի առնել մասնավոր հատվածի կարծիքը:

¹ Overview/ Doing Business in 2006 World Bank /Oxford Vincent Palmade /Industry Level Analysis/

² <http://www.ifc.org/ifcext/uspp.nsf/Content/Home>.

³ Kenya: *Administrative Barriers to Investment*. FIAS, 2004, 50

⁴ Arvind Panagariya, "India in the 1980s and 1990s: A Triumph of Reforms." IMF Working Paper WP/04/43, March 2004; (2) "All Tied Up: India Under the License Raj: The Triumph of Red Tape." Asia Now, Issue 3, 2004; (3) Chander Mohan Vasudev, "A Perspective of Economic Reforms in India – Past, Present and Future. Presentation at Duke University, November 9, 2005; and (4) Montek S. Ahluwalia, "India's Economic Reforms: An Appraisal." Government of India Planning Commission, August 1999.

<http://planningcommission.nic.in/reports/articles/artf.htm>.

⁵ Vietnam: *Motor Vehicle Market Overview*. International Trade Administration, United States Department of Commerce, n.d. <http://www.ita.doc.gov/td/auto/vietnam041.pdf>. Accessed March 19, 2006.

⁶ Timothy J. Sturgeon. "The Automotive Industry in Vietnam: Prospects for Development in a Globalizing Economy." *Globalization and Jobs in the Automotive Industry*, Research Note #4, July 1998. [http://ipc-lis.mit.edu/globalization/](http://ipc-lis.mit.edu/globalization/Vietnamese) Vietnamese

%20Autos.pdf. Accessed March 19, 2006.

⁷ Assouplissement de la Loi d'Établissement." Press release, www.kafka.be, April 15, 2005. <http://www.kafka.be/showpage.php?iPageID=121&sLangCode=FR>.

⁸ *Le Rapport Kafka II*. Federal Government of Belgium, 2005, 8. Translated from French by the author.

www.kafka.be/doc/1133208577-6406.pdf.

⁹ Kathy van Hoorne. "Better Regulation in Belgium (federal level): focus on administrative simplification." *Better Regulation International Seminar*, Valetta, Malta, November 2005

¹⁰ OECD, *Regulatory Reform in the Netherlands*, 1999, 7; Steven and Lundström, 253.

¹¹ *Entrepreneurial Society*, 21.

¹² Bruce Ballantine, Bethan Devonald, and Richard Meads (Centre for Strategy and Evaluation Services). "Netherlands (Reduction in Business Qualifications). *Benchmarking the Administration of Business Start-Ups*. CSES/European Commission Enterprise Directorate, January 2002, 133.

http://europa.eu.int/comm/enterprise/entrepreneurship/support_measures/startups/benchmark_admin_business_start-up_final_2002.pdf, Accessed January 16, 2006

¹³ *Assessment of Administrative Procedures for Doing Business in Georgia*, FIAS, June 2004; (2) IFC, *Business Environment in Georgia, as Seen by Small and Medium Enterprises*, 2004; (3) "Government Move to Cut Red Tape in Licensing," *Civil Georgia* [online magazine], April 13, 2005; (4) "Georgia Moves to Cut Red Tape in Licensing," *Civil Georgia*, June 11, 2005; (5) "The New Law on Licenses and Permits," *Legal Newsletter (Mgaloblishvili, Kipiani, Dzidziguri (MKD) Law Firm)*, Issue N11, August 12, 2005; (6) "A New Dawn for Licensing and Permits," *AmCham News Magazine*, Issue 3, 2005; (7) "Young Economists Round Table on State Licensing Reform" *Inside IRIS Georgia*, Issue 24, May 31, 2005; (8) Email correspon-

dence with IFC staff, including Irina Kokaia of IFC Georgia and Xiaolun Sun of FIAS.

¹⁴ Բարսեղյան Տ. Կ. Գործարարական իրավունք: Դասագիրք բուհերի համար: Երևան, ԵՊՀ իրատ. 2009, էջ 209:

¹⁵ Олейник О. Правовые основы лицензирования хозяйственной деятельности // Закон, 1994 N 6, էջ 17:

¹⁶ Осинцев Д.В. Лицензионно-разрешительная система в РФ: монография. Екатеринбург, 1999, էջ 5:

¹⁷ Djankov, Simeon. 2001. "The Regulation of Entry." Mimeo (June); World Bank. 2005. *Doing Business 2005 case studies*. Washington, DC: World Bank.